ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Սույն զեկույցը մշակվել է «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից՝ Շվեդիայի կառավարության աջակցությամբ:

Նյութի բովանդակության պատասխանատուն Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնն է, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Շվեդիայի կառավարության տեսակետները:

.

Փորձագետ՝ Անուշ Հակոբյան
Պատասխանատու խմբագիր՝ Սոնա Այվազյան

ՀՏԴ 343.352
ԳՄԴ 67.408.12
Հ 170

Հ 170 Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության գնահատում.- Եր.: «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ, 2025.- 255 էջ:

Հետազոտության նպատակն է աջակցել Հայաստանի Հանրապետության կառավարությանը և Հակակոռուպցիոն կոմիտեին՝ հիմնական մասնագիտացված իրավապահ հակակոռուպցիոն մարմնի գործունեության բարելավման միջոցով ամրապնդելու Հայաստանում կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ մեխանիզմները և բարձրացնելու կոռուպցիոն հանցագործությունների նախականխման, բացահայտման և հետապնդման արդյունավետությունը:

ՀՏԴ 343.352
ԳՄԴ 67.408.12

ISBN 978-9939-1-2060-7
© «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ
www.transparency.am
Երևան 2025

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 3

ԱՄՓՈՓԱԳԻՐ 4

ՆԱԽԱԲԱՆ 10

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 11

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 13

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 16

1. Հակակոռուպցիոն կոմիտեի գնահատումն՝ ըստ չափման խմբերի և ցուցանիշների 16

1.1. Հակակոռուպցիոն կոմիտեի անկախությունը և կարգավիճակը 16

1.2. Հակակոռուպցիոն կոմիտեի ապահովվածությունը ֆինանսական և մարդկային ռեսուրսներով 32

1.3. Հակակոռուպցիոն կոմիտեի ներքին բարեվարքությունը և հաշվետվողականությունը ... 44

1.4. Կոռուպցիոն հանցագործությունների հայտնաբերում, հետաքննություն և հետապնդում 54

1.5. Կանխարգելում, կրթում և իրազեկում 67

1.6. Հաղորդակցություն և գործակցություն 73

2. Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության գնահատումն՝ ըստ Ջակարտայի սկզբունքների համապատասխանության 79

3. Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության գնահատումն՝ ըստ արտաքին ու ներքին գործոնների ու կատարողականի 90

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 93

Հավելված 1. Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության գնահատման ցուցանիշների համակարգ 97

Հավելված 2. Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության ամփոփ արդյունքները՝ ըստ գնահատման չափանիշների և ցուցանիշների 231

Հավելված 3. Ջակարտայի սկզբունքների և ԹԻ՝ հակակոռուպցիոն մարմինների գնահատման գործիքի համեմատություն՝ տեղայնացված ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի համար 232

Հավելված 4. Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության գնահատման ցուցանիշների դասակարգումը՝ ըստ ազդեցության ու կատարողականը բնութագրող գործոնների 250

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 252

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱԺ	Ազգային ժողով
ԱՄՆ	Ամերիկայի Միացյալ Նահանգներ
ԱՄՆ ՄԶԳ	ԱՄՆ միջազգային զարգացման գործակալություն
ԱՆ	Արդարադատության նախարարություն
ԲԴԽ	Բարձրագույն դատական խորհուրդ
ԲՈՒՀ	Բարձրագույն ուսումնական հաստատություն
ԳՐԵԿՈ	Եվրոպայի խորհրդի կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խումբ
ԵԱՀԿ	Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն
ԵՄ	Եվրոպական Միություն
ԹԻ	Թրանսփարենսի Ինթերնեշնլ
ԹԻՀԿ	«Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ
ԿԸՀ	Կոռուպցիայի ընկալման համաթիվ
ԿԿՀ	Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով
ՀԲ	Համաշխարհային բանկ
ՀԿՄ	Հակակոռուպցիոն մարմին
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՌԿԿ	Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՄԱԿԴԿ	Միավորված ազգերի կոռուպցիայի դեմ կոնվենցիա
ՄԻՊ	Մարդու իրավունքների պաշտպան
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ՏՀԶԿ	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն
ՔԾԳ	ՀՀ վարչապետի աշխատակազմի Քաղաքացիական ծառայության գրասենյակ
ՔՀԿ	Քաղաքացիական հասարակության կազմակերպություն
ՔՈԳՎ	ՀՀ ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչություն
COSP	Կոռուպցիայի դեմ պայքարի ՄԱԿ-ի կոնվենցիայի անդամ երկրների համաժողով
ICAR	Ակտիվների վերականգնման միջազգային կենտրոն

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հետազոտության նպատակն է աջակցել Հայաստանի Հանրապետության կառավարությանը և Հակակոռուպցիոն կոմիտեին՝ հիմնական մասնագիտացված իրավապահ հակակոռուպցիոն մարմնի գործունեության բարելավման միջոցով ամրապնդելու Հայաստանում կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ մեխանիզմները և բարձրացնելու կոռուպցիոն հանցագործությունների նախականխման, բացահայտման և հետապնդման արդյունավետությունը:

Հետազոտության խնդիրն է գնահատել Հակակոռուպցիոն կոմիտեի համապատասխանությունը հակակոռուպցիոն մարմինների գնահատման համար ընդունված միջազգային չափանիշներին, այն է՝ ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայից բխող պահանջներին ու «Հակակոռուպցիոն մարմինների գործունեության սկզբունքների մասին Ջակարտայի հայտարարությամբ» սահմանված սկզբունքներին, և ներկայացնել կառույցի կայացմանն ու գործունեության արդյունավետությանն ուղղված առաջարկներ:

Հակակոռուպցիոն կոմիտեի կարողությունների ու գործունեության գնահատման համար հիմք են ընդունվել «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ քրեական դատավարության և ՀՀ քրեական օրենսգրքերով, ինչպես նաև առանձին ոլորտային օրենքներով Հակակոռուպցիոն կոմիտեին վերապահված գործառույթների ու լիազորությունների իրականացման սահմանված պահանջները, որոնց հիման վրա տեղայնացվել և օգտագործվել է «Հակակոռուպցիոն մարմինների կարողությունների զարգացման» ԹԻ գործիքը:[1]

Հետազոտությունն իրականացվել է Հակակոռուպցիոն կոմիտեի ձևավորումից սկսած՝ 2021-2023 թվականների ժամանակահատվածի համար: Տվյալները հավաքագրվել են Հակակոռուպցիոն կոմիտեին, ՀՀ գլխավոր դատախազությանը, ՀՀ վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակին ուղղված պաշտոնական հարցումների, առցանց բաց աղբյուրներում առկա պաշտոնական ու միջազգային կառույցների փաստաթղթերի, մամուլի լուսաբանումների ուսումնասիրության և փորձագիտական քննարկումների միջոցով:

Հակակոռուպցիոն կոմիտեի գործունությունը դիտարկվել և գնահատվել է 48 ցուցանիշներով: Գնահատվել են Հակակոռուպցիոն կոմիտեի անկախությունը և կարգավիճակը, ապահովվածությունը ֆինանսական և մարդկային ռեսուրսներով, կառույցի հաշվետվողականությունը և ներքին բարեվարքությունը, կոռուպցիոն հանցագործությունների հայտնաբերման, հետաքննության և հետապնդման պրակտիկան, կոռուպցիայի կանխարգելմանը, կրթմանը և իրազեկմանը միտված ջանքերը, համագործակցությունն ու արտաքին հարաբերությունները: Առնչվող ցուցանիշների միջոցով գնահատվել է Հակակոռուպցիոն կոմիտեի համապատասխանությունը Ջակարտայի սկզբունքներին: Գնահատվել է նաև Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեությունը՝ ըստ կատարողականի և դրա վրա ազդող ներքին ու արտաքին գործոնների:

[1] Transparency International, The Anti-Corruption Agencies (ACAS) Strengthening Initiative. Assessment Tool, 2018, https://knowledgehub.transparency.org/assets/uploads/kproducts/ACA-Assessment-Tool.pdf (դիտված՝ 28.02.2025 թ.):

Համաձայն նշված մեթոդաբանության՝

- Առավել բարձր են գնահատվել Հակակոռուպցիոն կոմիտեի անկախությունը և կարգավիճակը (72.2%), համագործակցությունը և արտաքին հարաբերությունները (70%), ապահովվածությունը ֆինանսական և մարդկային ռեսուրսներով (62.5%): Միջինին մոտ միավորներ է ապահովել կոռուպցիոն հանցագործությունների հայտնաբերումը, հետաքննությունը և հետապնդումը (57.1%) և հաշվետվողականությունը ու ներքին բարեվարքությունը (44.4%): Ամենացածր տեղում են կանխարգելումը, կրթումը և իրազեկումը (28.5%), այդ թվում՝ օրենսդրությամբ Հակակոռուպցիոն կոմիտեի այդպիսի գործառույթները պատշաճ չկարգավորելու բերումով:
- Ձակարտայի հակակոռուպցիոն մարմինների գործունեության սկզբունքներին համապատասխանության տեսանկյունից՝ Հակակոռուպցիոն կոմիտեի գործունությունը գնահատվել է 60.8%, որտեղ ցածր մակարդակում են եղել արտաքին հաշվետվողականության, հանրային հաղորդակցության և գործակցության սկզբունքների ապահովումը:
- Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեությունը գնահատվել է առավել բարձր՝ 69.2%, տվյալ կառույցի վերահսկողության շրջանակում գտնվող ներքին գործոնների ցուցանիշներով: Կոմիտեի վերահսկողությունից դուրս գտնվող արտաքին ազդեցության գործոններով պայմանավորված գնահատականը 53.1% է, իսկ կատարողականի ցուցանիշներով՝ 31.5%:

Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության գնահատմամբ վերհանված խնդիրների առնչությամբ ներկայացվել են առաջարկություններ:

ՀՀ Ազգային ժողովին և ՀՀ կառավարությանը (օրենսդրական մասով)՝

1. Վերանայել և վերացնել Հակակոռուպցիոն կոմիտեի ղեկավարի պաշտոնավարման ժամկետը երկարաձգելու ընթացքում 2 անգամ անընդմեջ պաշտոնում նշանակվելու հնարավորությունը:
2. Սահմանադրական փոփոխությունների ներքո դիտարկել քննչական մարմինների, մասնավորապես՝ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի՝ ՀՀ Ազգային ժողովի կողմից նշանակվելու նպատակահարմարությունը՝ հնարավորինս նվազեցնելու Կոմիտեի կախվածությունը գործադիրից:
3. Հակակոռուպցիոն կոմիտեի տեղակալների նշանակումն ու հեռացումը վերապահել Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահին:
4. Օրենսդրորեն սահմանել Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի և տեղակալի թեկնածուների ընտրության և նշանակման չափանիշներ, մասնավորապես՝ հակակոռուպցիոն ոլորտի մասնագիտացում:
5. Օրենսդրորեն նախատեսել Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի և նրա տեղակալների համար շարունակական վերապատրաստում անցնելու պարտադիր պահանջ՝ հիմք ընդունելով միջազգային զարգացող փորձը:
6. Օրենսդրորեն ամրագրել, որ ԿԿՀ-ի կողմից տրված բացասական բնույթի եզրակացության պարագայում Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի և տեղակալների թեկնածուների ընտրության ու առաջադրման դեպքում մրցութային խորհրդի որոշումը հրապարակվում է՝ ներառելով համապատասխան հիմնավորումը և, առկայության դեպքում, հատուկ կարծիքները:

7. Օրենքով սահմանել Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի և տեղակալների մրցույթի հրապարակայնությունը և տեսագրման ու հեռարձակման պահանջը:
8. Վերանայել Հակակոռուպցիոն կոմիտեում հայեցողական պաշտոններ ունենալու նպատակահարմարության հարցը և նախատեսել, որ դրանք ամբողջովին կամ մեծամասամբ լինեն հանրային ծառայողներ:
9. Վերանայել ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված կոռուպցիոն հանցագործությունների ցանկը և, համապատասխանաբար, ընդլայնել Հակակոռուպցիոն կոմիտեի մանդատն ու իրավասությունների շրջանակը՝ ներառելով մինչդատական քրեական վարույթի իրականացումը միջազգային պայմանագրերով նախատեսված բոլոր կոռուպցիոն հանցանքներով՝ առանց նախատեսելու լրացուցիչ ու չհիմնավորված հատկանիշներ:
10. Հակակոռուպցիոն կոմիտեին օրենքով և գործնականում օժտել բավարար մեխանիզմներով՝ պետական մարմինների տեղեկատվական էլեկտրոնային բազաներին ու համակարգերին (օրինակ՝ ԿԿՀ հայտարարագրերի ռեեստր, պրոբացիայի ծառայության համակարգ, քրեակատարողական ծառայության համակարգ և այլն) հասանելիություն ստանալու համար, որոնք անհրաժեշտ են կոռուպցիոն հանցագործությունների նախականխման, արդյունավետ քննության և բացահայտման համար:
11. Մեծացնել Հակակոռուպցիոն կոմիտեի բյուջեն՝ նախատեսելով հաստիքների, աշխատակազմի վերապատրաստումների, տարբեր բնույթի վերլուծությունների, հանրային հարցումների, իրազեկման միջոցառումների բավարար ֆինանսավորում:
12. Հակակոռուպցիոն կոմիտեի ֆինանսական ինքնուրույնության բարձրացման մասով օրենսդրորեն վերանայել ՀՀ կառավարության կողմից Հակակոռուպցիոն կոմիտեի ամենամյա բյուջետային հայտը փոփոխելու և վերանայելու գործառույթը՝ պարտադիր դարձնելով Կոմիտեի համաձայնությունը:
13. Ուժը կորցրած ճանաչել «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի այն դրույթը, ըստ որի արտաքին ազդարարում չի համարվում նախաքննություն իրականացնող մարմինների կողմից հանցագործության վերաբերյալ հաղորդումների քննարկման և լուծման՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված ընթացակարգը:

ՀՀ Ազգային ժողովին և ՀՀ հաշվեքննիչ պալատին (վերահսկողության մասով)՝

14. Ուժեղացնել Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության նկատմամբ խորհրդարանական վերահսկողությունը՝ այդ թվում օրենքով ամրագրելով Կոմիտեի կիսամյակային հաշվետվությունները ՀՀ ԱԺ ներկայացնելու պահանջ, կիսամյակային և տարեկան հաշվետվությունների շուրջ հրապարակային քննարկումների կազմակերպում՝ շահագրգիռ հանրության ներկայացուցիչների ներգրավմամբ:
15. ՀՀ հաշվեքննիչ պալատի գործունեության ծրագրով, նախատեսել Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության հաշվեքննության իրականացման պարբերական միջոցառումներ:

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեին՝

16. Ուսումնասիրել Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմում հոսունության, թափուր հաստիքների կայուն մակարդակի պահպանման, թափուր հաստիքների մրցույթների կազմակերպման արդյունքում հաղթող չճանաչված և պաշտոնի չնշանակված դեպքերի հանգամանքները և ձեռնարկել միջոցներ՝ վերացնելու բացահայտված խնդիրները:

17. Ուսումնասիրել Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի համալրման նպատակով բուհերի ուսանողների, շրջանավարտների մասնագիտական պատրաստման դասընթացների կազմակերպման նպատակահարմարությունը:
18. Վերանայել Հակակոռուպցիոն կոմիտեի հաստիքների թվաքանակը ինչպես քննչական և օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող, այնպես էլ՝ աջակցող ստորաբաժանումների համար՝ մասնավորապես ավելացնելով տնտեսագետ-փորձագետների, վերլուծաբանների հաստիքների քանակը:
19. Բարելավել Հակակոռուպցիոն կոմիտեի կիսամյակային և տարեկան հաշվետվությունների կառուցվածքը և բովանդակությունը՝ ապահովելով Կոմիտեի գործունեության վերաբերյալ կանոնավոր և տարանջատված վիճակագրության վարումը և վերլուծությունը, ընդգծելով բարձր հնչեղություն, քաղաքական ազդեցություն ունեցող, այդ թվում՝ բարձրաստիճան (քաղաքական, վարչական, ինքնավար և հայեցողական) պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ կոռուպցիոն վարույթներով քննության արդյունքները, հաղորդման մեջ ներառելով նաև քրեական վարույթների կարճման վերաբերյալ տեղեկությունները, կարճման հիմքերը, Կոմիտեի ծառայողների վերաբերյալ առկա կարգապահական վարույթների վերաբերյալ տեղեկատվությունը, բյուջեի կատարողականի տվյալները և այլն:
20. Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի ուսուցման արդյունավետության ապահովման համար մշակել մասնագիտական ուսուցման և վերապատրաստումների ուսումնական պլաններ, ուղեցույցներ, կոռուպցիոն հանցագործությունների քննության մեթոդական ու խորհրդատվական նյութեր:
21. Կազմակերպել Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի կարողությունների բարձրացնելուն ուղղված շարունակական վերապատրաստումներ՝ իրականացնելով դրանք ինչպես դոնոր կազմակերպությունների օգնությամբ, այնպես էլ՝ նախատեսելով բավարար ֆինանսավորում ՀՀ պետական բյուջեից:
22. Հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող պաշտոնների թեկնածուների ընտրության նպատակով անցկացվող մրցույթների կազմակերպման ու անցկացման կարգում նախատեսել հակակոռուպցիոն ոլորտի մասնագիտացած հասարակական կառույցների ներկայացուցիչների ներգրավում և գործընթացները դիտարկելու հնարավորություն:
23. Նախատեսել կարգավորում, ըստ որի Հակակոռուպցիոն կոմիտեի տարբեր պաշտոնների թեկնածուների ընտրության նպատակով իրականացվող մրցույթների մասնակից՝ անդամ կամ դիտորդ, ՔՀԿ ներկայացուցիչները պարտավորվում են ստորագրել թեկնածուների անձնական տվյալների գաղտնիության պահպանման համաձայնագիր:
24. Ապահովել Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության գնահատման ներքին աուդիտի արդյունքում ստացված եզրակացության հրապարակայնությունը:
25. Սահմանել Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների առաքինության ստուգման կարգը և իրականացնել համապատասխան ստուգումներ:
26. Հակակոռուպցիոն կոմիտեի կայքում ստեղծել հնարավորություն Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի գործունեության վերաբերյալ դիմումների, բողոքների, առաջարկությունների ստացման և դրանց քննության արդյունքների վերաբերյալ տեղեկատվության հրապարակման նպատակով:
27. Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության վերաբերյալ կիսամյակային և տարեկան հաշվետվություններում նախատեսել քաղաքական ազդեցություն ունեցող, այդ թվում՝

բարձրաստիճան (քաղաքական, վարչական, ինքնավար և հայեցողական) պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ կոռուպցիոն վարույթներով հետաքննության վերաբերյալ հնարավորինս մանրամասն տեղեկություններ, ինչպես նաև Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների կողմից նախաձեռնված քրեական վարույթներով՝ կոռուպցիոն հանցագործություններով պետությանը պատճառված և վերականգնված վնասների վերաբերյալ տվյալներ:

28. Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից իրականացնել կամ պատվիրել Կոմիտեի գործունեության վերաբերյալ հանրային ընկալումների հարցումներ՝ վերհանելու թույլ կողմերը և բարձրացնելու արդյունավետությունը:
29. Հակակոռուպցիոն կոմիտեին ներկայացրած և ազդարարման շրջանակի մեջ տեղավորվող հաղորդումները համարել ազդարարում և հաշվառել համապատասխան վիճակագրության շրջանակում:
30. Ընդլայնել Հակակոռուպցիոն կոմիտեի հետ համագործակցվող փորձաքննական կազմակերպությունների ցանկը՝ ապահովելու փորձաքննությունների ողջամիտ ժամկետներում իրականացումը:
31. Մշակել Հակակոռուպցիոն կոմիտեի հաղորդակցության ռազմավարություն՝ նպատակ ունենալով բարձրացնել Կոմիտեի գործունեության վերաբերյալ հանրային իրազեկման մակարդակը, միաժամանակ նպաստելով կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ գիտելիքի տարածմանը և, այդպիսով, կոռուպցիայի կանխարգելմանը:
32. Բարձրացնել Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության, մանդատի և լիազորությունների մասին քաղաքացիների իրազեկման մակարդակը՝ գործունեության արդյունքների վերաբերյալ հանրամատչելի հաշվետվությունների, ինֆոգրաֆիկների, տեսահոլովակների, այլ տեղեկատվական նյութերի հրապարակման միջոցով՝ իրազեկման ծրագրերն իրականացնելով ինչպես դոնոր կազմակերպությունների միջոցներով, այնպես էլ նախատեսելով բավարար ֆինանսավորում ՀՀ պետական բյուջեից:
33. Իրականացնել Հակակոռուպցիոն կոմիտեի հանրային իրազեկման համար պատասխանատու մասնագետների կարողությունների զարգացում՝ պատշաճ լուսաբանելու Կոմիտեի դերը և նշանակությունը, Կոմիտեի կողմից քննվող գործերի ընթացքի և արդյունքների լուսաբանումը:
34. Վերակազմակերպել Հակակոռուպցիոն կոմիտեի կայքը՝ հրապարակվող փաստաթղթերը ներկայացնելով բաց տվյալների ձևաչափով՝ դրանք դարձնելով մեքենայաընթեռնելի և մատչելի պատճենելու համար, ինչպես նաև կիրառել տեքստերը ձայնային տարբերակով ներկայացնելու գործիքը:
35. Իրականացնել կոռուպցիոն հանցագործությունների տարածվածության, մակարդակի, համատեքստի, ոլորտային կոռուպցիոն դրսևորումների, գործոնների վերաբերյալ հետազոտություններ և վերլուծություն՝ ըստ անհրաժեշտության համալրելով Հակակոռուպցիոն կոմիտեն համապատասխան ստորաբաժանումներով և կադրերով:
36. Կոռուպցիայի դեմ պայքարի համար պատասխանատու այլ պետական մարմինների (Գլխավոր դատախազություն, ԱՆ, ԿԿՀ) հետ համատեղ ապահովել Հակակոռուպցիոն կոմիտեի վարույթների գործընթացում տեղեկության փոխանակման և համատեղ աշխատանքի կազմակերպման ուղեցույցի մշակումը:

37. Բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ համագործակցության շրջանակում աջակցել կոռուպցիոն հանցագործությունների քննության ոլորտում կոնկրետ կրթական ծրագրերի մշակմանը և իրականացմանը:
38. Աջակցել ԿԿՀ-ին կոռուպցիոն հանցագործությունների քննությանը վերաբերող կրթական ծրագրերի մշակման գործում:
39. Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից մշակվող հանրային հարցումների իրականացման տեխնիկական առաջադրանքներում ներառել մարգինալացված (խոցելի) խմբերի նկատմամբ կոռուպցիոն հանցագործությունների ազդեցության և դրանց հիման վրա նախականխման միջոցառումներ (ծրագրեր) կազմելու համար հարցեր՝ ապահովելով այդ խմբերի մասով կոռուպցիոն հանցագործությունների ազդեցության վիճակագրական տվյալների վարումը:

ՆԱԽԱԲԱՆ

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության ուսումնասիրմանը անդրադառնալու անհրաժեշտությունը պայմանավորված է Հայաստանի Հանրապետությունում կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ համակարգի շարունակական բարեփոխումների ընթացքով և միջազգային ստանդարտներին համապատասխանելու հրամայականով:

Հակակոռուպցիոն կոմիտեի՝ որպես Հայաստանի հիմնական մասնագիտացված իրավապահ հակակոռուպցիոն մարմնի գործունեության արդյունավետությունը վճռորոշ դեր ունի պետության կողմից կոռուպցիայի դեմ պայքարի հաջողության համար: Հաշվի առնելով, որ Հակակոռուպցիոն կոմիտեն ձևավորվել է համեմատաբար վերջերս՝ 2021 թ. հոկտեմբերի 23-ին, և որ միջազգային ստանդարտներով սահմանված պահանջները պահանջում են մշտական գնահատում և բարելավում, առաջացել է հրատապ կարիք ուսումնասիրելու Կոմիտեի համապատասխանությունը այդ չափանիշներին և գնահատելու դրա գործունեության արդյունավետությունը:

Սույն հետազոտությունը հատկապես կարևոր է այս ժամանակահատվածում՝ հաշվի առնելով, որ ՀՀ կառավարությունը և միջազգային գործընկերները արձանագրել են քաղաքական կամքի առկայությունը կոռուպցիայի դեմ պայքարում հաջողության հասնելու համար: Հետազոտության արդյունքները կնպաստեն ՀՀ կառավարության կողմից որդեգրած հակակոռուպցիոն ռազմավարության և գործողությունների ծրագրերի ավելի արդյունավետ իրագործմանը, ինչպես նաև կուժեղացնեն հանրային վստահությունը նորաստեղծ հակակոռուպցիոն ինստիտուտների նկատմամբ:

Հետազոտությունը կարևոր է նաև այն առումով, որ ՀՀ հակակոռուպցիոն համակարգի արդյունավետությունը մեծապես կախված է Հակակոռուպցիոն կոմիտեի՝ կոռուպցիոն հանցագործությունները բարձր մասնագիտական մակարդակով կանխելու, բացահայտելու և հետապնդելու կարողությունից:

Հետազոտության նպատակն է աջակցել Հայաստանի Հանրապետության կառավարությանը և Հակակոռուպցիոն կոմիտեին՝ հիմնական մասնագիտացված իրավապահ հակակոռուպցիոն մարմնի գործունեության բարելավման միջոցով ամրապնդելու Հայաստանում կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ մեխանիզմները և բարձրացնելու կոռուպցիոն հանցագործությունների նախականխման, բացահայտման և հետապնդման արդյունավետությունը:

Այդ առումով, կոմիտեի գործունեության վերլուծությունը հնարավորություն կտա բացահայտել առկա մարտահրավերները, ի հայտ բերել բարելավման կարիք ունեցող ոլորտները և ներկայացնել հստակ և հիմնավորված առաջարկություններ, որոնք ուղղված կլինեն Կոմիտեի ինստիտուցիոնալ կարողությունների և անկախության ամրապնդմանը, արդյունավետության բարձրացմանը միջազգային չափանիշներին առավելագույն համապատասխանության հասնելու համար:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետությունում (ՀՀ) կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում տարվող քաղաքականության պատասխանատուն ՀՀ կառավարությունն է, որն իրացնում է իր լիազորությունը պետության հակակոռուպցիոն ռազմավարություններ և դրանց իրականացման միջոցառումների ծրագրեր ընդունելու, հակակոռուպցիոն մարմիններ (ՀԿՄ) ձևավորելու և դրանց կայացմանն աջակցելու միջոցով:

Հակակոռուպցիոն մարմինների կազմավորման և դրանց գործունեությանն աջակցման գործում Հայաստանն առաջնորդվում է ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի (ՄԱԿԴԿ)[2] և «Հակակոռուպցիոն մարմինների գործունեության սկզբունքների մասին» Ջակարտայում ընդունված հայտարարությամբ[3] սահմանված չափանիշներով, որոնք բնութագրում են երկրում գործող կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ համակարգը:

2003 թ. հոկտեմբերի 31-ին ընդունված ՄԱԿԴԿ-ի համաձայն՝ յուրաքանչյուր մասնակից պետություն իր իրավական համակարգի հիմնարար սկզբունքներին համապատասխան պետք է ապահովի այնպիսի մարմնի կամ մարմինների կամ անձանց առկայությունը, որոնք մասնագիտացած են կոռուպցիայի դեմ պայքարում իրավապահ միջոցների օգնությամբ: Մասնակից պետության իրավական համակարգի հիմնարար սկզբունքներին համապատասխան՝ այդպիսի մարմնին կամ մարմիններին կամ անձանց պետք է անհրաժեշտ անկախություն ապահովվի, որպեսզի նրանք կարողանան կատարել իրենց գործառույթներն առանց որևէ անհարկի ազդեցության: Այդպիսի անձինք կամ այդպիսի մարմնի կամ մարմինների աշխատակիցներն իրենց խնդիրների կատարման համար պետք է օժտված լինեն պատշաճ որակավորմամբ և ռեսուրսներով:

2012 թ. նոյեմբերի 26-27-ին Ջակարտայում տարբեր երկրների հակակոռուպցիոն մարմինների ներկա և նախկին ղեկավարների, հակակոռուպցիոն ոլորտի պաշտոնյաների և փորձագետների կողմից ընդունված «Հակակոռուպցիոն մարմինների գործունեության սկզբունքների մասին» (Ջակարտայի սկզբունքներ) հայտարարությամբ ամրագրվել են հակակոռուպցիոն մարմինների գործունեության սկզբունքները: Դրանք ներառում են ՀԿՄ-ների մանդատը, համագործակցությունը այլ կառույցների հետ, մշտականությունը, նշանակումը, շարունակականությունը, ղեկավարների հեռացումը, էթիկական վարքագիծը, անձեռնմխելիությունը, վարձատրությունը, իրավասությունը մարդկային ռեսուրսների նկատմամբ, համարժեք և հուսալի ռեսուրսների առկայությունը, ֆինանսական ինքնավարությունը, ներքին և արտաքին հաշվետվողականությունը, հրապարակային հաշվետվությունը, հանրային հաղորդակցությունն ու ներգրավումը:

Հայաստանում ՀԿՄ-ների նոր և ամբողջական համակարգ ունենալու հանձնառությունն ամրագրվել է 2019-2022 թթ. հակակոռուպցիոն ռազմավարությամբ:[4] Արդյունքում ձևավորվել

---

[2] Հայաստանը ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիան https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=48021 ստորագրել է 2005 թ., որը վավերացվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2006 թ. հոկտեմբերի 23-ին և ուժի մեջ է մտել 2006 թ. նոյեմբերի 11-ին, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=28164

[3] «Հակակոռուպցիոն մարմինների գործունեության սկզբունքների մասին» Ջակարտայի հայտարարություն, 27.11.2012 թ., https://www.unodc.org/documents/corruption/WG-Prevention/Art_6_Preventive_anti-corruption_bodies/JAKARTA_STATEMENT_en.pdf (դիտված՝ 28.02.2025 թ.):

[4] ՀՀ կառավարության «ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1332-Ն որոշում, 03.10.2019 թ., https://www.arlis.am/Annexes/6/2022_N1351hav.2.pdf

են հակակոռուպցիոն մասնագիտացված մարմինները՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (ԿԿՀ), Հակակոռուպցիոն կոմիտեն, ՀՀ գլխավոր դատախազության կազմում՝ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության և ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով ստորաբաժանումները, իսկ դատական համակարգում՝ մասնագիտացված հակակոռուպցիոն դատարանները: ՀՀ կառավարության գործունեության 2021-2026 թթ. ծրագրով ամրագրվել է Կառավարության հակակոռուպցիոն գործընթացներում հաջողելու բավարար քաղաքական կամքի առկայությունն ու այդ կամքն իրական արդյունքի վերածելու պատրաստակամությունը:[5] ՀՀ կառավարության 2023 թ. հոկտեմբերի 26-ի N 1871-Լ որոշմամբ ընդունված հակակոռուպցիոն ռազմավարությամբ և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագրով նախատեսվել են ՀԿՄ-ների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ:[6]

Մասնագիտացած հակակոռուպցիոն իրավապահ հիմնական մարմինը՝ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեն, ձևավորվել է 2021 թ. հոկտեմբերին նույն թվականի մարտի 24-ին ընդունված «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի հիման վրա: Այս օրենքի 4-րդ հոդվածով Հակակոռուպցիոն կոմիտեին են վերապահվել՝

- ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով իր ենթակայությանը վերապահված՝ ենթադրյալ կոռուպցիոն հանցագործություններով մինչդատական քրեական վարույթի կազմակերպման,
- ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով իր ենթակայությանը վերապահված՝ ենթադրյալ կոռուպցիոն հանցագործություններով մինչդատական քրեական վարույթի իրականացման,
- «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով օպերատիվ-հետախուզական գործունեության իրականացման լիազորությունները:

Հակակոռուպցիոն կոմիտեն՝ որպես քննչական մարմին, համարվելով նաև սահմանադրական կարգավիճակ ունեցող անկախ մարմին, օժտված է ինքնուրույն որոշումներ կայացնելու հնարավորությամբ և հայեցողությամբ և գործում է անկախության, հրապարակայնության, ֆինանսական ինքնուրույնության և քաղաքական չեզոքության սկզբունքների հիման վրա:[7]

Հակակոռուպցիոն կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանումների աշխատողների քանակը և հաստիքացուցակը հաստատվում են Կոմիտեի նախագահի կողմից: Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության ֆինանսական ապահովվածությունը իրականացվում է «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով: Պետական բյուջեի ծախսային մասում Հակակոռուպցիոն կոմիտեի ծախսերը ներկայացվում են առանձին տողով: Կոմիտեն ապահովված է շենքային պայմաններով, գրասենյակային գույքով, համակարգչային սարքավորումներով, տեղեկատվական էլեկտրոնային համակարգերով:

Սույն հետազոտության նպատակն է աջակցել ՀՀ կառավարությանը և Հակակոռուպցիոն կոմիտեին՝ բարելավելու հիմնական մասնագիտացած իրավապահ հակակոռուպցիոն մարմնի

[5] ՀՀ կառավարության 2021-2026 թթ. միջոցառումների ծրագիր, 18.08.2021 թ., https://www.gov.am/files/docs/4586.pdf
[6] ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» N 1871-Լ որոշում, 26.10.2023 թ., https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=184674
[7] «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենք, 24.03.2021 թ.,Հոդված 5, https://www.arlis.am/documentview.aspx?docID=151799

գործունեության և, այդպիսով նաև, Հայաստանում կոռուպցիայի դեմ մղվող պայքարի արդյունավետությունը:

Հետազոտության խնդիրն է գնահատել Հակակոռուպցիոն կոմիտեի համապատասխանությունը հակակոռուպցիոն մարմինների գնահատման համար ընդունված միջազգային չափանիշներին, այն է՝ ՄԱԿԴԿ-ից բխող պահանջներին ու «Հակակոռուպցիոն մարմինների գործունեության սկզբունքների մասին Ջակարտայի հայտարարությամբ» սահմանված սկզբունքներին, և ներկայացնել կառույցի կայացմանն ու գործունեության արդյունավետությանն ուղղված առաջարկներ:

Որպես դիտարկվող ժամանակահատված է ընտրվել Հակակոռուպցիոն կոմիտեի փաստացի ձևավորումից՝ 2021 թ. հոկտեմբերի 23-ից մինչև 2023 թ. դեկտեմբերի 31-ը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության մեթոդը

Հակակոռուպցիոն կոմիտեի կարողությունների ու գործունեության գնահատումն իրականացվել է «Թրանսպարենսի Ինթերնեշնլ»-ի (ԹԻ) կողմից մշակված հակակոռուպցիոն մարմինների գործունեության գնահատման մեթոդաբանական գործիքով,[8] որը տեղայնացվել է՝ հիմք ընդունելով «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ քրեական դատավարության և ՀՀ քրեական օրենսգրքերով, ինչպես նաև առանձին ոլորտային օրենքներով Հակակոռուպցիոն կոմիտեին վերապահված գործառույթների ու լիազորությունների իրականացման սահմանված պահանջները:

Հակակոռուպցիոն կոմիտեի գնահատումն արվել է 48 ցուցանիշների դիտարկմամբ՝ յուրաքանչյուրի համար իրականացնելով փաստաթղթային ուսումնասիրություն, տվյալների համադրում և բովանդակային վերլուծություն:

Մեթոդաբանությունը նախատեսում է երեք մոտեցում՝ ըստ դիտարկվող ցուցանիշների տարբեր դասակարգումների:

Ա. **Գնահատում՝ ըստ միջազգային սկզբունքներից բխող հետևյալ 6 չափման խմբերի** (Հավելված 1-2), որոնք ներառել են՝

1. Հակակոռուպցիոն կոմիտեի անկախությունը և կարգավիճակը (9 ցուցանիշ),
2. Հակակոռուպցիոն կոմիտեի ապահովվածությունը ֆինանսական և մարդկային ռեսուրսներով (8 ցուցանիշ),
3. Հակակոռուպցիոն կոմիտեի հաշվետվողականությունը և ներքին բարեվարքությունը (9 ցուցանիշ),
4. Կոռուպցիոն հանցագործությունների հայտնաբերումը, հետաքննությունը և հետապնդումը (9 ցուցանիշ),
5. Կանխարգելումը, կրթումը և իրազեկումը (7 ցուցանիշ),
6. Համագործակցությունը և արտաքին հարաբերությունները (6 ցուցանիշ):

[8] Transparency International, The Anti-Corruption Agencies (ACAS) Strengthening Initiative. Assessment Tool, 2018, https://knowledgehub.transparency.org/assets/uploads/kproducts/ACA-Assessment-Tool.pdf (դիտված՝ 28.02.2025 թ.):

Բ. **Գնահատում՝ ըստ Ջակարտայի հայտարարությամբ սահմանված ՀԿՄ գործունեության սկզբունքների** (Հավելված 3), որոնք են՝

1. Մանդատը (5 ցուցանիշ),
2. Գործակցությունը (5 ցուցանիշ),
3. Մշտականությունը (1 ցուցանիշ),
4. Նշանակումը (1 ցուցանիշ),
5. Շարունակականությունը (1 ցուցանիշ),
6. Հեռացումը (1 ցուցանիշ),
7. Էթիկական վարքագիծը (1 ցուցանիշ),
8. Անձեռնմխելիությունը (1 ցուցանիշ),
9. Վարձատրությունը (2 ցուցանիշ),
10. Իրավասությունը մարդկային ռեսուրսների նկատմամբ (2 ցուցանիշ),
11. Համարժեք և հուսալի ռեսուրսները (4 ցուցանիշ),
12. Ֆինանսական ինքնավարությունը (1 ցուցանիշ),
13. Ներքին հաշվետվողականությունը (5 ցուցանիշ),
14. Արտաքին հաշվետվողականությունը (2 ցուցանիշ),
15. Հրապարակային հաշվետվությունները (2 ցուցանիշ),
16. Հանրային հաղորդակցությունը և գործակցությունը (3 ցուցանիշ):

Գ. **Գնահատում՝ ըստ կատարողականի և ազդեցության գործոնների** (Հավելված 4), որոնք ներառել են՝

1. Հակակոռուպցիոն կոմիտեի վերահսկողությունից դուրս գտնվող արտաքին գործոնները (16 ցուցանիշ),
2. Հակակոռուպցիոն կոմիտեի վերահսկողության ներքո գտնվող ներքին նպաստավոր գործոնները (13 ցուցանիշ),
3. Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության կատարողականը բնութագրող ուղղակի գործոնները (19 ցուցանիշ):

Գնահատումը

Դիտարկված ցուցանիշները գնահատվել են փորձագիտական մոտեցմամբ՝ յուրաքանչյուրին տալով ցածր (0), միջին (1) կամ բարձր (2) միավոր: Տվյալների համարժեք, վստահելի և ստուգելի աղբյուրների բացակայության պայմաններում մեթոդաբանությունը նախատեսել է «Հնարավոր չէ գնահատել» ցուցանիշը: Տեսանելիության ապահովման նպատակով համապատասխան միավորները հավելվածներում գունավորվել են. այսպես՝ «բարձր» միավորները ներկայացվել են կանաչ, «միջին»-ը՝ դեղին, իսկ «ցածր»-ը՝ կարմիր գույներով: Մոխրագույն գույնով ներկայացված են այն ցուցանիշները, որոնք հնարավոր չի եղել գնահատել:

Գնահատականները ներկայացվել են տոկոսային արտահայտությամբ, որտեղ կիրառվել է միևնույն բանաձևը. հաշվարկվել է դիտարկվող խմբի ցուցանիշների փաստացի գնահատված միավորների գումարի և տվյալ խմբի ցուցանիշների առավելագույն հնարավոր միավորների հանրագումարի հարաբերակցությունը:

Գնահատման նախնական արդյունքները ներկայացվել են Հակակոռուպցիոն կոմիտեին, ինչպես նաև քննարկվել են քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների փորձագիտական

խմբում: Կոմիտեից ստացված պարզաբանումների և անկախ փորձագետների կարծիքների հիման վրա զեկույցում կատարվել են որոշ ճշգրտումներ:

Գնահատման արդյունքները համապատասխանաբար ներկայացված են հավելվածներում և պատկերված գծապատկերներում: Այսպես, Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության

- ըստ 6 չափման խմբերի՝ գնահատման արդյունքները ներկայացված են Հավելված 1-ում և Գծապատկերներ 2-7-ում, իսկ ամփոփ՝ Հավելված 2-ում և Գծապատկեր 1-ում,
- ըստ Ջակարտայի հակակոռուպցիոն մարմինների մասին հայտարարությամբ սահմանված 16 սկզբունքներին համապատասխանության գնահատման արդյունքները ներկայացված են Հավելված 3-ում և Գծապատկեր 8-ում,
- ըստ գործոնների, այն է՝ գործունեության կատարողականի և վերջինիս վրա ներքին ու արտաքին ազդեցությունների, գնահատման արդյունքները ներկայացված են Հավելված 4-ում և Գծապատկեր 9-ում:

Տեղեկության հավաքագրման եղանակներն ու աղբյուրները

Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության գնահատման համար պահանջվող տեղեկությունը հավաքագրվել է պաշտոնական բաց աղբյուրներից, այդ թվում՝

- Հակակոռուպցիոն կոմիտեի կիսամյակային և տարեկան հաղորդումներից,
- ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թթ. միջոցառումների ծրագրից,
- ՀՀ կառավարության 2021-2026 թվականների գործունեության ծրագրի տարեկան հաշվետվություններից (հաղորդումներից),
- ՀՀ գլխավոր դատախազության կողմից հրապարակվող կոռուպցիոն հանցագործությունների մասին տարեկան տեղեկանքներից,
- Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության աշխատանքի վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազության տարեկան հաշվետվություններից:

Տեղեկության հավաքագրման եղանակների շարքում իրականացվել են՝

- պաշտոնական հարցումներ՝ ուղղված Հակակոռուպցիոն կոմիտեին, ՀՀ գլխավոր դատախազությանը և ՀՀ ՔԾԳ-ին,
- հարցազրույցներ և փորձագիտական քննարկումներ:

Տեղեկատվության աղբյուր են ծառայել նաև կոռուպցիոն հանցագործությունների դեմ պայքարի ոլորտում առանձին հետազոտությունները, միջազգային աջակցության ծրագրերի շրջանակներում մշակված փաստաթղթերը, գնահատման զեկույցները, մամուլում, էլեկտրոնային սոցիալական ցանցերում կոռուպցիոն հանցագործությունների հետաքննությանը վերաբերելի առանձին հոդվածները, հրապարակային ելույթներն ու հարցազրույցներից տվյալները:

Զեկույցի նախագիծը քննարկվել է Հակակոռուպցիոն կոմիտեի ներկայացուցիչների հետ:

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

1. Հակակոռուպցիոն կոմիտեի գնահատումն՝ ըստ չափման խմբերի և ցուցանիշների

Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության գնահատումն իրականացվել է 6 չափման խմբերով, որոնք ներառում են անկախությունը և կարգավիճակը, ապահովվածությունը ֆինանսական և մարդկային ռեսուրսներով, հաշվետվողականությունը և ներքին բարեվարքությունը, կոռուպցիոն հանցագործությունների հայտնաբերումը, հետաքննությունը և հետապնդումը, կանխարգելումը, կրթումը և իրազեկումը, համագործակցությունը և արտաքին հարաբերությունները:

Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության ընդհանուր պատկերն՝ ըստ չափման խմբերի և ցուցանիշների գնահատման, ներկայացված է ստորև գծապատկերում:

Գծապատկեր 1. Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության ընդհանուր պատկերն՝ ըստ չափման խմբերի և ցուցանիշների



1.1. Հակակոռուպցիոն կոմիտեի անկախությունը և կարգավիճակը

Հակակոռուպցիոն կոմիտեի անկախության և կարգավիճակի գնահատման համար հիմք են հանդիսացել հետևյալ ցուցանիշները՝

- **Ինստիտուցիոնալ անկախությունը,** որը գնահատում է Կառավարությունից Հակակոռուպցիոն կոմիտեի անկախության աստիճանը, որը բնորոշվում է կառույցի կարգավիճակով՝ պետական կամ սահմանադրական մարմին լինելուց մինչև որևէ գերատեսչության կամ նախարարության ստորաբաժանում հանդիսանալը:

- **Կոմիտեի նախագահի և նրա տեղակալների (ղեկավար կազմի) նշանակման և հեռացման գործընթացը,** որը գնահատում է Հակակոռուպցիոն կոմիտեի կազմավորման կամ նշանակման համար պատասխանատու մարմինների (անձանց), Հակակոռուպցիոն կոմիտեի ղեկավար կազմի հեռացման կամ փոխարինման պայմանները, անկողմնակալության ապահովման երաշխիքները, ընտրության չափանիշների անաչառությունը և նշանակման ու հեռացման ընթացակարգերի թափանցիկությունը:
- **Կոմիտեի մանդատը,** որը գնահատում է Հակակոռուպցիոն կոմիտեի գործառույթների շրջանակը և բնութագրվում է հետաքննության, կրթման և կանխարգելման գործառույթների առկայությամբ:
- **Կոմիտեին վերապահված իրավասության շրջանակը,** որը գնահատում է Հակակոռուպցիոն կոմիտեի մանդատի ոլորտային և աշխարհագրական ընդգրկվածությունը՝ վարչական կառավարման բոլոր մակարդակներում, ներառյալ պետական և ՏԻՄ մարմինները, մասնավոր հատվածը (այդ թվում՝ պետական մասնակցությամբ կազմակերպությունները):
- **Հետաքննության և հետապնդման լիազորությունները,** որը գնահատում է Հակակոռուպցիոն կոմիտեի իրավասությունը նախաձեռնելու քրեական վարույթներ, այլ պետական և ՏԻՄ մարմիններից պահանջելու համագործակցել, կատարել օպերատիվ-հետախուզական աշխատանքներ, տրամադրել տեղեկատվություն և փորձագիտական եզրակացություններ, հասանելիություն ունենալ այլ պետական և ՏԻՄ մարմինների էլեկտրոնային բազաներին, ուսումնասիրել կասկածելի բանկային հաշիվները, պահատուփերը, եկամուտների գրանցումները, գույքը և այլն:
- **Առաջարկություններ ներկայացնելու և կիրարկելու լիազորությունները,** որը գնահատում է Հակակոռուպցիոն կոմիտեի իրավասությունը մշակելու և ներկայացնելու հակակոռուպցիոն ոլորտին առնչվող և կատարման ենթակա առաջարկություններ այլ գերատեսչություններին կամ ՀՀ կառավարությանը՝ ընդհանուր հակակոռուպցիոն քաղաքականության վերաբերյալ, հրապարակայնորեն զեկուցելու առաջարկությունների մասին, բացահայտելու խնդիրները և անցկացնելու հանրային լսումներ ու հարցումներ:
- **Իրավական ինքնավարությունը**, որը գնահատում է կոռուպցիոն հանցագործություններով մինչդատական քրեական վարույթների վերաբերյալ որոշումներ կայացնելու հարցում լիակատար հայեցողությունը, Հակակոռուպցիոն կոմիտեի լիազորությունների իրականացման շրջանակում կատարված գործողությունների համար Հակակոռուպցիոն կոմիտեի ղեկավար կազմի և ղեկավար պաշտոն զբաղեցնող անձնակազմի անձեռնմխելիությունը քրեական և (կամ) քաղաքացիական հետապնդումից, բարձրաստիճան պաշտոնյաների կամ այլ մարմինների ղեկավարների հրահանգներին չենթարկվելը:
- **Գործառնական ինքնավարությունը,** որը գնահատում է Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց ընտրության, հեռացման և տեղափոխման նկատմամբ անմիջական վերահսկողության իրականացման, Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի բացակայության դեպքում Հակակոռուպցիոն կոմիտեի բնականոն գործունեության շարունակականության ապահովման, Կառավարության կողմից Հակակոռուպցիոն կոմիտեի առօրյա գործունեությանը քաղաքական միջամտության մեխանիզմների առկայությունը:

- **Լիազորությունների քաղաքական նպատակներով օգտագործումը,** որը գնահատում է Հակակոռուպցիոն կոմիտեի՝ ՀՀ կառավարության կողմից քաղաքական հակառակորդների դեմ կամ այլ քաղաքական դրդապատճառներով որպես գործիք օգտագործելու մեխանիզմների առկայությունը:

Գծապատկեր 2. Հակակոռուպցիոն կոմիտեի անկախության և կարգավիճակի գնահատման մակարդակը

Ինչպես ներկայացված է Գծապատկեր 2-ում, Հակակոռուպցիոն կոմիտեի անկախության և կարգավիճակի չափանիշով գնահատման մակարդակը կազմել է 72.2 %՝ առավելագույն 18-ից ապահովելով 13 միավոր:

Ինստիտուցիոնալ անկախությունը (2 միավոր)

Հակակոռուպցիոն կոմիտեն ունի ինստիտուցիոնալ անկախության համեմատաբար բարձր մակարդակ: Կառույցը ձևավորվել է «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» առանձին օրենքով, որի համաձայն Կոմիտեն իր լիազորություններն իրականացնելիս, ինչպես նաև իր կառուցվածքին, աշխատանքների կազմակերպման կարգին վերաբերող որոշումներն ընդունելիս անկախ է և ենթարկվում է միայն Սահմանադրությանը և օրենքներին: Հակակոռուպցիոն կոմիտեն գործում է անկախության, հրապարակայնության, ֆինանսական ինքնուրույնության և քաղաքական չեզոքության սկզբունքների հիման վրա:

Հակակոռուպցիոն կոմիտեի ղեկավար կազմի նշանակման և հեռացման գործընթացը (1 միավոր)

Ըստ «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի՝ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահին նշանակում է Կառավարությունը 6 տարի ժամկետով, ընդ որում նախատեսված է սահմանափակում, որ նույն անձը չի կարող ավելի քան 2 անգամ անընդմեջ նշանակվել Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի պաշտոնում:

Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ կարող է նշանակվել ՀՀ քաղաքացին, որն ունի ՀՀ-ում մշտական բնակություն, ՀՀ-ում բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի բարձրագույն կրթության որակավորման աստիճան կամ օտարերկրյա պետությունում ձեռք բերած համապատասխան որակավորման աստիճան, որի ճանաչումն ու համարժեքության հաստատումը ՀՀ-ում իրականացվել է օրենքով սահմանված կարգով, որն անցել է պարտադիր զինվորական ծառայություն (բացառությամբ իգական սեռի անձանց) կամ ազատված է նման ծառայությունից օրենքով սահմանված կարգով ու հիմքով, տիրապետում է հայերենին, ունի ռուսերենից, անգլերենից և ֆրանսերենից առնվազն մեկ ստանդարտացված թեստային համակարգով կամ Կառավարության սահմանած այլ կարգով ստուգվող լեզվական գիտելիքների համապատասխան մակարդակի իմացություն: Նշված պահանջները բավարարող անձը կարող է նշանակվել Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ, եթե մինչև նշանակումը զբաղեցրել է քննչական մարմնի բարձրագույն կամ գլխավոր խմբերի պաշտոն կամ ունի դատավորի, դատախազի, քննիչի կամ փաստաբանի կամ հակակոռուպցիոն ոլորտում քաղաքականության մշակման կամ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի կամ օպերատիվ-հետախուզական գործունեության ոլորտներում գործունեության առնվազն 5 տարվա ստաժ կամ տվյալ պաշտոններում առնվազն 5 տարվա ընդհանուր՝ իրար փոխլրացնող ստաժ:

Օրենսդրորեն սահմանված չեն Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի և իր տեղակալների համար հակակոռուպցիոն մասնագիտացման առկայության վերաբերյալ չափանիշներ, ինչը կարող է ռիսկեր առաջացնել հատուկ կոռուպցիոն հանցագործությունների քննության համար ստեղծված մարմնի ղեկավարման արդյունավետության տեսանկյունից: Նմանապես, նախատեսված չէ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի և իր տեղակալների՝ պարտադիր վերապատրաստումներ անցնելու պահանջ, ինչը հատկապես կարևոր է կոռուպցիայի դեմ պայքարի զարգացող միջազգային փորձին տիրապետելու համար:

Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի թեկնածուների ընտրության համար ձևավորվում է մրցութային խորհուրդ: Վերջինս ձևավորվում է ՀՀ կառավարության, Ազգային ժողովի խորհրդի, Բարձրագույն դատական խորհրդի, Գլխավոր դատախազի, Մարդու իրավունքների պաշտպանի նշանակած 1-ական թեկնածուներից և քաղաքացիական հասարակության 2 ներկայացուցչից: Կոմիտեի նախագահի թեկնածուների առաջին անգամ ընտրության մրցութային խորհրդի կազմում խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են ներգրավվել նաև մինչև 3 միջազգային փորձագետներ:

Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի թեկնածուների ընտրության համար անցկացվող մրցույթն ընթանում է 4 փուլով՝

1. փաստաթղթերի ուսումնասիրության փուլ,
2. բարեվարքության ուսումնասիրության փուլ,
3. հարցազրույցի փուլ,
4. արդյունքների ամփոփման փուլ:

Մրցույթի գործընթացի համար սահմանված ժամկետներն ու ընթացակարգերը հրապարակային են: Մրցույթի հայտարարությունը, հարցաշարերը, հարցազրույցի արդյունքները, մրցույթը հաղթահարած թեկնածուների վերաբերյալ տեղեկատվությունը և խորհրդի նիստերի արձանագրությունները տեղադրվում են հրապարակային ծանուցումների

պաշտոնական կայքում (www.azdarar.am), վարչապետի աշխատակազմի և Հակակոռուպցիոն կոմիտեի պաշտոնական կայքերում:

Թեկնածուների բարեվարքության ուսումնասիրությունն իրականացվում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից՝ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 26.1-ին հոդվածի համաձայն: Ուսումնասիրության արդյունքում տրամադրվում է թեկնածուի բարեվարքության վերաբերյալ եզրակացություն, որը խորհրդատվական բնույթի է, հրապարակման ենթակա չէ և չի տրամադրվում այլ անձանց:

Մրցույթի թեստավորման և հարցազրույցների փուլը դիտարկելու հնարավորություն օրենսդրորեն նախատեսված է միայն ինքնավար պաշտոնների համալրման դեպքում: Հարցազրույցի փուլը հեռարձակելու պահանջ ևս ամրագրված չէ, սակայն գործնականում ապահովվել է հարցազրույցների հրապարակայնությունը, իսկ համապատասխան նյութերը տեղադրված են Հակակոռուպցիոն կոմիտեի կայքում:

Թեկնածուների ցանկը կազմելուց հետո՝ 2 օրվա ընթացքում, Խորհուրդը Կառավարություն է ներկայացնում մրցույթում հաղթող ճանաչվածների ցուցակը՝ միաժամանակ այն հրապարակելով հրապարակային ծանուցումների պաշտոնական կայքում (www.azdarar.am) և Աշխատակազմի պաշտոնական կայքում: Իր հերթին, Կառավարությունը Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի պաշտոնում նշանակում կատարելու վերաբերյալ հարցը քննարկում և համապատասխան որոշում է կայացնում Խորհրդի կողմից թեկնածուներին ներկայացնելուց հետո՝ 10-օրյա ժամկետում:

«Խնդիրն ավելի շատ վերաբերում է նրան, թե այդ թեկնածուներից ում է նշանակելու վարչապետը: Այդտեղ է սուբյեկտիվ մոտեցումը, որ, կարող է ենթադրենք, ոչ թե ըստ հավաքած բալերի հերթականության առաջնորդվի, այլ նշանակվի ամենացածր բալեր հավաքած թեկնածուն: Բայց այստեղ էլ քաղաքական պատասխանատվության հարց է»:

(Փորձագետ)

Հակակոռուպցիոն կոմիտեի տեղակալների պաշտոնում նշանակումները ևս կատարվում են բաց մրցույթի եղանակով:

Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալներին ներկայացվում են նույնական պահանջներ, ներառյալ «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասում թվարկված ոլորտներում առնվազն 4 տարվա ստաժը կամ առնվազն 4 տարվա ընդհանուր՝ իրար փոխլրացնող ստաժը:

«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի համաձայն՝ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարված մրցույթում հաղթող ճանաչված մասնակիցների ցուցակը ստանալուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում, Կոմիտեի նախագահը վարչապետին է առաջարկում մրցույթում հաղթող ճանաչված Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալի թեկնածությունը՝ կցելով թեկնածուի վերաբերյալ ԿԿՀ-ի ներկայացրած խորհրդատվական եզրակացությունը, որոնց արդյունքում էլ վարչապետը կատարում է նշանակում: Օրենքի մեկնաբանությունից բխում է, որ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահին լիազորություն է վերապահված մրցույթում հաղթող ճանաչված մասնակիցների ցուցակից իր հայեցողությամբ ընտրել Կոմիտեի նախագահի տեղակալի թեկնածուին և առաջարկել վարչապետին՝ նշանակման համար:

Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի և նրա տեղակալի լիազորությունները վաղաժամկետ դադարելու և դադարեցնելու գործընթացները կանոնակարգված են «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով, որում հստակեցված են Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի և նրա տեղակալի պաշտոնից հեռացման հիմքերը: Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի և նրա տեղակալի լիազորությունները վաղաժամկետ դադարելու դեպքերն են՝ պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը լրանալը, ՀՀ քաղաքացիությունը կորցնելը, դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա նրա անգործունակ, անհայտ բացակայող ճանաչվելը կամ մահացած հայտարարվելը, նրա մահը, նրա նկատմամբ կայացված դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճռի առկայությունը, նրա նկատմամբ կայացված՝ ոչ ռեաբիլիտացնող հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չհարուցելու մասին որոշման առկայությունը, Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի կողմից հրաժարականի դիմում Կառավարություն ներկայացնելը և վերջինիս կողմից այն հաստատելը, Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալի կողմից պաշտոնից ազատվելու վերաբերյալ գրավոր դիմում վարչապետին ներկայացնելը և վերջինիս կողմից նրան պաշտոնից ազատելը: Նման ձևակերպման արդյունքում նվազեցվում է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի և նրա տեղակալի գործունեության նկատմամբ ուղղակի միջամտության և կողմնակի ազդեցության հայեցողության հնարավորությունը:

Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի և նրա տեղակալի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են, եթե նա պաշտոնավարման ընթացքում ձեռք է բերել հիվանդություն կամ ֆիզիկական արատ, որը տևական ժամանակահատվածով խոչընդոտում է կամ խոչընդոտելու է իր պաշտոնեական պարտականությունների կատարմանը, կամ ի հայտ է եկել օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված սահմանափակումներից որևէ մեկը, կամ նա խախտել է «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված սահմանափակումները և անհամատեղելիության պահանջները, կամ նա խախտել է քաղաքական գործունեությամբ զբաղվելու արգելքը, ի հայտ են եկել փաստեր, որ նա նշանակման պահին չի համապատասխանել ներկայացվող պահանջներին:

Հակակոռուպցիոն կոմիտեի առաջին կազմը ձևավորվել է 2021 թ. հոկտեմբերի 23-ին:[9] Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի ընտրության մրցութային խորհուրդը կազմված էր Կառավարության, ԲԴԽ-ի, Գլխավոր դատախազի ներկայացուցիչներից, քաղաքացիական հասարակության և միջազգային մեկական փորձագետից: Խորհրդի կազմում թեկնածություն չի առաջարկել Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը, ինչպես նաև բացակայել է ԱԺ-ի խորհրդից լիազորված պատգամավորը: Քաղաքացիական հասարակության երկրորդ՝ Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի (ԹԻՀԿ) ներկայացուցիչը ընտրության գործընթացի կեսից դադարեցրել է իր անդամակցությունը, քանի որ իր մասնակցությամբ հնարավորություն չի ունեցել լիարժեքորեն նպաստելու կոմիտեի նախագահի թեկնածուների բարեվարքության և մասնագիտական որակների գնահատման և բարձր պաշտոնի համար արժանի թեկնածուների ընտրության համար պատշաճ մեխանիզմների ձևավորմանը:[10]

[9] ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի պաշտոնական կայք, https://anticorruption.am/hy/pages/show/history

[10] ԹԻՀԿ, ԹԻՀԿ ներկայացուցիչը դադարացրել էր իր անդամությունը հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի ընտրության մրցութային խորհրդում, 03.08.2021, https://transparency.am/hy/media/news/article/3152 (դիտված՝ 28.02.2025 թ.):

Ինչպես վկայում են միջազգային կազմակերպությունների զեկույցները, Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի առաջին ընտրությունն իրականացվել է թափանցիկ ընթացակարգով, սակայն այն քննադատության է ենթարկվել քաղաքացիական հասարակության կողմից մրցույթին մասնակցող թեկնածուների սակավաթիվ քանակի համար:[11] Հակակոռուպցիոն կոմիտեի ղեկավար կազմի նշանակման պայմաններում փորձագետների գնահատումներով առկա էր քաղաքական գործոնի նշանակալի ազդեցություն:[12] Մրցույթում Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ նշանակվեց Սասուն Խաչատրյանը, ով տվյալ պահին հանդիսանում էր լուծարման ենթակա Հատուկ քննչական ծառայության պետ:[13]

Ընդհանուր առմամբ, Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի ընտրության առավել խոցելի դրույթը նույն անձի երկու անգամ անընդմեջ պաշտոնում նշանակվելու հնարավորությունն է, որը կարող է որոշակի ակնկալիքներ ստեղծել և՛ թեկնածուի, և՛ նշանակող կառույցի՝ վարչապետի կամ Կառավարության մոտ, ինչը կարող է հարցականի տակ դնել Կոմիտեի անկախությունը և նրա գործառույթների պատշաճ և անկողմնակալ իրականացման ապահովումը:[14]

Հակակոռուպցիոն կոմիտեի մանդատը (2 միավոր)

Հակակոռուպցիոն կոմիտեն ունի հստակ մանդատ, այն է՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով իր ենթակայությանը վերապահված՝ ենթադրյալ կոռուպցիոն հանցագործություններով մինչդատական քրեական վարույթի կազմակերպումը, ենթադրյալ կոռուպցիոն հանցագործություններով մինչդատական քրեական վարույթի իրականացումը, «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով օպերատիվ-հետախուզական գործունեության իրականացումը:

Հակակոռուպցիոն կոմիտեի վերը նշված գործառույթները համահունչ են հակակոռուպցիոն միջազգային փաստաթղթերի բովանդակությանը, մասնավորապես՝ ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի 36-րդ հոդվածով, ինչպես նաև Ջակարտայի սկզբունքներով հակակոռուպցիոն իրավապահ մարմիններին ներկայացվող պահանջներին:

Հակակոռուպցիոն կոմիտեին վերապահված մանդատը՝ գործառույթների ու լիազորությունների շրջանակը, սահմանված է «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով, իսկ առավել մանրամասն խնդիրներն ու գործառույթները՝ Հակակոռուպցիոն կոմիտեի կանոնադրությամբ: Այսպես, Կոմիտեի խնդիրները ներառում են՝

1. ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված առերևույթ կոռուպցիոն հանցագործությունների կապակցությամբ նախաքննության կազմակերպումը և իրականացումը,
2. կոռուպցիոն հանցագործությունների հայտնաբերումը, նախականխումը, կանխումը, խափանումը և բացահայտումը,

[11] Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանց, Հայաստանի 5-րդ գնահատման զեկույց, 2024, https://doi.org/10.1787/3c82f87d-en (դիտված՝ 28.02.2025 թ.):
[12] Հետք, Սասուն Խաչատրյանը նշանակվեց Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ, 16.04.2021, https://hetq.am/hy/article/135772 (դիտված՝ 28.02.2025 թ.):
[13] Նույն տեղում:
[14] Կոմիտեի նախագահի կախվածությունը գործադիրից մասնավորապես կասկածի տակ դրվեց 2024 թ. ՀՀ վարչապետի՝ իրավապահ մարմինների աշխատանքից դժգոհության ֆոնին հրաժարականի դիմում ներկայացնելու արդյունքում, https://www.azatutyun.am/a/sasoun-khachatryann-azatman-dimum-e-grel/33206102.html (դիտված՝ 28.02.2025 թ.):

3. իր լիազորությունների շրջանակներում «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով օպերատիվ-հետախուզական գործունեության կազմակերպումը և իրականացումը,
4. իր իրավասության սահմաններում առերևույթ կոռուպցիոն հանցագործությունների մասին հաղորդումների ընդունումը, գրանցումը, քննարկումը, նյութերի նախապատրաստումը,
5. իր իրավասության սահմաններում հանցագործության կատարմանը նպաստող հանգամանքների պարզումը,
6. իր գործունեության վերաբերյալ վիճակագրական հաշվետվությունների վարումը,
7. քննչական և օպերատիվ-հետախուզական աշխատանքների կատարելագործումը, գիտության և տեխնիկայի ձեռքբերումների, ինչպես նաև այդ ոլորտների դրական փորձի, նախաքննության և օպերատիվ-հետախուզական գործունեության կազմակերպման առաջավոր ձևերի և մեթոդների ներդնումը,
8. հանցագործությունների բացահայտման, քննության մեթոդիկայի մշակման կատարելագործումը:

Կարելի է եզրակացնել, որ Հակակոռուպցիոն կոմիտեն լիարժեքորեն օժտված է ՀՀ իրավական համակարգի/մոդելի մեջ հաստատված իրավապահ մարմինների գործառույթներով, ինչպես նաև՝ ի տարբերություն այլ քննչական մարմինների՝ ունի օպերատիվ գործունեություն ծավալելու լիազորություն և ռեսուրսներ:

Իրավասության շրջանակը (1 միավոր)

Հակակոռուպցիոն կոմիտեին օրենսդրությամբ վերապահված է իրավասության բավականին լայն շրջանակ ենթադրյալ կոռուպցիոն հանցագործություններով մինչդատական քրեական վարույթի կազմակերպման, ենթադրյալ կոռուպցիոն հանցագործություններով մինչդատական քրեական վարույթի իրականացման, օպերատիվ-հետախուզական գործունեության իրականացման մանդատին հետևելու նպատակով:

«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ Կոմիտեն կազմակերպում և իրականացնում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով իր ենթակայությանը վերապահված՝ ենթադրյալ կոռուպցիոն հանցագործություններով մինչդատական քրեական վարույթը: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածը սահմանում է, որ նախաքննությունը ՀՀ քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ վարույթներով կատարում են Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչները:

ՀՀ քրեական օրենսգրքի Հավելված 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքների ցանկը վկայում է, որ Հակակոռուպցիոն կոմիտեի իրավասությունը տարածվում է ոչ միայն հանրային, այլ նաև մասնավոր հատվածի վրա:

Միաժամանակ պետք է նշել, որ Հակակոռուպցիոն կոմիտեի ռեսուրսների անբավարար լինելու հիմքով 2024 թ. հունվարի 16-ին ՀՀ արդարադատության նախարարության (ԱՆ) կողմից մշակված և ՀՀ ԱԺ կողմից ընդունված փոփոխություններով,[15] կատարվեց լրացում ՀՀ քրեական

[15] «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք, 16.01.2024 թ., https://www.arlis.am/documentview.aspx?docid=189458

օրենսգրքի հավելված 1-ում և կրճատվեց Հակակոռուպցիոն կոմիտեի իրավասությունը: Կատարված փոփոխություններով՝ 441-րդ «Պաշտոնատար անձի կողմից իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելը կամ լիազորություններն անցնելը» և 549-րդ «Իշխանազանցությունը կամ իշխանությունը չարաշահելը» հոդվածներով սահմանված հանցանքները համարվում են կոռուպցիոն՝ բացառությամբ, երբ «արարքը կատարվել է ոչ շահադիտական շահագրգռվածությունից ելնելով և բռնություն գործադրելով, բռնություն գործադրելու սպառնալիքով կամ զենք կամ հատուկ միջոց օգտագործելով»: Առաջարկվող փոփոխությունն ընդունելի չէր մասնագիտական շրջանակներում, քանի որ կոռուպցիոն հանցագործությունների պարտադիր հատկանիշ կարող է լինել ոչ միայն շահադիտական շահագրգռվածությունը, այլ նաև այլ շարժառիթներ, ինչպես օրինակ՝ անձնական այլ շահագրգռվածությունը և խմբային շահերը:[16] Ըստ փոփոխությունների, եթե պաշտոնատար անձը ազգականին զուտ օգտակար լինելու դրդմամբ, օգտագործում է իր պաշտոնեական լիազորությունները ի վնաս պետական շահերի, և այդ արարքն էական վնաս է պատճառում պետության օրինական շահերին՝ նշված հանցանքը չի համարվելու կոռուպցիոն հանցագործություն, ինչն արմատապես հակասում է կոռուպցիայի էությանը, կոռուպցիոն հանցագործությունների առանձնահատկություններին և ՀՀ կողմից որդեգրված կոռուպցիայի դեմ պայքարի հիմնաքարերին:

Հետաքննության և հետապնդման լիազորություններ (2 միավոր)

Հակակոռուպցիոն կոմիտեին վերապահված մանդատի շրջանակներում Կոմիտեն օժտված է ենթադրյալ կոռուպցիոն հանցագործություններով մինչդատական քրեական վարույթի կազմակերպման և իրականացման լիազորություններով:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածով սահմանված է քրեական վարույթ նախաձեռնելու պարտականությունը, իսկ 178-րդ հոդվածով նկարագրված է քրեական վարույթ նախաձեռնելու կարգը, որի համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածով նախատեսված աղբյուրից առերևույթ հանցանքի մասին պատշաճ հաղորդում ստանալու յուրաքանչյուր դեպքում քննիչն անհապաղ, սակայն ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում, կազմում է քրեական վարույթ նախաձեռնելու մասին արձանագրություն, իսկ դատախազը, սույն օրենսգրքով սահմանված քննչական ենթակայության կանոններին համապատասխան, այն վերահասցեագրում է իրավասու քննչական մարմնի ղեկավարին քրեական վարույթ նախաձեռնելու հարցը լուծելու համար:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համաձայն՝ ի լրումն այլ լիազորությունների, քննիչն օժտված է հետաքննության մարմնին գաղտնի քննչական գործողություններ և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու վերաբերյալ հանձնարարություններ տալու, ինչպես նաև հետաքննության մարմնից օպերատիվ-հետախուզական միջոցառումների և գաղտնի քննչական գործողությունների արդյունքները պահանջելու լիազորություններով: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 209-րդ հոդվածը սահմանում է, որ այնպիսի քննչական գործողությունները, ինչպիսիք են բնակարանում խուզարկությունը և առգրավումը, դեպքի վայր չհանդիսացող բնակարանում զննումը և դեպքի վայր հանդիսացող բնակարանում հետագա

[16] ԹԻՀԿ, Կարծիք «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ, 2023, https://transparency.am/hy/publication/pdf/346/10765 (դիտված՝ 28.02.2025 թ.): «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ամփոփաթերթ, https://www.e-draft.am/index.php/projects/6275/digest

զննումը, թվային խուզարկությունը, նամակագրության և հաղորդակցության այլ ձևերի առգրավումը, բժշկական, նոտարական, բանկային կամ հարակից գաղտնիք պարունակող փաստաթղթերի և առարկաների առգրավումը, ինչպես նաև էլեկտրոնային սարքերում կամ կրիչներում պարունակվող թվային տվյալների առգրավումը, կատարվում են բացառապես դատարանի որոշման հիման վրա:

Հարկ է նշել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 232-րդ հոդվածի համաձայն՝ քննիչը կարող է նաև տեղեկատվության պահանջ ներկայացնել վարույթի համար նշանակություն ունեցող հանգամանքների մասին տեղեկությունների տիրապետող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններին, իրավաբանական անձին կամ ցանկացած այլ կազմակերպությանը: Տեղեկատվության պահանջը պարտադիր է դրա հասցեատիրոջ համար՝ բացառությամբ այն դեպքերի, երբ հայցվող տեղեկությունն օրենքով պաշտպանվող գաղտնիք է, լրատվական գործունեություն իրականացնողը կամ լրագրողը չի ցանկանում բացահայտել տեղեկատվության աղբյուրը, պահանջվում են առանձին փաստաթղթեր, առարկաներ կամ այլ նյութեր, անձը ենթադրում է, որ դա հետագայում ողջամտորեն կարող է օգտագործվել կամ մեկնաբանվել ի վնաս իրեն, իր ամուսնու կամ մերձավոր ազգականի: Քննիչը ներկայացված գրավոր պահանջում նշում է այն ժամկետը, որի ընթացքում անհրաժեշտ է ներկայացնել պահանջվող տեղեկատվությունը: Հայցվող տեղեկությունը պետք է տրամադրվի տեղեկանքի տեսքով, որն էլ հավելվածի ձևով հետագայում կցվում է տեղեկատվության պահանջի արձանագրությանը:

Բացի այդ, առկա հուշագրերի հիման վրա, հիմք ընդունելով «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածը, օպերատիվ-հետախուզական մարմինները ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնից կարող են ստանալ անձանց բանկային գաղտնիք կազմող տվյալների ընդհանուր վերլուծությունը, թեև դրանք չեն կցվում քրեական վարույթին և չեն կարող դառնալ ապացույց:

Համաձայն 2019-2022 թթ. ՀՀ Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների եզրափակիչ գնահատման և մոնիտորինգի զեկույցի՝ «Հակակոռուպցիոն կոմիտեն հասանելիություն ունի ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության բնակչության պետական ռեգիստրին, ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության էլեկտրոնային ռեգիստրին, ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի տվյալների բազային, ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրին, ՀՀ ԱՆ քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության էլեկտրոնային ռեգիստրին, ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության էլեկտրոնային ռեգիստրին, Պետական եկամուտների կոմիտեի տվյալների բազային, Կադաստրի կոմիտեի տվյալների բազային, սակայն ՀՀ Հակակոռուպցիոն կոմիտեն հասանելիություն չունի շարժական գույքի նկատմամբ կալանք դնելու վերաբերյալ համակարգին: ՀՀ Հակակոռուպցիոն կոմիտեն արդեն իսկ ունի կենտրոնական դեպոզիտարիայի տեղեկատվական բազային հասանելիություն: Վերջնական գործարկման հետ կապված տեխնիկական աշխատանքներն ավարտական փուլում են»: Ինչպես նշված է կատարված գործողությունների նկարագրությունում, ՀՀ քննչական կոմիտեում այլ պետական մարմինների տվյալների բազաներին հասանելիությունն ապահովվում է «Էկենգ» ՓԲԸ կողմից, սակայն վերջինիս միջոցով վերոնշյալ տեղեկատվական բազաներից ստացված տեղեկատվությունն ամբողջական

չէ: Ուստի կարելի է եզրակացնել, որ իրավապահ մարմինները լիարժեքորեն օժտված չեն ոչ իրավական դաշտում և ոչ էլ գործնականում բավարար մեխանիզմներով էլեկտրոնային եղանակով հարցումների միջոցով պետական մարմինների այն տեղեկատվական բազաներին հասանելիություն ստանալու համար, որոնք անհրաժեշտ են կոռուպցիոն և այլ տնտեսական հանցագործությունների նախականխման, արդյունավետ քննությանը և բացահայտմանը:

Այսպես, ՀՀ Հակակոռուպցիոն ռազմավարությունից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագրով նախատեսվել է մինչև 2026 թվականը գործարկել ինտեգրված հարթակ, որը ապահովում է հետախուզության ստորաբաժանումների, քննչական և դատախազական մարմինների, ակտիվների վերադարձման մասնագետների միջև տեղեկատվության ակտիվ և անվտանգ փոխանակումը, ինչպես նաև հասանելիությունը այլ պետական մարմինների տվյալների բազաներին:

Առաջարկություններ ներկայացնելու և կիրարկելու լիազորություններ (1 միավոր)

«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Կոմիտեի նախագահն իր իրավասության սահմաններում ընդունում է ենթաօրենսդրական, ներքին և անհատական իրավական ակտեր, որոնց նախագծերի մշակման աշխատանքների, այլ գերատեսչությունների կողմից շրջանառության մեջ դրված իրավական ակտերի նախագծերի կապակցությամբ Կոմիտեի կողմից տրվող կարծիքների, առաջարկությունների և դիտողությունների մշակման աշխատանքների իրականացումը վերապահված է Հակակոռուպցիոն կոմիտեի իրավական ապահովման վարչությանը:[17] Հակակոռուպցիոն կոմիտեի իրավական ապահովման վարչությանը նաև ընձեռված է համապատասխան ստորաբաժանումներից տեղեկատվության ստացման, ոլորտների և դրանց առանձին ծրագրերի վերլուծության իրականացման, դրանց բարելավման կամ առանձին ուղղությունների ու ոլորտի մասնագիտական ծրագրերի վերաբերյալ առաջարկությունների տրամադրման լիազորություններ:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի համաձայն և՝ Հակակոռուպցիոն կոմիտեն իրավասու է մշակելու նորմատիվ իրավական ակտեր, որի շրջանակում պարտավոր է կազմակերպել և անցկացնել հանրային քննարկում ՀՀ կառավարության 2018 թ. հոկտեմբերի 10-ի N 1146-Ն «Հանրային քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը» սահմանելու մասին որոշման համաձայն՝ հաշվի առնելով հանրային կարծիքները: Այդուհանդերձ, որևէ հրապարակային տվյալ առկա չէ Կոմիտեի կողմից մշակված նորմատիվ իրավական ակտերի վերաբերյալ: Միևնույն ժամանակ, ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ Սասուն Խաչատրյանի 2022 թ. հոկտեմբերի 24-ի ելույթի համաձայն՝ 2022 թ. ընթացքում Կոմիտեի կողմից մշակվել են 29 նորմատիվ իրավական ակտերի նախագծեր, 107 ներքին իրավական ակտեր: Ուսումնասիրվել են այլ մարմինների նախաձեռնած 133 իրավական ակտերի նախագծերը, որոնց վերաբերյալ ներկայացվել են առաջարկություններ և կարծիքներ:[18] Սրան հակասում է Հակակոռուպցիոն կոմիտեի պատասխանը, որի համաձայն օրենքից բխող մշակման ենթակա ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի, ինչպես նաև

[17] ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի «ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի կանոնադրությունը հաստատելու մասին» N 02-Լ հրաման, 15.10.2021 թ. https://anticorruption.am/public/uploads/files/file-U3j8154rsB.pdf (դիտված՝ 28.02.2025 թ.):
[18] ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ Սասուն Խաչատրյանի ելույթը, 24.10.2022, https://anticorruption.am/hy/news/view/173 (դիտված՝ 28.02.2025 թ.):

առհասարակ մշակված ենթաօրենսդրական ակտերի վերաբերյալ առանձնացված հաշվառում չի իրականացվում:

Նույն օրենքի տրամաբանության համաձայն՝ Հակակոռուպցիոն կոմիտեն նաև իրավասու է ներկայացնելու կարծիքներ, առաջարկություններ և դիտողություններ այլ մարմինների կողմից ընդունվող նորմատիվ իրավական ակտերի վերաբերյալ, որոնք կարող են հաշվի առնվել կամ չառնվել այդ ակտերը մշակող կամ ընդունող մարմինների՝ Կառավարության կամ Ազգային ժողովի (ԱԺ) կողմից: Կոմիտեի տարեկան հաղորդումների համաձայն՝ Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից 2021 թ.-ին նորմատիվ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ ներկայացված կարծիքների, առաջարկությունների և դիտողությունների քանակը 5-ն է, 2022 թ.-ին՝ 58-ը, 2023 թ.-ին՝ 50-ը:[19] Ներկայացված կարծիքներից, առաջարկություններից և դիտողություններից՝ ընդունվածների մասով ևս Կոմիտեն հաշվառում չի իրականացնում:

«*Կոմիտեի կողմից կայացրած որոշումների, եզրակացությունների, ինչպես նաև իրավասու մարմիններին ներկայացրած առաջարկությունների և դրանց քննարկման արդյունքների վերաբերյալ արձագանքման մեխանիզմների վերաբերյալ առանձնացված հաշվառում չի իրականացվում»:*

(Հակակոռուպցիոն կոմիտե)

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեն իր գործունեության ընթացքում բացահայտված կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող հարցերի, կարգավորման բացերի և թերությունների շտկման վերաբերյալ իրավասու մարմիններին ներկայացնում է, այսպես կոչված, «միջնորդագրեր»: Մասնավորապես, 2021 թ. հոկտեմբերի 23-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացվել է 18, 2022 թ.-ին՝ 36, իսկ 2023 թ.-ին՝ 39 միջնորդագիր:[20] Միաժամանակ, «միջնորդագրեր» եզրույթը, Հակակոռուպցիոն կոմիտեի կանոնադրության համաձայն, վերաբերում է մինչդատական վարույթի ընթացքում բացահայտված հանցանքների կատարմանը նպաստող հանգամանքները վերացնելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու համար համապատասխան մարմիններին ներկայացվող առաջարկներին, ուստիև տվյալ եզրույթի կիրառումը շփոթեցնող է:

Իրավական ինքնավարությունը (1 միավոր)

ՀՀ Սահմանադրության 178-րդ հոդվածով սահմանվում է, որ քննչական մարմիններն օրենքով սահմանված դեպքերում և կարգով կազմակերպում և իրականացնում են մինչդատական քրեական վարույթը, և որ քննչական մարմինների կարգավիճակը, լիազորությունները, կազմավորման և գործունեության կարգը սահմանվում են օրենքով: Այսպես, Հակակոռուպցիոն կոմիտեն, որպես քննչական մարմին, համարվելով նաև սահմանադրական կարգավիճակ ունեցող անկախ մարմին, օժտված է ինքնուրույն որոշումներ կայացնելու հնարավորությամբ և հայեցողությամբ:

Հակակոռուպցիոն կոմիտեն վարույթների կազմակերպման և իրականացման գործընթացում ունի լիակատար հայեցողություն: Մասնավորապես, «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով սահմանվում է, որ Հակակոռուպցիոն կոմիտեն կազմակերպում և

[19] ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե, Հաղորդում տարեկան գործունեության մասին, 2021-2023 թթ., https://anticorruption.am/hy/pages/show/report (դիտված՝ 28.02.2025 թ.):
[20] ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի 2024 թ. նոյեմբերի 6-ի թիվ Ե/2267-2024 պատասխանը ԹԻՀԿ 2024 թ. հոկտեմբերի 15-ի թիվ 24/104 հարցմանը:

իրականացնում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով իր ենթակայությանը վերապահված՝ ենթադրյալ կոռուպցիոն հանցագործություններով մինչդատական քրեական վարույթը: Օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ Հակակոռուպցիոն կոմիտեն իր լիազորություններն իրականացնելիս, ինչպես նաև իր կառուցվածքին, աշխատանքների կազմակերպման կարգին վերաբերող որոշումներն ընդունելիս անկախ է և ենթարկվում է միայն Սահմանադրությանը և օրենքներին: Միաժամանակ, պետք է նշել, որ Հակակոռուպցիոն կոմիտեում կոռուպցիոն հանցագործություններով նախաձեռնված մինչդատական վարույթների նկատմամբ հսկողություն է իրականացնում ՀՀ գլխավոր դատախազությունում ձևավորված Հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչությունը:

«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի համաձայն՝ Հակակոռուպցիոն կոմիտեին վերապահված լիազորությունների իրականացման գործում Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի, նրա ընտանիքի անդամների կամ նրա զբաղեցրած բնակելի և ծառայողական տարածքների անձեռնմխելիության նկատմամբ ոչ իրավաչափ ներգործության սպառնալիքի դեպքում Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի պահանջով իրավասու պետական մարմինները պարտավոր են անհապաղ ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի, նրա ընտանիքի անդամների և նրա զբաղեցրած բնակելի և ծառայողական շինությունների անվտանգությունն ապահովելու ուղղությամբ: Միևնույն ժամանակ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չէ Կոմիտեի ղեկավար կազմի անձեռնմխելիություն իր մանդատի շրջանակում կատարված գործողությունների համար:

Գործառնական ինքնավարությունը (2 միավոր)

Հակակոռուպցիոն կոմիտեի բնականոն գործունեությունն ապահովում են նրա կառուցվածքային ստորաբաժանումները: Դրանք ներառում են 5 քննչական, ներքին անվտանգության և օպերատիվ-հետախուզական վարչությունները: Հակակոռուպցիոն կոմիտեի կանոնադրությունը, կառուցվածքը, հաստիքացուցակը և աշխատողների քանակը հաստատվում են Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի կողմից:

Հակակոռուպցիոն կոմիտեի կառուցվածքի մեջ մտնում են՝

- Հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձինք (80 հաստիք)՝ Կոմիտեի նախագահը, նրա տեղակալները, Կոմիտեի վարչությունների և բաժինների պետերը, նրանց տեղակալները՝ բացառությամբ օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող վարչությունների և բաժինների ղեկավարների և նրանց տեղակալների, Կոմիտեի հատկապես կարևոր գործերով ավագ քննիչները, հատկապես կարևոր գործերով քննիչները, ավագ քննիչները, քննիչները,
- Հակակոռուպցիոն կոմիտեում օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող պաշտոններ զբաղեցնող անձինք (120 հաստիք)՝ օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող ստորաբաժանման ղեկավար, օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող վարչությունների և բաժինների ղեկավարները և նրանց տեղակալները, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող պաշտոններ զբաղեցնող անձինք,

- Հակակոռուպցիոն կոմիտեում հայեցողական պաշտոն զբաղեցնող անձինք (8 հաստիք)՝ Կոմիտեի նախագահի օգնականները, խորհրդականները, Կոմիտեի նախագահի տեղակալների օգնականները, Կոմիտեի մամուլի քարտուղարը,
- քաղաքացիական ծառայողները՝ Հակակոռուպցիոն կոմիտեի գլխավոր քարտուղարը, նրա տեղակալը և Կոմիտեի հիմնական գործառույթների իրականացմանն աջակցող ստորաբաժանումների ծառայողները, ինչպես նաև քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձինք (62 հաստիք):

Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալներին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է ՀՀ վարչապետը: Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահին լիազորություն է վերապահված նախագահի տեղակալների պաշտոնը զբաղեցնելու համար անցկացված մրցույթում հաղթող ճանաչված մասնակիցների ցուցակից իր հայեցողությամբ ընտրել մեկ թեկնածու, այնուհետև առաջարկել վարչապետին:

Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում է Հակակոռուպցիոն կոմիտեում հայեցողական պաշտոն զբաղեցնող անձանց:

Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողներն (ինքնավար պաշտոն զբաղեցնող անձինք, օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող անձինք) ընտրվում են մրցութային կարգով: Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների թեկնածուների ցուցակը համալրում է մրցութային հանձնաժողովը: Վերջինս կազմավորում և դրա գործունեության կարգը նույնպես հաստատում է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը:

Ինքնավար պաշտոնների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձինք՝ բացառությամբ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի և նրա տեղակալների, մասնագիտական պատրաստում են անցնում Արդարադատության ակադեմիայում «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով: Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը համապատասխան ուսումնառությունն ավարտած թեկնածուների ցուցակը ստանալուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում, կատարում է նշանակում համապատասխան պաշտոնում:

Հակակոռուպցիոն կոմիտեի գլխավոր քարտուղարին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է տվյալ մարմնի ղեկավարը՝ համաձայն «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի: Քաղաքացիական ծառայության մյուս պաշտոններում, ինչպես նաև տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց նշանակում և պաշտոններից/աշխատանքից ազատում է գլխավոր քարտուղարը ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի գործունեության շարունակականության ապահովման տեսանկյունից օրենսդրորեն ամրագրված է, որ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի բացակայության կամ պաշտոնեական պարտականությունները կատարելու անհնարինության դեպքում նրա հանձնարարությամբ նրան փոխարինում է Կոմիտեի նախագահի տեղակալներից մեկը, իսկ հանձնարարության բացակայության դեպքում՝ Կոմիտեի նախագահի՝ առավել երկար մասնագիտական ստաժ ունեցող տեղակալը:

Ընդհանուր առմամբ, կարելի է եզրակացնել, որ Հակակոռուպցիոն կոմիտեն անմիջական վերահսկողություն է իրականացնում իր անձնակազմի ընտրության, հեռացման և

տեղափոխման նկատմամբ, ինչպես նաև Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի բացակայության դեպքում ապահովում է լիազորությունների շարունակականությունը:

Լիազորությունների քաղաքական նպատակներով օգտագործումը (1 միավոր)

«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքով ամրագրված է քաղաքական չեզոքության սկզբունքը, որի համաձայն Կոմիտեի ծառայողը չի կարող լինել որևէ կուսակցության անդամ կամ այլ կերպ զբաղվել քաղաքական գործունեությամբ: Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողը ցանկացած հանգամանքում պարտավոր է դրսևորել քաղաքական զսպվածություն և չեզոքություն:

Քաղաքական չեզոքության մասին նշվում է Freedom House իրավապաշտպան կազմակերպության Nations in Transit 2023 զեկույցում: Մասնավորապես, այն մասին, որ Հակակոռուպցիոն կոմիտեն ստեղծման պահից ի վեր բարձր մակարդակի հետաքննություններ է ձեռնարկել ... (մի շարք պաշտոնատար անձանց նկատմամբ)՝ չնայած ամբաստանյալների՝ վարչապետ Փաշինյանի հետ սերտ քաղաքական կապերին:[21] Ամերիկայի Միացյալ Նահանգների (ԱՄՆ) պետական դեպարտամենտի 2024 թ. Հայաստանի մարդու իրավունքների զեկույցում նույնպես արձանագրվել է, որ Կառավարությունը բազմաթիվ քրեական գործեր է հարուցել նախկին բարձրաստիճան պաշտոնյաների և նրանց հարազատների, խորհրդարանականների, նախկին նախագահների, իսկ մի քանի դեպքերում՝ դատական համակարգի անդամների ու նրանց հարազատների դեմ՝ մի քանի հազարից մինչև միլիոնավոր դոլարների դրամական արժեքների հետ կապված գործերով:[22] Միևնույն ժամանակ, զեկույցում ընդգծվել է նախկին բարձրաստիճան պաշտոնյաների նկատմամբ գործերը ընտրողաբար հարուցելու և ներկայիս ոչ ընդդիմադիր բարձրաստիճան պաշտոնյաների նկատմամբ գործեր չհարուցելու խնդիրը:

Հետազոտության ընտրված ժամանակահատվածում ԹԻՀԿ-ն չի արձանագրել Հակակոռուպցիոն կոմիտեին՝ որպես գործիք կամ այլ դրդապատճառներով քաղաքական իշխանության կողմից քաղաքական հակառակորդների դեմ կիրառելու՝ մամուլում, լրատվամիջոցներում, ընդդիմադիր քաղաքական գործիչների կողմից հայտարարություններում բացահայտված փաստեր:

Միևնույն ժամանակ, փորձագետների մոտ առկա են Կոմիտեի՝ քաղաքական նպատակներով օգտագործման վերաբերյալ կասկածներ, ինչը մասամբ հետևանք է Կոմիտեի վարույթում գտնվող գործերի վերաբերյալ անբավարար հրապարակային պաշտոնական տեղեկատվության:

«Հակակոռուպցիոն կոմիտեն լավ էլ օգտագործվում է ընդդիմադիրների դեմ: Կոռուպցիոն բնույթի հանցագործություններով՝ ներառյալ որոշ քաղաքական ընդդիմադիրների վերաբերյալ հարուցված գործերը, որոնք քննվում էին Հատուկ քննչական ծառայությունում, փոխանցվել են Հակակոռուպցիոն կոմիտե՝ վերջինս պատասխանատվություն է կրում նաև այդ քրեական գործերի համար: Առավել ևս, որ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը նույն անձն է, որ ղեկավարում էր Հատուկ քննչական ծառայությունը»:

[21] Freedom House իրավապաշտպան կազմակերպություն, Nations in Transit 2023 զեկույց, 2024, https://freedomhouse.org/country/armenia/nations-transit/2023 (դիտված՝ 28.02.2025 թ.):
[22] ԱՄՆ Պետդեպարտամենտ, 2022 թվականի Հայաստանի մարդու իրավունքների զեկույց, 2024, https://www.state.gov/wp-content/uploads/2023/03/415610_ARMENIA-2022-HUMAN-RIGHTS-REPORT.pdf (դիտված՝ 28.02.2025 թ.):

«Այն փաստը, որ Արթուր Վանեցյանը՝ Սասուն Խաչատրյանի հետ հեռախոսազանգի ձայնագրության հրապարակումից հետո նշանակվեց Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ՝ քաղաքական խնդիր է, քաղաքական նպատակ է հետապնդում»:

(Փորձագետ)

Առաջարկություններ

1. Վերանայել և վերացնել Հակակոռուպցիոն կոմիտեի ղեկավարի պաշտոնավարման ժամկետը երկարաձգելու ընթացքում 2 անգամ անընդմեջ պաշտոնում նշանակվելու հնարավորությունը:
2. Սահմանադրական փոփոխությունների ներքո դիտարկել քննչական մարմինների, մասնավորապես՝ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի՝ ՀՀ Ազգային ժողովի կողմից նշանակվելու նպատակահարմարությունը՝ հնարավորինս նվազեցնելու Կոմիտեի կախվածությունը գործադիրից:
3. Հակակոռուպցիոն կոմիտեի տեղակալների նշանակումն ու հեռացումը վերապահել Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահին:
4. Օրենսդրորեն սահմանել Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի և տեղակալի թեկնածուների ընտրության և նշանակման չափանիշներ, մասնավորապես՝ հակակոռուպցիոն ոլորտի մասնագիտացում:
5. Օրենսդրորեն նախատեսել Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի և նրա տեղակալների համար շարունակական վերապատրաստում անցնելու պարտադիր պահանջ՝ հիմք ընդունելով միջազգային զարգացող փորձը:
6. Օրենսդրորեն ամրագրել, որ ԿԿՀ-ի կողմից տրված բացասական բնույթի եզրակացության պարագայում Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի և տեղակալների թեկնածուների ընտրության ու առաջադրման դեպքում մրցութային խորհրդի որոշումը հրապարակվում է՝ ներառելով համապատասխան հիմնավորումը և, առկայության դեպքում, հատուկ կարծիքները:
7. Օրենքով սահմանել Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի և տեղակալների մրցույթի հրապարակայնությունը և տեսագրման ու հեռարձակման պահանջը:
8. Վերանայել Հակակոռուպցիոն կոմիտեում հայեցողական պաշտոններ ունենալու նպատակահարմարության հարցը և նախատեսել, որ դրանք ամբողջովին կամ մեծամասամբ լինեն հանրային ծառայողներ:
9. Վերանայել ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված կոռուպցիոն հանցագործությունների ցանկը և, համապատասխանաբար, ընդլայնել Հակակոռուպցիոն կոմիտեի մանդատն ու իրավասությունների շրջանակը՝ ներառելով մինչդատական քրեական վարույթի իրականացումը միջազգային պայմանագրերով նախատեսված բոլոր կոռուպցիոն հանցանքներով՝ առանց նախատեսելու լրացուցիչ ու չհիմնավորված հատկանիշներ:
10. Հակակոռուպցիոն կոմիտեին օրենքով և գործնականում օժտել բավարար մեխանիզմներով՝ պետական մարմինների տեղեկատվական էլեկտրոնային բազաներին ու համակարգերին (օրինակ՝ ԿԿՀ հայտարարագրերի ռեեստր, պրոբացիայի ծառայության համակարգ, քրեակատարողական ծառայության համակարգ և այլն) հասանելիություն ստանալու համար, որոնք անհրաժեշտ են կոռուպցիոն հանցագործությունների նախականխման, արդյունավետ քննության և բացահայտման համար:

1.2. Հակակոռուպցիոն կոմիտեի ապահովվածությունը ֆինանսական և մարդկային ռեսուրսներով

Հակակոռուպցիոն կոմիտեի ֆինանսական և մարդկային ռեսուրսներով ապահովվածությունը գնահատելու համար հիմք են հանդիսացել հետևյալ ցուցանիշները՝

- **Բյուջեի համամասնությունը,** որը գնահատում է Հակակոռուպցիոն կոմիտեի բյուջեի միջին հարաբերակցությունը ընդհանուր պետական բյուջեի նկատմամբ:
- **Բյուջեի բավարար լինելը**, որը գնահատում է Հակակոռուպցիոն կոմիտեի բյուջեի բավարարությունը իր գործառույթներն իրականացնելու համար, սահմանափակ բյուջետային միջոցների պատճառով չիրականացված գործառույթները և դրա արդյունքում դոնոր կազմակերպությունների ֆինանսավորմանն ապավինելը:
- **Բյուջեի անվտանգությունը և կայունությունը**, որը գնահատում է Հակակոռուպցիոն կոմիտեի տարեկան բյուջետային հայտի հաստատման հարցում առաջացող խնդիրները, բյուջեի հատկացման ժամկետները, հաստատված բյուջեում կատարված էական փոփոխությունները, դրանց պատճառները, բյուջետային հատկացումներին կցված պայմանները, ինչպես նաև հատկացված բյուջետային միջոցների սահմանված ժամկետում տրամադրման խախտումները:
- **Աշխատակազմի աշխատավարձը և խրախուսումը**, որը գնահատում է Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի աշխատավարձերի սանդղակների և խրախուսումների մանրամասները, վարձատրության և խրախուսումների փոփոխությունները՝ աշխատավարձերի մրցունակությունը մասնավոր հատվածի, ինչպես նաև պետական հատվածի այլ քաղաքացիական ծառայողների աշխատավարձերի համեմատ:
- **Աշխատակազմի ընտրությունը**, որը գնահատում է Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի հավաքագրման ներքին ընթացակարգերը, դրանց արժանիքահենությունը (հիմնված է արժանիքների և կրթական որակավորման վրա) և թափանցիկությունը:
- **Հետաքննության և հետապնդման փորձագիտությունը**, որը գնահատում է Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի գիտելիքներն ու հմտությունները կոռուպցիայի հետաքննության և հետապնդման ոլորտում: Այն հաշվարկվում է Կոմիտեի անձնակազմի (հատկապես քննության և վարույթների մեթոդների) կրթական կամ որակավորման մակարդակի և վերապատրաստումների, ինչպես նաև Կոմիտեի անձնակազմի միջին աշխատանքային ստաժի տեղեկատվության հիման վրա: Որպես փորձագիտության մակարդակի ցուցիչ կիրառվում է նաև Կոմիտեի հետաքննության և հետապնդման գործառույթների համար պատասխանատու աշխատակիցների թափուր հաստիքների քանակը:
- **Անձնակազմի ուսուցումը և վերապատրաստումը**, որը գնահատում է Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի վերապատրաստման մակարդակը և հիմնված է վերապատրաստման հասանելի դասընթացների քանակի ու տեսակի, ինչպես նաև դրանց մասնակցած աշխատակիցների քանակի ու վերապատրաստմանը հատկացված բյուջեի ցուցանիշների վրա:
- **Անձնակազմի կայունությունը**, որը գնահատում է Հակակոռուպցիոն կոմիտեի կադրերի հոսունության մակարդակը, Հակակոռուպցիոն կոմիտեի և այլ պետական մարմիններ կամ հակառակը անձնակազմի ժամանակավորապես գործուղման, փոխադրման կամ ռոտացիայի պայմանները:

Գծապատկեր 3. Հակակոռուպցիոն կոմիտեի ֆինանսական և մարդկային ռեսուրսներով ապահովվածության մակարդակը

Ինչպես երևում է գծապատկերից, Հակակոռուպցիոն կոմիտեի ֆինանսական և մարդկային ռեսուրսներով ապահովվածության մակարդակը գնահատվել է 62.5 %՝ առավելագույն 16-ից կազմելով 10 միավոր:

Բյուջեի համամասնությունը (0 միավոր)

Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության ֆինանսական ապահովվածությունն իրականացվում է «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով,[23] պետական բյուջեի ծախսային մասում Հակակոռուպցիոն կոմիտեի ծախսերը ներկայացվում են առանձին տողով:

2021-2023 թթ. Հակակոռուպցիոն կոմիտեի ֆինանսավորումը կազմել է ՀՀ պետական բյուջեի ծախսերի 0.1 %-ից պակաս: Չնայած 2021-2023 թթ. ՀՀ պետական բյուջեից Հակակոռուպցիոն կոմիտեի փաստացի ֆինանսավորումն ավելացել է 2021 թ. համեմատ 2022 թ. մոտ 6 անգամ (298,808.4-ից հասնելով 1,898,126.6 ՀՀ դրամի), իսկ 2023 թ. 2022 թ. համեմատ՝ 43.56 % (1,898,126.6-ից հասնելով 3,363,360.8 ՀՀ դրամի), այդուհանդերձ, նախորդ տարիների ընթացքում Հակակոռուպցիոն կոմիտեին հատկացված բյուջետային միջոցների տեսակարար կշիռը 2021 թ. 0.001491 %-ից 2023 թ.-ին հասել է բյուջեի ընդհանուր ծախսերի միայն 0.0132 %-ին:

Միաժամանակ, 2021 թ.-ին «Հակակոռուպցիոն գործերի քննության ապահովում» ծրագրի համար օգտագործվել է նախատեսված միջոցների ընդամենը 22.5 %-ը՝ 210.4 մլն ՀՀ դրամ, որն ուղղվել է «Կոռուպցիոն գործերի քննության արդյունավետության բարձրացում» միջոցառմանը: Ցածր կատարողականը պայմանավորված է այն հանգամանքով, որ Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեությունը նախատեսված էր 2021 թ. հուլիս ամսից, սակայն Կոմիտեն ամբողջությամբ ձևավորվել է միայն տվյալ տարվա նոյեմբերին, ուստի մինչև տարեվերջ հաստիքներն ամբողջությամբ չէին համալրվել, և չէին ավարտվել գնման գործընթացները:

[23] «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, 24.06.1997 թ., https://www.arlis.am/documentview.aspx?docid=175826

2022 թ.-ին Հակակոռուպցիոն կոմիտեին ՀՀ պետական բյուջեից հատկացվել է 1.5 մլրդ ՀՀ դրամ, որն ապահովել է ծրագրային ցուցանիշի 86.7 % կատարողական, որը հիմնականում պայմանավորված է թափուր հաստիքներով: Միջոցները գրեթե ամբողջությամբ ուղղվել են կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման և քննության ապահովմանը:

2023 թ.-ին Հակակոռուպցիոն կոմիտեին տրամադրվել է ավելի քան 2.6 մլրդ ՀՀ դրամ, որն ապահովել է ծրագրային ցուցանիշի 91.4 % կատարողական՝ կրկին պայմանավորված թափուր հաստիքներով: Միջոցների զգալի մասը՝ 2.5 մլրդ ՀՀ դրամը, ուղղվել է «Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման և քննության ապահովման» միջոցառմանը, որը կատարվել է 91.8 %-ով: Նախորդ տարվա համեմատ Հակակոռուպցիոն կոմիտեի ծախսերն աճել են 75.3 %-ով կամ 1.1 մլրդ ՀՀ դրամով:

2021 թ.-ին Հակակոռուպցիոն կոմիտեի տեխնիկական հագեցվածության ապահովման համար նախատեսված միջոցները չեն օգտագործվել, քանի որ ՀՀ Հակակոռուպցիոն կոմիտեն ամբողջությամբ ձևավորվել է 2021 թ. նոյեմբերի վերջին, անցկացվել են մրցույթներ, սակայն ժամանակի սղության պատճառով գնման գործընթացները չեն ավարտվել: Նույն հանգամանքով պայմանավորված՝ Հակակոռուպցիոն կոմիտեի տրանսպորտային սարքավորումներով հագեցվածության ապահովման նպատակով հատկացված միջոցներն օգտագործվել են 27.8 %-ով՝ կազմելով 33.4 մլն ՀՀ դրամ: 2021 թ. համեմատ 2022 թ.-ին պետական բյուջեից ԱՆ-ին տրամադրվող «Հակակոռուպցիոն քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիտորինգի իրականացման» ծրագրի ծախսերն աճել են 3.2 անգամ՝ հիմնականում պայմանավորված Հակակոռուպցիոն կոմիտեի տեխնիկական հագեցվածության ապահովման և էլեկտրոնային ռեսուրսների ստեղծման կամ արդիականացման նախագծերի ապահովման նպատակով միջոցների հատկացմամբ: Իսկ 2022 թ. համեմատ նույն ծրագրի ծախսերը 2023 թ.-ին նվազել են 12.5 %-ով՝ հիմնականում պայմանավորված 2022 թ.-ին Հակակոռուպցիոն կոմիտեի տեխնիկական հագեցվածության և տրանսպորտային սարքավորումներով հագեցվածության ապահովման նպատակով միջոցների հատկացմամբ: 2023 թ.-ին Հակակոռուպցիոն կոմիտեի տեխնիկական հագեցվածության ապահովման համար օգտագործվել է նախատեսված միջոցների 75.7 %-ը կամ 310 մլն ՀՀ դրամ: Ծրագրից շեղումն առաջացել է գնումների արդյունքում առաջացած տնտեսումների, ինչպես նաև հայտարարված մրցույթների չկայանալու հետևանքով:

Հակակոռուպցիոն կոմիտեի բնականոն գործունեության ապահովման համար չկանխատեսված ծախսերի ֆինանսավորման նպատակով նախատեսվում է հակակոռուպցիոն կոմիտեի պահուստային ֆոնդ, որը ներկայացվում է բյուջեի առանձին տողով: Պահուստային ֆոնդի մեծությունը հավասար է տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքով Հակակոռուպցիոն կոմիտեում պաշտոն զբաղեցնող անձանց աշխատավարձի ֆոնդի 2 %-ին: Պետական բյուջեի ծախսային մասում Հակակոռուպցիոն կոմիտեի ծախսերը ներկայացվում են առանձին տողով:

Միաժամանակ, պետք է փաստել, որ Հակակոռուպցիոն կոմիտեն օժտված չէ լիարժեք ռեսուրսներով, որպեսզի կարողանա ավելի արդյունավետ իրականացնել իր գործառույթները: Այսպես, Կոմիտեի մասնագիտական ստորաբաժանումների հաստիքները բավարար չեն: Կոմիտեում առկա չէ վերլուծական բաժին: Աջակցող ստորաբաժանումների աշխատակիցների (օրինակ՝ տնտեսագետ-փորձագետների) քանակը չի բավարարում կոռուպցիոն վարույթների ծավալը ողջամիտ ժամկետում քննելու համար: Առկա չեն իրազեկման միջոցառումներ կազմակերպելու և իրականացնելու անհրաժեշտ կադրեր: Նախատեսված չեն բավարար

աշխատակազմի շարունակական վերապատրաստումներ: Ակնկալվող գործառույթները պատշաճ իրականացնելու համար անհրաժեշտ են համապատասխան բյուջետային հատկացումներ:

Բյուջեի բավարար լինելը (2 միավոր)

2021-2023 թթ. Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից ՀՀ կառավարություն ներկայացված բյուջետային հայտերի բավարարման մակարդակը հնարավոր է չափել միայն 2023 թ. համար: Հաշվի առնելով, որ 2021 թ.-ին Հակակոռուպցիոն կոմիտեն դեռևս ստեղծված չէր, 2021-2022 թթ. Կոմիտեի գործունեության ապահովմանն ուղղվող առաջիկա տարվա ծախսերը նախատեսվել են ՀՀ ԱՆ կողմից ներկայացված նախնական հայտին համապատասխան: 2023 թ. ՀՀ կառավարությունը և ԱԺ-ն Հակակոռուպցիոն կոմիտեին հատկացրել են ներկայացված հայտում նշվածից ավելի մեծ գումար, որը կազմել է բյուջետային հայտի 134.83 %-ը:

Պետական բյուջեի կատարման 2023 թ. հաշվետվության համաձայն՝ կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման և քննության ապահովման միջոցառումը կատարվել է 91.8 %-ով: 2023 թ. ընթացքում Հակակոռուպցիոն կոմիտեի վարույթում քննված քրեական գործերի ընդհանուր թիվը կազմել է 1,824 (2022 թ.՝ 1,203)՝ կանխատեսված 2,200-ի դիմաց, բացահայտված կոռուպցիոն հանցագործությունների թիվը՝ 1,632 (2022 թ.՝ 1,101)՝ կանխատեսված 1,900-ի դիմաց: 2023 թ. ընթացքում մուտքագրվել և ուսումնասիրվել են 3,738 դիմումներ և բողոքներ (2022 թ.՝ 2,611)՝ կանխատեսված 2,400-ի փոխարեն: 2022 թ. համեմատ Հակակոռուպցիոն կոմիտեի ծախսերն աճել են 75.3 %-ով կամ 1.1 մլրդ ՀՀ դրամով՝ պայմանավորված 2022 թ.-ին հաստիքների թերհամալրմամբ:

2022-2023 թթ. ընթացքում դոնոր կազմակերպությունների կողմից ֆինանսավորում չի տրամադրվել:

Վերը շարադրվածի հիման վրա կարելի է եզրակացնել, որ փաստացի հատկացված միջոցները հիմնականում բավարար են եղել Հակակոռուպցիոն կոմիտեի առջև դրված խնդիրները լուծելու համար:

Բյուջեի անվտանգությունը և կայունությունը (1 միավոր)

2022 թ. ՀՀ կառավարության կողմից ՀՀ պետական բյուջեով Հակակոռուպցիոն կոմիտեին կատարված հատկացումը նվազեցվել է, իսկ 2021 և 2023 թթ՝ ավելացվել: Բոլոր դեպքերում, Հակակոռուպցիոն կոմիտեն չի օգտագործել հատկացված միջոցները:

2021 թ.-ին Հակակոռուպցիոն կոմիտեի փաստացի ֆինանսավորումը գերազանցել է ԱԺ կողմից հաստատված մեծությունը, քանի որ տարվա ընթացքում ՀՀ կառավարությունն ավելացրել է Կոմիտեին կատարված հատկացումը: Չնայած դրան՝ Կոմիտեն չի օգտագործել հատկացված ամբողջ գումարը: Ցածր կատարողականը հիմնավորվում է այն հանգամանքով, որ Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեությունը նախատեսված էր սկսել 2021 թ. հուլիս ամսից, սակայն կառույցն ամբողջությամբ ձևավորվել է միայն նոյեմբերին: Հաստիքներն ամբողջությամբ չեն համալրվել, և չեն ավարտվել գնման գործընթացները:

2022 թ.-ին ՀՀ կառավարությունը նվազեցրել է ԱԺ կողմից կատարված հատկացումները, սակայն Հակակոռուպցիոն կոմիտեն չի օգտագործել անգամ ԱԺ կողմից ի սկզբանե կատարված հատկացումը: Տվյալ տարում ապահովվել է 86.7 % կատարողական, որը պայմանավորված է թափուր հաստիքներով:

2023 թ.-ին ՀՀ կառավարությունը կրկին ավելացրել է ՀՀ պետական բյուջեով Հակակոռուպցիոն կոմիտեին կատարված հատկացումը, սակայն փաստացի ֆինանսավորումը եղել է ավելի փոքր: Տվյալ տարում ապահովվել է ծրագրային ցուցանիշի 91.4 % կատարողական, որը նույնպես պայմանավորված է թափուր հաստիքներով:

«ՀՀ կառավարության 2022 թ. հոկտեմբերի 13-ի 1594-Ն որոշմամբ Հակակոռուպցիոն կոմիտեին հատկացվել է 761.6 մլն ՀՀ դրամ, որից 217.4 մլն-ը չի օգտագործվել: Հակակոռուպցիոն կոմիտեն ստեղծվել է 2021թ. հոկտեմբերի 23-ին և 2022 թ.-ին դեռևս գտնվում էր համալրման փուլում, ուստի այդ հանգամանքով էլ պայմանավորված է չօգտագործված միջոցները: 2023թ. պետական բյուջեներով հաստատված մեծությունները ՀՀ կառավարության որոշումներով ավելացնելուց հետո Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից ճշտված (ավելացված) միջոցները ամբողջությամբ ծախսվել են»:

(ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե)

Հակակոռուպցիոն կոմիտեի հավաստմամբ՝ Կոմիտեի 2021, 2022 և 2023 թթ. տարեկան բյուջետային հայտերը հաստատելու գործում խնդիրներ չեն առաջացել, հատկացված բյուջետային միջոցների տրամադրման սահմանված ժամկետների խախտումներ չեն եղել:

Այդուհանդերձ, Հակակոռուպցիոն կոմիտեի ֆինանսական ինքնուրույնության ապահովման սկզբունքի տեսանկյունից խնդրահարույց է ՀՀ կառավարության լիազորությունը՝ փոփոխելու կամ վերաբաշխելու ԱԺ կողմից Կոմիտեին հատկացված բյուջետային միջոցները՝ առանց վերջինիս համաձայնության:

Աշխատակազմի աշխատավարձ և խրախուսում (1 միավոր)

Հակակոռուպցիոն կոմիտեի գրավչությունը ուղղակիորեն պայմանավորված է աշխատակազմի վարձատրության և խրախուսման հանգամանքներով:

Հակակոռուպցիոն կոմիտեի աշխատակազմի վարձատրության և խրախուսման հարցերը կարգավորվում են «Պետական պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների վարձատրության մասին» ՀՀ օրենքով: Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների աշխատավարձի չափն էականորեն տարբերվում է մյուս քննչական մարմինների ծառայողների աշխատավարձի չափից: Մասնավորապես, Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի աշխատավարձի չափը 12 %-ով գերազանցում է Քննչական կոմիտեի նախագահի աշխատավարձի չափը: Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչի աշխատավարձի չափը 14 %-ով գերազանցում է Քննչական կոմիտեի քննիչի աշխատավարձը:

Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողները, բացի հիմնական աշխատավարձից ունեն նաև լրացուցիչ աշխատավարձի, այդ թվում՝ հավելումների և հավելավճարների իրավունք: Ընդ որում, Կոմիտեի ծառայողների համար նախատեսված հավելումների չափն անհամեմատ մեծ է այլ քննչական մարմինների ծառայողներին և նույնիսկ դատավորներին տրվող հավելումների չափից: Լրացուցիչ աշխատավարձը չի կարող գերազանցել հիմնական աշխատավարձի 30 %-ը, սակայն այս սահմանափակումը չի տարածվում առանձնակի ռիսկային և մասնագիտացում

պահանջող պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ, որոնք ստանում են 92 %-ի չափով հավելում:[24]

Հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող և օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող անձանց նույնպես տրվում է հավելավճար դասային աստիճանի համար: Հակակոռուպցիոն կոմիտեում ամենացածր դասային աստիճանի համար հավելավճարը սահմանվում է պաշտոնային դրույքաչափի 3 %-ի չափով, իսկ դրան հաջորդող յուրաքանչյուր հերթական ավելի բարձր դասային կամ դիվանագիտական աստիճանի համար հավելավճարի չափը աճում է 1 %-ով:

Մասնավոր ոլորտի նկատմամբ Հակակոռուպցիոն կոմիտեի աշխատակազմի քաղաքացիական ծառայողների վարձատրությունը ավելի քիչ մրցունակ է: Այսպես, ՀՀ քաղաքացիական ծառայության գրասենյակի կողմից «պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց բազիսային աշխատավարձի և վարձատրության համակարգի վերաբերյալ» 2024 թ. իրականացված զեկույցի արդյունքների համաձայն «քաղաքացիական ծառայության և ոչ պետական ոլորտի վարձատրության մակարդակների համադրությունը ցույց է տալիս, որ ոչ պետական հատվածում իրավաբանի միջին աշխատավարձը պետական հատվածի համապատասխան ցուցանիշից բարձր է 27.1 %-ով, կառավարման ոլորտի մասնագետինը (այդ թվում՝ մենեջերներ, տնօրեններ)՝ 11.1 %-ով, իսկ տնտեսագետինը՝ 2.5 %-ով բարձր է պետական ծառայությունում: Այս պայմաններում, բարձր կոմպետենցիաներով ու փորձառության երկար տարիների ստաժ ունեցող մասնավոր ոլորտի աշխատակիցների համար ոչ պետական հատվածից քաղաքացիական ծառայության նույնիսկ բարձր խմբի պաշտոններ փոխադրումը կդիտվի որպես համարժեքորեն ոչ մրցունակ»:[25]

2021 թ. Հակակոռուպցիոն կոմիտեի աշխատակիցների աշխատավարձերի մեծությունները կազմել են 236.9 մլն., 2022 թ.՝ 663.5 մլն., իսկ 2023 թ.՝ 2,474.2 մլն. ՀՀ դրամ: Հակակոռուպցիոն կոմիտեի աշխատակիցների խրախուսումների մեծությունները կազմել են՝ 2021 թ.՝ 71.1 մլն., 2022 թ.՝ 186.9 մլն., իսկ 2023 թ.՝ 197.2 մլն. ՀՀ դրամ: Այսպես, Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի աշխատավարձերի և խրախուսումների համադրությունը վկայում է, որ Հակակոռուպցիոն կոմիտեի բյուջեով խրախուսումների պլանավորված մակարդակը Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի տարեկան վարձատրության ծավալում 2021 թ. կազմել է 30%, 2022 թ.՝ 28.2 %, իսկ 2023 թ.՝ 7.98 %:

Աշխատակազմի ընտրություն (2 միավոր)

Հակակոռուպցիոն կոմիտեի մարդկային ռեսուրսներով ապահովվածության համար նշանակալի ազդեցություն ունեն աշխատակազմի ընտրության մեխանիզմները:

Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողներն ընտրվում են մրցութային կարգով և պաշտոնի նշանակվում Կոմիտեի նախագահի կողմից: Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների թեկնածուների ցուցակը համալրում է մրցութային հանձնաժողովը: Վերջինս կազմավորում և

[24] Նշված դրույթը ուժը կորցրել է 2024 թ. դեկտեմբերի 4-ին ընդունված «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքով: https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=201266

[25] ՀՀ վարչապետի քաղաքացիական ծառայության գրասենյակ, Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց բազիսային աշխատավարձի և վարձատրության համակարգի վերաբերյալ զեկույց, Երևան, 2024, https://cso.gov.am/static/website/%D4%B6%D5%A5%D5%AF%D5%B8%D6%82%D5%B5%D6%81%202024.pdf (դիտված՝ 31.01.2025 թ.):

դրա գործունեության կարգը հաստատում է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը:[26] Ինքնավար պաշտոնների համալրման նպատակով մրցույթի կազմակերպման և անցկացման կարգը հաստատվել է Կոմիտեի նախագահի 08.07.2022 թ. N 15-L հրամանով:[27]

Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնների մրցույթն անցկացվում է 5 փուլով՝

1. փաստաթղթերի ուսումնասիրության փուլ,
2. թեստավորման փուլ,
3. բարեվարքության ուսումնասիրության փուլ,
4. հարցազրույցի փուլ,
5. արդյունքների ամփոփման փուլ:

«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի համաձայն՝ հարցազրույցի փուլին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող է մասնակցել նաև հոգեբան, որին ներգրավում է մրցութային հանձնաժողովը: Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնների համալրման նպատակով անցկացվող մրցույթին կարող են ներգրավվել դիտորդներ, որոնց ներգրավելու գործընթացն իրականացնում է մրցութային հանձնաժողովը: Դիտորդի թեկնածություններ կարող են ներկայացնել այն հասարակական կազմակերպությունները, որոնք ունեն հակակոռուպցիոն ոլորտում գործունեության երեք տարվա փորձառություն:[28]

Մրցույթի արդյունքների հրապարակումից հետո մրցութային հանձնաժողովը մրցույթում հաղթող ճանաչված թեկնածուների ցուցակը ներկայացնում է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահին: Ցուցակին կցվում են նաև ԿԿՀ-ի կողմից կազմված բարեվարքության վերաբերյալ խորհրդատվական եզրակացությունները: Ինքնավար պաշտոնների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձինք, «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով, մինչև նշանակումը մասնագիտական պատրաստում են անցնում Արդարադատության ակադեմիայում:
Հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող ստորաբաժանման պաշտոնները համալրվում են մրցութային հանձնաժողովի կողմից՝ Կոմիտեի նախագահի 16.11.2021 թ. N 20-L հրամանին համապատասխան:[29]

Կոմիտեի օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող ստորաբաժանման ծառայողի պաշտոնների մրցույթն անցկացվում է հետևյալ փուլերով՝

1. փաստաթղթերի ուսումնասիրություն,
2. ֆիզիկական պատրաստականության ստուգում,
3. հարցազրույցի առաջին փուլ,

[26] ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի «ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի թեկնածուների ընտրության մրցութային հանձնաժողովի կազմավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» N 20-L հրաման, 16.11.2021 թ., https://anticorruption.am/public/uploads/files/file-PntrTWUdXj.pdf (դիտված՝ 28.02.2025 թ.):
[27] ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի «Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնների համալրման նպատակով մրցույթի կազմակերպման և անցկացման կարգը սահմանելու մասին» N 15-L հրաման, 08.07.2022 թ., https://anticorruption.am/public/uploads/files/file-4Rn5VDQvw3.PDF (դիտված՝ 28.02.2025 թ.):
[28] ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի «ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնների համալրման նպատակով մրցույթի կազմակերպման և անցկացման կարգը սահմանելու մասին» N 15-L հրաման, 08.07.2022 թ.:
[29] ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի «ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող ստորաբաժանման պաշտոնները համալրելու մրցույթի անցկացման կարգը և պայմանները սահմանելու մասին» N 21-L հրաման, 16.11.2021 թ., https://www.anticorruption.am/public/uploads/files/file-xXkv5SLvqc.pdf (դիտված՝ 28.02.2025 թ.):

4. բարեվարքության ուսումնասիրություն,
5. հարցազրույցի երկրորդ փուլ,
6. արդյունքների ամփոփում:

Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող ստորաբաժանման պաշտոնները համալրելու համար անցկացվող մրցույթներին դիտորդի կարգավիճակով մասնակցելու հնարավորություն օրենսդրորեն նախատեսված չէ: Սրա հիմնական հիմնավորումը այդ զգայուն պաշտոնների գաղտնիության պահպանման խնդիրն է: Սակայն տվյալ սահմանափակումը չի ապահովում անհրաժեշտ թափանցիկություն և հաշվետվողականություն, մինչդեռ դիտորդների մասնակցությունն ավելի կամրապնդեր մրցույթների արժանահավատությունը:

2023 թ. դրությամբ Հակակոռուպցիոն կոմիտեի հաստիքների ընդհանուր թիվը կազմել է 270 միավոր, համալրման աստիճանը՝ 74 %: Այսպես, 2023 թ. դեկտեմբերի դրությամբ Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի համալրման աստիճանը կազմել է ինքնավար պաշտոնների 61.25 % (80 հաստիքներից համալրված է եղել 49-ը), օպերատիվ-հետախուզական պաշտոնների 45 % (120 հաստիքներից համալրված է եղել 54-ը), քաղաքացիական, հայեցողական ծառայության պաշտոնների, քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող պաշտոնների 100% (բոլոր 70 հաստիքները համալրված են եղել):

Հակակոռուպցիոն կոմիտեի աշխատակազմը համալրելու համար Կոմիտեի հիմնադրման պահից մինչև 2023թ. ավարտը կազմակերպվել է 70 մրցույթ, որոնցից 54-ը՝ 2022 թ.-ին, 16-ը՝ 2023 թ.-ին: Ընդհանուր առմամբ, մրցույթներին մասնակցել է 686 մարդ, որոնցից 134-ը՝ ինքնավար, 265-ը՝ օպերատիվ-հետախուզական պաշտոնների, 287-ը՝ քաղաքացիական ծառայության պաշտոնների համար: Նշված մրցույթներում հաղթող է ճանաչվել ընդամենը 185 անձ, որոնցից 72-ը՝ ինքնավար, 71-ը՝ օպերատիվ-հետախուզական պաշտոնների, իսկ 42-ը՝ քաղաքացիական ծառայության թափուր հաստիքների համալրման համար դիմած: Հաղթող ճանաչված անձանցից 181-ը նշանակվել են համապատասխան պաշտոնների:

2022-2023 թթ. ընթացքում Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի թափուր հաստիքների համալրման գործընթացից բողոքարկումների թիվը կազմել է ընդամենը 18, որոնցից 10-ը՝ օպերատիվ-հետախուզական ստորաբաժանման պաշտոնները, իսկ 8-ը՝ ինքնավար պաշտոնները համալրելու մրցույթների գործընթացից: Ընդհանուր առմամբ, ներկայացված 18 բողոքներից բոլորը մերժվել են: Դրանցից ընդամենը մեկն է վիճարկվել դատական կարգով և դեռևս դատաքննության փուլում է:

Հակակոռուպցիոն կոմիտեն հետևողական է ԿԿՀ-ի կողմից տրամադրված եզրակացությունները հիմք ընդունելու առումով: Այսպես, պաշտոնի նշանակված թեկնածուները ստացել են բարեվարքության վերաբերյալ դրական եզրակացություն՝ բացառությամբ մեկ թեկնածուի, որը նշանակվել է պաշտոնի բացասական եզրակացության պարագայում:[30]

[30] Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնների համալրման համար մրցույթում 32 դրական միավոր ստացած թեկնածուներից մեկը ունեցել է ԿԿՀ բացասական եզրակացություն, որի հիմք է հանդիսացել թեկնածուի գույքային դրության առնչությամբ արձանագրված անհամապատասխանությունները և կարգապահական պատասխանատվության և աշխատանքային գործունեության ընթացքում դրսևորած վարքագիծը: Նշված թեկնածուի վերաբերյալ միջազգային փորձագետը ևս տվել է բացասական կարծիք: Նշված թեկնածուն նշանակվել է ավագ քննիչի պաշտոնին: Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների ՀԿ, Հակակոռուպցիոն կոմիտեի ստեղծման և ընթացիկ գործունեության ուսումնասիրություն, 2023, էջ 49,

Հետաքննության և հետապնդման փորձագիտությունը (2 միավոր)

Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոններ զբաղեցնող բոլոր անձինք, «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի համաձայն, ունեն իրավագիտության բակալավրի որակավորման աստիճան կամ դիպլոմավորված մասնագետի բարձրագույն իրավաբանական կրթության որակավորման աստիճան կամ օտարերկրյա պետությունում ձեռք բերված դիպլոմավորված մասնագետի բարձրագույն իրավաբանական կրթության որակավորման աստիճան կամ համապատասխան աստիճան, որի ճանաչումն ու համարժեքության հաստատումը ՀՀ-ում իրականացվել է օրենքով սահմանված կարգով:

Համաձայն Հակակոռուպցիոն կոմիտեի 2023 թ. գործունեության վերաբերյալ հաղորդման՝ տվյալ տարվա ընթացքում արհեստավարժ կադրերի և նրանց մասնագիտական պատրաստվածության անընդհատ բարձրացման ուղղությամբ զգալի աշխատանքներ են կատարվել: Բարեվարք և մասնագիտական պատշաճ գիտելիքներ, հմտություններ ունեցող ծառայողների ընտրության, Կոմիտեի քննչական և օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող ստորաբաժանումների պաշտոնները համալրելու նպատակով կազմակերպվել ու անցկացվել է 10 մրցույթ,[31] որի ընթացքում ուսումնասիրվել և մրցութային համապատասխան փուլերով ստուգվել է 200 թեկնածու: Այդ մրցույթների արդյունքներով հաղթող են ճանաչվել ընդամենը 59 մասնակիցներ (33 ինքնավար, 26 օպերատիվ-հետախուզական պաշտոններ), որոնցից համապատասխան պաշտոնների են նշանակվել 58-ը: Մրցույթների անցկացմանը մասնակցություն են ունեցել հոգեբան[32] և դիտորդներ քաղաքացիական հասարակությունից:[33]

Մասնագիտական վերապատրաստումների առումով, 2022 թ.-ին կոռուպցիոն հանցագործությունների քննության մեթոդիկայի մասով վերապատրաստում է անցել 48 աշխատակից, իսկ 2023 թ.-ին՝ 41 աշխատակից:

Փորձագետների կարծիքով Հակակոռուպցիոն կոմիտեի հաստիքները խիստ անցկացվող մրցույթների շնորհիվ համալրվում են կարողունակ մասնագետներով:

«Մրցույթներն այդքան արագ չեն ընթանում, որովհետև, օրինակ, 12 դիմորդից 2 դիմորդ է անցնում, 15-ից 3-ն են անցնում: Այնպիսի մարդիկ չեն գալիս, որ ձեռքդ գնա նշանակես բարձր գնահատական: Այդ մարդիկ առանց պատրաստվելու գալիս են, մարդ ունենք վեց անգամ եկել է քննության, չի էլ պատրաստվում, որովհետև հույս ունի, որ մեկ անգամ էլ գա՝ կնշանակենք, բայց դա այդպես չի լինում»:

(Փորձագետ)

https://prwb.am/2023/09/13/zekuyc%e2%80%a4-hakakorupcion-komitei-steghtcman-ev-ehnthacik-gortcuneuthyan-usumnasiruthyun/ (դիտված՝ 28.02.2025 թ.):

[31] Նշենք, որ ԹԻՀԿ հարցմանն ի պատասխան՝ Հակակոռուպցիոն կոմիտեից հայտնել էին, որ աշխատակազմը համալրելու համար Կոմիտեի հիմնադրման պահից մինչև 2023 թ. ավարտը կազմակերպվել է 70 մրցույթ, որոնցից 54-ը՝ 2022 թվականին, 16-ը՝ 2023 թվականին:

[32] «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի համաձայն՝ հարցազրույցի փուլին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող է մասնակցել նաև հոգեբան, որին ներգրավում է մրցութային հանձնաժողովը:

[33] «Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնների համալրման նպատակով մրցույթի կազմակերպման և անցկացման կարգի» համաձայն՝ Կոմիտեի ինքնավար պաշտոնների համալրման նպատակով անցկացվող մրցույթին դիտորդ ներգրավելու գործընթացն իրականացնում է մրցութային հանձնաժողովը: Դիտորդի թեկնածություններ կարող են ներկայացնել այն հասարակական կազմակերպությունները, որոնք ունեն հակակոռուպցիոն ոլորտում գործունեության երեք տարվա փորձառություն: https://www.anticorruption.am/public/uploads/files/file-4Rn5VDQvw3.PDF

Անձնակազմի ուսուցումը և վերապատրաստումը (1 միավոր)

Համաձայն 2019-2022 թթ. ՀՀ Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների եզրափակիչ գնահատման և մոնիթորինգի զեկույցի՝ 2022 թ. դրությամբ Հակակոռուպցիոն կոմիտեի 32 ինքնավար պաշտոն զբաղեցնող և 40 օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող անձանցից 70%-ից ավելին անցել են վերապատրաստումներ:[34]

2022-2023 թթ. Հակակոռուպցիոն կոմիտեի աշխատակազմի աշխատակիցների ուսուցումն ու վերապատրաստումը հիմնականում իրականացվել են միջազգային կառույցների և օտարերկրյա դիվանագիտական ծառայությունների, մասնավորապես՝ ԵԱՀԿ-ի և ԱՄՆ դեսպանատան Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության բյուրոյի աջակցությամբ իրականացվող ծրագրերի շրջանակներում: ՀՀ արդարադատության ակադեմիայի կողմից 2021-2022 թթ. վերապատրաստումներ չեն կազմակերպվել: 2023թ. վերապատրաստվել է ինքնավար պաշտոնների ընդամենը 6 թեկնածու:

Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողները մասնակցել են ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Չեխիայում, Խորվաթիայում, Ալբանիայում, Վրաստանում, Ղազախստանում և Հունգարիայում կազմակերպված դասընթացների, որոնք վերաբերել են կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննությանը, քրեական հետապնդմանը, հակակոռուպցիոն բարեփոխումների փորձի ուսումնասիրությանը, ֆինանսական քննություններին և միջազգային իրավական փոխօգնությանը:

Վերապատրաստումները հիմնականում իրականացվել են միջազգային կառույցների աջակցության ծրագրերի շրջանակներում, և դրանք չեն կրել պլանավորված բնույթ և հիմնված չեն եղել անձնակազմի բացահայտված կարիքների վրա: Պետական բյուջեից Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի կարողությունների զարգացման համար առանձին միջոցառման շրջանակներում նախատեսված միջոցների և հատկացված բյուջեի մեծության համադրությունը ընդհանուր բյուջեում վկայում է, որ վերապատրաստումների համար հատկացվել է 1 %-ից պակաս բյուջե, ինչը հուշում է, որ վերապատրաստումը առաջնահերթություն չի համարվել: Բացի այդ, Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի մասնագիտական ուսուցման և վերապատրաստումների համար առկա չեն հատուկ մշակված ուսումնական պլաններ կամ ուղեցույցներ, որոնք կդյուրինացնեն իրավակիրառ պրակտիկայում ի հայտ եկած հարցերի, խնդիրների արդյունավետ լուծումը:

«Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի ուսուցման արդյունավետության ապահովման տեսանկյունից բացակայում են մասնագիտական ուսուցման և վերապատրաստումների ուսումնական պլանները կամ ուղեցույցները: Ակադեմիայում օգտագործվող նյութերը թարմացված չեն և չեն ներառում բոլոր անհրաժեշտ տեղեկությունները»:

(Փորձագետ)

[34] ՀՀ արդարադատության նախարարություն, 2019-2022 թթ. ՀՀ Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների եզրափակիչ գնահատման և մոնիթորինգի զեկույց, 2023, https://moj.am/storage/files/pages/pg_7967694028641_AC_M-A_Report_final_2023-compressed_1_.pdf (դիտված՝ 28.02.2025 թ.):

Ըստ ՀՀ վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի էլեկտրոնային տվյալների համակարգի տվյալների՝ Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի 39 քաղաքացիական ծառայողներից 2022 թ. գրասենյակի կողմից կազմակերպված կոմպետենցիաների վերաբերյալ վերապատրաստումներին մասնակցել են Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի 9 քաղաքացիական ծառայող, իսկ 2023 թ.-ին վերապատրաստվել է 27 քաղաքացիական ծառայող, որից՝ կոմպետենցիաների վերաբերյալ 4-ը, իսկ մասնագիտական գիտելիքների վերաբերյալ՝ 23-ը:

Անձնակազմի կայունությունը (1 միավոր)

Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի թափուր հաստիքների համալրման մրցույթները սկսվել են իրականացվել 2021 թ.-ից: 2021 թ. դեկտեմբերի դրությամբ Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի համալրման աստիճանը կազմել է ինքնավար պաշտոնների 77.5 % (40 հաստիքներից համալրված է եղել 31-ը), օպերատիվ-հետախուզական պաշտոնների՝ 0 %-ը և աշխատակազմի՝ 86 %-ը: 2022 թ. դեկտեմբերի դրությամբ անձնակազմի համալրման աստիճանը կազմել է ինքնավար պաշտոնների 80 %-ը (40 հաստիքներից համալրված է եղել 32-ը), օպերատիվ-հետախուզական պաշտոնների՝ 60 %-ը (70 հաստիքներից համալրված է եղել 42-ը) և աշխատակազմի՝ 91.4 %-ը: 2023 թ. դեկտեմբերի դրությամբ անձնակազմի համալրման աստիճանը կազմել է ինքնավար պաշտոնների 61.25 %-ը (80 հաստիքներից համալրված է եղել 49-ը), օպերատիվ-հետախուզական պաշտոնների՝ 45 %-ը (120 հաստիքներից համալրված է եղել 54-ը) և աշխատակազմի՝ 100 %-ը:

Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի վերաբերյալ 2021-2023 թթ. համեմատական վերլուծությունը վկայում է հոսունության աճի մասին: Այսպես, 2021 թ.-ին հաստիքները կազմել են 40 (ինքնավար, հայեցողական և օպերատիվ-հետախուզական պաշտոններ), որի պայմաններում համալրվել է 31-ը, պաշտոնից ազատվել՝ 0, թափուր են մնացել 9 հաստիքներ, ինչի արդյունքում հոսունությունը կազմել է 0 % (0/(40-9)): 2022 թ.-ին փաստացի հաստիքացուցակով 120 աշխատակիցների պաշտոններից (ինքնավար, հայեցողական և օպերատիվ-հետախուզական պաշտոններ) համալրվել է 74-ը, ազատված՝ 7, թափուր՝ 46, ինչի արդյունքում հոսունությունը կազմել է 9.4 % (7/(120-46)): Իսկ 2023 թ.-ին 200 աշխատակիցների պաշտոններից (ինքնավար, հայեցողական և օպերատիվ-հետախուզական պաշտոններ) համալրվել է 103-ը, ազատված՝ 17, թափուր՝ 97: Նշված պայմաններում հոսունությունը կազմել է 16.5 % (17/(200-97)):

2021-2023 թթ. ընթացքում Հակակոռուպցիոն կոմիտեում արձանագրված պաշտոնից ազատումների ծավալում (ընդամենը՝ 24 անձ, որից 13-ը՝ ինքնավար, 8-ը՝ օպերատիվ-հետախուզական, իսկ 3-ը՝ հայեցողական պաշտոն զբաղեցնող անձինք) պաշտոնից ազատումը՝ որպես կարգապահական տույժ, չի կիրառվել: Կոմիտեի ծառայողների վերաբերյալ բողոքներ չեն եղել, և ծառայողական քննություն չի իրականացվել: 2023 թ.-ին օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող մեկ ծառայողի նկատմամբ իրականացված նախնական ուսումնասիրության արդյունքներով հաստատվել է ծառայողի կողմից կարգապահական պատասխանատվության համար հիմք հանդիսացող կարգապահական խախտման դեպք, և վերջինիս նկատմամբ նշանակվել է կարգապահական տույժ: Հետևաբար, վերը նշված 24 անձինք պաշտոնից ազատվել են սեփական նախաձեռնությամբ՝ գրավոր դիմումի համաձայն: Հարկ է նկատել, որ Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմում հոսունության, թափուր

հաստիքների կայուն մակարդակի պահպանման, թափուր հաստիքների մրցույթների կազմակերպման արդյունքում հաղթող չճանաչված և պաշտոնի չնշանակված դեպքերի վերաբերյալ ծագող խնդիրները վերհանելու և դրանց լուծում տալու նպատակով ուսումնասիրություններ չեն իրականացվում:

Հակակոռուպցիոն կոմիտեի աշխատակազմի աճող հոսունությունը Կոմիտեում բացատրում են աշխատանքի նվազող գրավչությամբ՝ այն առումով, որ կառույցի ձևավորման սկզբնական շրջանում ծառայողների աշխատավարձն ավելի բարձր էր, մինչդեռ հետագայում՝ Դատախազության և Քննչական կոմիտեի ծառայողների աշխատավարձերը նույնպես բարձրացնելուց հետո, Հակակոռուպցիոն կոմիտեում աշխատանքը դարձավ ավելի քիչ հրապուրիչ:[35]

Փորձագետներն իրենց հերթին աճող հոսունությունը բացատրում են քննիչների ծանրաբեռնվածությամբ և մասնագիտական հեռանկարի բացակայությամբ:

«Այո, քննիչները ծանրաբեռնված են, բայց իրենց ծանրաբեռնվածությունը հիմնականում պայմանավորված է փաստաթղթերի ծավալով: Քանի որ հիմնական գործերը յուրացումների, վատնումների հետ են կապված. գրեթե բոլորը ֆինանսական բնույթի փաստաթղթեր են, մի քանի հապար էջանոց հաշվապահական փաստաթղթեր: Ծանրաբեռնվածությունը հիմնականում փաստաթղթերի ծավալով ու միջպետային փոխօգնության հարցերով է պայմանավորված»:

(Փորձագետ)

«Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչները կարիերայի աճ չեն տեսնում, դրա համար էլ դուրս են գալիս աշխատանքից և հիմնականում տեղափոխվում Դատախազություն»:

(Փորձագետ)

Առաջարկություններ

1. Մեծացնել Հակակոռուպցիոն կոմիտեի բյուջեն՝ նախատեսելով հաստիքների, աշխատակազմի վերապատրաստումների, տարբեր բնույթի վերլուծությունների, հանրային հարցումների, իրազեկման միջոցառումների բավարար ֆինանսավորում:
2. Հակակոռուպցիոն կոմիտեի ֆինանսական ինքնուրույնության բարձրացման մասով օրենսդրորեն վերանայել ՀՀ կառավարության կողմից Հակակոռուպցիոն կոմիտեի ամենամյա բյուջետային հայտը փոփոխելու և վերանայելու գործառույթը՝ պարտադիր դարձնելով Կոմիտեի համաձայնությունը:
3. Հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող պաշտոնների թեկնածուների ընտրության նպատակով անցկացվող մրցույթների կազմակերպման ու անցկացման կարգում նախատեսել հակակոռուպցիոն ոլորտի մասնագիտացած հասարակական կառույցների ներկայացուցիչների ներգրավում և գործընթացները դիտարկելու հնարավորություն:

[35] ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի 2025 թ. մարտի 19-ի թիվ Ե/2335-2025 պատասխանը ԹԻՀԿ 2025 թ. մարտի 3-ի թիվ 26/15 գրությանը:

4. Նախատեսել կարգավորում, ըստ որի Հակակոռուպցիոն կոմիտեի տարբեր պաշտոնների թեկնածուների ընտրության նպատակով իրականացվող մրցույթների մասնակից՝ անդամ կամ դիտորդ, ՔՀԿ ներկայացուցիչները պարտավորվում են ստորագրել թեկնածուների անձնական տվյալների գաղտնիության պահպանման համաձայնագիր:
5. Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի ուսուցման արդյունավետության ապահովման համար մշակել մասնագիտական ուսուցման և վերապատրաստումների ուսումնական պլաններ, ուղեցույցներ, կոռուպցիոն հանցագործությունների քննության մեթոդական ու խորհրդատվական նյութեր:
6. Կազմակերպել Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի կարողությունների բարձրացնելուն ուղղված շարունակական վերապատրաստումներ՝ իրականացնելով դրանք ինչպես դոնոր կազմակերպությունների օգնությամբ, այնպես էլ՝ նախատեսելով բավարար ֆինանսավորում ՀՀ պետական բյուջեից:
7. Ուսումնասիրել Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմում հոսունության, թափուր հաստիքների կայուն մակարդակի պահպանման, թափուր հաստիքների մրցույթների կազմակերպման արդյունքում հաղթող չճանաչված և պաշտոնի չնշանակված դեպքերի հանգամանքները և ձեռնարկել միջոցներ՝ վերացնելու բացահայտված խնդիրները:
8. Ուսումնասիրել Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի համալրման նպատակով բուհերի ուսանողների, շրջանավարտների մասնագիտական պատրաստման դասընթացների կազմակերպման նպատակահարմարությունը:
9. Վերանայել Հակակոռուպցիոն կոմիտեի հաստիքների թվաքանակը ինչպես քննչական և օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող, այնպես էլ՝ աջակցող ստորաբաժանումների համար՝ մասնավորապես ավելացնելով տնտեսագետ-փորձագետների, վերլուծաբանների հաստիքների քանակը:

1.3. Հակակոռուպցիոն կոմիտեի ներքին բարեվարքությունը և հաշվետվողականությունը

Հակակոռուպցիոն կոմիտեի ներքին բարեվարքության և հաշվետվողականության չափանիշով գնահատման համար հիմք են հանդիսացել հետևյալ ցուցանիշները՝

- **Տարեկան հաշվետվությունը**, որը գնահատում է Հակակոռուպցիոն կոմիտեի ամենամյա և կիսամյակային հաշվետվությունների առկայությունը, օրենքով սահմանված ժամկետներում դրանց մշակումը և հրապարակումը: Գնահատում է նաև Հակակոռուպցիոն կոմիտեի ամենամյա հաշվետվության մեջ ներկայացված տեղեկությունների ամբողջականությունը և հաշվետվության հասանելիությունը հանրությանը:
- **Արձագանքողականությունը տեղեկություններին, հանրության հարցումներին**, որը գնահատում է Հակակոռուպցիոն կոմիտեի թափանցիկությունը հանրության հարցումներին արձագանքելու տեսանկյունից:
- **Արտաքին վերահսկողության մեխանիզմներ**, որը գնահատում է Հակակոռուպցիոն կոմիտեի նկատմամբ արտաքին վերահսկողության մեխանիզմները՝ հատուկ ուշադրություն դարձնելով Կոմիտեի գործունեությունն անմիջականորեն վերահսկող կառույցին: Բացի այդ, դիտարկվում է վերահսկողության լրացուցիչ մեխանիզմների առկայությունը՝ կանոնավոր հաշվետվությունների ներկայացումը խորհրդարանին, արտաքին աուդիտի անցկացումը և ոլորտային վերահսկողության այլ մեխանիզմները:

- **Ներքին վերահսկողության մեխանիզմներ**, որը գնահատում է Հակակոռուպցիոն կոմիտեի ներքին վերահսկողության գործընթացները՝ ներառյալ Կոմիտեի, որպես կազմակերպության, «կառավարման ծրագրի (կորպորատիվ պլան)», «մոնիտորինգի և գնահատման շրջանակի» և «կատարողականի գնահատման մեխանիզմների» առկայությունը:
- **Գործընթացների պատշաճ պահպանում**, որը գնահատում է հանրության վստահությունը Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից իր լիազորություններն օգտագործելիս և քրեական վարույթների ներքո գտնվող անձանց հանդեպ կիրառվող ընթացակարգերի կիրառման ու պահպանման գործում պատշաճությունը, անկողմնակալությունը և արդարացի վերաբերմունքը:
- **Ազդարարողների, բողոք ներկայացնողների կողմից իրենց ինքնությունը բացահայտելու պատրաստակամությունը**, որը գնահատում է ազդարարողների, հաղորդում ներկայացնողների վստահությունը Հակակոռուպցիոն կոմիտեի գործընթացների հանդեպ:
- **Անձնակազմի նկատմամբ բողոքների քննությունը**, որը գնահատում է Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի գործունեության դեմ բողոքների քննության ընթացակարգի կիրառման արդյունավետությունը:
- **Բողոքների արդյունքները**, որը գնահատում է Հակակոռուպցիոն կոմիտեի և նրա անձնակազմի դեմ բողոքների արդյունքները, Կոմիտեի և նրա անձնակազմի սխալ վարքագծի համար ներկայացված հիմնավոր բողոքների քանակը, դրա արդյունքներով նշանակված պատասխանատվության միջոցները:
- **Բարեվարքության ներքին մեխանիզմներ**, որը գնահատում է Հակակոռուպցիոն կոմիտեի և նրա անձնակազմի վարքագծի կանոնների ամբողջականությունը (գույքի և ակտիվների հայտարարագրում, շահերի բախման կանոններ, նվերների և հյուրասիրության ընդունման, հետաշխատանքային և այլ սահմանափակումներ, անհամատեղելիության պահանջներ) և դրանց խախտումների վերացմանն ուղղված, գործնականում կիրառելի ընթացակարգերն ու ներքին բողոքների քննությունը:

Գծապատկեր 4. Հակակոռուպցիոն կոմիտեի հաշվետվողականության և ներքին բարեվարքության մակարդակը



Ինչպես ցույց է տալիս գծապատկերը, Հակակոռուպցիոն կոմիտեի ներքին բարեվարքության և հաշվետվողականության մակարդակը գնահատվել է 44.4 %՝ ապահովելով առավելագույն 18-ից 8 միավոր:

Տարեկան հաշվետվությունը (1 միավոր)

Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության հրապարակայնության և հանրային հաշվետվողականության ապահովման տեսանկյունից «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքով պահանջվող գործունեության մասին հաղորդումներից հրապարակված են 2021-2023 թթ. հաղորդումները, ինչպես նաև միայն 2022 թ. 1-ին կիսամյակի և 2023 թ. 1-ին կիսամյակի գործունեության մասին ամփոփ տեղեկատվությունը:

«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը յուրաքանչյուր տարի՝ մինչև հունվարի 31-ը, Կառավարություն և Ազգային ժողով է ներկայացնում նախորդ տարվա գործունեության մասին գրավոր հաղորդում: Կոմիտեի տարեկան գործունեության հաղորդումը ԱԺ ներկայացնելուց հետո քննարկելու ընթացակարգ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքով ապահովված չէ: Մասնավորապես, տվյալ օրենքի 26-րդ գլխում կանոնակարգված է միայն սահմանադրական մարմինների կողմից ԱԺ-ին ներկայացվող հաղորդումների քննարկման գործընթացները: Ինքնավար և այլ պետական մարմինների մասով նման կարգավորումները բացակայում են, ուստի Հակակոռուպցիոն կոմիտեի՝ ԱԺ ներկայացված տարեկան գործունեության հաղորդումը, օրենքի պահանջի և կարգավորումների բացակայության պայմաններում, ԱԺ-ի կողմից չի քննարկվում և «ի գիտություն» չի ընդունվում, ինչը խնդրահարույց է նաև հրապարակայնության ապահովման տեսանկյունից:[36]

[36] Հարկ է նշել, որ 2024 թ. դեկտեմբերի 4-ին օրենքը փոփոխվել է: Ընդունված փոփոխությունների համաձայն՝ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը յուրաքանչյուր տարի՝ մինչև ապրիլի 1-ը, Ազգային ժողով է ներկայացնում հաղորդում Հակակոռուպցիոն կոմիտեի նախորդ տարվա գործունեության մասին: Ազգային ժողովի նիստում հաղորդումը քննարկվում է «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 126-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով՝ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի ներկայացմամբ: https://www.arlis.am/documentview.aspx?docid=200929

Հակակոռուպցիոն կոմիտեի կայքի տվյալները թույլ չեն տալիս եզրակացնել, թե արդյոք կիսամյակային հաղորդումները ներկայացված են «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածով սահմանված ժամկետներում: Համենայն դեպս, քանի որ կայքում առկա չեն 2022 և 2023 թվականների 2-րդ կիսամյակների վերաբերյալ հաշվետվությունները, կարելի է եզրահանգել, որ խախտվել է օրենքի՝ յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո՝ 1-ամսյա ժամկետում, իր պաշտոնական կայքում գործունեության մասին ամփոփ տեղեկատվության հրապարակման պահանջը:

Հետազոտության ժամանակահատվածի համար առկա կիսամյակային և տարեկան հաղորդումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք համապարփակ չեն և չեն պարունակում Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) կողմից սահմանված կոռուպցիոն հանցանքների վիճակագրությունը: Մասնավորապես, հաշվետվություններում առկա չեն կոռուպցիոն հանցագործությունների քանակական տվյալները՝ ըստ առանձին տեսակների, ինչպես նաև քրեական վարույթների կարճման վերաբերյալ տեղեկությունները, կարճման հիմքերը և քանակական տվյալները, քրեական հետապնդումները դադարեցնելու վերաբերյալ տվյալները,[37] Կոմիտեի ծառայողների վերաբերյալ առկա կարգապահական վարույթների վերաբերյալ տեղեկատվությունը, բյուջեի կատարողականի հաշվետվությունները, բարձրաստիճան պաշտոնատար անձանց և/կամ քաղաքական ազդեցություն ունեցող անձանց վերաբերյալ տեղեկությունները և այլն: Հակակոռուպցիոն կոմիտեի կիսամյակային և տարեկան հաղորդումների՝ հրապարակման ենթակա հարցերի շրջանակը գործնականում որոշում է Կոմիտեի նախագահը, սակայն Կոմիտեի պաշտոնական www.anticorruption.am կայքում առկա չէ Կոմիտեի նախագահի որևէ որոշում, որը կկարգավորեր հաղորդման բովանդակությունը, ներկայացման պահանջները, տեղեկատվության կառուցվածքը, զեկույցում ներառված հարցերի շրջանակը:

Արձագանքողականությունը տեղեկություններին, հանրության կողմից հարցումներին (1 միավոր)

Հանրության հարցումներին և տեղեկություններին Հակակոռուպցիոն կոմիտեի արձագանքման տեսանկյունից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 186-րդ[38] հոդվածով սահմանված է նախաքննության տվյալների հրապարակման անթույլատրելիությունը: Մյուս բոլոր դեպքերում Հակակոռուպցիոն կոմիտեի, ինչպես և այլ պետական մարմինների վրա, տարածվում են «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի դրույթները,[39] որի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը և (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկատվություն տնօրինողին և ստանալու այդ տեղեկությունը:

Հակակոռուպցիոն կոմիտեն հանրությունից ստացվող տեղեկությունների ու հարցումների աղբյուրների ու եղանակի վերաբերյալ (հեռախոս, նամակ, էլեկտրոնային փոստ, e-request,

https://www.arlis.am/documentview.aspx?docid=200924
http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=15220&Reading=0

[37] Հարկ է նշել, որ Հակակոռուպցիոն կոմիտեի 2024 թ. տարեկան հաղորդման մեջ նշված է քրեական հետապնդումը դադարեցված և կարճված քրեական գործերի թիվը, https://www.anticorruption.am/hy/pages/show/report (դիտված՝ 28.02.2025 թ.):

[38] ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, Հոդված 186, 30.06.2021 թ., https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=154763

[39] «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք, Հոդված 6, 23.09.2003 թ., https://www.arlis.am/documentview.aspx?docid=175858

կայքում հետադարձ կապի պատուհան, ֆեյսբուքյան էջ) հաշվառում չի վարում: Էլեկտրոնային հարցումների միասնական e-request.am հարթակի վիճակագրությունը վկայում է, որ Հակակոռուպցիոն կոմիտեն չի գտնվում ամենապահանջված 10 պետական մարմինների շարքում:

Հակակոռուպցիոն կոմիտեն նշել է, որ հանրության կողմից (հասարակական կազմակերպություններից, ֆիզիկական և իրավաբանական անձանցից, փաստաբաններից և այլն) իրեն ներկայացված բոլոր հարցումներին պատասխանել է գրավոր: 2022 թ. ընթացքում ստացվել է 6 հարցում/գրություն, իսկ 2023 թ. ընթացքում՝ 21 հարցում/գրություն, որոնցից բոլորին տրվել է գրավոր պատասխան:

Փորձագետներն անբավարար են գնահատել Հակակոռուպցիոն կոմիտեի արձագանքողականությունը:

«Մենք նույնիսկ գործ ունենք Հակակոռուպցիոն կոմիտեի դեմ վարչական դատարանում, երբ նրանք [Կոմիտեն] տեղեկատվություն չեն տրամադրել շատ հնչեղ կոռուպցիոն գործերով կարճման վարույթների որոշումների մասով՝ հղում անելով անձնական տեղեկատվության պաշտպանության անհրաժեշտությանը: Մենք էլ պնդում ենք, որ դրանք հասարակ գործեր չեն, այլ բարձր հնչեղություն ունեցող կոռուպցիոն գործեր են, և Հակակոռուպցիոն կոմիտեն է հայտարարություն տարածել առ այն, որ այսինչ փաստերի հիման վրա քննվում են կոռուպցիոն գործեր Հակակոռուպցիոն կոմիտեում, և մի քանի ամիս հետո մենք հարցում ենք անում ու պարզում ենք, որ այդ գործերը կարճվել են: Ընդ որում, որ հարցնում ենք, առավելագույնը ինչ ասում են՝ դա հանցակազմի բացակայության հիմքով է կարճվել: Բայց այդ հանցակազմի մեջ մտնում է չորս տարր, այս չորս տարրերը ունեն իրենց հատկանիշները, ինչը շատ լայն մեկնաբանման հիմքեր է տալիս: Իրենց թվում է, որ եթե նշում են հանցակազմի բացակայությունը՝ որպես կարճման հիմք, դա բավարար պետք է լինի: Բայց դա բավարար չէ իրականում, նամանավանդ երբ խոսքը գնում է հանրային միջոցների յուրացման մասին կամ այլ այդ տեսակի հանցանքների մասին»:

(Փորձագետ)

Արտաքին վերահսկողության մեխանիզմները (0 միավոր)

Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության նկատմամբ արտաքին վերահսկողական մեխանիզմները թերի են:

Հակակոռուպցիոն կոմիտեում կոռուպցիոն հանցագործություններով նախաձեռնված մինչդատական վարույթների նկատմամբ հսկողություն է իրականացնում ՀՀ գլխավոր դատախազությունում ձևավորված Հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչությունը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը յուրաքանչյուր տարի՝ մինչև հունվարի 31-ը, Կառավարություն և Ազգային ժողով է ներկայացնում նախորդ տարվա գործունեության մասին գրավոր հաղորդում: «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքով ԱԺ-ի կողմից քննչական մարմինների գործունեության վերահսկողություն ուղղակիորեն նախատեսված չէ:[40] Այսինքն չկա

[40] 2024 թ. դեկտեմբերի 4-ին ընդունված օրենսդրական փոփոխություններով՝ 2025 թ.-ից սկսած Ազգային ժողովի նիստում հակակոռուպցիոն կոմիտեի նախորդ տարվա գործունեության մասին հաղորդումը քննարկվելու է «Ազգային ժողովի

պարտավորություն քննարկելու Կոմիտեի նախագահի կողմից ներկայացվող հաղորդումը, թեև հնարավոր է Կոմիտեին վերաբերելի օրենսդրական նախաձեռնություններով կամ խորհրդարանական լսումների մեխանիզմով Կոմիտեին վերաբերելի հարցերով քննարկումների կազմակերպումը: ՀՀ կառավարության կողմից Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության մասին գրավոր հաղորդման՝ ՀՀ կառավարության նիստին քննարկման ընթացակարգ կամ այլ իրավական վերահսկողական կարգավորում նախատեսված չէ:

Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության նկատմամբ վերահսկողություն կարող է իրականացնել նաև ՀՀ հաշվեքննիչ պալատը, որն իր ստուգումներն իրականացնում է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքով իրեն վերապահված՝ հանրային ֆինանսների և սեփականության ոլորտում հաշվեքննության իրականացման պետական բյուջեի և համայնքային բյուջեների միջոցների, ստացված փոխառությունների ու վարկերի, պետական և համայնքային սեփականության օգտագործման օրինականության և արդյունավետության նկատմամբ լիազորությունների հիման վրա: Հաշվեքննիչ պալատի 2021, 2022 և 2023 թթ. տարեկան ծրագրերի և հաշվետվությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Կոմիտեի գործունեության հաշվեքննությունը ներառված չի եղել Հաշվեքննիչ պալատի տարեկան ծրագրերում:[41]

«Հաշվեքննիչ պալատն աշխատում է ռիսկերի վրա հիմնված մեթոդիկայով, իսկ Հակակոռուպցիոն կոմիտեն կամ ԿԿՀ-ն շատ փոքր բյուջեներ ունեն: Հաշվեքննիչ պալատի համար դրանք ռիսկային չեն և ընդհանրապես հետաքրքրություն չեն ներկայացնում: Այսինքն, այստեղ լուրջ ծախսեր առկա չեն, որ Հաշվեքննիչ պալատը դրանց հետևից գնա»:

(Փորձագետ)

ՀՀ վարչապետին ենթակա պետական վերահսկողական ծառայությունը, «Պետական վերահսկողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն, իրավասու է վերահսկողություն իրականացնելու հակակոռուպցիոն ծրագրերի ու միջոցառումների կատարման նկատմամբ:[42] Այնուամենայնիվ, պետական վերահսկողական ծառայությունը՝ Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից հակակոռուպցիոն ծրագրերի ու միջոցառումների իրականացման և գործունեության նկատմամբ ուսումնասիրություններ կամ ստուգումներ չի իրականացրել:

կանոնակարգ» սահմանադրական օրենքի 126-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով՝ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի ներկայացմամբ, https://www.arlis.am/documentview.aspx?docid=200924

[41] ՀՀ հաշվեքննիչ պալատի գործունեության ծրագրեր, http://armsai.am/hy/annual-program (դիտված՝ 28.02.2025 թ.):

[42] «Պետական վերահսկողական ծառայության մասին» ՀՀ օրենք, Հոդված 5, 23.03.2018 թ., https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=120947

Ներքին վերահսկողության մեխանիզմները (1 միավոր)

Հակակոռուպցիոն կոմիտեի ներքին վերահսկողության մեխանիզմները սահմանվում են Կոմիտեի կողմից:[43]

Հակակոռուպցիոն կոմիտեի կայքում բացակայում է Կոմիտեի ներքին մոնիտորինգի մեխանիզմների վերաբերյալ որևէ փաստաթուղթ: Համաձայն ԹԻՀԿ-ի կողմից Հակակոռուպցիոն կոմիտեի հարցման արդյունքների՝ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի 2022 թ. փետրվարի 4-ի N 02-Լ հրամանով հաստատվել է Կոմիտեի ներքին կարգապահական կանոնները հաստատելու մասին փաստաթուղթը:

Հակակոռուպցիոն կոմիտեի վրա տարածվում են «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի կարգավորումները: Հակակոռուպցիոն կոմիտեի կանոնադրությամբ սահմանվում է, որ Հակակոռուպցիոն կոմիտեն ունի ներքին աուդիտի բաժին: Ներքին աուդիտի բաժնի գործառույթները նույնպես սահմանված են Հակակոռուպցիոն կոմիտեի կանոնադրությամբ[44]:

Հակակոռուպցիոն կոմիտեի կայքում ոչ մի տվյալ չկա ներքին աուդիտի իրականացման, 2021-2023 թվականների ընթացքում իրականացված ներքին աուդիտի հաշվետվությունների մասին: ԹԻՀԿ կողմից Հակակոռուպցիոն կոմիտեի հարցմանն ի պատասխան՝ Կոմիտեից պատասխանել են, որ ներքին աուդիտն իրականացվում է Հակակոռուպցիոն կոմիտեի համապատասխան ստորաբաժանման միջոցով, եռամսյակային ուսումնասիրությամբ, որոնց վերաբերյալ տրված հաշվետվություններով արդյունքները գնահատվել են դրական:

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում առանձին ռազմավարական ծրագիր առկա չէ: Գործում է ընդհանուր՝ ՀՀ կառավարության կողմից 2023 թ. հոկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» N 1871-Լ որոշումը:

Գործընթացների պատշաճ պահպանումը (1 միավոր)

2022 թ.-ին «Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան» հիմնադրամի կողմից ԱՄՆ միջազգային զարգացման գործակալություն (ՄԶԳ) աջակցությամբ իրականացված «Հայաստանում կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրություն - 2022» զեկույցի համաձայն՝ պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների հակակոռուպցիոն գործունեության մասին իրազեկվածության առնչությամբ հարցման արդյունքները ցույց են տվել, որ հարցվածների 44.1 %-ը հակակոռուպցիոն գործունեությամբ զբաղվող ոչ մի պետական մարմնի և հասարակական կազմակերպության ընդհանրապես չգիտի, 20.7 %-ը դժվարացել է պատասխանել այդ հարցին, իսկ 0.3 %-ը՝ հրաժարվել է պատասխանել (ընդհանուր առմամբ՝ 65.1 %):[45]

Հակակոռուպցիոն կոմիտեից հայտնել են, որ Կոմիտեի կողմից հանրային ընկալումների վերաբերյալ հարցումներ դեռևս չեն անցկացվել:

---

[43] ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի պաշտոնական կայք, օրենսդրություն բաժին, https://anticorruption.am/hy/pages/show/legislation (դիտված՝ 28.02.2025 թ.):
[44] ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի «ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի կանոնադրությունը հաստատելու մասին» N 02-Լ հրաման, 15.10.2021թ., https://www.anticorruption.am/public/uploads/files/file-plv0g9Xv5V.pdf (դիտված՝ 28.02.2025 թ.):
[45] Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան հիմնադրամ, Հայաստանում կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրություն, Երևան, 2022, https://www.crrc.am/wp-content/uploads/2022/11/Corruption-in-Armenia_Arm_v2.pdf (դիտված՝ 28.02.2025 թ.):

Ընդհանուր դիտարկումներով՝ Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության վերաբերյալ հանրության տեղեկացվածության մակարդակը բավականին ցածր է:

«Հաճախ հեռախոսապանգերին պատասխանելիս ուղղորդում ենք նշված խնդրով կանգահարել Հակակոռուպցիոն կոմիտե, քանի որ պարունակում է կոռուպցիոն հանցագործության մասին տեղեկություններ, իսկ դիմողներն հիմնականում նշում են, որ առաջին անգամ են լսում այդ մարմնի մասին՝ շփոթելով այն ԿԿՀ-ի հետ»:

(Փորձագետ)

«Ժողովուրդը այդքան իրազեկվածություն չունի, թե այս կամ այն քննչական մարմինը մեկը մյուսից ինչով է տարբերվում...»:

(Փորձագետ)

Քրեական վարույթների ներքո գտնվող անձանց հանդեպ կիրառվող ընթացակարգերի պատշաճ պահպանման մասով գնահատման օրինակները բացակայում են:

Ազդարարողների, բողոք ներկայացնողների կողմից իրենց ինքնությունը բացահայտելու պատրաստակամությունը (1 միավոր)

Հակակոռուպցիոն կոմիտեի 2021, 2022 և 2023 թվականների ամենամյա հաղորդումները ոչ մի տվյալ չեն պարունակում Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի նկատմամբ բողոքների թվի, այդ թվում՝ անանուն բողոքների թվի վերաբերյալ:

ԹԻՀԿ հարցման արդյունքում ստացված տվյալները ստորագրված գրավոր բողոքների և անանուն բողոքների վերաբերյալ վկայում են, որ 2021-2023 թթ. ընթացքում Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության վերաբերյալ ներկայացվել է միայն մեկ բողոք:

Հակակոռոպցիոն կոմիտեի վերաբերյալ ազդարարում կարող է ներկայացվել նաև azdararir.am հավելվածով: Տվյալ խողովակով կոմիտեի դեմ ներկայացվող բողոքները պետք է քննվեն համապատասխան հանցագործությունների քննության համար իրավասու իրավապահ մարմինների կողմից: Անանուն ազդարարումների և դրանց բովանդակության մասին առկա չէ որևէ տեղեկատվություն:

Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի նկատմամբ բողոքների քննությունը (1 միավոր)

«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածով սահմանված են Կոմիտեի ծառայողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը:

Կարգապահական խախտման ծանրությունից ելնելով՝ Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի նկատմամբ կարող են կիրառվել հետևյալ կարգապահական տույժերը՝ զգուշացում, նկատողություն, խիստ նկատողություն, դասային աստիճանի իջեցում՝ մեկ աստիճանով, պաշտոնի իջեցում՝ մեկ աստիճանով, պաշտոնից ազատում: Հակակոռուպցիոն կոմիտեում ծառայողի նկատմամբ կարգապահական տույժերը կիրառում է նրան պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը, այսինքն՝ Կոմիտեի նախագահը:

Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի նկատմամբ իրականացվում է ծառայողական քննություն, որի փուլերն են նախնական ուսումնասիրությունը և կարգապահական վարույթը: Կարգապահական խախտման փաստի առթիվ Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի

նկատմամբ ծառայողական քննություն հարուցվում է կարգապահական հանձնաժողովի որոշմամբ:

Հակակոռուպցիոն կոմիտեում ծառայողական քննություն իրականացնելու կարգը,[46] ներառյալ կարգապահական հանձնաժողովի աշխատակարգը,[47] կարգապահական հանձնաժողովի ներկայացմամբ սահմանում է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը:

Բողոքների արդյունքները (1 միավոր)

Հակակոռուպցիոն կոմիտեի 2021, 2022 և 2023 թվականների ամենամյա հաղորդումները ոչ մի տվյալ չեն պարունակում Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի նկատմամբ բողոքների թվի, դրանց քննության, արդյունքում կիրառված պատասխանատվության, այդ թվում՝ կարգապահական, միջոցների կիրառման վերաբերյալ:

Ի պատասխան ԹԻՀԿ հարցման՝ Հակակոռուպցիոն կոմիտեն պատասխանել է, որ 2021-2022 թթ. ընթացքում ինչպես ինքնավար պաշտոններ զբաղեցնող, օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող ստորաբաժանման ծառայողների, այնպես էլ քաղաքացիական ծառայողների վերաբերյալ բողոքներ չեն եղել և ծառայողական քննություն չի իրականացվել:

2023 թ.-ին ինքնավար պաշտոններ զբաղեցնող ծառայողների և քաղաքացիական ծառայողների վերաբերյալ բողոքներ չեն եղել և ծառայողական քննություն չի իրականացվել: Օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող մեկ ծառայողի նկատմամբ իրականացված նախնական ուսումնասիրության արդյունքներով հաստատվել է ծառայողի կողմից «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված կարգապահական պատասխանատվության համար հիմք հանդիսացող կարգապահական խախտման դեպքը, և վերջինիս նկատմամբ նշանակվել է կարգապահական տույժ:

Բարեվարքության ներքին մեխանիզմները (1 միավոր)

Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի բարեվարքության պահանջները, շահերի բախման կառավարումը, նվերների ընդունման արգելքը սահմանված են «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով:

«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածով սահմանված է, որ Կոմիտեի ծառայողի վարքագծի կանոնները սահմանում է Կոմիտեի նախագահը՝ ԿԿՀ-ի սահմանած տիպային կանոնների հիման վրա: ԿԿՀ-ի կողմից հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնները սահմանվել են 2022 թ. հունիսի 17-ին:[48] 2023 թ. հունիսի 6-ին Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի թիվ 30-Լ հրամանով սահմանվել են Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի վարքագծի կանոնները:[49]

---

[46] ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի «ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի 2022 թ. հունվարի 27-ի 01-Լ հրամանն ուժը կորցրած ճանաչելու և ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում ծառայողական քննություն իրականացնելու կարգը սահմանելու մասին» N 57-Լ հրաման, 27.10.2023 թ., https://anticorruption.am/public/uploads/files/file-4LDhSFrRTy.pdf (դիտված՝ 28.02.2025 թ.):
[47] ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի «ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգը սահմանելու մասին» N 56-Լ հրաման, 27.10.2023 թ., https://anticorruption.am/public/uploads/files/file-UT1ycXSpcT.pdf (դիտված՝ 28.02.2025 թ.):
[48] ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի «Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնները սահմանելու մասին» N 01-Ն որոշում, 17.06.2022 թ., https://www.arlis.am/documentview.aspx?docID=164523
[49] ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի «Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի վարքագծի կանոնները սահմանելու մասին» N 30-Լ հրաման, 06.06.2023 թ., https://anticorruption.am/public/uploads/files/file-BaowEMzCK8.PDF (դիտված՝ 28.02.2025 թ.):

«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 34.1-րդ հոդվածի համաձայն՝ Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի նկատմամբ վարքագծի կանոնների խախտումների քննությունն ու լուծումն իրականացնում է կարգապահական հանձնաժողովը, որը բաղկացած է 8 անդամից: Տվյալ հոդվածով սահմանվում է կարգապահական հանձնաժողովի անդամների անկախության սկզբունքը, որի համաձայն նրանց գործառույթներն իրականացնելու առնչությամբ որևէ միջամտություն արգելվում է:

Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների բարեվարքության մեխանիզմների կիրարկման որևէ դրվագ առկա չէ: Համաձայն Հակակոռուպցիոն կոմիտեին ԹԻՀԿ հարցման պատասխանի՝ 2021, 2022 և 2023 թթ. ընթացքում Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի աշխատակիցների կողմից վարքագծի կանոնների, անհամատեղելիության պահանջների, նվերների ընդունման, այլ սահմանափակումների, շահերի բախման իրավիճակների արձանագրված դեպքեր չեն եղել:

Հակակոռուպցիոն կոմիտեի քաղաքացիական ծառայողների վարքագծի կանոնները հաստատված են քաղաքացիական ծառայությունը համակարգող փոխվարչապետի կողմից:[50]

Հակակոռուպցիոն կոմիտեի ստորաբաժանումների քաղաքացիական ծառայողների վարքագծի կանոնների խախտումների ընթացակարգերը սահմանված են «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքով՝ էլեկտրոնային հարթակում ձևավորվող էթիկայի հանձնաժողովի կողմից: ՀՀ վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի և Հակակոռուպցիոն կոմիտեի կայքերում բացակայում է որևէ տեղեկատվություն Հակակոռուպցիոն կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանումների քաղաքացիական ծառայողների կողմից վարքագծի կանոնների, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, շահերի բախման իրավիճակների քննության և եզրակացություն կայացնելու մասին:

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածում սահմանվում է, որ հայտարարագրման պարտականություն ունեն պետական պաշտոն զբաղեցնող անձինք, պետական հայեցողական պաշտոն զբաղեցնող անձինք, ինչպես նաև քաղաքացիական ծառայության ղեկավար խմբի 1 և 2 ենթախմբի պաշտոն զբաղեցնող անձինք[51]: Այսպես, Հակակոռուպցիոն կոմիտեում հայտարարագրման պարտականություն ունեն ինքնավար պաշտոն զբաղեցնող անձինք, հայեցողական պաշտոն զբաղեցնող անձինք, ինչպես նաև Հակակոռուպցիոն կոմիտեի գլխավոր քարտուղարը և նրա տեղակալը:

Բարեվարքության ներքին մեխանիզմների տեսանկյունից առավելապես կարևոր է Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների առաքինությունը ստուգելու մեխանիզմը: «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով սահմանված է, որ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը իրավասու է ներքին անվտանգության ստորաբաժանման միջոցով իրականացնելու Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների առաքինության ստուգում, այդ թվում՝ պրովոկացիայի եղանակներով: Առաքինության ստուգման գործընթացը չպետք է խոչընդոտի Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների բնականոն գործունեությանը: Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների առաքինության ստուգման կարգը և

[50] ՀՀ փոխվարչապետի «Քաղաքացիական ծառայողների վարքագծի կանոնագիրքը սահմանելու մասին» N 697-Ն որոշում, 04.10.2022 թ., https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=169106
[51] «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք, Հոդված 34, 23.03.2018 թ., https://www.arlis.am/documentview.aspx?docID=120832

պայմանները սահմանում է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը: Այնուամենայնիվ, Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների առաքինության ստուգման կարգը և պայմանները դեռևս ընդունված չեն, հետևապես առ այսօր որևէ ծառայող չի ենթարկվել առաքինության ստուգման:

«Առաքինության ստուգումը շատ անտարբերության է մատնվել, և օրենքի ընդունման օրվանից մինչ օրս կարգը չի ընդունվել: Այսինքն այս հարցն իրենց կողմից ձգձգվում է, ու մինչ օրս կարգը հաստատված չէ, պատճառներն էլ հայտնի չեն»:

(Փորձագետ)

Առաջարկություններ

1. Ուժեղացնել Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության նկատմամբ խորհրդարանական վերահսկողությունը՝ այդ թվում օրենքով ամրագրելով Կոմիտեի կիսամյակային հաշվետվությունները ՀՀ ԱԺ ներկայացնելու պահանջ, կիսամյակային և տարեկան հաշվետվությունների շուրջ հրապարակային քննարկումների կազմակերպում՝ շահագրգիռ հանրության ներկայացուցիչների ներգրավմամբ:
2. Բարելավել Հակակոռուպցիոն կոմիտեի կիսամյակային և տարեկան հաշվետվությունների կառուցվածքը և բովանդակությունը՝ ապահովելով Կոմիտեի գործունեության վերաբերյալ կանոնավոր և տարանջատված վիճակագրության վարումը և վերլուծությունը, ընդգծելով բարձր հնչեղություն, քաղաքական ազդեցություն ունեցող, այդ թվում՝ բարձրաստիճան (քաղաքական, վարչական, ինքնավար և հայեցողական) պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ կոռուպցիոն վարույթներով քննության արդյունքները, հաղորդման մեջ ներառելով նաև քրեական վարույթների կարճման վերաբերյալ տեղեկությունները, կարճման հիմքերը, Կոմիտեի ծառայողների վերաբերյալ առկա կարգապահական վարույթների վերաբերյալ տեղեկատվությունը, բյուջեի կատարողականի տվյալները և այլն:
3. Ապահովել Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության գնահատման ներքին աուդիտի արդյունքում ստացված եզրակացության հրապարակայնությունը:
4. Սահմանել Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների առաքինության ստուգման կարգը և իրականացնել համապատասխան ստուգումներ:
5. Հակակոռուպցիոն կոմիտեի կայքում ստեղծել հնարավորություն Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի գործունեության վերաբերյալ դիմումների, բողոքների, առաջարկությունների ստացման և դրանց քննության արդյունքների վերաբերյալ տեղեկատվության հրապարակման նպատակով:
6. ՀՀ հաշվեքննիչ պալատի գործունեության ծրագրով, նախատեսել Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության հաշվեքննության իրականացման պարբերական միջոցառումներ:

1.4. Կոռուպցիոն հանցագործությունների հայտնաբերում, հետաքննություն և հետապնդում

Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից կոռուպցիոն հանցագործությունների հայտնաբերման, հետաքննության և հետապնդման չափանիշով գնահատման համար հիմք են հանդիսացել հետևյալ ցուցանիշները՝

- **Հասանելիությունը բողոքատուներին/տեղեկատուներին/ազդարարներին**, որը գնահատում է Հակակոռուպցիոն կոմիտե ազդարարումներին և (կամ) տեղեկատվություն հաղորդողներին հասանելիության մակարդակը: Հաշվարկվում է Կոմիտեի կողմից

կոռուպցիային առնչվող հաղորդումների (ազդարարումների, դիմումներին և բողոքների) քանակը երկրի բնակչության թվաքանակի մեջ (10,000 կամ 20,000 բնակչի հաշվով) կշռելու միջոցով:

- **Արձագանքողականությունը կոռուպցիային առնչվող հաղորդումներին/բողոքներին**, որը գնահատում է Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից կոռուպցիայի վերաբերյալ բողոքների և ստացված հաղորդումների վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնողներին արձագանքման մակարդակը: Հաշվարկվում է քննված բողոքների մասնաբաժինը Կոմիտեին ներկայացված հաղորդումների, դիմումների և բողոքների ընդհանուր թվի մեջ:
- **Նախաձեռնողական հետաքննություն**, որը գնահատում է Հակակոռուպցիոն կոմիտեի սեփական նախաձեռնությամբ կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման և դրանց մասով վարույթների իրականացման մակարդակը: Հաշվարկվում է Կոմիտեի կողմից նախաձեռնված քրեական վարույթների քանակը նույն ժամանակահատվածում Կոմիտեի կողմից իրականացված վարույթների ընդհանուր թվաքանակի մեջ կշռելու միջոցով:
- **Արդյունավետություն և արհեստավարժություն**, որտեղ արդյունավետության մակարդակի ցուցանիշը գնահատվում է կոռուպցիոն գործերի քննությունն ավարտելու համար Հակակոռուպցիոն կոմիտեից պահանջված միջին ժամանակով, իսկ արհեստավարժությունը՝ հաջողությամբ վարույթ նախաձեռնված կոռուպցիոն գործերի և դատապարտված անձանց թվով:
- **Առերևույթ կոռուպցիոն հանցագործության տարրեր պարունակող դեպքերի հետապնդումներ**, որը գնահատում է Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից քննված կոռուպցիոն դեպքերի հետապնդման միջին մակարդակը: Հետապնդման ցուցանիշը համարվում է ցածր, եթե այն պակաս է 50%-ից:
- **Դատապարտումների ցուցանիշը**, որը գնահատում է Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից կոռուպցիոն հանցագործությունների քննված դեպքերի և դրանց դատապարտված անձանց միջին մակարդակը: Կոռուպցիոն հանցագործությունների համար դատապարտման մակարդակը հաշվարկվում է Կոմիտեի կողմից նախաձեռնված վարույթների արդյունքում դատապարտված անձանց քանակի հարաբերակցությամբ:
- **Քաղաքական ազդեցություն ունեցող և բարձրաստիճան պաշտոնատար անձանց նկատմամբ հետաքննություններ**, որը գնահատում է Հակակոռուպցիոն կոմիտեի պատրաստակամությունը «առանց վախի և բարեհաճության» իրականացնելու քաղաքական ազդեցություն ունեցող և բարձրաստիճան պաշտոնատար անձանց նկատմամբ կոռուպցիոն գործերով քննություն: Հաշվարկվում է քաղաքական ազդեցություն ունեցող և բարձրաստիճան պաշտոնատար անձանց կոռուպցիոն գործերով իրականացված վարույթների և կիրառված պատասխանատվության միջոցների քանակով:
- **Փոխհատուցում և ակտիվների վերականգնում**, որը գնահատում է Հակակոռուպցիոն կոմիտեի դերը փոխհատուցման, ակտիվների վերականգնման, սառեցման և բռնագրավման գործում: Հաշվարկվում է կոռուպցիոն հանցագործությունների քրեական հետապնդման արդյունքում վերականգնված, սառեցված և բռնագրավված ընդհանուր գումարները՝ համեմատելով երկրում գողացված ակտիվների գնահատված ընդհանուր ծավալի հետ:

- **Հակակոռուպցիոն կոմիտեի կատարողականի ընկալում**, որը գնահատում է Հակակոռուպցիոն կոմիտեի կատարողականը հանրային ընկալումներում՝ հանրային հարցումների արդյունքներով:

Գծապատկեր 5. Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից կոռուպցիոն հանցագործությունների հայտնաբերումը, հետաքննությունը և հետապնդումը

Ինչպես ցույց է տալիս գծապատկերը, Հակակոռուպցիոն կոմիտեի կոռուպցիոն հանցագործությունների հայտնաբերման, հետաքննության և հետապնդման մակարդակը գնահատվել 57.1 %՝ ապահովելով առավելագույն 14-ից 8 միավոր: Բավարար տվյալների բացակայության պայմաններում չեն գնահատվել «Քաղաքական ազդեցություն ունեցող և բարձրաստիճան պաշտոնատար անձանց նկատմամբ հետաքննություններ» և «Հակակոռուպցիոն կոմիտեի կատարողականի ընկալում» ցուցանիշները:

Հասանելիությունը բողոքատուներին/տեղեկատուներին/ազդարարներին (2 միավոր)

Կոռուպցիոն հանցագործությունների հայտնաբերման, հետաքննության և հետապնդման գործառույթների մասով Հակակոռուպցիոն կոմիտեի հասանելիությունը բողոքատուներին, տեղեկատվություն ներկայացնողներին և ազդարարողներին ապահովվել է Հակակոռուպցիոն կոմիտեի կայքի,[52] Հակակոռուպցիոն կոմիտեի էլեկտրոնային փոստի,[53] Հակակոռուպցիոն կոմիտեի ֆեյսբուքյան էջի,[54] +374-11-900-035 հեռախոսահամարի կամ գրավոր՝ Կոմիտեի հասցեով[55] առաքված նամակների տեսքով: Միաժամանակ, Կոմիտեի կայքում առկա է հետադարձ կապի հնարավորություն՝[56] էլեկտրոնային հասցեով նամակ գրելու միջոցով:

Քաղաքացիներից դիմումների ընդունման e-request.am հարթակի միջոցով հաղորդումները փոխանցվում են Կոմիտեի էլեկտրոնային հասցեին: ԹԻՀԿ հարցմանն ի պատասխան՝ Հակակոռուպցիոն կոմիտեն տեղեկացրել է, որ e-request.am հարթակի միջոցով ստացվող

[52] Հակակոռուպցիոն կոմիտեի կայք, https://www.anticorruption.am/hy
[53] press@anticorruption.am
[54] https://www.facebook.com/profile.php?id=100074200721560
[55] ՀՀ, ք. Երևան, Վաղարշ Վաղարշյան 13ա:
[56] https://www.anticorruption.am/hy/contact

բազմաթիվ դիմում-բողոքների և դրանց բովանդակության վերաբերյալ առանձին հաշվառում չի իրականացվում:

Հակակոռուպցիոն կոմիտեի, ինչպես և բոլոր պետական մարմինների կայքերում, առկա է միասնական էլեկտրոնային անանուն ազդարարման հարթակի azdararir.am-ի հղումը, որով ներկայացվող անանուն հաղորդումներն անմիջականորեն հասանելի են դառնում ՀՀ գլխավոր դատախազության համար, որից հետո, ըստ իրավասության, ուղարկվում են համապատասխան իրավասու մարմիններին, այդ թվում՝ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե: Կոմիտեն պատասխանել է, որ անանուն հաղորդումների առնչությամբ 2021 և 2022 թթ. հաշվառում չի վարվել: 2023 թ. ընթացքում Կոմիտեն ՀՀ գլխավոր դատախազությունից ստացել է անանուն ազդարարման հարթակով ստացված 2 անանուն վարույթ: Վերջիններս, «Օպերատիվ հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1.1 կետի համաձայն, ստուգվել են, և ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված որևէ արարք կատարելու վերաբերյալ փաստական տվյալներ չստացվելու հիմքով ստուգումները դադարեցվել են:

Միաժամանակ, ՀՀ գլխավոր դատախազությունից ստացած տվյալներով azdararir.am հարթակի միջոցով 2022 թ.-ին ստացվել և ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեին է հասցեագրվել մեկ, իսկ 2023 թ.-ին՝ 9 հաղորդում: Միաժամանակ, անանուն ազդարարման հարթակի միջոցով Գլխավոր դատախազության կոմիտեից ՀՀ ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչությանը (ՔՈԳՎ) հասցեագրված 2022 թ.-ին 3 հաղորդում, իսկ 2023 թ.-ին 4 հաղորդում ուղարկվել են ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե: Արդյունքում, վերջինս, ըստ Դատախազության, 2022 թ.-ին պետք է ստացած լիներ 4, իսկ 2023 թ.-ին՝ 13 ազդարարում: Այս տվյալները հակասում են Հակակոռուպցիոն կոմիտեից ստացած տվյալներին:

Հարկ է նշել, որ հանցագործությունների մասին հաղորդումների միջոցով ներկայացվող ազդարարումը չի դիտարկվում, որպես այդպիսին, «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի լույսի ներքո: Այս օրենքը արտաքին ազդարարում է դիտում ազդարարման անանուն միասնական հարթակի միջոցով հաղորդումների ներկայացումը և հատուկ ընդգծում է, որ նախաքննություն իրականացնող մարմինների կողմից հանցագործության վերաբերյալ հաղորդումների քննարկման և լուծման՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված ընթացակարգը չի համարվում արտաքին ազդարարում: Այդպիսով, ազդարարների համար օրենքով նախատեսված պաշտպանության միջոցներն անհասանելի են դառնում իրավապահ մարմիններին ուղղակիորեն հաղորդում ներկայացրած փաստացի ազդարար հանդիսացող անձանց համար: Բացի այդ, այս դեպքում անձը նաև կարող է քրեական պատասխանատվություն կրել սուտ մատնության համար: Նաև պարզ չէ, թե իրավապահ մարմիններն ինչ հիմքով և տրամաբանությամբ պետք է տարբերակեն և տարբեր ընթացակարգերով վարեն այն գործերը, երբ անձը միաժամանակ կիրառում է հաղորդման/ազդարարման մի քանի խողովակ:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ հանցագործությունների մասին հաղորդումների միջոցով ներկայացվող ազդարարումը դուրս է մնում ազդարարման վերաբերյալ վարվող վիճակագրությունից, ինչպես նաև միախառնվում է իրավապահ մարմինների կողմից ստացվող հաղորդումների ընդհանուր վիճակագրությանը:

2021 թ.-ին Հակակոռուպցիոն կոմիտեում ընթացք է տրվել 463 դիմումի, ուստի Կոմիտեի հասանելիությունը տեղեկատվություն հաղորդողներին, դիմումատուներին ու բողոքողներին ՀՀ

20 հազար բնակչի հաշվով 2021 թ.-ին կազմել է 3.12 (463/2,961,400*20,000): 2022 թ. ընթացքում քննարկվել և սահմանված կարգով ընթացք է տրվել 2,611 դիմում-հաղորդման, իսկ հասանելիության մակարդակը 2022 թ.-ին եղել է 17.5 (2,611/2,977,100*20,000): 2023 թ. ընթացքում ստացված դիմում-հաղորդումների թիվը կազմել է 3,793, իսկ հասանելիության մակարդակը՝ 25.3 (3,793/2,991,200*20,000):[57]

Արձագանքողականությունը կոռուպցիային առնչվող հաղորդումներին/ բողոքներին (1 միավոր)

Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից քաղաքացիների դիմում բողոքներին, տեղեկատվություն ներկայացնողներին, լրատվամիջոցների հրապարակումներին արձագանքողականության քանակական գնահատականը կազմել է 2021 թ.-ին 90.7 %, 2022 թ.-ին՝ 96.8 %, իսկ 2023 թ.-ին 93.7 %:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 178-րդ հոդվածի համաձայն՝ առերևույթ հանցանքի մասին պատշաճ հաղորդում ստանալու յուրաքանչյուր դեպքում քննիչը պարտավոր է անհապաղ, սակայն ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում կազմել քրեական վարույթ նախաձեռնելու մասին արձանագրություն, իսկ դատախազը պարտավոր է այն վերահասցեագրել իրավասու քննչական մարմնի ղեկավարին քրեական վարույթ նախաձեռնելու հարցը լուծելու համար:

2021 թ. ընթացքում Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչների վարույթում քննվել է 280 քրեական գործ, որից ավարտվել է 48-ը (17.1 %), որից 9-ը քրեական գործ՝ 16 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: 2021 թ.-ին ընթացք է տրվել 463 դիմումի, որից՝ 104-ը սահմանված կարգով քննարկվել է, և դիմումատուին պատասխան է տրվել, 13-ով նախապատրաստվել են նյութեր, 1-ով հարուցվել է քրեական գործ, 14-ն ուղարկվել է այլ մարմինների քննարկմանը, 83-ով տրվել են պարզաբանումներ, 186-ը կցվել է քրեական գործերին կամ նյութերին, 49 դիմում մերժվել է: Մնացած 13 դիմում, ըստ Կոմիտեի, ևս ստացել է իրավական ակտերով սահմանված ընթացք:

2022 թ. ընթացքում Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչների վարույթում քննվել է 1,203 քրեական գործ (վարույթ), որոնցից ավարտվել է 264-ը (22 %): Նշված գործերից (վարույթներից) 97-ը 203 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: Ընդհանուր առմամբ, 2022 թ. ընթացքում քննարկվել և սահմանված կարգով ընթացք է տրվել 2,611 դիմում-հաղորդման, որից 875-ը սահմանված կարգով քննարկվել է և դիմումատուին պատասխան է տրվել, 40-ով նախապատրաստվել են նյութեր, 314-ով հարուցվել է քրեական գործ (նախաձեռնվել է քրեական վարույթ), 285-ով քրեական վարույթ չի նախաձեռնվել, 121-ն ուղարկվել է այլ մարմիններ՝ քննարկման, 894-ը կցվել է քրեական գործերին (վարույթներին) կամ նյութերին, 54-ի քննարկումը փոխանցվել է 2023 թվական:

[57] Հակակոռուպցիոն կոմիտեի հասանելությունը բողոքատուներին/տեղեկատուներին/ազդարարումներին ցուցանիշը հաշվարկվել է որպես Հակակոռուպցիոն կոմիտեին հասցեգրված բոլոր դիմումների, բողոքների ու հաղորդումների թվի հարաբերությունը ՀՀ բնակչության թվին՝ բազմապատկած 20,000-ով: Հակակոռուպցիոն կոմիտեի 2021, 2022 և 2023 թվականների տարեկան հաղորդումներ, ՀՀ բնակչության թվաքանակի մասին ՀՀ վիճակագրության պետական կոմիտեի հրապարակված տվյալներ՝ 2021՝ 2,961,400, 2022՝ 2,977,100, 2023՝ 2,991,200: https://www.armstat.am/file/article/population_01_22.pdf, https://armstat.am/file/article/population_01_01_23.pdf, https://armstat.am/file/article/population_01_01_24.pdf (դիտված՝ 28.02.2025 թ.):

2023 թ. ընթացքում ստացված դիմում-հաղորդումների թիվը 2022-ի համեմատությամբ աճել է 1,182-ով (45,3 %-ով)՝ հասնելով 3,793-ի: Ընդհանուր առմամբ, 2023 թ.-ին Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչների վարույթում քննվել է 1,801 քրեական գործ, որից ավարտվել է 513-ը: Ավարտված վարույթներից 169-ը՝ 399 անձանց վերաբերյալ, մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: Սահմանված կարգով ընթացք է տրվել 3793 դիմում-հաղորդման, որից 641-ով նախաձեռնվել է քրեական վարույթ, 684-ով քրեական վարույթ չի նախաձեռնվել, 193-ը սահմանված կարգով քննարկվել և դիմումատուին պատասխան է տրվել, 24-ն ուղարկվել է այլ մարմիններ՝ քննարկման, 1493-ը կցվել է քրեական վարույթներին, 364-ը բավարարվել է, 156-ը մերժվել է, 47-ի քննարկումը փոխանցվել է 2024 թվական: Մնացած դիմումները ևս ստացել են իրավական ակտերով սահմանված ընթացք:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ հաղորդումների թիվն աճել է, սակայն հետագայում նախաձեռնված քրեական վարույթների զգալի մասը կարճվել է՝ արդարացման հիմքերով, ինչը չի վկայում Հակակոռուպցիոն կոմիտեի՝ կոռուպցիոն հանցագործությունների հայտնաբերման և քննության արդյունավետության մասին:

«ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 178-րդ հոդվածով սահմանված 24 ժամվա ընթացքում քրեական վարույթ նախաձեռնելու քննիչի պարտավորությունը հնարավորություն չի տալիս պատշաճ ստուգելու հաղորդման մեջ նշված փաստերը, հետևաբար քննիչները հիմնականում նախաձեռնում են քրեական վարույթը՝ օրենքով սահմանված ժամկետում՝ հետագայում ընդունելով վարույթը կարճելու մասին որոշում»:

(Հակակոռուպցիոն կոմիտե)

«Հաշվի առնելով ստացված հաղորդումների քանակը և քննիչների ծանրաբեռնվածությունը՝ 24-ժամյա ժամկետը բավարար չէ հաղորդման մեջ նշված փաստերը պատշաճ ստուգելու համար: Արդյունքում՝ հաղորդումների նվազագույն ձևական պահանջները պահպանված լինելու դեպքում, քննիչները հիմնականում նախաձեռնում են քրեական վարույթը, ինչը քանակական առումով բարձրացնում է արձագանքողականության վիճակագրությունը, սակայն չի խոսում քննության արդյունավետության մասին»:

(Փորձագետ)

Նախաձեռնողական հետաքննություն (2 միավոր)

Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման գործում Հակակոռուպցիոն կոմիտեի նախաձեռնողականությունը գնահատվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով, ինչպես նաև «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքով Հակակոռուպցիոն կոմիտեին վերապահված «Հակակոռուպցիոն կոմիտեի՝ ենթադրյալ կոռուպցիոն հանցագործություններով մինչդատական քրեական վարույթի կազմակերպման և իրականացման» լիազորության շրջանակներում:

2021 թ. հոկտեմբերի 23-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչների վարույթում քննվել է 280 քրեական գործ: Նույն ժամանակահատվածում Կոմիտեի քննիչների կողմից նախաձեռնվել է (նաև քրեական վարույթից մաս է անջատվել) 113 քրեական վարույթ: 2022 թ. ընթացքում Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչների վարույթում քննվել է 1,203 քրեական գործ (վարույթ): ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի քննիչների կողմից նախաձեռնվել է 712 քրեական վարույթ: Իսկ 2023 թ. ընթացքում

Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից քննվել է 1,801 քրեական վարույթ, Կոմիտեի քննիչների կողմից նախաձեռնվել է 864 քրեական վարույթ:

Այսպիսով, կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման Հակակոռուպցիոն կոմիտեի նախաձեռնողականության միջին մակարդակը 2021 թ. 40.3 %-ից 2022 թ.-ին հասել է 59 %-ի, իսկ 2023 թ.-ին՝ իջել է 48 %:

Քաղաքական ազդեցություն ունեցող և բարձրաստիճան պաշտոնատար անձանց նկատմամբ Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից սեփական նախաձեռնությամբ իրականացված վարույթների քանակի վերաբերյալ Հակակոռուպցիոն կոմիտեից հայտնել են, որ նշված պաշտոնյաների մասով առանձնացված հաշվառում չի իրականացվում: ՀՀ գլխավոր դատախազի կողմից հրապարակվող տարեկան տեղեկանքում ևս առկա չեն նման տվյալներ:

Արդյունավետություն և արհեստավարժություն (1 միավոր)

Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման գործում Հակակոռուպցիոն կոմիտեի արդյունավետությունը գնահատվել է կոռուպցիոն վարույթների քննության միջին ժամկետի հաշվարկով, իսկ արհեստավարժությունը՝ հաջողությամբ վարույթ նախաձեռնված կոռուպցիոն գործերի և դատապարտված անձանց հարաբերակցությամբ:

Կոռուպցիոն գործերի քննությունն ավարտելու համար Հակակոռուպցիոն կոմիտեից պահանջված միջին ժամանակի վերաբերյալ հարցին ի պատասխան՝ Հակակոռուպցիոն կոմիտեն հայտնել է, որ իր կողմից «իրականացված կոռուպցիոն խախտումների մասով քննված գործերի քանակը բազմապատկած յուրաքանչյուր գործի մասով վարույթի իրականացման համար պահանջված ժամանակի (օրերի) քանակով և ստացված արտադրյալը բաժանած քննված գործերի քանակի վերաբերյալ առանձնացված հաշվառում չի իրականացվում»:

Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից օրենքով սահմանված ժամկետներում վարույթ նախաձեռնված ընդհանուր գործերի թվաքանակի վերաբերյալ Կոմիտեից հայտնել են, որ քննիչների կողմից բոլոր քրեական վարույթները նախաձեռնվել են օրենքով սահմանված ժամկետներում: Սակայն, ինչպես վկայում են նախաձեռնված վարույթների վերաբերյալ վիճակագրական տվյալները, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 178-րդ հոդվածով սահմանված 24 ժամվա ընթացքում քրեական վարույթ նախաձեռնելու քննիչի պարտավորությունը հնարավորություն չի տալիս պատշաճ ստուգելու հաղորդման մեջ նշված փաստերը, հետևաբար քննիչները հիմնականում նախաձեռնում են քրեական վարույթը օրենքով սահմանված ժամկետում՝ հետագայում ընդունելով վարույթը կարճելու մասին որոշում:

Հակակոռուպցիոն կոմիտեի կոռուպցիոն գործերի քննության արդյունավետության մակարդակի գնահատման համար քրեական վարույթների մասով հիմք է ընդունվել՝ օրենքով ծանր հանցանքներով հանրային քրեական հետապնդման համար սահմանված վարույթի 8-ամսյա ժամկետը:[58]

2021 թ. հոկտեմբերի 23-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում քննված 280 քրեական վարույթներից 232-ը եղել են կոռուպցիոն

[58] ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, Հոդված 192, 1. Մինչդատական վարույթում հանրային քրեական հետապնդումն այն հարուցելու պահից չի կարող տևել ավելի, քան՝ 1) 3 ամիս՝ ոչ մեծ ծանրության հանցանքի վերաբերյալ մեղադրանքով. 2) 5 ամիս՝ միջին ծանրության հանցանքի վերաբերյալ մեղադրանքով. 3) 8 ամիս՝ ծանր հանցանքի վերաբերյալ մեղադրանքով. 4) 10 ամիս՝ առանձնապես ծանր հանցանքի վերաբերյալ մեղադրանքով: Պետք է նկատել, որ բոլոր տեսակի հանցանքների հետապնդման վարույթների միջինացված ժամկետը 6.5 ամիս է:

բնույթի հանցագործություններ, որից 10 քրեական վարույթ (4.3 %)՝ 16 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, ընդունվել է 38՝ քրեական վարույթը կարճելու մասին որոշում, որից 4-ի վերաբերյալ կարճելու մասին որոշումները վերացվել են:

2022 թ. ընթացքում 1,176 քրեական վարույթներից 1,000-ն են եղել կոռուպցիոն բնույթի, որից 97-ը (9.7 %)՝ 203 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, քննիչների կողմից կայացվել է 167 քրեական վարույթը կարճելու մասին որոշում, որից 14-ի վերաբերյալ վերացվել կամ չեն հաստատվել կարճելու մասին որոշումները:

2023 թ. ընթացքում 1,801 քրեական վարույթներից 1,632-ն են եղել կոռուպցիոն բնույթի, որից 179 քրեական վարույթ (10.9 %)՝ 399 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, կայացվել է 358՝ քրեական վարույթը կարճելու մասին որոշում, որից 13-ի վերաբերյալ վերացվել կամ չեն հաստատվել կարճելու մասին որոշումները:

Այսպես, քննված գործերի քանակը բազմապատկելով յուրաքանչյուր գործի մասով վարույթի իրականացման համար պահանջված ժամանակի (օրերի) քանակով և ստացված արտադրյալը բաժանելով քննված գործերի քանակի վրա, Հակակոռուպցիոն կոմիտեի կոռուպցիոն գործերի քննության արդյունավետության մակարդակի գնահատման համար հաշվարկվող կոռուպցիոն գործերի քննության միջին ժամկետի մեծությունը 2021 թ. համար կկազմի 5.3, 2022 թ. համար՝ 12.3, 2023 թ. համար՝ 14.9 ամիս:

Հակակոռուպցիոն կոմիտեի արհեստավարժության աստիճանը՝ հաջողությամբ վարույթ նախաձեռնված կոռուպցիոն գործերի, դատապարտված անձանց և կարճված գործերի (արդարացնող և ոչ արդարացնող հիմքերով) հարաբերակցության տեսանկյունից՝ 2021 թ. համար կազմում է 17.2 % ((16+34)/232*100), 2022 թ. համար՝ 35.3 % ((203+153)/1,000*100), իսկ 2023 թ. համար՝ 45.5 % ((399+345)/1,632*100):

Փորձագետների կարծիքով Հակակոռուպցիոն կոմիտեում վարույթները շատ երկար են տևում, ինչը հաճախ պայմանավորված է լրացուցիչ փորձագիտական հետազոտությունների անհրաժեշտությամբ, որոնք իրականացվում են սահմանափակ քանակի կազմակերպությունների միջոցով:

«Գործերի քննության ձգձգումները կախված են և՛ օբյեկտիվ, և՛ սուբյեկտիվ հանգամանքներից: Շատ հաճախ փորձագիտական կենտրոններ դիմելիս գործի քննությունը կարող է տարիներով ձգվել: Իսկ քննիչները ուված թե չուված պետք է սպասեն փորձագիտական եզրակացությանը»:

(Փորձագետ)

«Ինչ վերաբերում է փորձաքննությունների անցկացման հետ կապված գործերի ձգձգումներին, լուծումն առկա է՝ ներսում տնտեսագետ-փորձագետներ ունեն արդեն»:

(Փորձագետ)

Հետապնդումների ցուցանիշը (0 միավոր)

Առերևույթ կոռուպցիոն հանցագործության էլեմենտներ պարունակող դեպքերի հետապնդման գնահատումներն իրականացվել են՝ համաձայն կոռուպցիոն հանցագործությունների քննության արդյունքների վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազության տարեկան տեղեկանքի տվյալների:

2021 թ.-ին Հայաստանի Հանրապետությունում կոռուպցիայի հետապնդման մակարդակը կազմել է 26 %: 2021 թ. ընթացքում ՀՀ իրավասու մարմինների վարույթում քննված 2,718 քրեական գործից ավարտվել է 730-ը, որոնցից 543-ը կարճվել է, այդ թվում՝ 414-ը՝ արդարացման, իսկ 129-ը՝ ոչ արդարացման հիմքերով: 187 քրեական գործ՝ 433 անձի վերաբերյալ, մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: Այսպես, ավարտված քրեական գործերի 74 %-ը կարճվել է: Ընդ որում, կարճված գործերի 76.2 % կարճվել է արդարացման հիմքով:

2022 թ.-ին երկրում կոռուպցիայի հետապնդման մակարդակը կազմել է 32 %: Տվյալ տարում ՀՀ նախաքննական մարմինների վարույթում քննված 2,718 քրեական գործից (վարույթից) ավարտվել է 567-ը, որոնցից 388-ը կարճվել է, այդ թվում՝ 286-ը՝ արդարացման, իսկ 102-ը՝ ոչ արդարացման հիմքերով: 178 քրեական գործ (վարույթ)՝ 397 անձի վերաբերյալ, մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, իսկ 1 գործ ուղարկվել է դատարան՝ բժշկական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելու միջնորդությամբ: Այսպես, ավարտված քրեական գործերի 68 %-ը կարճվել է: Այստեղ կարճված գործերի 73.7 % կարճվել է արդարացման հիմքով:

2023 թ.-ին Հայաստանում կոռուպցիայի հետապնդման մակարդակը կազմել է 34 %: Տարվա ընթացքում ՀՀ նախաքննական մարմինների վարույթում քննված 3,556 քրեական վարույթից ավարտվել է 908-ը, որոնցից 602-ը կարճվել է, այդ թվում՝ 502-ը՝ արդարացման, իսկ 100-ը՝ ոչ արդարացման հիմքերով: 306 քրեական վարույթ՝ 757 անձի վերաբերյալ, մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: Այսպես, ավարտված քրեական գործերի 66 %-ը կարճվել է: Այստեղ, կարճված գործերի 83.3 % կարճվել է արդարացման հիմքով:

2021 թ. համար ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում քննված կոռուպցիոն վարույթներով կոռուպցիայի հետապնդման մակարդակը կազմել է 24 %: Տարվա ընթացքում ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում քննված 232 կոռուպցիոն բնույթի հանցագործություններով քրեական վարույթից ավարտվել է 44-ը, որոնցից 34-ը կարճվել է: 10 քրեական վարույթ՝ 16 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան:

2022 թ. համար ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում քննված կոռուպցիոն վարույթներով կոռուպցիայի հետապնդման մակարդակը կազմել է 38.8 %: Տարվա ընթացքում ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում քննված 1000 կոռուպցիոն բնույթի հանցագործություններով քրեական վարույթից ավարտվել է 250-ը, որոնցից 153-ը կարճվել է: 97 քրեական վարույթ՝ 203 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան:

2023 թ. համար ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում քննված կոռուպցիոն վարույթներով կոռուպցիայի հետապնդման մակարդակը կազմել է 34.1 %: Տարվա ընթացքում ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում քննված 1632 կոռուպցիոն բնույթի հանցագործություններով քրեական վարույթից ավարտվել է 524-ը, որոնցից 345-ը կարճվել է: 179 քրեական վարույթ՝ 399 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան:

Այսպիսով, 2021-2023 թթ. Հայաստանի Հանրապետությունում կոռուպցիայի հետապնդումների միջին մակարդակը, ըստ Գլխավոր դատախազության տեղեկանքի, կազմում է 30.6 %, իսկ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում քննված կոռուպցիոն վարույթներով կոռուպցիայի հետապնդման միջին մակարդակը՝ 32.3 %, ինչը, համաձայն գնահատման մեթոդաբանության, համարվում է ցածր ցուցանիշ: Ըստ դատախազության տվյալների՝ ակնհայտ է, որ արդարացման հիմքով քրեական վարույթների կարճման տոկոսային հարաբերությունը տարեցտարի աճում է, ինչը

մտահոգիչ է՝ կոռուպցիոն հանցագործությունների դեմ արդյունավետ պայքարի տեսանկյունից: Միաժամանակ, արդարացման հիմքով վարույթների կարճման բարձր թվերը հիմնականում պայմանավորված են քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված՝ 24 ժամվա ընթացքում քրեական վարույթ նախաձեռնելու պարտավորությամբ: Պրակտիկայում քննիչները, չունենալով բավարար հնարավորություն լիարժեք քննության համար, հիմնականում նախաձեռնում են քրեական վարույթներ, ինչը մեծացնում է հետագայում քրեական վարույթը արդարացման հիմքով կարճելու մասին որոշումների հավանականությունը:

Փորձագետների կարծիքով քննիչները նաև չունեն բավարար գործիքակազմ 24 ժամում առավել արդյունավետ իրականացնելու քննությունը:

«Խնդիրը նրանում է, որ գործիքակազմ տրված չէ քննիչին, որ ինքը 24-ժամվա ընթացքում հասկանա վարույթը նախաձեռնելու է, թե՝ ոչ»:

(Փորձագետ)

Դատապարտումների ցուցանիշը (1 միավոր)

Կոռուպցիոն հանցագործությունների համար դատապարտման մակարդակը գնահատվել է՝ համաձայն կոռուպցիոն հանցագործությունների քննության արդյունքների վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազության տարեկան տեղեկանքի տվյալների:[59]

Այսպես, 2021 թ. ընթացքում ՀՀ դատարաններում քննվել և ավարտվել է կոռուպցիոն բնույթի 83 քրեական գործ՝ 150 անձի վերաբերյալ: Նշված քրեական գործերից 53-ով (64 %) 97 անձ դատապարտվել է, որոնցից 30-ը՝ ազատազրկման, 46-ը՝ տուգանքի, 1-ը՝ հիմնական այլ պատժի, 20 անձի նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել, 18-ի նկատմամբ կիրառվել են նաև լրացուցիչ պատիժներ: 6 գործով 11 անձ արդարացվել է: Կարճվել է 24 գործ՝ 42 անձի վերաբերյալ: 2022 թ. ընթացքում ՀՀ դատարաններում քննվել և ավարտվել է կոռուպցիոն բնույթի 99 քրեական գործ՝ 197 անձի վերաբերյալ: Նշված քրեական գործերից 67-ով (67 %) 132 անձ դատապարտվել է, որոնցից 30 անձ՝ ազատազրկման, 63 անձ՝ տուգանքի, հիմնական այլ պատժի որևէ անձ չի դատապարտվել, 39 անձի նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել, 8 անձի նկատմամբ կիրառվել են նաև լրացուցիչ պատիժներ: 7 գործով 18 անձ արդարացվել է: Կարճվել է 24 գործ՝ 46 անձի վերաբերյալ: Իսկ 2023 թ. ընթացքում ՀՀ դատարաններում քննվել և ավարտվել է կոռուպցիոն բնույթի 149 քրեական գործ՝ 249 անձի վերաբերյալ: Նշված քրեական գործերից 97-ով (56 %) 140 անձ դատապարտվել է, որոնցից 25-ը՝ ազատազրկման, 39-ը՝ տուգանքի, 3-ը՝ հիմնական այլ պատժի, 73 անձի նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել, 9 անձի նկատմամբ կիրառվել են նաև լրացուցիչ պատիժներ: 9 գործով 14 անձ արդարացվել է:

Քաղաքական ազդեցություն ունեցող և բարձրաստիճան պաշտոնատար անձանց նկատմամբ կոռուպցիոն գործերով հետաքննություններ (հնարավոր չէ գնահատել)

Հակակոռուպցիոն կոմիտեն չի տրամադրել տեղեկություն քաղաքական ազդեցություն ունեցող և բարձրաստիճան պաշտոնատար անձանց թվի և անունների վերաբերյալ: Այն նաև չի

[59] ՀՀ գլխավոր դատախազություն, 2021, 2022, 2023 թվականների ընթացքում կոռուպցիոն հանցագործությունների քննության արդյունքների վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազության տեղեկանքներ,
https://prosecutor.am/storage/dynamic_web_pages/rep_57_8560401301.pdf
https://prosecutor.am/storage/dynamic_web_pages/rep_59_8560409395.pdf
https://prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_281_1466763826.pdf (դիտված՝ 28.02.2025 թ.):

իրականացնում այդպիսի անձանց վերաբերյալ գործերի առանձնացված հաշվառում: Հարկ է նկատել, որ ՀՀ օրենսդրությունը նույնպես չի սահմանում բարձրաստիճան պաշտոնատար անձ հասկացությունը, ինչը կարող է որպես արդարացում դիտարկվել համապատասխան վիճակագրություն չվարելու դեպքում: Միևնույն ժամանակ, հասկացության սահմանումը տրվում է ՏՀՁԿ փաստաթղթերում, ներառյալ՝ Հայաստանի վերաբերյալ մոնիտորինգային զեկույցներում: Ինչ վերաբերում է քաղաքական ազդեցություն ունեցող անձանց հասկացությանը, այն սահմանված է «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով:[60]

Միևնույն ժամանակ, Հակակոռուպցիոն կոմիտեից հայտնել են, որ «2021 թ. հոկտեմբերի 23-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչների կողմից մեղադրական եզրակացությամբ դատարան են ուղարկվել քրեական վարույթներ՝ 6 պաշտոնատար անձի վերաբերյալ, 2022 թ. ընթացքում՝ 63, 2023-ի ընթացքում՝ 142 պաշտոնատար անձի վերաբերյալ: 2021 թ. հոկտեմբերի 23-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում ոչ արդարացնող հիմքով որևէ պաշտոնատար անձի նկատմամբ քրեական հետապնդում չի դադարեցվել և քրեական հետապնդում չի իրականացվել, 2022 թ. ընթացքում ոչ արդարացնող հիմքերով քրեական հետապնդումը չի դադարեցվել և քրեական հետապնդում է իրականացվել 33 պաշտոնատար անձի նկատմամբ, իսկ 2023 թ. ընթացքում՝ 114 պաշտոնատար անձի նկատմամբ»:

Քաղաքական ազդեցություն ունեցող և բարձրաստիճան պաշտոնատար անձանց նկատմամբ կոռուպցիոն գործերով հետաքննությունների մասին Freedom House իրավապաշտպան կազմակերպության Nations in Transit 2023 զեկույցում նշվում է, որ *«...Հակակոռուպցիոն կոմիտեն բարձր մակարդակի հետաքննություններ է ձեռնարկել ստեղծման պահից ի վեր ... (մի շարք պաշտոնատար անձանց նկատմամբ) 2022 թ.-ին կոռուպցիոն գործեր են հարուցվել ներկա և նախկին պաշտոնյաների դեմ: Պաշտպանության նախկին նախարար Դ.Տ.-ի, գեներալ Ա.Դ.-ի և Դ.Գ.-ի դեմ դատավարությունները, ովքեր մեղադրվում էին վենքի գնման գործարքների համար խարդախության և յուրացման մեջ, շարունակվում են, չնայած ամբաստանյալների՝ վարչապետ Փաշինյանի հետ սերտ քաղաքական կապերին»:*[61]

ԱՄՆ Պետդեպարտամենտի 2024 թ. Հայաստանի մարդու իրավունքների զեկույցում նույնպես արձանագրվել է, որ *«Կառավարությունը բավմաթիվ քրեական գործեր է հարուցել նախկին բարձրաստիճան պաշտոնյաների և նրանց հարազատների, խորհրդարանականների, նախկին նախագահների, իսկ մի քանի դեպքերում՝ դատական համակարգի անդամների ու նրանց հարազատների դեմ՝ մի քանի հազարից մինչև միլիոնավոր դոլարների դրամական արժեքների հետ կապված գործերով»:*[62] Միևնույն ժամանակ, այս զեկույցում ընդգծվել է նախկին բարձրաստիճան պաշտոնյաների նկատմամբ գործերը ընտրողաբար հարուցելու և ներկայիս ոչ ընդդիմադիր բարձրաստիճան պաշտոնյաների նկատմամբ գործեր չհարուցելու խնդիրը:

Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից քաղաքական ազդեցություն ունեցող և բարձրաստիճան պաշտոնատար անձանց նկատմամբ կոռուպցիոն գործերով հետաքննությունների վերաբերյալ

[60] «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենք, Հոդված 3, 26.05.2008 թ., https://www.arlis.am/documentview.aspx?docID=93142

[61] Freedom House իրավապաշտպան կազմակերպություն, Nations in Transit 2023 զեկույց, 2024 թ.:

[62] ԱՄՆ Պետդեպարտամենտ, 2022 թվականի Հայաստանի մարդու իրավունքների զեկույց, 2024 թ.:

առկա է տեղեկատվության բաց, ինչը թույլ չի տալիս գնահատել Կոմիտեի՝ կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետությունը:

Փոխհատուցում և ակտիվների վերականգնում (1 միավոր)

Հակակոռուպցիոն կոմիտեն, ելնելով իր իրավասություններից և գործառույթներից, առնչվում է ապօրինի ծագում ունեցող գույքի հետ կապված կոռուպցիոն հանցագործությունների քննությանը:

Հակակոռուպցիոն կոմիտեն իր կողմից իրականացվող քննության ընթացքում կարող է հայտնաբերել կոռուպցիոն ճանապարհով ձեռք բերված կամ օգտագործված ակտիվներ: Այս ակտիվների վրա այն կարող է դնել արգելանք հետագայում դրանք բռնագրավելու կամ վերականգնելու նպատակով: Եթե պարզվում է, որ պետությանը կամ այլ անձանց կոռուպցիոն հանցագործությամբ պատճառվել է վնաս, ապա քննության նյութերում կարող է ընդգրկվել փոխհատուցման պահանջ: Հակակոռուպցիոն կոմիտեն կարող է նյութեր տրամադրել Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչություն՝ ապօրինի ծագում ունեցող գույքի առկայության մասին:

2021-2023 թթ. ընթացքում Հակակոռուպցիոն կոմիտեում քննվող քրեական վարույթներով մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազների կողմից ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչություն է ուղարկվել ապօրինի ծագում ունեցող գույքի առկայության մասին 51 զեկուցագիր, որոնցից 7-ը՝ 2021 թ.-ին, 25-ը՝ 2022 թ.-ին, 19-ը՝ 2023 թ.-ին: Նշված զեկուցագրերի հիման վրա 2021 թ. ընթացքում ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունում 6 անձի պատկանող գույքի վերաբերյալ կայացվել է ուսումնասիրություն նախաձեռնելու, իսկ 1-ին պատկանող գույքի վերաբերյալ՝ ուսումնասիրություն չսկսելու մասին որոշում: 2022 թ. ընթացքում 21 անձի պատկանող գույքի վերաբերյալ կայացվել է ուսումնասիրություն նախաձեռնելու, իսկ 6-ին պատկանող գույքի վերաբերյալ՝ ուսումնասիրություն չսկսելու մասին որոշում: 2023 թ. ընթացքում 18 անձի պատկանող գույքի վերաբերյալ կայացվել է ուսումնասիրություն նախաձեռնելու, իսկ 5-ին պատկանող գույքի վերաբերյալ՝ ուսումնասիրություն չսկսելու մասին որոշում:

ԹԻՀԿ հարցման արդյունքներով՝ Հակակոռուպցիոն կոմիտեում ավարտված (դատարան ուղարկված և կարճված) քրեական վարույթներով ապօրինի հարստացման դեպքերով քրեական հետապնդման արդյունքում վերականգնված գումարների վերաբերյալ տվյալներ առկա չեն:

Ընդհանուր առմամբ, Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից 2022 թ. ընթացքում ավարտված (դատարան ուղարկված և կարճված) քրեական վարույթներով պատճառված գույքային վնասից նախաքննության ընթացքում կանխիկ գումարով վերականգնվել է 20,833,000 ՀՀ դրամ: Բացի այդ, որպես վնասի վերականգնման ապահովման միջոց՝ բոլոր քրեական վարույթներով արգելանք է դրվել 61,685,726,932 ՀՀ դրամ արժողության գույքի վրա: 2023 թ. ընթացքում ավարտված (դատարան ուղարկված և կարճված) քրեական վարույթներով պատճառված գույքային վնասից նախաքննության ընթացքում փաստացի դրամական տեսքով վերականգնվել է 264,874,500 ՀՀ դրամ: Բացի այդ, որպես վնասի վերականգնման ապահովման ռեալ միջոց՝ բոլոր քրեական վարույթներով արգելանք է դրվել 58,418,345,325 ՀՀ դրամ արժողությամբ գույքի վրա: Միաժամանակ, Հակակոռուպցիոն կոմիտեից հայտնել են, որ Կոմիտեի քննիչների

կողմից կոռուպցիոն հանցագործություններով քննվող քրեական վարույթներով սառեցված և բռնագանձված դեպքերի քանակի վերաբերյալ առանձնացված հաշվառում չի իրականացվում: Հաշվառումն իրականացվում է պատճառված վնասի վերականգնումների և արգելադրված գույքերի մասով:

Այսպիսով, Հակակոռուպցիոն կոմիտեն առաջընթաց է գրանցել 2022-ից 2023 թթ. ընթացքում կոռուպցիոն հանցագործություններով պատճառված վնասի դրամական վերականգնումների հարցում: Այնուամենայնիվ, առգրավման ենթակա ակտիվների ընդհանուր արժեքի և փաստացի վերականգնումների միջև մեծ տարբերությունը վկայում է, որ առկա է վնասների ավելի մեծ մասնաբաժինն արդյունավետ կերպով վերականգնելու անհրաժեշտություն:

Ընդհանուր առմամբ, ըստ Դատախազության ընդհանուր տվյալների, Հայաստանում 2021-2023 թթ. ընթացքում կոռուպցիոն բնույթի հանցագործությունների վերաբերյալ ավարտված գործերով վերականգնվել է 2,638,640,941 ՀՀ դրամ գումար՝ որպես պետությանը պատճառված վնաս, որից 400,051,030 ՀՀ դրամը՝ 2021 թ.-ին, 873,256,480 ՀՀ դրամը՝ 2022 թ.-ին, իսկ 1,365,324,431 ՀՀ դրամը՝ 2023 թ.-ին: Պատճառված ընդհանուր վնասի չափը 2021 թ.-ին կազմել է 551,044,294 ՀՀ դրամ, 2022 թ.-ին կազմել է 228,294,243 ՀՀ դրամ, իսկ 2023 թ.-ին կազմել է 32,886,735,053 ՀՀ դրամ:

Հակակոռուպցիոն կոմիտեի կատարողականի ընկալում (հնարավոր չէ գնահատել)

Համաձայն ՀՌԿԿ-Հայաստան կազմակերպության կողմից Հայաստանում կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի 2022 թ. ուսումնասիրության՝[63] հարցվածների 79.6 %-ը հավանություն է տվել մասնագիտացված քննչական մարմնի՝ Հակակոռուպցիոն կոմիտեի ստեղծմանը:

Հետագայում Հակակոռուպցիոն կոմիտեի կատարողականի ընկալումները չափելու համար հարցումներ չեն իրականացվել և հրապարակումներ առկա չեն:

Փորձագետների կարծիքով Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության վերաբերյալ հանրության տեղեկացվածության մակարդակը ցածր է:

«Իսկ ի՞նչ է արել Հակակոռուպցիոն կոմիտեն, որ իր մասին՝ որպես կարևորագույն կառույց, ձևավորվի հանրային ընկալում: Սա շատ կարևոր հարց է: Ասենք, Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ նախընտրական քարոզարշավի շրջանում վճարվող գումարների հարցը՝ այդ մի գործով քննության արդյունքները չեն կարող փոխարինվել հարյուր այլ կոռուպցիոն գործերով քննության արդյունքներով: Այսինքն թեկուզ հապարավոր մանր կոռուպցիոն հանցանքների բացահայտումը չի կարող փոխարինել բարձր հնչեղություն ունեցող մի քանի գործերով անգործության փաստը»:

(Փորձագետ)

Առաջարկություններ

1. Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության վերաբերյալ կիսամյակային և տարեկան հաշվետվություններում նախատեսել քաղաքական ազդեցություն ունեցող, այդ թվում՝ բարձրաստիճան (քաղաքական, վարչական, ինքնավար և հայեցողական) պաշտոն

[63] Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան» հիմնադրամ, Հայաստանում կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրություն, Երևան, 2022 թ.:

զբաղեցնող անձանց նկատմամբ կոռուպցիոն վարույթներով հետաքննության վերաբերյալ հնարավորինս մանրամասն տեղեկություններ, ինչպես նաև Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների կողմից նախաձեռնված քրեական վարույթներով՝ կոռուպցիոն հանցագործություններով պետությանը պատճառված և վերականգնված վնասների վերաբերյալ տվյալներ:

2. Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից իրականացնել կամ պատվիրել Կոմիտեի գործունեության վերաբերյալ հանրային ընկալումների հարցումներ՝ վերհանելու թույլ կողմերը և բարձրացնելու արդյունավետությունը:
3. Ուժը կորցրած ճանաչել «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի այն դրույթը, ըստ որի արտաքին ազդարարում չի համարվում նախաքննություն իրականացնող մարմինների կողմից հանցագործության վերաբերյալ հաղորդումների քննարկման և լուծման՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված ընթացակարգը:
4. Հակակոռուպցիոն կոմիտեին ներկայացրած և ազդարարման շրջանակի մեջ տեղավորվող հաղորդումները համարել ազդարարում և հաշվառել համապատասխան վիճակագրության շրջանակում:
5. Ընդլայնել Հակակոռուպցիոն կոմիտեի հետ համագործակցվող փորձաքննական կազմակերպությունների ցանկը՝ ապահովելու փորձաքննությունների ողջամիտ ժամկետներում իրականացումը:

1.5. Կանխարգելում, կրթում և իրազեկում

Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից կանխարգելում, կրթում և իրազեկում չափանիշով գնահատման համար հիմք են հանդիսացել հետևյալ ցուցանիշները՝

- **Հատկացված բյուջե**, որը գնահատում է Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից հանրային իրազեկմանը և հաղորդակցմանը հատկացված գործառնական ծախսերի միջին մասնաբաժինը:
- **Կոռուպցիայի կանխարգելման, կրթման և իրազեկման ռազմավարական պլանավորում**, որը գնահատում է Հակակոռուպցիոն կոմիտեի՝ կանխարգելման, հակակոռուպցիոն թեմաներով կրթման և իրազեկման ծրագրերի ամբողջականությունը և դրանց իրականացումը:
- **Կրթություն (դասընթացներ) և զարգացում**, որը գնահատում է Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից նախաձեռնված կրթական նախաձեռնությունները: Հակակոռուպցիոն կոմիտեի կազմակերպած քննարկումներին և սեմինարներին մասնակցող անձանց թիվը, Կոմիտե այցելած քաղաքացիների և օտարերկրյա պատվիրակների թիվը:
- **Կոռուպցիայի կանխարգելման առնչությամբ իրավասու մարմիններին ներկայացված առաջարկություններ**, որը գնահատում է Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության ընթացքում վեր հանված խնդիրներով կոռուպցիայի կանխարգելմանը միտված առաջարկությունների (իրավական ակտերի նախագծեր, կոնկրետ առաջարկություններ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ կարծիքներ և այլն) քանակը և դրանց տեսակարար կշիռը իրավասու մարմիններին ներկայացրած ընդհանուր առաջարկությունների (եզրակացություններ, վարույթների քանակ և այլն) թվում:
- **Կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ հետազոտություններ**, որը գնահատում է Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից կոռուպցիոն հանցագործությունների

բացահայտման գործում կոռուպցիայի տարածվածության, մակարդակի, համատեքստի և պայմանների հետազոտությունների ու ուսումնասիրությունների օգտագործման հնարավորությունները:

- **Տեղեկատվության տարածում և քարոզարշավներ**, որը գնահատում է Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից կոռուպցիոն հանցագործությունների նախականխման/հակազդման վերաբերյալ տեղեկությունների տարածման տեսակը, տարածման մակարդակը:
- **Առցանց հաղորդակցում**, որը գնահատում է Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից առցանց հաղորդակցման ուղիների/սոցցանցերի օգտագործումը կոռուպցիոն հանցագործությունների նախականխման/հակազդման վերաբերյալ տեղեկությունների տարածման համար:

Գծապատկեր 6. Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից կանխարգելման, կրթման և իրազեկման ապահովումը



Ինչպես ցույց է տալիս գծապատկերը, Հակակոռուպցիոն կոմիտեի կանխարգելման, կրթման և իրազեկման մակարդակը գնահատվել է 28,5 %՝ ապահովելով առավելագույն 14-ից 4 միավոր:

Հատկացված բյուջե (0 միավոր)

Հաշվի առնելով այն փաստը, որ Հակակոռուպցիոն կոմիտեն ստեղծվել է 2021 թ. նոյեմբերին՝ 2021 թ.-ին հանրային իրազեկման և հաղորդակցման աշխատանքներ չեն նախատեսվել և իրականացվել: ՀՀ պետական բյուջեի 2022 թ. կատարողականի համաձայն՝ 2021 թ. համեմատ «Հակակոռուպցիոն գործերի քննության ապահովում» և «Հակակոռուպցիոն քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիթորինգի իրականացում» ծրագրի ծախսերն աճել են 3.2 անգամ՝ հիմնականում պայմանավորված Հակակոռուպցիոն կոմիտեի տեխնիկական հագեցվածության ապահովման և էլեկտրոնային ռեսուրսների, մասնավորապես՝ կայքի, ստեղծման կամ արդիականացման նախագծերի ապահովման նպատակով միջոցների հատկացմամբ: Այս նպատակով օգտագործվել է նախատեսված միջոցների 75.7 %-ը կամ 310 մլն ՀՀ դրամ: Ծրագրից շեղումն առաջացել է գնումների արդյունքում առաջացած տնտեսումների, ինչպես նաև հայտարարված մրցույթների չկայանալու հետևանքով: 2023 թ. ծրագրի ծախսերը նվազել են 12.5 %-ով:

Հակակոռուպցիոն կոմիտեի ներկայացրած տեղեկատվության համաձայն՝ 2021-2023 թթ. բյուջեներում հանրային իրազեկման, հաղորդակցման ծրագրերին հատկացված բյուջետային ծախսերի տեսակարար կշիռը 2021 թ. համար կազմել է 0.3 %, 2022 թ. համար կազմել է 0.2 %, իսկ 2023 թ. համար՝ 0.13 %:

Կոռուպցիայի կանխարգելման, կրթման և իրազեկման ռազմավարական պլանավորում (0 միավոր)

Հակակոռուպցիոն կոմիտեի կայքում բացակայում է կոռուպցիոն հանցագործությունների առնչությամբ հանրության կրթման և իրազեկման ռազմավարության վերաբերյալ տեղեկատվությունը: Իրազեկմանը միտված հիմնական աշխատանքները կատարվում են այլ կառույցների հետ համագործակցությամբ:

Կրթություն (դասընթացներ) և զարգացում (1 միավոր)

Հակակոռուպցիոն կոմիտեն չունի կրթությանը և զարգացմանը միտված հրապարակված ծրագիր: Միաժամանակ, կազմավորումից ի վեր Կոմիտեն հյուրընկալել է տարբեր ուսումնական հաստատությունների և կրթական ծրագրերի շուրջ 200 շրջանավարտների ու ուսանողների, ինչպես նաև ՏԻՄ ներկայացուցիչների և համայնքային ծառայողների:

Մասնավորապես, 2022-2023 թթ. ընթացքում կազմակերպվել է նման 10 հանդիպում Երևանի պետական համալսարանի իրավագիտության և քաղաքագիտության, ժուռնալիստիկայի ֆակուլտետների, Հայաստանի Եվրոպական համալսարանի և Գիտությունների ազգային ակադեմիայի իրավագիտության ամբիոնների ուսանողների, ինչպես նաև ԹԻՀԿ և «Հայաստանի իրավաբանների ասոցիացիա» հասարակական կազմակերպությունների կրթական ծրագրերի ունկնդիրների հետ: Ուսանողների, ինչպես նաև լրագրողների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ քննարկումներ ու հանդիպումներ են կազմակերպվել նաև բուհեր և այլ հաստատություններ արտագնա այցերի ձևաչափով: 2023 թ. ընթացքում ՔՀԿ-ների նախաձեռնությամբ տեղի է ունեցել 3 ճանաչողական այց Հակակոռուպցիոն կոմիտե՝ ուսանողական խմբերի մասնակցությամբ: Այցելուներին ներկայացվել է կառույցի գործառույթները, առաջնահերթություններն ու հիմնական մարտահրավերները, կոռուպցիայի դեմ տարվող պայքարի և Կոմիտեում ծառայության առանձնահատկությունները:[64]

Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեությամբ հետաքրքրված են նաև օտարերկրյա քաղաքացիները: Այսպես, 2021-2023 թթ. ընթացքում Կոմիտե այցելած օտարերկրյա պատվիրակների թիվը և/կամ պաշտոնական հանդիպումների քանակը կազմել է 73, որից 2021 թ. ընթացքում իրականացվել է 10 պաշտոնական հանդիպում, 2022 թ.-ին՝ 34 և 2023 թ.-ին՝ 29 պաշտոնական հանդիպում:

Կոռուպցիայի կանխարգելման առնչությամբ իրավասու մարմիններին ներկայացված առաջարկություններ (0 միավոր)

Կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ, ինչպես նաև առհասարակ իրավասու մարմիններին ներկայացված առաջարկությունների մասով Հակակոռուպցիոն կոմիտեն հաշվառում չի իրականացնում: Հրապարակային սահմանափակ տվյալները ևս թույլ չեն տալիս եզրակացնել,

[64] ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի պաշտոնական կայք, նորություններ բաժին, https://anticorruption.am/hy/news/view/248, https://anticorruption.am/hy/news/view/208, https://anticorruption.am/hy/news/view/287 (դիտված՝ 28.02.2025 թ.):

որ Կոմիտեն իր վարույթում գտնվող գործերի և փորձառության, վերհանված խնդիրների վերլուծության հիման վրա ձևակերպել և իրավասու մարմիններին է ներկայացրել կոռուպցիայի կանխարգելմանը միտված առաջարկություններ:

Կոռուպցիոն հանցագործությունների տարածվածության և ոլորտային ռիսկերի բացահայտման վերաբերյալ հետազոտություններ (0 միավոր)

Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման գործընթացում Հակակոռուպցիոն կոմիտեն չի իրականացնում կամ առնվազն չի հրապարակում կոռուպցիայի տարածվածության, մակարդակի, համատեքստի և պայմանների հետազոտություն և վերլուծություն:

Տեղեկատվության տարածում և քարոզարշավներ (1 միավոր)

Հակակոռուպցիոն կոմիտեի կայքը, ինչպես նաև Կոմիտեի գործունեության վերաբերյալ կիսամյակային կամ տարեկան հաղորդումները չեն պարունակում տվյալ կառույցի կողմից տեղեկատվական միջոցառումների կամ հանրային քարոզարշավներ կազմակերպելու վերաբերյալ տվյալներ:

ՀՀ վարչապետի 2022 թ. N 820-Լ որոշմամբ հաստատվել է կոռուպցիայի դեմ պայքարի շրջանակներում հաղորդակցման գործողությունների ծրագիրը, որով նախատեսվել են հաղորդակցման գործողությունների շրջանակը, հաղորդակցման եղանակները և միջոցները, ակնկալվող արդյունքները:[65] Այսպես, «Կոռուպցիայի դեմ պայքարի մարմինների գործունեության վերաբերյալ տեղեկատվական արշավ» գործողության շրջանակներում ակնկալվում էր իրազեկող տեսահոլովակների հեռարձակում (ցուցադրում) կամ տեղեկատվական նյութերի սոցիալական ցանցերում և պաշտոնական կայքերում հրապարակում, հնարավորության դեպքում՝ զանգվածային լրատվության միջոցներում հրապարակում: Որպես ակնկալվող արդյունք նախատեսվում էր, որ հանրային իրազեկման արշավների արդյունքում հասարակությունը պետք է տեղեկացվի Կոմիտեի ընթացիկ գործունեության մասին: Նշված գործողությունների կատարման տեսանկյունից Հակակոռուպցիոն կոմիտեն հանդես է գալիս որպես համակատարող մարմին, իսկ որպես հիմնական կատարող հանդես է գալիս ՀՀ արդարադատության նախարարությունը՝ ի դեմս Հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչության:

ՀՀ կառավարության Հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին N 1871-Լ որոշման[66] շրջանակներում նույնպես առկա են համապատասխան գործողություններ՝ կապված Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության վերաբերյալ իրազեկման ծրագրերի և միջոցառումների հետ: Նշված գործողությունների կատարման տեսանկյունից Հակակոռուպցիոն կոմիտեն կրկին հանդես է գալիս որպես համակատարող մարմին, իսկ որպես հիմնական կատարողներ հանդես են գալիս այլ պետական մարմինները:

Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ Սասուն Խաչատրյանի ելույթների համաձայն՝ *«Զանգվածային լրատվության տարբեր միջոցներով, այդ թվում հեռուստաընկերությունների*

[65] ՀՀ վարչապետի «Կոռուպցիայի դեմ պայքարի շրջանակներում հաղորդակցման գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» N 820-Լ որոշում, 18.07.2022 թ., https://www.e-gov.am/u_files/file/decrees/varch/2022/820_1.pdf

[66] ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» N 1871-Լ որոշում, 26.10.2023 թ.:

լրատվական թողարկումներին ու իրավական ուղղվածության հաղորդումներին Հակակոռուպցիոն կոմիտեի ներկայացուցիչների կողմից տրված հարցազրույցների միջոցով լայնորեն լուսաբանվել են հանրության շրջանում հնչեղություն ստացած քրեական գործերի ընթացքն ու Կոմիտեի կողմից մշակված իրավական ակտերը: 2023 թ.-ին ևս շարունակվել են լայնածավալ լուսաբանման աշխատանքները կառույցի ընթացիկ գործունեության և օրենքով վերապահված հիմնական գործառույթների իրականման վերաբերյալ»:[67] Ս. Խաչատրյանը նաև նշել էր, որ կոռուպցիոն դեպքերը լուսաբանվում են կոմիտեի կայքում, ինչպես նաև զանգվածային լրատվամիջոցների և սոցիալական ցանցերի միջոցով, *«ինչը նույնպես պետք է ունենա կանխարգելիչ նշանակություն»*.[68]

Հակակոռուպցիոն կոմիտեի կայքի լրատվական բաժնի վերլուծությունից ակնհայտ է, որ լուսաբանվում են որոշ կոռուպցիոն դեպքեր, սակայն երբեմն հասկանալի չեն դրանց ընտրության չափանիշները. առկա է ընտրողական մոտեցում: Հաճախ վարույթների նախաձեռնման մասին հայտարարելուց հետո Հակակոռուպցիոն կոմիտեն հանրությանը չի տեղեկացնում քննության արդյունքների մասին, ինչը խնդրահարույց է Հակակոռուպցիոն կոմիտեի հաշվետվողականության տեսանկյունից՝ առավել ևս բարձր հնչեղություն ունեցող բարձրաստիճան պաշտոնատար անձանց և քաղաքական ազդեցություն ունեցող անձանց վերաբերյալ կոռուպցիոն վարույթների մասով:

Առցանց հաղորդակցում (2 միավոր)

Կոռուպցիոն հանցագործությունների նախականխման/հակազդման տեղեկատվության տարածման և հանրությանն իրազեկելու հիմնական գործիքը Հակակոռուպցիոն կոմիտեի պաշտոնական կայքն է,[69] որում պարբերաբար տեղադրվում են Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեությանն առնչվող տեղեկատվական, վերլուծական բնույթի նյութեր: Այս ուղղությամբ 2022 թ.-ին Հակակոռուպցիոն կոմիտեի պաշտոնական կայքում շուրջ 73 հրապարակում է տեղադրվել, իսկ 2023 թ.-ին՝ 116 հրապարակում:

Հաշվետու ժամանակահատվածում ակտիվորեն գործարկվել և շարունակաբար իր լսարանն է ընդարձակել Հակակոռուպցիոն կոմիտեի ֆեյսբուքյան էջը: Տվյալների հավաքագրման պահին էջն ուներ մոտ 3,600 հետևորդ:

Հակակոռուպցիոն կոմիտեի պաշտոնական կայքում հրապարակված են կառույցի պատմությունը, կոմիտեի նախագահի, նրա տեղակալների, վարչությունների մասին տեղեկություններ, կոմիտեի ամենամյա և կիսամյակային հաշվետվությունները: Կայքում տեղադրված են մարմնի գործունեությանն առնչվող որոշ նորմատիվ իրավական ակտեր՝ օրենքներ, հրամաններ: Կոմիտեի կայքը պարունակում է հետադարձ կապի ապահովման համար անհրաժեշտ բաժին, որտեղ պարտադիր լրացման դաշտերն են դիմողի անունը, ազգանունը, հայրանունը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն, դիմումի թեման:

Հակակոռուպցիոն կոմիտեի պաշտոնական սոցիալական ցանցերի (ֆեյսբուքյան էջ, յութուբյան հարթակ և տելեգրամ) էջերի հղումները նշված են տեսանելի տեղում, թեև նշված 3 սոցիալական հարթակներից գործում են միայն առաջին երկուսը: Կայքն ունի բջջային հեռախոսներին

[67] ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ Սասուն Խաչատրյանի ելույթը, 23.10.2023, https://anticorruption.am/hy/news/view/294 (դիտված՝ 28.02.2025 թ.):
[68] Նույն տեղում:
[69] ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի պաշտոնական կայք, https://anticorruption.am

հարմարեցված տարբերակ: Առանձին բաժնով առկա է կայքի քարտեզ՝ ակտիվ հղումներով, գործում է որոնման համակարգը:

Կայքում առանձին բաժնով հրապարակված են մարմնի բյուջետային հատկացումների մասին տեղեկությունները: Առկա է տեղեկություն քաղաքացիների ընդունելության կարգի, օրերի, ժամերի և վայրի մասին: Կայքում տեղադրված է «Ազդարարի՛ր» միասնական էլեկտրոնային հարթակի կոճակը: Առկա չէ տեքստերը տեսողական խնդիր ունեցող անձանց համար հարմարեցված տարբերակով ներկայացնելու գործիք:

Միևնույն ժամանակ, առկա չէ թափուր աշխատատեղերի առանձին բաժին: Դրանց մասին ինֆորմացիան ներկայացված է «հայտարարություններ» ընդհանուր բաժնում: Առկա չէ տեղեկություն/խորհրդատվություն ստանալու կամ հարցում ներկայացնելու կարգի մասին ինֆորմացիա: Տեղեկություն ստանալու հարցման օրինակելի ձևը և լրացման վերաբերյալ ցուցումները բացակայում են: Ստացված հարցումների ամենամյա վիճակագրական տվյալները՝ ըստ բանավոր, գրավոր, վերահասցեագրված, մերժված և բավարարված հարցումների, բացակայում են: Կայքում առկա չեն քաղաքացիների կողմից կարծիք, մեկնաբանություն թողնելու դաշտեր: Առկա չէ «Հաճախ տրվող հարցեր» բաժինը: Առկա չեն վիզուալ եղանակով առավել մատչելի տեղեկատվական նյութեր:

Պետք է նաև նկատել, որ կայքում հրապարակվող փաստաթղթերը, մասնավորապես՝ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի հրամանները, չեն համապատասխանում բաց տվյալների սկզբունքներին: Դրանք չունեն մատչելի ձևաչափ, ներկայացվում են միայն PDF տարբերակով, չունեն պատճենելու և տեղադրելու հնարավորություն, մեքենայաընթեռնելի չեն, դրանցում առկա տեղեկությունը առկա չէ այլընտրանքային ձևաչափերով:

Ընդհանուր առմամբ, Հակակոռուպցիոն կոմիտեի կայքն իր ձևով, կառուցվածքով, նավարկման տրամաբանությամբ, բաժինների և ենթաբաժինների տեղակայմամբ և բովանդակությամբ ունի էական բարելավման կարիք:

Առաջարկություններ

1. Մշակել Հակակոռուպցիոն կոմիտեի հաղորդակցության ռազմավարություն՝ նպատակ ունենալով բարձրացնել Կոմիտեի գործունեության վերաբերյալ հանրային իրազեկման մակարդակը, միաժամանակ նպաստելով կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ գիտելիքի տարածմանը և, այդպիսով, կոռուպցիայի կանխարգելմանը:
2. Բարձրացնել Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության, մանդատի և լիազորությունների մասին քաղաքացիների իրազեկման մակարդակը՝ գործունեության արդյունքների վերաբերյալ հանրամատչելի հաշվետվությունների, ինֆոգրաֆիկների, տեսահոլովակների, այլ տեղեկատվական նյութերի հրապարակման միջոցով՝ իրազեկման ծրագրերն իրականացնելով ինչպես դոնոր կազմակերպությունների միջոցներով, այնպես էլ նախատեսելով բավարար ֆինանսավորում ՀՀ պետական բյուջեից:
3. Իրականացնել Հակակոռուպցիոն կոմիտեի հանրային իրազեկման համար պատասխանատու մասնագետների կարողությունների զարգացում՝ պատշաճ լուսաբանելու Կոմիտեի դերը և նշանակությունը, Կոմիտեի կողմից քննվող գործերի ընթացքի և արդյունքների լուսաբանումը:
4. Վերակազմակերպել Հակակոռուպցիոն կոմիտեի կայքը՝ հրապարակվող փաստաթղթերը ներկայացնելով բաց տվյալների ձևաչափով՝ դրանք դարձնելով մեքենայաընթեռնելի և

մատչելի պատճենելու համար, ինչպես նաև կիրառել տեքստերը ձայնային տարբերակով ներկայացնելու գործիքը:

5. Իրականացնել կոռուպցիոն հանցագործությունների տարածվածության, մակարդակի, համատեքստի, ոլորտային կոռուպցիոն դրսևորումների, գործոնների վերաբերյալ հետազոտություններ և վերլուծություն՝ ըստ անհրաժեշտության համալրելով Հակակոռուպցիոն կոմիտեն համապատասխան ստորաբաժանումներով և կադրերով:

1.6. Հաղորդակցություն և գործակցություն

Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից համագործակցություն և արտաքին հարաբերություններ չափանիշով գնահատման համար հիմք են հանդիսացել հետևյալ ցուցանիշները՝

- **Վստահությունը Կառավարության կողմից ցուցաբերվող աջակցության հանդեպ**, որը գնահատում է հասարակության վստահությունն առ այն, որ Կառավարությունը Հակակոռուպցիոն կոմիտեին տրամադրել է անհրաժեշտ լիազորություններ և ռեսուրսներ կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքարելու համար: Գնահատման համար հիմք են ընդունվել հիմնականում հանրային հարցումները, նշված թեմայով հետազոտությունների արդյունքները, ՔՀԿ և կոռուպցիայի դեմ պայքարի փորձագետների և լրագրողների հետ հարցազրույցները:
- **Համագործակցություն կոռուպցիայի դեմ պայքարող այլ մարմինների հետ**, որը գնահատում է Հակակոռուպցիոն կոմիտեի՝ կոռուպցիայի դեմ պայքարում ներգրավված այլ մարմինների հետ հարաբերությունները՝ կոռուպցիոն հանցագործությունների նախականխման ու հետապնդման գործընթացում:
- **Համագործակցություն ոչ կառավարական (հասարակական) կազմակերպությունների հետ**, որը գնահատում է կոռուպցիայի դեմ պայքարի գործունեության հանրայնացման առումով Հակակոռուպցիոն կոմիտեի և երկրի ոչ կառավարական կազմակերպությունների, այդ թվում՝ ՔՀԿ-ների, մասնավոր ընկերությունների, պետական մասնակցությամբ ձեռնարկությունների, դոնոր կառույցների հետ գործակցությունը:
- **Միջազգային հակակոռուպցիոն ցանցեր**, որը գնահատում է Հակակոռուպցիոն կոմիտեի մասնակցությունը (ներգրավվածությունը) միջազգային հակակոռուպցիոն ցանցերին և դրանցում մասնակցության (ներգրավվածության) աստիճանը:
- **Համագործակցություն այլ երկրների հետ**, որը գնահատում է Հակակոռուպցիոն կոմիտեի գործակցությունը այլ երկրների հակակոռուպցիոն մարմինների և իրավապահ մարմինների հետ՝ համատեղ ծրագրերի, տրամադրված փորձագիտական օժանդակության, տեղեկության փոխանակման տեսանկյունից:
- **Հասանելիությունը մարգինալացված խմբերին**, որը գնահատում է Հակակոռուպցիոն կոմիտեի արձագանքողականությունը և հասանելիությունը մարգինալացված (խոցելի) խմբերին: Դիտարկում է ըստ մարգինալացված առանձին խմբերի, դրանց տվյալների մոնիտորինգի ընթացակարգերի առկայությունը, այդ տվյալների օգտագործումը կոռուպցիայի նախականխման և իրազեկման ծրագրերի մշակման ու հանրայնացման համար:

Գծապատկեր 7. Հակակոռուպցիոն կոմիտեի համագործակցության և արտաքին հարաբերությունների չափանիշով ապահովումը



Ինչպես ցույց է տալիս գծապատկերը, Հակակոռուպցիոն կոմիտեի համագործակցության և արտաքին հարաբերությունների չափանիշով գործունեության մակարդակը գնահատվել է 70 %՝ ապահովելով առավելագույն 10-ից 7 միավոր: Գնահատման ենթակա ցուցանիշներից չի գնահատվել «Վստահությունը կառավարության կողմից Հակակոռուպցիոն կոմիտեին ցուցաբերվող աջակցության հանդեպ» ցուցանիշը:

Վստահությունը Կառավարության կողմից Հակակոռուպցիոն կոմիտեին ցուցաբերվող աջակցության հանդեպ (հնարավոր չէ գնահատել)

2023 թ. հոկտեմբերի 23-ի ելույթում ՀՀ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ Սասուն Խաչատրյանը նշել է. *«Հակակոռուպցիոն կոմիտեն մշտապես կգում է Հայաստանի Հանրապետության կառավարության պատրաստակամությունը՝ լուծելու կոմիտեի առջև ծառացող խնդիրները, ինչի համար շնորհակալություն է հայտնել Կոմիտեի բոլոր գործընկերներին, Հայաստանի Հանրապետության կառավարությանը և անձամբ ՀՀ վարչապետին»:*[70]

Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից հանրային ընկալումների վերաբերյալ հարցումներ չեն անցկացվել, թեև, ըստ փորձագետների, Կոմիտեն ՀՀ կառավարությունից ստանում է հայցվող աջակցությունը՝ իրականացնելու իր նպատակները:

Համագործակցություն կոռուպցիայի դեմ պայքարով զբաղվող այլ մարմինների հետ (2 միավոր)

Հակակոռուպցիոն կոմիտեն ակտիվորեն համագործակցում է ՀՀ իրավապահ մյուս մարմինների իր գործընկերների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ:

[70] ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ Սասուն Խաչատրյանի ելույթը, 23.10.2023 թ.:

Գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչությունը հսկողություն է իրականացնում այն բոլոր հանցագործությունների դեպքերով նախաձեռնված քրեական վարույթների շրջանակում մինչդատական վարույթի նկատմամբ, որոնցով մինչդատական վարույթ է իրականացվում ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում: Կոռուպցիոն բնույթի հանցագործությունների վիճակագրական տվյալները ՀՀ գլխավոր դատախազությունը ստանում է Հակակոռուպցիոն կոմիտեից:

Հակակոռուպցիոն կոմիտեն կարող է ԿԿՀ-ից ստանալ ենթադրյալ կոռուպցիոն հանցագործության հատկանիշներ պարունակող վարույթի նյութեր, որի վերաբերյալ իր լիազորությունների շրջանակում կարող է նախաձեռնել քրեական վարույթ և իրականացնել քննություն: Կոմիտեի կայքում նկարագրված են մի շարք դեպքեր, որտեղ տեսանելի է ԿԿՀ-ի հետ նրա համագործակցությունը:[71]

Պետք է նկատել, որ չնայած կայացած համագործակցությանը, առկա չեն ֆորմալ մեթոդական ուղեցույցներ և կարգեր կոռուպցիայի դեմ պայքարով զբաղվող այլ մարմինների հետ հարաբերվելու համար:

Համագործակցություն ոչ կառավարական (հասարակական) կազմակերպությունների հետ (2 միավոր)

Հակակոռուպցիոն կոմիտեի հարաբերությունները ոչ կառավարական կառույցների հետ բավականին արդյունավետ են:

Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ համագործակցությունը հիմնականում դրսևորվում է տարբեր ծրագրերի շրջանակներում Հակակոռուպցիոն կոմիտե ճանաչողական այցերի, հանդիպումների կազմակերպման եղանակներով: Մասնավորապես, «Իրազեկ քաղաքացիների միավորում» հասարակական կազմակերպության նախաձեռնությամբ և «Freedom House» կազմակերպության աջակցությամբ իրականացվող «Հայաստանում ժողովրդավարական մշակույթի առաջմղում» ծրագրի շրջանակներում, ԹԻՀԿ և «Հայաստանի իրավաբանների ասոցիացիա» հասարակական կազմակերպությունների կրթական ծրագրերի ունկնդիրները պարբերաբար այցելել են ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե: Հանդիպումների ընթացքում ուսանողները ծանոթացել են Կոմիտեի գործառույթներին, կոռուպցիայի դեմ տարվող պայքարի մեխանիզմներին, ինչպես նաև այդ երևույթի շուրջ հանրային ընկալման, կոռուպցիոն և, ընդհանրապես, իրավական թեմաների լուսաբանման առանձնահատկություններին: Հակակոռուպցիոն կոմիտեն նաև հյուրընկալել է ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի գիտակրթական միջազգային կենտրոնի իրավագիտության ամբիոնի մագիստրանտներին, Հայաստանի եվրոպական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի ուսանողներին, Երևանի պետական համալսարանի իրավագիտության, քաղաքագիտության և ժուռնալիստիկայի ֆակուլտետների ուսանողներին:

Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ համագործակցությունը դրսևորվել է նաև միջազգային դոնոր կազմակերպությունների կողմից իրականացվող միջոցառումների, այդ թվում՝ առանձին աշխատաժողովների շրջանակներում Կոմիտեի ներկայացուցիչների մասնակցության միջոցով:

[71] ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի պաշտոնական կայք, նորություններ բաժին, https://anticorruption.am/hy/news/view/121 (դիտված՝ 28.02.2025 թ.):

Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ համագործակցության առավել բարձր մակարդակը Հակակոռուպցիոն կոմիտեի՝ օրենքով սահմանված որոշ պաշտոնների համալրման նպատակով անցկացվող մրցույթները որպես դիտորդ վերահսկելու, ինչպես նաև մրցութային և ատեստավորման հանձնաժողովներում ներգրավվելու հնարավորություն ընձեռելն է:

Միջազգային հակակոռուպցիոն ցանցեր (2 միավոր)

Հակակոռուպցիոն կոմիտեն մասնակցում է ՏՀԶԿ Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցի Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրին,[72] «Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբի» (ԳՐԵԿՈ) Հայաստանի գնահատման զեկույցով ստանձնած պարտավորությունների կատարման գործընթացին,[73] ՄԱԿԴԿ-ի պահանջների մոնիտորինգի և գնահատման հաշվետվությունների պատրաստման գործին: Կոռուպցիայի դեմ պայքարի ՄԱԿ-ի կոնվենցիայի անդամ երկրների համաժողովի 10-րդ նստաշրջանին (COSP 10) ՀՀ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ Սասուն Խաչատրյանը հանդես է եկել ելույթով՝ որպես ՀՀ պատվիրակության ղեկավար[74]:

Ինչպես նշված է ՏՀԶԿ «Բարձր մակարդակի կոռուպցիայի դեմ պայքար Արևելյան Եվրոպայում. պատկերացումներ և լուծումներ» զեկույցում, Հայաստանում հակակոռուպցիոն ոլորտում միջգերատեսչական համագործակցությունը պաշտոնապես հաստատվում է համապատասխան շահագրգիռ կողմերի միջև հուշագրերով: Դրանք նպատակ ունեն զարգացնել համագործակցության մեխանիզմներ, հատկապես փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի շրջանակներում: Դրանք սովորաբար ընդգրկում են համագործակցության երեք հիմնական ոլորտ՝ տեղեկության փոխանակում, իրավական ակտերի քննարկում և մշակում, ինչպես նաև համատեղ ուսումնական սեմինարների իրականացում:[75]

2022 թ. հունվարի 20-ին ՀՀ Հակակոռուպցիոն կոմիտեի և Բազելի կառավարման ինստիտուտի միջև ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր՝ կոռուպցիայի, տնտեսության դեմ ուղղված հանցագործությունների կամ հանցավոր գործունեության այլ տեսակների միջոցով ձեռք բերված ակտիվների բացահայտման և դրանց վերադարձի ուղղությամբ աջակցություն ցուցաբերելու, ինչպես նաև նշված հանցագործությունների արդյունավետ քննությանն ուղղված ծրագրերի և ռազմավարությունների մշակմանը նպաստելու նպատակով: Հիշյալ ծրագրերն իրականացվում են Ակտիվների վերականգնման միջազգային կենտրոնի (ICAR) միջոցով՝ հատուկ մասնագետների խմբի կողմից օպերատիվ կերպով տրամադրվող տարաբնույթ խորհրդատվություններով և հետազոտություններով:[76]

Հակակոռուպցիոն կոմիտեն համագործակցում է նաև ՄԱԿ զարգացման ծրագրի, Եվրոպայի

---

[72] Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցի Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագիր, https://www.oecd.org/corruption/acn/istanbul-action-plan.htm (դիտված՝ 28.02.2025 թ.):

[73] Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբի Հայաստանի Հանրապետության գնահատման զեկույցով ստանձնած պարտավորությունների կատարման վերաբերյալ զեկույցներ, https://www.coe.int/en/web/greco/evaluations/armenia (դիտված՝ 28.02.2025 թ.):

[74] ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի պաշտոնական կայք, նորություններ բաժին, https://www.anticorruption.am/hy/news/view/313 (դիտված՝ 28.02.2025 թ.):

[75] Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանց, Հայաստանի 5-րդ գնահատման զեկույց, 2024 թ.:

[76] ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի պաշտոնական կայք, նորություններ բաժին, https://anticorruption.am/hy/icnews/view/114 (դիտված՝ 28.02.2025 թ.):

խորհրդի, Եվրոպայի միության, Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության հետ: Համագործակցության արդյունքում, Կոմիտեի ծառայողները մասնակցել են ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Չեխիայում, Խորվաթիայում, Ալբանիայում, Վրաստանում, Ղազախստանում և Հունգարիայում կազմակերպված 12 դասընթացների, որոնք վերաբերել են կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննությանը, քրեական հետապնդմանը, հակակոռուպցիոն բարեփոխումների փորձի ուսումնասիրությանը, ֆինանսական քննություններին և միջազգային իրավական փոխօգնությանը, ինչպես նաև արտերկրում իրականացված 5 հանդիպումների, աշխատաժողովների և նստաշրջանների:

Համագործակցություն այլ երկրների հետ (2 միավոր)

Հակակոռուպցիոն կոմիտեն կազմավորման օրվանից մշտական կապի մեջ է գտնվել միջազգային գործընկերների հետ կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում վերջիններիս ունեցած հաջողված փորձի ուսումնասիրման և վերջինիս լավագույն տարրերի որդեգրման նպատակով: Կոմիտեն արդյունավետ կերպով համագործակցում է ԱՄՆ դեսպանատան Թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության գրասենյակի, ԱՄՆ հետաքննությունների դաշնային բյուրոյի, Ուկրաինայի ազգային հակակոռուպցիոն բյուրոյի, Ավստրիայի կոռուպցիայի դեմ պայքարի դաշնային բյուրոյի, Իտալիայի Ֆինանսական գվարդիայի, ՀՀ-ում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների, այլ միջազգային գործընկերների հետ:

Հակակոռուպցիոն կոմիտեն ունի համագործակցության հուշագրեր ԱՄՆ հետաքննությունների դաշնային բյուրոյի և Իտալիայի Ֆինանսական գվարդիայի հետ կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում համագործակցության ընդլայնման նպատակով:

2021-2023 թթ. ընթացքում Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից քննվող 20 քրեական վարույթով օտարերկրյա պետություններ է ուղարկվել իրավական փոխօգնության 42 հարցում, որոնցից 15-ին ստացվել է պատասխան: Հակակոռուպցիոն կոմիտեն օտարերկրյա պետություններից ստացել է իրավական փոխօգնության 14 հարցում, որից 13-ը կատարվել և ուղարկվել է նախաձեռնողին:

Հասանելիությունը մարգինալացված խմբերին (0 միավոր)

Հակակոռուպցիոն կոմիտեի 2021-2023 թվականների գործունեության վերաբերյալ հաղորդումներում մարգինալացված (խոցելի) խմբերի վերաբերյալ վիճակագրական տվյալները բացակայում են: Հակակոռուպցիոն կոմիտեի հարցման պատասխանը նույնպես վկայում է, որ Կոմիտեն մարգինալացված (խոցելի) խմբերին վերաբերելի կոռուպցիոն շփումների մասով տվյալների առանձնացված հաշվառում չի իրականացնում:

Առաջարկություններ

1. Կոռուպցիայի դեմ պայքարի համար պատասխանատու այլ պետական մարմինների (Գլխավոր դատախազություն, ԱՆ, ԿԿՀ) հետ համատեղ ապահովել Հակակոռուպցիոն կոմիտեի վարույթների գործընթացում տեղեկության փոխանակման և համատեղ աշխատանքի կազմակերպման ուղեցույցի մշակումը:
2. Բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ համագործակցության շրջանակում աջակցել կոռուպցիոն հանցագործությունների քննության ոլորտում կոնկրետ կրթական ծրագրերի մշակմանը և իրականացմանը:

3. Աջակցել ԿԿՀ-ին կոռուպցիոն հանցագործությունների քննությանը վերաբերող կրթական ծրագրերի մշակման գործում:
4. Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից մշակվող հանրային հարցումների իրականացման տեխնիկական առաջադրանքներում ներառել մարգինալացված (խոցելի) խմբերի նկատմամբ կոռուպցիոն հանցագործությունների ազդեցության և դրանց հիման վրա նախականխման միջոցառումներ (ծրագրեր) կազմելու համար հարցեր՝ ապահովելով այդ խմբերի մասով կոռուպցիոն հանցագործությունների ազդեցության վիճակագրական տվյալների վարումը:

2. Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության գնահատումն՝ ըստ Ջակարտայի սկզբունքների համապատասխանության

Հակակոռուպցիոն կոմիտեի անկախության և գործունեության արդյունավետությունը գնահատվել է «Հակակոռուպցիոն մարմինների գործունեության սկզբունքների մասին Ջակարտայի հայտարարության» 16 սկզբունքների[77] և դրանց՝ տեղայնացված մեկնաբանություններին համապատասխանության տեսանկյունից, որոնք ներկայացված են Հավելված 4-ում: Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության համապատասխանության գնահատականը ստացվել է 37 ցուցանիշների միավորների հիման վրա, որոնք ամբողջապես ներառում են նախորդ բաժնի 1-ին, 2-րդ, 3-րդ և 6-րդ չափանիշներով սահմանված ցուցանիշները:

Գծապատկեր 8. Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության գնահատականը՝ հակակոռուպցիոն մարմինների գործունեության Ջակարտայի հայտարարության սկզբունքներին համապատասխանության տեսանկյունից



Ինչպես ցույց է տալիս գծապատկերը, Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության համապատասխանությունը Ջակարտայի հայտարարության սկզբունքների մասով կազմել է 60.8 %՝ առավելագույն 74-ից ապահովելով 45 միավոր:

[77] «Հակակոռուպցիոն մարմինների գործունեության սկզբունքների մասին» Ջակարտայի հայտարարություն, 27.11.2012 թ.:

1. Մանդատ (7 միավոր)

Ձակարտայի սկզբունքների համաձայն՝ ՀԿՄ-ները պետք է ունենան հստակ մանդատ կանխարգելման, կրթման, իրազեկության բարձրացման, հետաքննության և հետապնդման միջոցով կոռուպցիայի դեմ պայքարելու համար՝ մեկ մարմնի կամ մի քանի համակարգված մարմինների միջոցով:

«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ Հակակոռուպցիոն կոմիտեն լայն մանդատ ունի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով իր ենթակայությանը վերապահված՝ ենթադրյալ կոռուպցիոն հանցագործություններով մինչդատական քրեական վարույթի կազմակերպման և իրականացման, ինչպես նաև օպերատիվ-հետախուզական գործունեության իրականացման շրջանակներում: Վերոնշյալ լիազորություններով պայմանավորված Հակակոռուպցիոն կոմիտեն հանդես է գալիս որպես հակակոռուպցիոն քննչական մարմին: Այն լիարժեքորեն օժտված է ՀՀ իրավական համակարգի/մոդելի մեջ հաստատված իրավապահ մարմինների գործառույթներով, ինչպես նաև, ի տարբերություն այլ քննչական մարմինների, ունի օպերատիվ գործունեություն ծավալելու լիազորություն և ռեսուրսներ:

Որպես հակակոռուպցիոն քննչական մարմին՝ Հակակոռուպցիոն կոմիտեն օրենքով իրավասու է միջնորդագրեր ներկայացնելու համապատասխան մարմիններին մինչդատական վարույթի ընթացքում բացահայտված հանցանքների կատարմանը նպաստող հանգամանքները վերացնելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու համար, ուսումնասիրելու հանցագործությունների բացահայտման, քննության թերությունները և միջոցներ ձեռնարկելու դրանք վերացնելու ուղղությամբ, մշակելու հանցագործությունների բացահայտման, քննության մեթոդիկան՝ կատարելագործելու քննչական, օպերատիվ-հետախուզական աշխատանքների կազմակերպումը, ամփոփելու հանցագործությունների բացահայտման, քննության դրական փորձը և ապահովելու դրա ներդրումը իրավակիրառ պրակտիկայում, քննարկելու և լուծելու ստացված դիմումները, բողոքները և առաջարկությունները, իր իրավասության սահմաններում լուծել ՀՀ միջազգային պայմանագրերով նախատեսված՝ քրեական վարույթներով իրավական օգնության հարցերը, համագործակցելու իրավապահ և այլ մարմինների, լրատվության միջոցների հետ, իրականացնելու ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

Հակակոռուպցիոն կոմիտեի իրավասությունը տարածվում է ոչ միայն հանրային, այլ նաև մասնավոր հատվածի վրա:

Միևնույն ժամանակ, ՀՀ քրեական օրենսգրքի հավելված N 1-ում ամրագրված կոռուպցիոն հանցանքների ցանկը փոփոխությունների է ենթարկվել՝ կրճատելով կոռուպցիոն հանցագործությունների տեսակները, ինչը սահմանափակել է Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչների իրավասությանը վերապահված հանցանքների ենթակայության շրջանակը:

2. Համագործակցություն (9 միավոր)

ՀԿՄ-ները չպետք է գործեն մեկուսի: Նրանք պետք է լավ աշխատանքային հարաբերություններ զարգացնեն պետական մարմինների, քաղաքացիական հասարակության, մասնավոր հատվածի և այլ շահագրգիռ կողմերի հետ, ներառյալ՝ միջազգային համագործակցությունը:

Հակակոռուպցիոն կոմիտեն ակտիվ ներգրավված է միջազգային հակակոռուպցիոն ցանցերում, միջազգային տեխնիկական աջակցության առանձին ծրագրերում: Կոմիտեն համագործակցում

է միջազգային գործընկերների հետ կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում վերջիններիս ունեցած հաջողված փորձի ուսումնասիրման և վերջինիս լավագույն տարրերի որդեգրման նպատակով: Կոմիտեն համագործակցում է ԱՄՆ դեսպանատան թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության գրասենյակի, Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության, ՄԱԿ զարգացման ծրագրի, Եվրոպայի խորհրդի, Եվրոպայի միության, ՀՀ-ում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների, ԱՄՆ հետաքննությունների դաշնային բյուրոյի, Իտալիայի ֆինանսական գվարդիայի, այլ միջազգային գործընկերների հետ: Համագործակցության և փոխըմբռնման հուշագրեր են ստորագրվել Հակակոռուպցիոն կոմիտեի և ԱՄՆ հետաքննությունների դաշնային բյուրոյի, Իտալիայի Հանրապետության ֆինանսական գվարդիայի, Բազելի կառավարման ինստիտուտի հետ:

Հակակոռուպցիոն կոմիտեն ներգրավվածություն ու մասնակցություն ունի ՏՀԶԿ, ԳՐԵԿՈ, ՄԱԿԴԿ-ի պահանջների մոնիտորինգի և գնահատման հաշվետվությունների պատրաստման գործում:

Հակակոռուպցիոն կոմիտեի համագործակցությունը ՔՀԿ միավորումների և այլ կազմակերպությունների հետ հիմնականում դրսևորվել է հակակոռուպցիոն կրթական ծրագրերի և գործունեության հանրայնացման՝ առանձին միջոցառումների, աշխատաժողովների, օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերի նախագծերի հանրային քննարկումների կազմակերպման միջոցով: Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ համագործակցության առավել բարձր մակարդակի դրսևորում է Հակակոռուպցիոն կոմիտեի՝ օրենքով սահմանված որոշ պաշտոնների համալրման նպատակով անցկացվող մրցույթները դիտորդի կարգավիճակով վերահսկելու, ինչպես նաև մրցութային և ատեստավորման հանձնաժողովներում ներգրավվելու հնարավորություն ընձեռելը:

3. Մշտականություն (2 միավոր)

ՀԿՄ-ները, երկրների հիմնական իրավական սկզբունքներին համաձայն, պետք է ստեղծվեն պատշաճ և կայուն օրենսդրական դաշտով, Սահմանադրության կամ որևէ հատուկ օրենքի հիման վրա:

Հակակոռուպցիոն կոմիտեն ձևավորվել է «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» 2021 թ. մարտի 24-ի ՀՕ-147-Ն առանձին օրենքով: Այն գործում է անկախության, հրապարակայնության, ֆինանսական ինքնուրույնության և քաղաքական չեզոքության սկզբունքների հիման վրա:

4. Նշանակում (1 միավոր)

ՀԿՄ-ների ղեկավարները պետք է նշանակվեն մի գործընթացի միջոցով, որն ապահովում է նրանց ապաքաղաքական կեցվածքը, անկողմնակալությունը, չեզոքությունը, բարեվարքությունը և կոմպետենտությունը:

Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի և իր տեղակալների նշանակումները կատարվում են մրցութային խորհրդի ընտրության հիման վրա, օրենքով սահմանված բաց մրցութային ընթացակարգերով, որը հիմնականում ապահովում է նշանակումների անկողմնակալությունը, չեզոքությունը, բարեվարքությունը:

Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահին նշանակում է Կառավարությունը՝ 6 տարի ժամկետով: «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքով սահմանված է, որ նույն անձը չի

կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ նշանակվել Կոմիտեի նախագահի պաշտոնում: Այս սահմանափակումը մի կողմից, դրական է, քանի որ կանխում է անձի տևական պաշտոնավարումը ղեկավար պաշտոնում: Մյուս կողմից, այն խնդրահարույց է, քանի որ կրկին նշանակվելու հիմքը կարող է որոշակի ակնկալիքներ ստեղծել և՛ թեկնածուի, և՛ նշանակող կառույցի՝ վարչապետի կամ Կառավարության մոտ, ինչը հարցականի տակ է դնում թեկնածուի անկախությունը և Կոմիտեի գործառույթների պատշաճ և անկողմնակալ իրականացման ապահովումը:

Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի թեկնածուների ընտրության համար ձևավորվում է մրցութային խորհուրդ: Խորհուրդը ձևավորվում է Կառավարության, Ազգային ժողովի խորհրդի, Բարձրագույն դատական խորհրդի, Գլխավոր դատախազի, Մարդու իրավունքների պաշտպանի նշանակած 1-ական թեկնածուներից և քաղաքացիական հասարակության 2 ներկայացուցչից: Մրցույթի գործընթացի համար սահմանված ժամկետներն ու ընթացակարգերը հրապարակային են: Մրցույթի հայտարարությունը, հարցաշարերը, հարցազրույցի արդյունքները, մրցույթը հաղթահարած թեկնածուների վերաբերյալ տեղեկությունը և խորհրդի նիստերի արձանագրությունները հրապարակվում են հրապարակային ծանուցումների պաշտոնական կայքում (www.azdarar.am), վարչապետի աշխատակազմի և Հակակոռուպցիոն կոմիտեի պաշտոնական կայքերում:

Ինչ վերաբերում է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալի նշանակմանը, մրցույթում հաղթող ճանաչված մասնակիցների ցուցակն ստանալուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում, Կոմիտեի նախագահը վարչապետին է առաջարկում մրցույթում հաղթող ճանաչված Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալի թեկնածությունը՝ կցելով թեկնածուի վերաբերյալ ԿԿՀ-ի ներկայացրած խորհրդատվական եզրակացությունը, որոնց արդյունքում էլ վարչապետը կատարում է նշանակում:

Այդուհանդերձ, խնդրահարույց են թեկնածուին ներկայացվող մեղմ պահանջները, որոնք չեն ներառում հակակոռուպցիոն ոլորտում աշխատանքի փորձառության պահանջներ: Խնդրահարույց է նաև քաղաքական գործոնի հնարավոր ազդեցությունը Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի և իր տեղակալների նշանակումների գործընթացում:

5. Շարունակականություն (2 միավոր)

Լիազորությունների կասեցման, հեռացման, հրաժարականի, թոշակի անցնելու կամ պաշտոնավարության ավարտի պարագայում ՀԿՄ ղեկավարի բոլոր լիազորություններն օրենքով պետք է խելամիտ ժամկետում պատվիրակվեն ՀԿՄ համապատասխան պաշտոնյային մինչև կառույցի նոր ղեկավարի նշանակումը:

Օրենքով սահմանված է, որ «Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի բացակայության կամ պաշտոնեական պարտականությունները կատարելու անհնարինության դեպքում նրա հանձնարարությամբ նրան փոխարինում է հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալներից մեկը, իսկ հանձնարարության բացակայության դեպքում՝ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի՝ առավել երկար մասնագիտական ստաժ ունեցող տեղակալը» դրույթը, որը համահունչ է շարունակականության սահմանված սկզբունքին:

6. Հեռացում (1 միավոր)

ՀԿՄ ղեկավարները պետք է ունենան պաշտոնավարման ժամկետի անվտանգություն և հեռացվեն միայն իրավականորեն սահմանված ընթացակարգով, որը հավասարազոր է օրենքով հատուկ պաշտպանվող առանցքային անկախ պաշտոնատար անձանց պաշտոնազրկման ընթացակարգին:

Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի և իր տեղակալների հեռացման սկզբունքի համապատասխանության տեսանկյունից «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքով սահմանված են Կոմիտեի նախագահի և իր տեղակալի լիազորությունների դադարման և դադարեցման գործընթացները: Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի և նրա տեղակալի պաշտոնից հեռացման հանգամանքները, այն է՝ պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը լրանալը, ՀՀ քաղաքացիությունը կորցնելը, դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա նրա անգործունակ, անհայտ բացակայող ճանաչվելը կամ մահացած հայտարարվելը, նրա մահը, նրա նկատմամբ կայացված դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճռի առկայությունը, նրա նկատմամբ կայացված՝ ոչ ռեաբիլիտացնող հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չհարուցելու մասին որոշման առկայությունը, Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի կողմից հրաժարականի դիմում Կառավարություն ներկայացնելը և վերջինիս կողմից այն հաստատվելը, Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալի կողմից պաշտոնից ազատվելու վերաբերյալ գրավոր դիմում վարչապետին ներկայացնելը և վերջինիս կողմից նրան պաշտոնից ազատելը, պայմանավորված չեն Կոմիտեի նախագահի և նրա տեղակալի գործունեության նկատմամբ ուղղակի միջամտության և կողմնակի ազդեցության հնարավորությամբ, ուստի կարելի է ասել, որ Կոմիտեի նախագահի և նրա տեղակալի պաշտոնից հեռացման հայեցողական հիմքերը բացակայում են:

7. Էթիկական վարքագիծ (1 միավոր)

ՀԿՄ-ները պետք է ընդունեն վարքագծի կանոններ, որոնք իրենց անձնակազմից պահանջեն էթիկական վարքագծի ամենաբարձր չափորոշիչներ և համապատասխանության պահանջների պահպանման խիստ ռեժիմ:

Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների վարքագծի կանոնները սահմանված են Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի թիվ 30-Լ հրամանով: Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի բարեվարքության պահանջները, շահերի բախման կառավարումը, նվերների ընդունման արգելքը սահմանված են «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով, ինչպես նաև Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի վարքագծի կանոններով:

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանվում է, որ գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրման պարտականություն ունեն պետական պաշտոն զբաղեցնող անձինք, պետական հայեցողական պաշտոն զբաղեցնող անձինք, ինչպես նաև քաղաքացիական ծառայության ղեկավար խմբի 1 և 2 ենթախմբի պաշտոն զբաղեցնող անձինք: Այսպես, Հակակոռուպցիոն կոմիտեում հայտարարագրման պարտականություն ունեն ինքնավար պաշտոն զբաղեցնող անձինք, հայեցողական պաշտոն զբաղեցնող անձինք, ինչպես նաև Հակակոռուպցիոն կոմիտեի գլխավոր քարտուղարը և նրա տեղակալը: Հակակոռուպցիոն կոմիտեի աշխատակազմի քաղաքացիական ծառայողների վարքագծի կանոնները հաստատված են քաղաքացիական ծառայությունը համակարգող փոխվարչապետի կողմից:

Ի լրումն կարևոր է նշել, որ Հակակոռուպցիոն կոմիտեի ղեկավար կազմի, ինչպես նաև ծառայողների թեկնածուները պաշտոնի նշանակվելիս անցնում են բարեվարքության ստուգումներ: ԿԿՀ-ին է ներկայացվում մրցույթի առաջին փուլը հաղթահարած մասնակիցների բարեվարքության վերաբերյալ լրացված հարցաթերթիկը եզրակացություն ստանալու նպատակով: Եզրակացությունը կրում է խորհրդատվական բնույթ՝ անկախ նրանից, դրական, թե բացասական եզրակացություն է տրվել: Արձանագրվել է մեկ դեպք, երբ բացասական եզրակացությամբ թեկնածուն նշանակվել է պաշտոնի:

Բացի այդ, բարեվարքության մեխանիզմների առկայության տեսանկյունից առավելապես կարևոր է Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների առաքինությունը ստուգելու մեխանիզմը: «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով սահմանված է, որ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը իրավասու է ներքին անվտանգության ստորաբաժանման միջոցով իրականացնելու Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների առաքինության ստուգում, այդ թվում՝ պրովոկացիայի եղանակներով: Առաքինության ստուգման գործընթացը չպետք է խոչընդոտի Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների բնականոն գործունեությունը: Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների առաքինության ստուգման կարգը և պայմանները սահմանում է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը: Այնուամենայնիվ, Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների առաքինության ստուգման կարգը և պայմանները դեռևս ընդունված չեն, հետևապես առ այսօր որևէ ծառայող չի ենթարկվել առաքինության ստուգման:

8. Անձեռնմխելիություն (1 միավոր)

ՀԿՄ ղեկավարները և աշխատակիցները պետք է անձեռնմխելի լինեն քաղաքացիական և քրեական վարույթներից իրենց մանդատի իրականացման շրջանակում կատարած գործողությունների համար: ՀԿՄ ղեկավարները և աշխատակիցները պետք է պաշտպանված լինեն կեղծ քաղաքացիական և քրեական վարույթներից:

Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի պաշտպանվածության սկզբունքի համապատասխանության պահանջները սահմանված են «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածով: Հակակոռուպցիոն կոմիտեին վերապահված լիազորությունների իրականացման գործում Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի, նրա ընտանիքի անդամների կամ նրա զբաղեցրած բնակելի և ծառայողական տարածքների անձեռնմխելիության նկատմամբ ոչ իրավաչափ ներգործության սպառնալիքի դեպքում հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի պահանջով իրավասու պետական մարմինները պարտավոր են անհապաղ ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի, նրա ընտանիքի անդամների և նրա զբաղեցրած բնակելի և ծառայողական շինությունների անվտանգությունն ապահովելու ուղղությամբ:

9. Վարձատրություն (2 միավոր)

ՀԿՄ աշխատակիցների վարձատրությունը պետք է լինի այնպիսի մակարդակի, որը թույլ կտա աշխատանքի ընդունել բավարար թվով որակավորված անձանց:

Հակակոռուպցիոն կոմիտեի աշխատակիցների վարձատրության սկզբունքի համապատասխանության պահանջները սահմանված են «Պետական պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների վարձատրության մասին» ՀՀ օրենքով, ըստ որի կանոնակարգված են

աշխատակազմի ծառայողների վարձատրության և պարգևատրումների, հավելավճարների և սոցիալական այլ երաշխիքների սահմանաչափերը:

Հակակոռուպցիոն կոմիտեի քաղաքացիական ծառայող հանդիսացող աշխատակիցների վարձատրության մրցունակության գնահատման տեսանկյունից նշված գործակիցները համահարթ են կամ հավասար են հանրային ծառայության մյուս տեսակների համանման պաշտոնների վարձատրության գործակիցների հետ:

Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների աշխատավարձի չափն էականորեն տարբերվում է մյուս քննչական մարմինների ծառայողների աշխատավարձի չափից: Այսպես, Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի աշխատավարձի չափը 12 %-ով գերազանցում է Քննչական կոմիտեի նախագահի աշխատավարձի չափը: Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչի աշխատավարձի չափը 14 %-ով գերազանցում է Քննչական կոմիտեի քննիչի աշխատավարձը: Կոմիտեի ծառայողների համար նախատեսված հավելումների չափն անհամեմատ մեծ է այլ քննչական մարմինների ծառայողներին և նույնիսկ դատավորներին տրվող հավելումների չափից:

Մասնավոր ոլորտի նկատմամբ Հակակոռուպցիոն կոմիտեն ավելի քիչ մրցունակ է: Այսպես, ոչ պետական հատվածում իրավաբանի միջին աշխատավարձը պետական հատվածի համապատասխան ցուցանիշից բարձր է 27.1 %-ով, կառավարման ոլորտի մասնագետինը՝ 11.1 %-ով, միաժամանակ՝ տնտեսագետի աշխատավարձը 2.5 %-ով բարձր է պետական ծառայությունում:

Ի լրումն աշխատավարձի, Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմը ստանում է նաև պարգևատրումներ: Վերջինիս պլանավորված մակարդակը Կոմիտեի անձնակազմի տարեկան վարձատրության ծավալում 2021 թ.-ին կազմել է 30 %, 2022 թ.-ին՝ 28.2 %, իսկ 2023 թ.-ին՝ 7.98 %:

Այնուամենայնիվ, Հակակոռուպցիոն կոմիտեում կադրերի հոսունությունը զգալիորեն մեծ է և նույնիսկ բարձր վարձատրությունը չի ապահովում աշխատակազմի կայունությունը:

10. Իրավասություն մարդկային ռեսուրսների նկատմամբ (4 միավոր)

ՀԿՄ-ները պետք է ունենան իրենց աշխատակազմի անդամներին հավաքագրելու և հեռացնելու լիազորություն՝ ներքին հստակ և թափանցիկ ընթացակարգերի համաձայն:

Հակակոռուպցիոն կոմիտեն աշխատակազմի անձնակազմի հավաքագրումն իրականացնում է «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքով սահմանված մրցութային կարգով:

Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալներին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է ՀՀ վարչապետը: Հակակոռուպցիոն կոմիտեի մյուս ծառայողներին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը:

Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնների մրցույթն անցկացվում է 5 փուլով, ներառյալ՝ փաստաթղթերի ուսումնասիրությունը, թեստավորումը, բարեվարքության ուսումնասիրությունը, հարցազրույցը և արդյունքների ամփոփումը: Մրցույթի արդյունքների հրապարակումից հետո Հանձնաժողովը մրցույթում հաղթող ճանաչված թեկնածուների ցուցակը ներկայացնում է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահին: Ցուցակին կցվում են նաև ԿԿՀ-ի ներկայացրած խորհրդատվական եզրակացությունները թեկնածուների

բարեվարքության վերաբերյալ: Ինքնավար պաշտոնների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձինք մինչև նշանակումը, «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով, մասնագիտական պատրաստում են անցնում ՀՀ արդարադատության ակադեմիայում:

Հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող ստորաբաժանման պաշտոնները համալրվում են Կոմիտեի նախագահի սահմանած կարգով և պայմաններով՝ անցկացվող մրցույթի արդյունքների հիման վրա: Օպերատիվ հետախուզական գործառույթներ իրականացնող ծառայողների թեկնածուների ցուցակը համալրվում է մրցութային հանձնաժողովի կողմից: Կոմիտեի օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող ստորաբաժանման ծառայողի պաշտոնների մրցույթն անցկացվում է փաստաթղթերի ուսումնասիրության, ֆիզիկական պատրաստականության ստուգման, հարցազրույցի առաջին, բարեվարքության ուսումնասիրության, հարցազրույցի երկրորդ և արդյունքների ամփոփման փուլերով:

Ինչ վերաբերում է Հակակոռուպցիոն կոմիտեի տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց, նրանց աշխատանքի ընդունում և աշխատանքից ազատում է Հակակոռուպցիոն կոմիտեի գլխավոր քարտուղարը՝ ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով: «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ՀՀ քննչական մարմիններում գլխավոր քարտուղարին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է քննչական մարմնի ղեկավարը: Քաղաքացիական ծառայության մյուս պաշտոններում նշանակում և այդ պաշտոններից ազատում է Կոմիտեի գլխավոր քարտուղարը:

Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոններ զբաղեցնող բոլոր անձինք, «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի համաձայն, ունեն իրավագիտության բակալավրի որակավորման աստիճան կամ դիպլոմավորված մասնագետի բարձրագույն իրավաբանական կրթության որակավորման աստիճան կամ օտարերկրյա պետությունում ձեռք բերված դիպլոմավորված մասնագետի բարձրագույն իրավաբանական կրթության որակավորման աստիճան կամ համապատասխան աստիճան, որի ճանաչումն ու համարժեքության հաստատումը ՀՀ-ում իրականացվել է օրենքով սահմանված կարգով:

11. Համարժեք և հուսալի ռեսուրսներ (4 միավոր)

ՀԿՄ-ները պետք է ունենան բավարար ֆինանսական ռեսուրսներ իրենց առաջադրանքները կատարելու համար՝ հաշվի առնելով երկրի բյուջետային ռեսուրսները, բնակչության թիվը և տարածքը: ՀԿՄ-ները պետք է ունենան ժամանակին հասանելի, պլանավորված, հուսալի և համապատասխան ռեսուրսներ ՀԿՄ կարողությունների աստիճանական զարգացման, գործողությունների կատարելագործման և ՀԿՄ-ի մանդատի իրագործման համար:

Հակակոռուպցիոն կոմիտեն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով առաջիկա տարվա բյուջետային գործընթացը սկսելու մասին վարչապետի որոշմամբ սահմանված ժամկետում յուրաքանչյուր տարի կազմում և Կառավարություն է ներկայացնում Կոմիտեի առաջիկա տարվա բյուջետային ֆինանսավորման հայտը (պետական բյուջեով Հակակոռուպցիոն կոմիտեի գծով նախատեսվելիք ծախսերի նախահաշվի նախագիծը) առաջիկա տարվա պետական բյուջեի նախագծում ներառելու համար: Ներկայացվող հայտը ՀՀ կառավարության կողմից ընդունվելու դեպքում ընդգրկվում է պետական բյուջեի նախագծում, իսկ առարկության դեպքում պետական բյուջեի նախագծի հետ

ներկայացվում է ԱԺ: Կառավարությունն Ազգային ժողով և Հակակոռուպցիոն կոմիտեին է ներկայացնում բյուջետային ֆինանսավորման հայտի վերաբերյալ առարկության հիմնավորումը:

Հակակոռուպցիոն կոմիտեի բնականոն գործունեության ապահովման համար չկանխատեսված ծախսերի ֆինանսավորման նպատակով նախատեսվում է հակակոռուպցիոն կոմիտեի պահուստային ֆոնդ, որը ներկայացվում է բյուջեի առանձին տողով: Պահուստային ֆոնդի մեծությունը հավասար է տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքով Հակակոռուպցիոն կոմիտեում պաշտոն զբաղեցնող անձանց աշխատավարձի ֆոնդի 2 %-ին: Պետական բյուջեի ծախսային մասում Հակակոռուպցիոն կոմիտեի ծախսերը ներկայացվում են առանձին տողով:

Հակակոռուպցիոն կոմիտեի ֆինանսավորումը 2021-2023 թթ. ընթացքում կազմել է ՀՀ պետական բյուջեի ծախսերի 0.1 %-ից պակաս: Բյուջետային ֆինանսավորման գործընթացի մասով Հակակոռուպցիոն կոմիտեի 2023 թ. բյուջետային հայտը ամբողջովին բավարարվել է: 2022-2023 թթ. ընթացքում դոնոր կազմակերպությունների կողմից ֆինանսավորում չի տրամադրվել: Հակակոռուպցիոն կոմիտեի կարողությունների աստիճանական զարգացման, գործողությունների կատարելագործման և մանդատի իրագործման մասով Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի կարողությունների զարգացման ծրագրերի համար հատկացված բյուջեի մեծությունը ընդհանուր բյուջեում վկայում է, որ վերապատրաստումների համար հատկացվել է 1 %-ից պակաս բյուջե, ինչը բավարար չէ: Վերապատրաստումները հիմնականում իրականացվել են միջազգային կառույցների աջակցության ծրագրերի շրջանակներում, և դրանք չեն կրել պլանավորված բնույթ և հիմնված չեն եղել անձնակազմի բացահայտված կարիքների վրա:

12. Ֆինանսական ինքնավարություն (2 միավոր)

ՀԿՄ-ները պետք է ստանան բյուջետային հատկացումներ, որոնց նկատմամբ ունենան կառավարման և վերահսկման լիարժեք իրավասություն՝ չհակասելով համապատասխան հաշվապահական հաշվառման ստանդարտներին և աուդիտի պահանջներին:

2021 թ. Հակակոռուպցիոն կոմիտեի փաստացի ֆինանսավորումը գերազանցել է ԱԺ կողմից հաստատված մեծությունը, քանի որ տարվա ընթացքում ՀՀ կառավարությունն ավելացրել է Կոմիտեին կատարված հատկացումները: Սակայն Հակակոռուպցիոն կոմիտեն չի օգտագործել հատկացված ամբողջ գումարը, քանի որ Կոմիտեի գործունեությունը նախատեսված էր հուլիս ամսից, մինչդեռ կառույցն ամբողջությամբ ձևավորվել է 2021 թ. նոյեմբերին, ուստի հաստիքները ամբողջությամբ չեն համալրվել, և չեն ավարտվել գնման գործընթացները: 2022 թ. ՀՀ կառավարությունը նվազեցրել է ԱԺ կողմից կատարված հատկացումների մեծությունը, սակայն Հակակոռուպցիոն կոմիտեն չի օգտագործել անգամ ԱԺ կողմից կատարված հատկացումը: 2022 թ.-ին ապահովվել է 86.7 % կատարողական, որը պայմանավորված է թափուր հաստիքների առկայությամբ: 2023թ. ՀՀ կառավարությունը ավելացրել է ՀՀ պետական բյուջեով կատարված հատկացումը, իսկ փաստացի ֆինանսավորումը եղել է ավելի փոքր:

ՀՀ կառավարության իրավասությունը Հակակոռուպցիոն կոմիտեին ԱԺ կողմից հատկացված բյուջետային միջոցների ծավալն առանց Կոմիտեի համաձայնության փոփոխելու կամ վերաբաշխելու լիազորությունը դիտվում է խնդրահարույց:

13. Ներքին հաշվետվողականություն (5 միավոր)

ՀԿՄ-ները պետք է մշակեն և սահմանեն հստակ կանոններ և գործողությունների ստանդարտ ընթացակարգեր, ներառյալ՝ մոնիտորինգի և կարգապահական մեխանիզմներ՝ նվազագույնի հասցնելու որևէ սխալ վարքագիծ և լիազորությունների չարաշահում:

Հակակոռուպցիոն կոմիտեի ներքին վերահսկողության մեխանիզմները սահմանվում են Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից: Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի 2022 թ. փետրվարի 4-ի N 02-Լ հրամանով հաստատվել է Կոմիտեի ներքին կարգապահական կանոնները հաստատելու մասին փաստաթուղթը:

Հակակոռուպցիոն կոմիտեի աուդիտի բաժնի գործառույթները նույնպես սահմանված են Հակակոռուպցիոն կոմիտեի կանոնադրությամբ: Հակակոռուպցիոն կոմիտեի կայքում ոչ մի տվյալ չկա ներքին աուդիտի կազմակերպման և 2021-2023 թթ. ընթացքում իրականացված ներքին աուդիտի գնահատման հաշվետվությունների մասին:

«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքով Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի վարքագծի կանոնները սահմանում է հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը՝ ԿԿՀ-ի սահմանած տիպային կանոնների հիման վրա: Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների վարքագծի կանոնները հաստատված են Կոմիտեի նախագահի հրամանով: Ընդ որում, նշված փաստաթղթում հաշվի են առնված ինչպես ԿԿՀ-ի սահմանած տիպային կանոնները, այնպես էլ իրավապահ մասնագիտական մարմնի ծառայողների վարքագծին առնչվող ոլորտային առանձնահատկությունները:

Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի նկատմամբ բողոքների առումով «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքով սահմանված են Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը: Կարգապահական խախտման ծանրությունից ելնելով՝ Կոմիտեի ծառայողի նկատմամբ կարող են կիրառվել հետևյալ կարգապահական տույժերը՝ զգուշացում, նկատողություն, խիստ նկատողություն, դասային աստիճանի իջեցում՝ մեկ աստիճանով, պաշտոնի իջեցում՝ մեկ աստիճանով, պաշտոնից ազատում: Հակակոռուպցիոն կոմիտեում ծառայողի նկատմամբ կարգապահական տույժերը կիրառում է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը: Կոմիտեի ծառայողի նկատմամբ իրականացվում է ծառայողական քննություն, որի փուլերն են նախնական ուսումնասիրությունը և կարգապահական վարույթը: Կարգապահական խախտման փաստի առթիվ Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի նկատմամբ ծառայողական քննություն հարուցվում է կարգապահական հանձնաժողովի որոշմամբ: Հակակոռուպցիոն կոմիտեում ծառայողական քննություն իրականացնելու կարգը, ներառյալ կարգապահական հանձնաժողովի աշխատակարգը, կարգապահական հանձնաժողովի ներկայացմամբ սահմանում է հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը:

Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի նկատմամբ բողոքների թվի, դրանց քննության, արդյունքում կիրառված պատասխանատվության, այդ թվում՝ կարգապահական, միջոցների կիրառման վերաբերյալ տվյալները բացակայում են Հակակոռուպցիոն կոմիտեի 2021, 2022 և 2023 թթ. ամենամյա հաղորդումներում:

14. Արտաքին հաշվետվողականություն (1 միավոր)

ՀԿՄ-ները պետք է խստորեն պահպանեն օրենքի գերակայությունը և հաշվետու լինեն այն մեխանիզմներով, որոնք սահմանվել են լիազորությունների չարաշահումները կանխելու համար: Գլխավոր դատախազությունն իրականացնում է հսկողություն մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ: Միաժամանակ, Հակակոռուպցիոն կոմիտեի նկատմամբ արտաքին վերահսկողության մեխանիզմները թերի են:

Հակակոռուպցիոն կոմիտեն՝ որպես քննչական մարմին, հանդիսանում է սահմանադրական կարգավիճակ ունեցող պետական մարմին, իսկ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքով ԱԺ-ի կողմից քննչական մարմինների գործունեության ուղղակի վերահսկողություն չի իրականացվում:

ՀՀ հաշվեքննիչ պալատի, ինչպես նաև ՀՀ վարչապետին ենթակա վերահսկողական պետական ծառայության միջոցով Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության հաշվեքննություն և հակակոռուպցիոն ծրագրերի ու միջոցառումների իրականացման նկատմամբ ուսումնասիրություններ կամ ստուգումներ մինչ օրս չեն իրականացվել:

15. Հրապարակային հաշվետվություններ (2 միավոր)

ՀԿՄ-ները պետք է պաշտոնապես առնվազն տարին մեկ անգամ հաշվետվություն ներկայացնեն հանրությանն իրենց գործունեության մասին:

«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքով սահմանված են Հակակոռուպցիոն կոմիտեի հանրային հաշվետվողականության և թափանցիկության սկզբունքի կիրարկումն ապահովող միջոցառումները, որոնք ներառում են Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության կիսամյակային հաղորդումների և տարեկան հաղորդումների հրապարակում Կոմիտեի կայքում, Իսկ նախորդ տարվա գործունեության մասին Կոմիտեն գրավոր հաղորդում է ՀՀ կառավարությանը և Ազգային ժողովին:

Գործնականում հրապարակվում են ոչ բոլոր կիսամյակային հաղորդումները, ինչպես նաև խնդրահարույց են մնում Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության տարեկան հաղորդումների ամբողջականությունը՝ հաշվետվությունների ոչ միասնական կառուցվածքը, տվյալների անհամադրելիությունը, պատասխանատվության մասին տվյալները, ինչպես նաև բարձրաստիճան պաշտոնատար անձանց և քաղաքական ազդեցություն ունեցող անձանց վարույթների վերաբերյալ տվյալները չներառելը:

16. Հանրային հաղորդակցություն և գործակցություն (2 միավոր)

ՀԿՄ-ները պետք է կանոնավոր կերպով հաղորդակցվեն և համագործակցեն հանրության հետ՝ ապահովելու հանրության վստահությունն իրենց անկախության, արդարացի և արդյունավետ գործունեության հանդեպ:

Հակակոռուպցիոն կոմիտեի՝ հանրության հետ հաղորդակցման ու համագործակցության հիմնական գործիքը www.anticorruption.am պաշտոնական կայքն է: Կոմիտեի կայքում հրապարակված են կառույցի պատմությունը, Կոմիտեի նախագահի, նրա տեղակալների, վարչությունների մասին տեղեկություններ, Կոմիտեի ամենամյա և կիսամյակային հաշվետվությունները, առնչվող նորմատիվ իրավական ակտեր՝ օրենքներ, հրամաններ: Հակակոռուպցիոն կոմիտեի կայքը պարունակում է հետադարձ կապի ապահովման համար

անհրաժեշտ տեղեկություն: Միևնույն ժամանակ, առկա չէ թափուր աշխատատեղերի առանձին բաժին, ինչպես նաև տեղեկություն/խորհրդատվություն ստանալու կամ հարցում ներկայացնելու կարգի մասին ինֆորմացիա: Տեղեկություն ստանալու հարցման օրինակելի ձևը և լրացման վերաբերյալ ցուցումները բացակայում են: Ստացված հարցումների ամենամյա վիճակագրական տվյալները՝ ըստ բանավոր, գրավոր, վերահասցեագրված, մերժված և բավարարված հարցումների, բացակայում են: Կայքում առկա չեն քաղաքացիների կողմից կարծիք, մեկնաբանություն թողնելու դաշտեր: Առկա չէ «Հաճախ տրվող հարցեր» բաժինը: Կայքում հրապարակվող փաստաթղթերը հիմնականում չեն համապատասխանում բաց տվյալների սկզբունքներին:

Հակակոռուպցիոն կոմիտեի հանրային հաղորդակցության և գործակցության սկզբունքի համապատասխանության տեսանկյունից կայքն իր ձևով, կառուցվածքով, նավարկման տրամաբանությամբ, բաժինների և ենթաբաժինների տեղակայմամբ ու բովանդակությամբ ունի էական բարելավման կարիք:

Կոմիտեի կողմից հանրային ընկալումների վերաբերյալ հարցումներ չեն անցկացվում:

3. Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության գնահատումն՝ ըստ արտաքին ու ներքին գործոնների ու կատարողականի

Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության գնահատումն՝ ըստ ազդեցության գործոնների և կատարողականի, բացահայտում է Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության արդյունքների վրա օրենսդրական կարգավորումների, ռեսուրսներով ապահովածության, Հակակոռուպցիոն կոմիտեին վերապահված լիազորությունների ու իրավասությունների տեսանկյունից Կառավարության աջակցության և պատրաստակամության մակարդակը:

Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության արձանագրված արդյունքները ներկայացված են Հավելված 3-ում և ամփոփ պատկերված են ստորև գծապատկերում:

Գծապատկեր 9. Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության կատարողականի գնահատումը՝ ըստ արտաքին ու ներքին ազդեցության գործոնների



Ինչպես ցույց է տալիս գծապատկերը, արտաքին ազդեցության գործոններով պայմանավորված՝ Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության մակարդակը գնահատվել է 56.6 %՝ առավելագույն 30-ից ապահովելով 17 միավոր, ներքին ազդեցության գործոններով պայմանավորված՝ գնահատվել է 73 %՝ առավելագույն 26-ից ապահովելով 19 միավոր, իսկ կատարողականի ցուցանիշներով պայմանավորված՝ գնահատվել է 41.1 %՝ առավելագույն 34-ից ապահովելով 14 միավոր:

Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության գնահատումն՝ ըստ արտաքին գործոնների (17 միավոր)

Արտաքին գործոնների շարքում դիտարկվել են ինստիտուցիոնալ անկախությունը, Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի և իր տեղակալների (ղեկավար կազմի) նշանակումը և հեռացումը, մանդատը, իրավասությունը, հետաքննության և հետապնդման լիազորությունները, առաջարկությունները ներկայացնելու և կիրարկելու լիազորությունները, իրավական և գործառնական ինքնավարությունը, լիազորությունների քաղաքական օգտագործումը, բյուջեի համամասնությունը, բավարար լինելը, անվտանգությունը և կայունությունը, կրթության և իրազեկման նպատակով հատկացված բյուջեն, արտաքին վերահսկողական մեխանիզմները, դատապարտումների ցուցանիշը, հանրային վստահությունը Կառավարության կողմից Կոմիտեին ցուցաբերվող աջակցության առնչությամբ:

Հատկանշական է, որ արտաքին գործոնների առումով համեմատաբար բարձր մակարդակն ապահովել են անկախության և կարգավիճակի ցուցանիշների գնահատականները: Դրանց շարքում առավելագույն գնահատականներ են ապահովել Հակակոռուպցիոն կոմիտեի ինստիտուցիոնալ անկախությունը, Կոմիտեի մանդատի, գործառնական ինքնավարության, հետաքննության և հետապնդման լիազորությունների ցուցանիշները:

Արտաքին գործոնների շարքում առավել խնդրահարույց են ֆինանսական անկախության ու ապահովության, բյուջեի կայունության ցածր մակարդակները, ինչպես նաև արտաքին վերահսկողության մեխանիզմների բացակայությունը: Գնահատման ենթակա ցուցանիշներից չի գնահատվել Կառավարության կողմից Հակակոռուպցիոն կոմիտեին ցուցաբերվող աջակցության առնչությամբ հանրային վստահության ցուցանիշը:

Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության գնահատումն՝ ըստ ներքին գործոնների (19 միավոր)

Ներքին գործոնների շարքում դիտարկվել են աշխատակազմի ընտրությունը, աշխատակազմի աշխատավարձը և խրախուսումը, հետաքննության և հետապնդման փորձագիտությունը, անձնակազմի ուսուցումը, վերապատրաստումը, կայունությունը, տարեկան հաշվետվությունը, արձագանքողականությունը տեղեկություններին, հանրության հարցումներին, ներքին վերահսկողական և բարեվարքության մեխանիզմները, համագործակցությունը կոռուպցիայի դեմ պայքարող այլ մարմինների, ոչ կառավարական կազմակերպությունների, միջազգային հակակոռուպցիոն ցանցերի, այլ երկրների կոռուպցիայի դեմ պայքարի մարմինների հետ:

Ներքին գործոնների շարքում առավելագույն բարձր միավորներ են ապահովել աշխատակազմի ընտրության, փորձագիտության, ինչպես նաև միջազգային հակակոռուպցիոն ցանցերին անդամակցության, ոչ կառավարական կազմակերպությունների հետ համագործակցության և այլ երկրների կոռուպցիայի դեմ պայքարի մարմինների հետ գործակցության ցուցանիշները, իսկ

միջին մակարդակի գնահատականներ են ստացվել աշխատակազմի վարձատրության, անձնակազմի կայունության, վերապատրաստման, հանրության դիմումներին արձագանքողականության, ներքին բարեվարքության և ներքին վերահսկողության մեխանիզմների ցուցանիշները:

Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության գնահատումն՝ ըստ կատարողականը բնութագրող գործոնների (14 միավոր)

Կատարողականի գնահատման համար դիտարկվել են գործընթացների պատշաճ պահպանումը, ազդարարողների, բողոք ներկայացնողների կողմից իրենց ինքնությունը բացահայտելու պատրաստակամությունը, Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի նկատմամբ բողոքների քննությունը և արդյունքները, հասանելիությունը բողոքատուներին/տեղեկատուներին/ազդարարումներին, արձագանքողականությունը կոռուպցիային առնչվող հաղորդումներին/բողոքներին, նախաձեռնողական հետաքննությունը, արդյունավետությունը և արհեստավարժությունը, հետապնդումների ցուցանիշը, քաղաքական ազդեցություն ունեցող և բարձրաստիճան պաշտոնատար անձանց նկատմամբ կոռուպցիոն գործերով հետաքննությունները, փոխհատուցումը և ակտիվների վերականգնումը, Կոմիտեի կատարողականի ընկալումը, կոռուպցիայի կանխարգելման, կրթման և իրազեկման ռազմավարական պլանավորումը, կրթությունը (դասընթացները) և զարգացումը, կանխարգելման վերաբերյալ իրավասու մարմիններին ներկայացված առաջարկությունները, կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ հետազոտությունները, տեղեկատվության տարածումը և քարոզարշավները, առցանց հաղորդակցումը, հասանելիությունը մարգինալացված խմբերին:

Հակակոռուպցիոն կոմիտեի կատարողականի բարձր մակարդակը ապահովել են նախաձեռնողական հետաքննության, բողոքատուներին/տեղեկատուներին/ ազդարարումներին հասանելիության, առցանց հաղորդակցման ցուցանիշները: Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի նկատմամբ բողոքների քննությունը և արդյունքները, գործընթացների պատշաճ պահպանումը, արդյունավետությունը և արհեստավարժությունը, փոխհատուցումը և ակտիվների վերականգնումը, տարածումը և քարոզարշավները, կրթությունը (դասընթացները) և զարգացումը, կոռուպցիային առնչվող հաղորդումներին/բողոքներին արձագանքողականությունը, ազդարարողների, բողոք ներկայացնողների կողմից իրենց ինքնությունը բացահայտելու պատրաստակամությունը ապահովել են Կոմիտեի կատարողականի միջին գնահատականները: Հակակոռուպցիոն կոմիտեի կատարողականի ցածր մակարդակի վրա իրենց ազդեցությունն են ունեցել, հետապնդումների, կոռուպցիայի վերաբերյալ իրազեկման, կանխման և հանրային հաղորդակցության ռազմավարական պլանավորման, կանխարգելման վերաբերյալ իրավասու մարմիններին ներկայացված առաջարկությունների, կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ հետազոտությունների, մարգինալացված խմբերին հասանելիության ցուցանիշները: Գնահատման ենթակա ցուցանիշներից չեն գնահատվել քաղաքական ազդեցություն ունեցող և բարձրաստիճան պաշտոնատար անձանց նկատմամբ կոռուպցիոն գործերով հետաքննությունների և Կոմիտեի կատարողականի ընկալման ցուցանիշները:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով, Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության գնահատմամբ վերհանված խնդիրների առնչությամբ ներկայացվել են հետևյալ առաջարկությունները՝ ըստ չափման խմբերի:

Հակակոռուպցիոն կոմիտեի անկախությունը և կարգավիճակը

1. Վերանայել և վերացնել Հակակոռուպցիոն կոմիտեի ղեկավարի պաշտոնավարման ժամկետը երկարաձգելու ընթացքում 2 անգամ անընդմեջ պաշտոնում նշանակվելու հնարավորությունը:
2. Սահմանադրական փոփոխությունների ներքո դիտարկել քննչական մարմինների, մասնավորապես՝ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի՝ ՀՀ Ազգային ժողովի կողմից նշանակվելու նպատակահարմարությունը՝ հնարավորինս նվազեցնելու Կոմիտեի կախվածությունը գործադիրից:
3. Հակակոռուպցիոն կոմիտեի տեղակալների նշանակումն ու հեռացումը վերապահել Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահին:
4. Օրենսդրորեն սահմանել Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի և տեղակալի թեկնածուների ընտրության և նշանակման չափանիշներ, մասնավորապես՝ հակակոռուպցիոն ոլորտի մասնագիտացում:
5. Օրենսդրորեն նախատեսել Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի և նրա տեղակալների համար շարունակական վերապատրաստում անցնելու պարտադիր պահանջ՝ հիմք ընդունելով միջազգային զարգացող փորձը:
6. Օրենսդրորեն ամրագրել, որ ԿԿՀ-ի կողմից տրված բացասական բնույթի եզրակացության պարագայում Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի և տեղակալների թեկնածուների ընտրության ու առաջադրման դեպքում մրցութային խորհրդի որոշումը հրապարակվում է՝ ներառելով համապատասխան հիմնավորումը և, առկայության դեպքում, հատուկ կարծիքները:
7. Օրենքով սահմանել Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի և տեղակալների մրցույթի հրապարակայնությունը և տեսագրման ու հեռարձակման պահանջը:
8. Վերանայել Հակակոռուպցիոն կոմիտեում հայեցողական պաշտոններ ունենալու նպատակահարմարության հարցը և նախատեսել, որ դրանք ամբողջովին կամ մեծամասամբ լինեն հանրային ծառայողներ:
9. Վերանայել ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված կոռուպցիոն հանցագործությունների ցանկը և, համապատասխանաբար, ընդլայնել Հակակոռուպցիոն կոմիտեի մանդատն ու իրավասությունների շրջանակը՝ ներառելով մինչդատական քրեական վարույթի իրականացումը միջազգային պայմանագրերով նախատեսված բոլոր կոռուպցիոն հանցանքներով՝ առանց նախատեսելու լրացուցիչ ու չհիմնավորված հատկանիշներ:
10. Հակակոռուպցիոն կոմիտեին օրենքով և գործնականում օժտել բավարար մեխանիզմներով՝ պետական մարմինների տեղեկատվական էլեկտրոնային բազաներին ու համակարգերին (օրինակ՝ ԿԿՀ հայտարարագրերի ռեեստր, պրոբացիայի ծառայության համակարգ, քրեակատարողական ծառայության համակարգ և այլն) հասանելիություն ստանալու համար, որոնք անհրաժեշտ են կոռուպցիոն հանցագործությունների նախականխման, արդյունավետ քննության և բացահայտման համար:

Հակակոռուպցիոն կոմիտեի ապահովվածությունը ֆինանսական և մարդկային ռեսուրսներով

11. Մեծացնել Հակակոռուպցիոն կոմիտեի բյուջեն՝ նախատեսելով հաստիքների, աշխատակազմի վերապատրաստումների, տարբեր բնույթի վերլուծությունների, հանրային հարցումների, իրազեկման միջոցառումների բավարար ֆինանսավորում:
12. Հակակոռուպցիոն կոմիտեի ֆինանսական ինքնուրույնության բարձրացման մասով օրենսդրորեն վերանայել ՀՀ կառավարության կողմից Հակակոռուպցիոն կոմիտեի ամենամյա բյուջետային հայտը փոփոխելու և վերանայելու գործառույթը՝ պարտադիր դարձնելով Կոմիտեի համաձայնությունը:
13. Հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող պաշտոնների թեկնածուների ընտրության նպատակով անցկացվող մրցույթների կազմակերպման ու անցկացման կարգում նախատեսել հակակոռուպցիոն ոլորտի մասնագիտացած հասարակական կառույցների ներկայացուցիչների ներգրավում և գործընթացները դիտարկելու հնարավորություն:
14. Նախատեսել կարգավորում, ըստ որի Հակակոռուպցիոն կոմիտեի տարբեր պաշտոնների թեկնածուների ընտրության նպատակով իրականացվող մրցույթների մասնակից՝ անդամ կամ դիտորդ, ՔՀԿ ներկայացուցիչները պարտավորվում են ստորագրել թեկնածուների անձնական տվյալների գաղտնիության պահպանման համաձայնագիր:
15. Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի ուսուցման արդյունավետության ապահովման համար մշակել մասնագիտական ուսուցման և վերապատրաստումների ուսումնական պլաններ, ուղեցույցներ, կոռուպցիոն հանցագործությունների քննության մեթոդական ու խորհրդատվական նյութեր:
16. Կազմակերպել Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի կարողությունների բարձրացնելուն ուղղված շարունակական վերապատրաստումներ՝ իրականացնելով դրանք ինչպես դոնոր կազմակերպությունների օգնությամբ, այնպես էլ՝ նախատեսելով բավարար ֆինանսավորում ՀՀ պետական բյուջեից:
17. Ուսումնասիրել Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմում հոսունության, թափուր հաստիքների կայուն մակարդակի պահպանման, թափուր հաստիքների մրցույթների կազմակերպման արդյունքում հաղթող չճանաչված և պաշտոնի չնշանակված դեպքերի հանգամանքները և ձեռնարկել միջոցներ՝ վերացնելու բացահայտված խնդիրները:
18. Ուսումնասիրել Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի համալրման նպատակով բուհերի ուսանողների, շրջանավարտների մասնագիտական պատրաստման դասընթացների կազմակերպման նպատակահարմարությունը:
19. Վերանայել Հակակոռուպցիոն կոմիտեի հաստիքների թվաքանակը ինչպես քննչական և օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող, այնպես էլ՝ աջակցող ստորաբաժանումների համար՝ մասնավորապես ավելացնելով տնտեսագետ-փորձագետների, վերլուծաբանների հաստիքների քանակը:

Հակակոռուպցիոն կոմիտեի ներքին բարեվարքությունը և հաշվետվողականությունը

20. Ուժեղացնել Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության նկատմամբ խորհրդարանական վերահսկողությունը՝ այդ թվում օրենքով ամրագրելով Կոմիտեի կիսամյակային հաշվետվությունները ՀՀ ԱԺ ներկայացնելու պահանջ, կիսամյակային և տարեկան

հաշվետվությունների շուրջ հրապարակային քննարկումների կազմակերպում՝ շահագրգիռ հանրության ներկայացուցիչների ներգրավմամբ:

21. Բարելավել Հակակոռուպցիոն կոմիտեի կիսամյակային և տարեկան հաշվետվությունների կառուցվածքը և բովանդակությունը՝ ապահովելով Կոմիտեի գործունեության վերաբերյալ կանոնավոր և տարանջատված վիճակագրության վարումը և վերլուծությունը, ընդգծելով բարձր հնչեղություն, քաղաքական ազդեցություն ունեցող, այդ թվում՝ բարձրաստիճան (քաղաքական, վարչական, ինքնավար և հայեցողական) պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ կոռուպցիոն վարույթներով քննության արդյունքները, հաղորդման մեջ ներառելով նաև քրեական վարույթների կարճման վերաբերյալ տեղեկությունները, կարճման հիմքերը, Կոմիտեի ծառայողների վերաբերյալ առկա կարգապահական վարույթների վերաբերյալ տեղեկատվությունը, բյուջեի կատարողականի տվյալները և այլն:
22. Ապահովել Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության գնահատման ներքին աուդիտի արդյունքում ստացված եզրակացության հրապարակայնությունը:
23. Սահմանել Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների առաքինության ստուգման կարգը և իրականացնել համապատասխան ստուգումներ:
24. Հակակոռուպցիոն կոմիտեի կայքում ստեղծել հնարավորություն Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի գործունեության վերաբերյալ դիմումների, բողոքների, առաջարկությունների ստացման և դրանց քննության արդյունքների վերաբերյալ տեղեկատվության հրապարակման նպատակով:
25. ՀՀ հաշվեքննիչ պալատի գործունեության ծրագրով, նախատեսել Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության հաշվեքննության իրականացման պարբերական միջոցառումներ:

Կոռուպցիոն հանցագործությունների հայտնաբերում, հետաքննություն և հետապնդում

26. Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության վերաբերյալ կիսամյակային և տարեկան հաշվետվություններում նախատեսել քաղաքական ազդեցություն ունեցող, այդ թվում՝ բարձրաստիճան (քաղաքական, վարչական, ինքնավար և հայեցողական) պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ կոռուպցիոն վարույթներով հետաքննության վերաբերյալ հնարավորինս մանրամասն տեղեկություններ, ինչպես նաև Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների կողմից նախաձեռնված քրեական վարույթներով՝ կոռուպցիոն հանցագործություններով պետությանը պատճառված և վերականգնված վնասների վերաբերյալ տվյալներ:
27. Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից իրականացնել կամ պատվիրել Կոմիտեի գործունեության վերաբերյալ հանրային ընկալումների հարցումներ՝ վերհանելու թույլ կողմերը և բարձրացնելու արդյունավետությունը:
28. Ուժը կորցրած ճանաչել «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենքի այն դրույթը, ըստ որի արտաքին ազդարարում չի համարվում նախաքննություն իրականացնող մարմինների կողմից հանցագործության վերաբերյալ հաղորդումների քննարկման և լուծման՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված ընթացակարգը:
29. Հակակոռուպցիոն կոմիտեին ներկայացրած և ազդարարման շրջանակի մեջ տեղավորվող հաղորդումները համարել ազդարարում և հաշվառել համապատասխան վիճակագրության շրջանակում:

30. Ընդլայնել Հակակոռուպցիոն կոմիտեի հետ համագործակցվող փորձաքննական կազմակերպությունների ցանկը՝ ապահովելու փորձաքննությունների ողջամիտ ժամկետներում իրականացումը:

Կանխարգելում, կրթում և իրազեկում

31. Մշակել Հակակոռուպցիոն կոմիտեի հաղորդակցության ռազմավարություն՝ նպատակ ունենալով բարձրացնել Կոմիտեի գործունեության վերաբերյալ հանրային իրազեկման մակարդակը, միաժամանակ նպաստելով կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ գիտելիքի տարածմանը և, այդպիսով, կոռուպցիայի կանխարգելմանը:
32. Բարձրացնել Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության, մանդատի և լիազորությունների մասին քաղաքացիների իրազեկման մակարդակը՝ գործունեության արդյունքների վերաբերյալ հանրամատչելի հաշվետվությունների, ինֆոգրաֆիկների, տեսահոլովակների, այլ տեղեկատվական նյութերի հրապարակման միջոցով՝ իրազեկման ծրագրերն իրականացնելով ինչպես դոնոր կազմակերպությունների միջոցներով, այնպես էլ նախատեսելով բավարար ֆինանսավորում ՀՀ պետական բյուջեից:
33. Իրականացնել Հակակոռուպցիոն կոմիտեի հանրային իրազեկման համար պատասխանատու մասնագետների կարողությունների զարգացում՝ պատշաճ լուսաբանելու Կոմիտեի դերը և նշանակությունը, Կոմիտեի կողմից քննվող գործերի ընթացքի և արդյունքների լուսաբանումը:
34. Վերակազմակերպել Հակակոռուպցիոն կոմիտեի կայքը՝ հրապարակվող փաստաթղթերը ներկայացնելով բաց տվյալների ձևաչափով՝ դրանք դարձնելով մեքենայաընթեռնելի և մատչելի պատճենելու համար, ինչպես նաև կիրառել տեքստերը ձայնային տարբերակով ներկայացնելու գործիքը:
35. Իրականացնել կոռուպցիոն հանցագործությունների տարածվածության, մակարդակի, համատեքստի, ոլորտային կոռուպցիոն դրսևորումների, գործոնների վերաբերյալ հետազոտություններ և վերլուծություն՝ ըստ անհրաժեշտության համալրելով Հակակոռուպցիոն կոմիտեն համապատասխան ստորաբաժանումներով և կադրերով:

Հաղորդակցություն և գործակցություն

36. Կոռուպցիայի դեմ պայքարի համար պատասխանատու այլ պետական մարմինների (Գլխավոր դատախազություն, ԱՆ, ԿԿՀ) հետ համատեղ ապահովել Հակակոռուպցիոն կոմիտեի վարույթների գործընթացում տեղեկության փոխանակման և համատեղ աշխատանքի կազմակերպման ուղեցույցի մշակումը:
37. Բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ համագործակցության շրջանակում աջակցել կոռուպցիոն հանցագործությունների քննության ոլորտում կոնկրետ կրթական ծրագրերի մշակմանը և իրականացմանը:
38. Աջակցել ԿԿՀ-ին կոռուպցիոն հանցագործությունների քննությանը վերաբերող կրթական ծրագրերի մշակման գործում:
39. Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից մշակվող հանրային հարցումների իրականացման տեխնիկական առաջադրանքներում ներառել մարգինալացված (խոցելի) խմբերի նկատմամբ կոռուպցիոն հանցագործությունների ազդեցության և դրանց հիման վրա նախականխման միջոցառումներ (ծրագրեր) կազմելու համար հարցեր՝ ապահովելով այդ խմբերի մասով կոռուպցիոն հանցագործությունների ազդեցության վիճակագրական տվյալների վարումը:

Հավելված 1. Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության գնահատման ցուցանիշների համակարգ

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
	Անկախությունը և կարգավիճակը (9 ցուցանիշ)					Բարձր	Ըստ «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի գլուխ 2-ի՝ «Հակակոռուպցիոն կոմիտեն իր լիազորություններն իրականացնելիս, ինչպես նաև իր կառուցվածքին, աշխատանքների կազմակերպման կարգին վերաբերող որոշումներն ընդունելիս անկախ է և ենթարկվում է միայն Սահմանադրությանը և օրենքներին», այն գործում է անկախության, հրապարակայնության, ֆինանսական ինքնուրույնության և քաղաքական չեզոքության սկզբունքների վրա: https://www.arlis.am/documentview.aspx?docid=195944 Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը յուրաքանչյուր տարի՝ մինչև հունվարի 31-ը, Կառավարություն և Ազգային ժողով է ներկայացնում նախորդ տարվա գործունեության մասին գրավոր հաղորդում: https://anticorruption.am/hy/pages/show/report ՄԱԿԴԿ-ի 6-րդ հոդվածը պահանջում է, որ «Յուրաքանչյուր մասնակից պետություն, իր իրավական համակարգի հիմնարար սկզբունքներին համապատասխան, սույն հոդվածի 1-ին կետում նշված մարմին կամ մարմիններին պետք է ապահովի անհրաժեշտ ինքնուրույնությամբ, որպեսզի մարմինը կամ մարմինները կարողանան իրականացնել իրենց գործառույթներն արդյունավետ և անհարկի ազդեցությունից ազատված»:
1.	Ինստիտուցիոնալ անկախություն	«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենք, Հակակոռուպցիոն կոմիտեի տարեկան հաշվետվություն և կայք, հարցազրույցներ Հակակոռուպցիոն կոմիտեի ղեկավար կազմի, անձնակազմի հետ	Ոստիկանության կամ նախարարության ներսում	Առանձին գերատեսչություն, որը հաշվետու է նախարարությանը	Օրենսդիր մարմնին հաշվետու՝ օրենքով սահմանված լիազորություններով օժտված պետական կամ սահմանադրական մարմին		
			Ուղղորդում: Միավորներն արտացոլում են ՀՀ կառավարությունից Հակակոռուպցիոն կոմիտեի անկախության աստիճանը՝ պետական կամ սահմանադրական մարմին լինելուց մինչև որևէ գերատեսչության կամ նախարարության ստորաբաժանում լինելը:				
2.	Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի և իր տեղակալների	«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենք, Հակակոռուպցիոն կոմիտեի տարեկան	Վարչապետը/ Նախագահը/ պետության ղեկավարը նշանակման մասին որոշում է կայացնում՝	Նախարարական հանձնաժողովը նշանակման մասին որոշում է կայացնում՝ անկողմնակալո	Անկախ հանձնաժողովը նշանակման մասին որոշում է կայացնում՝ անկողմնակալ	Միջին	«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի հոդվածներ 16-ից 20-ը կարգավորում են Կոմիտեի նախագահի և իր տեղակալների (ղեկավար կազմի) նշանակման, նրանց ներկայացվող պահանջների, պաշտոնի դադարեցման գործընթացները: https://www.arlis.am/documentview.aspx?docid=195944

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
	(ղեկավար կազմի) նշանակում և հեռացում	հաշվետվություն և կայք, հարցազրույցներ Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի հետ	առանց անկողմնակալության ապահովման երաշխիքների (այդ թվում՝ թափանցիկ ընթացակարգի), և/կամ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը և իր տեղակալները (ղեկավար կազմը) չունեն հաստատագրված ժամկետ և կարող են հեշտությամբ փոխարինվել	ության ապահովման որոշ երաշխիքներով (օրինակ՝ թափանցիկ ընթացակարգ), և/կամ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը և իր տեղակալները (ղեկավար կազմը) ունեն հաստատագրված ժամկետ (առանց պաշտոնավարման ժամկետի), բայց նրանց հեռացնելը դժվար չէ	ության ապահովման ուժեղ երաշխիքներով (ներառյալ թափանցիկ ընթացակարգը), և Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը և իր տեղակալները (ղեկավար կազմը) ունեն հաստատագրված ժամկետ (պաշտոնավարության ժամկետով) և չեն կարող հեռացվել առանց ապացուցված պատճառի (օրինակ, անձեռնահասություն կամ սխալ վարքագիծ)		Հակակոռուպցիոն կոմիտեի առաջին կազմը ձևավորվել է 2021 թ.-ին: Ըստ օրենքի՝Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահին նշանակում է Կառավարությունը՝ 6 տարի ժամկետով: Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի թեկնածուների ընտրության համար ձևավորվում է մրցութային խորհուրդ: Խորհուրդը ձևավորվում է Կառավարության, Ազգային ժողովի խորհրդի, Բարձրագույն դատական խորհրդի, գլխավոր դատախազի, Մարդու իրավունքների պաշտպանի նշանակած 1-ական թեկնածուներից և քաղաքացիական հասարակության 2 ներկայացուցչից: Կոմիտեի նախագահի թեկնածուների առաջին անգամ ընտրության մրցութային խորհրդի կազմում խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են ներգրավվել նաև մինչև 3 միջազգային փորձագետներ: https://www.arlis.am/documentview.aspx?docid=153226 Մրցույթի գործընթացի համար սահմանված ժամկետներն ու ընթացակարգերը հրապարակային են: Մրցույթի հայտարարությունը, հարցաշարերը, հարցազրույցի արդյունքները, մրցույթը հաղթահարած թեկնածուների վերաբերյալ տեղեկատվությունը և խորհրդի նիստերի արձանագրությունները հրապարակվում են հրապարակային ծանուցումների պաշտոնական կայքում (www.azdarar.am), վարչապետի աշխատակազմի և Հակակոռուպցիոն կոմիտեի պաշտոնական կայքերում: Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ կարող է նշանակվել ՀՀ քաղաքացին, որն ունի ՀՀ-ում մշտական բնակություն, ՀՀ-ում բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի բարձրագույն կրթության որակավորման աստիճան կամ օտարերկրյա պետությունում ձեռք բերած համապատասխան որակավորման աստիճան, որի ճանաչումն ու համարժեքության հաստատումը ՀՀ-ում
			Ուղղորդում: Այս ցուցանիշը նկարագրում է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի և իր				

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
			տեղակալների (ղեկավար կազմի) նշանակման և հեռացման գործընթացը, ներառյալ հանձնաժողովի կազմը կամ նշանակման համար պատասխանատու անձինք և նրանց հեռացման կամ փոխարինման պայմանները: Անկողմնակալության ապահովման երաշխիքները ներառում են ընտրության անաչառ չափանիշները և նշանակման ու հեռացման ընթացակարգերի թափանցիկությունը: Հետազոտողը պետք է իր դատողությամբ որոշի, թե նշանակման և հեռացման բոլոր հատկանիշների համադրությունը, որն առկա է Հակակոռուպցիոն Կոմիտեում, ցա՞ծր, միջի՞ն, թե բարձր միավոր է կազմում՝ ելնելով վերոնշյալ չափանիշներից:				իրականացվել է օրենքով սահմանված կարգով, անցել է պարտադիր զինվորական ծառայություն (բացառությամբ իգական սեռի անձանց) կամ ազատված է նման ծառայությունից օրենքով սահմանված կարգով ու հիմքով, տիրապետում է հայերենին, ունի ռուսերենից, անգլերենից և ֆրանսերենից առնվազն մեկ ստանդարտացված թեստային համակարգով կամ Կառավարության սահմանած այլ կարգով ստուգվող լեզվական գիտելիքների համապատասխան մակարդակի իմացություն: Նշված պահանջները բավարարող անձը կարող է նշանակվել Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ, եթե մինչև նշանակումը զբաղեցրել է քննչական մարմնի բարձրագույն կամ գլխավոր խմբերի պաշտոն կամ ունի դատավորի, դատախազի, քննիչի կամ փաստաբանի կամ հակակոռուպցիոն ոլորտում քաղաքականության մշակման կամ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի կամ օպերատիվ-հետախուզական գործունեության ոլորտներում գործունեության առնվազն 5 տարվա ստաժ կամ տվյալ պաշտոններում առնվազն 5 տարվա ընդհանուր՝ իրար փոխլրացնող ստաժ: Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի թեկնածուների ընտրության համար ձևավորվում է մրցութային խորհուրդ: Վերջինս ձևավորվում է Կառավարության, Ազգային ժողովի խորհրդի, Բարձրագույն դատական խորհրդի, Գլխավոր դատախազի, Մարդու իրավունքների պաշտպանի նշանակած 1-ական թեկնածուներից և քաղաքացիական հասարակության 2 ներկայացուցչից: Կոմիտեի նախագահի թեկնածուների առաջին անգամ ընտրության մրցութային խորհրդի կազմում խորհրդակցական ձայնի իրավունքով

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							կարող են ներգրավվել նաև մինչև 3 միջազգային փորձագետներ: Մրցույթի գործընթացի համար սահմանված ժամկետներն ու ընթացակարգերը հրապարակային են: Մրցույթի հայտարարությունը, հարցաշարերը, հարցազրույցի արդյունքները, մրցույթը հաղթահարած թեկնածուների վերաբերյալ տեղեկատվությունը և խորհրդի նիստերի արձանագրությունները հրապարակվում են հրապարակային ծանուցումների պաշտոնական կայքում (www.azdarar.am), վարչապետի աշխատակազմի և Հակակոռուպցիոն կոմիտեի պաշտոնական կայքերում: Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի թեկնածուների ընտրության համար անցկացվող մրցույթը ընթանում է 4 փուլով՝ 1. փաստաթղթերի ուսումնասիրության փուլ, 2. բարեվարքության ուսումնասիրության փուլ, 3. հարցազրույցի փուլ, 4. արդյունքների ամփոփման փուլ: Թեկնածուների ցանկը կազմելուց հետո՝ 2 օրվա ընթացքում, Խորհուրդը Կառավարություն է ներկայացնում մրցույթում հաղթող ճանաչվածների ցուցակը՝ միաժամանակ այն հրապարակելով հրապարակային ծանուցումների պաշտոնական կայքում (www.azdarar.am) և Աշխատակազմի պաշտոնական կայքում: Իր հերթին, Կառավարությունը Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի պաշտոնում նշանակում կատարելու վերաբերյալ հարցը քննարկում և համապատասխան որոշում է կայացնում Խորհրդի կողմից թեկնածուներին ներկայացնելուց հետո՝ տասնօրյա ժամկետում: Այնուհանդերձ, խնդրահարույց է օրենսդրական այն

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							կարգավորումը, որով հնարավորություն է տրվում երկարաձգելու Հակակոռուպցիոն կոմիտեի ղեկավարի պաշտոնավարման ժամկետը՝ 2 անգամ անընդմեջ պաշտոնում նշանակվելու մասով: Ինչ վերաբերում է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալի նշանակմանը, ապա «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի համաձայն՝ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար հայտարարված մրցույթի դեպքում մրցույթում հաղթող ճանաչված մասնակիցների ցուցակն ստանալուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում, Կոմիտեի նախագահը վարչապետին է առաջարկում մրցույթում հաղթող ճանաչված Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալի թեկնածությունը՝ կցելով թեկնածուի վերաբերյալ ԿԿՀ-ի ներկայացրած խորհրդատվական եզրակացությունը, որոնց արդյունքում էլ վարչապետը կատարում է նշանակում: Օրենքի մեկնաբանությունից բխում է, որ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահին լիազորություն է վերապահված մրցույթում հաղթող ճանաչված մասնակիցների ցուցակից իր հայեցողությամբ ընտրել մեկ թեկնածու, այնուհետև առաջարկել վարչապետին Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալի թեկնածությունը: Ուստի, կարելի է եզրակացնել, որ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալի ընտրության հարցում Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը նույնպես օժտված է ընտրության լիազորություններով: Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի և նրա տեղակալի լիազորությունները վաղաժամկետ դադարելու և դադարեցնելու գործընթացները կանոնակարգված են «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 24-րդ

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							հոդվածով, որում Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի և նրա տեղակալի պաշտոնից հեռացման հայեցողական հիմքերը բացակայում են: Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի և նրա տեղակալի լիազորությունները վաղաժամկետ դադարելու դեպքերն են՝ պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը լրանալը, ՀՀ քաղաքացիությունը կորցնելը, դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա նրա անգործունակ, անհայտ բացակայող ճանաչվելը կամ մահացած հայտարարվելը, նրա մահը, նրա նկատմամբ կայացված դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճռի առկայությունը, նրա նկատմամբ կայացված՝ ոչ ռեաբիլիտացնող հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չհարուցելու մասին որոշման առկայությունը, Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի կողմից հրաժարականի դիմում Կառավարություն ներկայացնելը և վերջինիս կողմից այն հաստատվելը, Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալի կողմից պաշտոնից ազատվելու վերաբերյալ գրավոր դիմում վարչապետին ներկայացնելը և վերջինիս կողմից նրան պաշտոնից ազատելը: Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի և նրա տեղակալի լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են, եթե նա պաշտոնավարման ընթացքում ձեռք է բերել հիվանդություն կամ ֆիզիկական արատ, որը տևական ժամանակահատվածով խոչընդոտում է կամ խոչընդոտելու է իր պաշտոնեական պարտականությունների կատարումը, կամ ի հայտ է եկել օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված սահմանափակումներից որևէ մեկը, կամ նա խախտել է «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված սահմանափակումները և անհամատեղելիության պահանջները, կամ նա խախտել է

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							քաղաքական գործունեությամբ զբաղվելու արգելքը, ի հայտ են եկել փաստեր, որ նա նշանակման պահին չի համապատասխանել ներկայացվող պահանջներին: Գործնականում, Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի ընտրության մրցութային խորհուրդը կազմված էր 4 անդամից: Այսպես, խորհրդի կազմից բացակայում էին Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչը, ինչպես նաև Ազգային ժողովից լիազորված պատգամավորը և ԹԻՀԿ ներկայացուցիչը, որը դադարեցրել էր իր անդամակցությունը, քանի որ իր մասնակցության միջոցով հնարավորություն չի ունեցել լիարժեքորեն նպաստելու կոմիտեի նախագահի թեկնածուների բարեվարքության և մասնագիտական որակների գնահատման և բարձր պաշտոնի համար արժանի թեկնածուների ընտրության համար պատշաճ մեխանիզմների ձևավորմանը: https://transparency.am/hy/media/news/article/3152 Հակակոռուպցիոն կոմիտեի ղեկավար կազմի նշանակման պայմաններում փորձագետների գնահատումներով առկա էր քաղաքական ազդեցության գործոնի նշանակալի ազդեցություն: Ինչպես վկայում են միջազգային կազմակերպությունների զեկույցները, Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի ընտրությունը իրականացվել է թափանցիկ ընթացակարգով, սակայն այն քննադատության է ենթարկվել քաղաքացիական հասարակության կողմից մրցույթին մասնակցող թեկնածուների սակավաթիվ քանակի համար: https://doi.org/10.1787/fb158bf9-en Մրցույթը դիտարկելու հնարավորություն օրենսդրորեն նախատեսված չէ, չնայած գործնականում ՔՀԿ-ներին

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							թույլատրվում է մասնակցել մրցույթի հարցազրույցների փուլին: Չնայած «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքով սահմանված է, որ նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ նշանակվել Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի պաշտոնում, նշված սահմանափակումը խնդրահարույց է Կոմիտեի նախագահի անկողմնակալության տեսանկյունից, քանի որ կրկին նշանակվելու հիմքը կարող է որոշակի ակնկալիքներ ստեղծել և՛ թեկնածուի, և՛ նշանակող կառույցի՝ վարչապետի կամ Կառավարության մոտ, ինչը հարցականի տակ է դնում թեկնածուի անկախությունը և Կոմիտեի գործառույթների պատշաճ և անկողմնակալ իրականացման ապահովումը: Ըստ փորձագետների՝ *«Քաղհասարակության կարծիքը հաշվի է առնվում մրցույթային փուլում, հարցակրույցները թափանցիկ են: Խնդիրը ավելի շատ վերաբերվում է, թե այդ թեկնածուներից ում է նշանակելու վարչապետը: Այդտեղ է սուբյեկտիվ մոտեցումը, որ, կարող է ենթադրենք, ոչ թե ըստ հավաքած բալերի հերթականության առաջնորդվի, այլ նշանակվի ամենացածր բալեր հավաքած թեկնածուն: Բայց այստեղ էլ քաղաքական պատասխանատվության հարց է»:*
3.	Մանդատ	«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենք, Հակակոռուպցիոն կոմիտեի տարեկան	Կրթում և կանխարգելում առանց հետաքննության	Հիմնական ուշադրությունը՝ հետաքննության վրա	Ուշադրության կենտրոնում են հետաքննությունը, ինչպես նաև կրթումը և	Բարձր	«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի հոդված 4-ով սահմանված է Հակակոռուպցիոն կոմիտեին վերապահված մանդատը՝ գործառույթների ու լիազորությունների շրջանակը՝ • ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով իր ենթակայությանը վերապահված՝ ենթադրյալ

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
		հաշվետվություն և կայք, հարցազրույցներ Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի ղեկավար պաշտոնյաների հետ			կանխարգելումը		կոռուպցիոն հանցագործություններով մինչդատական քրեական վարույթի կազմակերպումը, • ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով իր ենթակայությանը վերապահված՝ ենթադրյալ կոռուպցիոն հանցագործություններով մինչդատական քրեական վարույթի իրականացումը, • «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով օպերատիվ-հետախուզական գործունեության իրականացումը: Հակակոռուպցիոն կոմիտեն իրականացնում է նաև «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքով սահմանված այլ լիազորություններ: https://www.arlis.am/documentview.aspx?docid=195944 Հակակոռուպցիոն կոմիտեի կանոնադրությամբ ավելի մանրամասն սահմանված են Կոմիտեի խնդիրներն ու գործառույթները: Այսպես, Հակակոռուպցիոն կոմիտեի խնդիրներն են՝ 1. ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված առերևույթ կոռուպցիոն հանցագործությունների կապակցությամբ նախաքննության կազմակերպումը և իրականացումը, 2. Կոռուպցիոն հանցագործությունների հայտնաբերումը, նախականխումը, կանխումը, խափանումը և բացահայտումը, 3. Իր լիազորությունների շրջանակներում «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով օպերատիվ-հետախուզական գործունեության կազմակերպումը և իրականացումը, 4. Իր իրավասության սահմաններում առերևույթ կոռուպցիոն հանցագործությունների մասին հաղորդումների ընդունումը, գրանցումը, քննարկումը, նյութերի նախապատրաստումը,
			Ուղղորդում: Այս ցուցանիշը կենտրոնանում է Հակակոռուպցիոն կոմիտեի մանդատի և գործառույթների վրա, և նշանակվում է բարձր միավոր, երբ Հակակոռուպցիոն կոմիտեն իրականացնում է հետաքննության, կրթման և կանխարգելման գործառույթները: Նշանակվում է միջին միավոր, երբ Հակակոռուպցիոն կոմիտեն ուշադրությունը կենտրոնացնում է գլխավորապես հետաքննության վրա: Հակակոռուպցիոն կոմիտեն ցածր միավոր է ստանում, եթե չի հետաքննում կոռուպցիոն դեպքերը և ուշադրությունը կենտրոնացնում է միայն կրթման և կանխարգելման վրա:				

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							5. Իր իրավասության սահմաններում հանցագործության կատարմանը նպաստող հանգամանքների պարզումը, 6. Իր գործունեության վերաբերյալ վիճակագրական հաշվետվությունների վարումը, 7. Քննչական և օպերատիվ-հետախուզական աշխատանքների կատարելագործումը, գիտության և տեխնիկայի ձեռքբերումների, ինչպես նաև այդ ոլորտների դրական փորձի, նախաքննության և օպերատիվ-հետախուզական գործունեության կազմակերպման առաջավոր ձևերի և մեթոդների ներդնումը, 8. Հանցագործությունների բացահայտման, քննության մեթոդիկայի մշակման կատարելագործումը: Կոմիտեի գործառույթները ներառում են՝ 1. Համապատասխան մարմիններին միջնորդագրեր է ներկայացնում մինչդատական վարույթի ընթացքում բացահայտված հանցանքների կատարմանը նպաստող հանգամանքները վերացնելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու համար, 2. Ուսումնասիրում է հանցագործությունների բացահայտման, քննության թերություններն և միջոցներ ձեռնարկում դրանք վերացնելու ուղղությամբ, 3. Մշակում է հանցագործությունների բացահայտման, քննության մեթոդիկան ր կատարելագործում քննչական, օպերատիվ-հետախուզական աշխատանքների կազմակերպումը, 4. Ամփոփում է հանցագործությունների բացահայտման, քննության դրական փորձը և ապահովում դրա ներդրումը իրավակիրառ պրակտիկայում,

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							5. Քննարկում և լուծում է ստացված դիմումները, բողոքները և առաջարկությունները, 6. Իր իրավասության սահմաններում լուծում է ՀՀ միջազգային պայմանագրերով նախատեսված՝ քրեական վարույթներով իրավական օգնության հարցերը, 7. Համագործակցում է իրավապահ և այլ մարմինների, լրատվության միջոցների հետ, 8. Իրականացնում է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ գործառույթներ: Կարելի է եզրակացնել, որ Հակակոռուպցիոն կոմիտեն լիարժեքորեն օժտված է ՀՀ իրավական համակարգի/մոդելի մեջ հաստատված իրավապահ մարմինների գործառույթներով, ինչպես նաև, ի տարբերություն այլ քննչական մարմինների, ունի օպերատիվ գործունեություն ծավալելու լիազորություն և ռեսուրսներ:
4.	Իրավասություն	«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենք, Հակակոռուպցիոն կոմիտեի տարեկան հաշվետվություն և կայք, հարցազրույցներ Հակակոռուպցիոն կոմիտեի	Միայն պետական հատվածը՝ կենտրոնական մակարդակում	Ե՛վ պետական, և՛ մասնավոր հատվածը, բայց միայն կենտրոնական մակարդակում կամ միայն պետական հատվածը, բայց թե՛ կենտրոնական, թե՛ ենթազգային	Թե՛ պետական, թե՛ մասնավոր հատվածները և՛ կենտրոնական, և՛ ենթազգային մակարդակներում	Միջին	«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի հոդված 4-ի համաձայն՝ Հակակոռուպցիոն կոմիտեն քննչական մարմին է, որը կազմակերպում և իրականացնում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով իր ենթակայությանը վերապահված՝ ենթադրյալ կոռուպցիոն հանցագործություններով մինչդատական քրեական վարույթը: https://www.arlis.am/documentview.aspx?docid=195944 ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածը սահմանում է, որ նախաքննությունը ՀՀ քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ վարույթներով կատարում են

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
		անձնակազմի ղեկավար պաշտոնյաների հետ		մակարդակներում			Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչները: https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=154763 ՀՀ քրեական օրենսգրքի Հավելված 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքների ցանկը վկայում է, որ Հակակոռուպցիոն կոմիտեի իրավասությունը տարածվում է ոչ միայն հանրային, այլ նաև մասնավոր հատվածի վրա: https://www.arlis.am/documentview.aspx?docid=194397 Միաժամանակ պետք է նշել, որ Հակակոռուպցիոն կոմիտեի ռեսուրսների անբավարար լինելու հիմքով 2024 թ. հունվարի 16-ին ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակված և ՀՀ ԱԺ կողմից ընդունված փոփոխություններով, կատարվեց լրացում ՀՀ քրեական օրենսգրքի հավելված N 1-ում և կրճատվեց Հակակոռուպցիոն կոմիտեի իրավասությունը: Կատարված փոփոխություններով 441-րդ «Պաշտոնատար անձի կողմից իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելը կամ լիազորություններն անցնելը» և 549-րդ «Իշխանազանցությունը կամ իշխանությունը չարաշահելը» հոդվածներով սահմանված հանցանքները համարվում են կոռուպցիոն բացառությամբ, երբ «արարքը կատարվել է ոչ շահադիտական շահագրգռվածությունից ելնելով և բռնություն գործադրելով, բռնություն գործադրելու սպառնալիքով կամ զենք կամ հատուկ միջոց օգտագործելով»: https://www.arlis.am/documentview.aspx?docid=189458 Առաջարկվող փոփոխությունն ընդունելի չէր մասնագիտական շրջանակներում, քանի որ կոռուպցիոն հանցագործությունների պարտադիր հատկանիշ կարող է լինել ոչ միայն շահադիտական շահագրգռվածությունը, այլ նաև այլ շարժառիթներ, ինչպես օրինակ՝ անձնական այլ
			Ուղղորդում: Այս ցուցանիշը կենտրոնանում է Հակակոռուպցիոն կոմիտեի ոլորտային և աշխարհագրական ընդգրկման վրա: Նշանակվում է բարձր միավոր, եթե Հակակոռուպցիոն կոմիտեն անդրադառնում է կոռուպցիային ինչպես պետական, այնպես էլ մասնավոր հատվածում (ներառյալ պետական ձեռնարկությունները)՝ բոլոր վարչական մակարդակներում: Տրվում է միջին միավոր, եթե այս պայմաններից միայն որոշներն են բավարարված, իսկ ցածր միավոր տրվում է, եթե Հակակոռուպցիոն կոմիտեն անդրադառնում է կոռուպցիային միայն պետական հատվածում՝ կենտրոնական կառավարման մակարդակում:				

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							շահագրգռվածությունը և խմբային շահերը: https://transparency.am/hy/publication/pdf/346/10765 https://www.e-draft.am/index.php/projects/6275/digest Ըստ փոփոխությունների, եթե պաշտոնատար անձը՝ ազգականին զուտ օգտակար լինելու դրդմամբ, օգտագործում է իր պաշտոնեական լիազորությունները ի վնաս պետական շահերի, և այդ արարքն էական վնաս է պատճառում պետության օրինական շահերին՝ նշված հանցանքը չի համարվելու կոռուպցիոն հանցագործություն, ինչն արմատապես հակասում է կոռուպցիայի էությանը, կոռուպցիոն հանցագործությունների առանձնահատկություններին և ՀՀ կողմից որդեգրված կոռուպցիայի դեմ պայքարի հիմնաքարերին: https://www.arlis.am/documentview.aspx?docid=189458
5.	Հետաքննության և հետապնդման լիազորություններ	«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենք, Հակակոռուպցիոն կոմիտեի տարեկան հաշվետվությունն և կայք, հարցազրույցներ Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի ղեկավար	Սակավաթիվ լիազորություններ կամ ոչ մի լիազորություն	Որոշ լիազորություններ	Ընդարձակ լիազորություններ՝ ներառյալ վարույթներ, վերլուծություններ և եզրակացությունների տրամադրման լիազորություններ	Բարձր	«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքը սահմանում է, որ Հակակոռուպցիոն կոմիտեն կազմակերպում և իրականացնում է ենթադրյալ կոռուպցիոն հանցագործություններով մինչդատական քրեական վարույթը: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածով սահմանված է քրեական վարույթ նախաձեռնելու պարտականությունը: Այսպես, քննիչն իր իրավասության սահմաններում պարտավոր է քրեական վարույթ նախաձեռնել, եթե առերևույթ հանցանքի մասին պատշաճ հաղորդումը ստացվել է՝ 1. ֆիզիկական անձից, 2. իրավաբանական անձից, 3. պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնից կամ դրա պաշտոնատար անձից՝ նրա գործունեության իրականացման կապակցությամբ,
			Ուղղորդում: Այս ցուցանիշը կենտրոնանում է Հակակոռուպցիոն Կոմիտեի՝ իր մանդատն իրականացնելու գործնական լիազորությունների վրա (ինչպես նկարագրված է 3-րդ ցուցանիշի ներքո): Տրվում է բարձր միավոր, եթե				

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
		պաշտոնյաների հետ	Հակակոռուպցիոն կոմիտեն իրավասու է նախաձեռնողական վարույթ սկսելու և ունի լիազորությունների լայն շրջանակ (օրինակ, ստիպել այլ պետական մարմիններին՝ գործակցել. քրեական հետապնդումներ իրականացնել, օպերատիվ - հետախուզական աշխատանքներ կատարել, հասանելիություն ունենալ այլ պետական և ՏԻՄ մարմինների էլեկտրոնային բազաներին, ուսումնասիրել կասկածյալի բանկային հաշիվները, պահատուփերը, եկամուտների գրանցումները, գույքը և այլն): Հակակոռուպցիոն Կոմիտեին պետք է նշանակվի միջին միավոր, եթե ունի վերը նշված լիազորություններից միայն մի քանիսը, և ցածր միավոր, եթե գործում է ոչ թե նախաձեռնողական, այլ արձագանքում է կատարվածին և (կամ) ունի վերը նշված լիազորություններից միայն մեկը կամ երկուսը:				4. օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնից, քննիչից, դատախազից կամ դատավորից՝ իր լիազորություններն իրականացնելու կապակցությամբ: Իսկ 178-րդ հոդվածով նկարագրված է քրեական վարույթ նախաձեռնելու կարգը, համաձայն որի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 173-րդ հոդվածով նախատեսված աղբյուրից առերևույթ հանցանքի մասին պատշաճ հաղորդում ստանալու յուրաքանչյուր դեպքում քննիչն անհապաղ, սակայն ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում կազմում է քրեական վարույթ նախաձեռնելու մասին արձանագրություն, իսկ դատախազը, սույն օրենսգրքով սահմանված քննչական ենթակայության կանոններին համապատասխան, այն վերահաստատում է իրավասու քննչական մարմնի ղեկավարին քրեական վարույթ նախաձեռնելու հարցը լուծելու համար: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 41-րդ հոդվածը սահմանում է քննիչի լիազորությունները: Ի լրումն այլ լիազորությունների, քննիչը օժտված է հետաքննության մարմնին գաղտնի քննչական գործողություններ և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու վերաբերյալ հանձնարարություններ տալու, ինչպես նաև հետաքննության մարմնից օպերատիվ-հետախուզական միջոցառումների և գաղտնի քննչական գործողությունների արդյունքները պահանջելու լիազորություններով: https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=154763 Ինչ վերաբերում է բանկային հաշիվների, պահատուփերի, եկամուտների գրանցումների ուսումնասիրման լիազորություններին, ապա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 209-րդ հոդվածը սահմանում է, որ այնպիսի քննչական գործողությունները, ինչպիսիք են բնակարանում

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							խուզարկությունը և առգրավումը, դեպքի վայր չհանդիսացող բնակարանում զննումը և դեպքի վայր հանդիսացող բնակարանում հետագա զննումը, թվային խուզարկությունը, նամակագրության և հաղորդակցության այլ ձևերի առգրավումը, բժշկական, նոտարական, բանկային կամ հարակից գաղտնիք պարունակող փաստաթղթերի և առարկաների առգրավումը, ինչպես նաև էլեկտրոնային սարքերում կամ կրիչներում պարունակվող թվային տվյալների առգրավումը, կատարվում են բացառապես դատարանի որոշման հիման վրա: Ընդ որում, բանկային կամ հարակից գաղտնիք պարունակող փաստաթղթերը կամ առարկաները կարող են առգրավվել միայն այն դեպքում, երբ դրանք վերաբերում են՝ 1. այն ֆիզիկական անձին, որի վերաբերյալ առկա են ենթադրյալ հանցանք կատարելու մասին վկայող փաստեր, 2. մեղադրյալին, 3. այն ֆիզիկական անձին, որի վերաբերյալ առկա է հիմնավոր ենթադրություն այն մասին, որ նրա և սույն մասի 1-ին կամ 2-րդ կետով նշված անձի միջև առկա է անմիջական կապ, և բանկային կամ հարակից գաղտնիք պարունակող փաստաթղթերը կամ առարկաներն ուղղակիորեն առնչվում են վերջինիս վերագրվող փաստերին, 4. այն իրավաբանական անձին, որի կապակցությամբ առկա է հիմնավոր ենթադրություն այն մասին, որ դրա գործունեությունն ամբողջությամբ կամ վերաբերելի մասով կառավարվում, վերահսկվում կամ որևէ կերպ փաստացի ուղղորդվում է սույն մասի 1-ին կամ 2-րդ կետով նշված անձի կողմից, և բանկային կամ հարակից գաղտնիք պարունակող

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							փաստաթղթերը կամ առարկաներն ուղղակիորեն առնչվում են վերջինիս վերագրվող փաստերին (հոդված 239): Հարկ է նշել, որ 232-րդ հոդվածի համաձայն՝ քննիչը կարող է նաև տեղեկատվության պահանջ ներկայացնել վարույթի համար նշանակություն ունեցող հանգամանքների մասին տեղեկությունների տիրապետող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններին, իրավաբանական անձին կամ ցանկացած այլ կազմակերպությանը: Տեղեկատվության պահանջը պարտադիր է դրա հասցեատիրոջ համար՝ բացառությամբ այն դեպքերի, երբ՝ հայցվող տեղեկությունն օրենքով պաշտպանվող գաղտնիք է, լրատվական գործունեություն իրականացնողը կամ լրագրողը չի ցանկանում բացահայտել տեղեկատվության աղբյուրը, պահանջվում են առանձին փաստաթղթեր, առարկաներ կամ այլ նյութեր, անձը ենթադրում է, որ դա հետագայում ողջամտորեն կարող է օգտագործվել կամ մեկնաբանվել ի վնաս իրեն, իր ամուսնու կամ մերձավոր ազգականի: Քննիչը ներկայացված գրավոր պահանջում նշում է այն ժամկետը, որի ընթացքում անհրաժեշտ է ներկայացնել պահանջվող տեղեկությունը: Հայցվող տեղեկությունը պետք է տրամադրվի տեղեկանքի տեսքով, որն էլ հավելվածի ձևով հետագայում կցվում է տեղեկատվության պահանջի արձանագրությանը: Ինչ վերաբերում է այլ պետական և ՏԻՄ մարմինների էլեկտրոնային բազաներին հասանելիությանը, ապա համաձայն 2019-2022 թթ. ՀՀ Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների եզրափակիչ գնահատման և մոնիթորինգի զեկույցի՝ «Հակակոռուպցիոն կոմիտեն հասանելիություն ունի ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության բնակչության պետական

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							ռեգիստրին, ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության էլեկտրոնային ռեգիստրին, ոստիկանության ինֆորմացիոն կենտրոնի տվյալների բազային, ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրին, ՀՀ ԱՆ քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության էլեկտրոնային ռեգիստրին, ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության էլեկտրոնային ռեգիստրին, Պետական եկամուտների կոմիտեի տվյալների բազային, Կադաստրի կոմիտեի տվյալների բազային, սակայն ՀՀ Հակակոռուպցիոն կոմիտեն հասանելիություն չունի շարժական գույքի նկատմամբ կալանք դնելու վերաբերյալ համակարգին: ՀՀ Հակակոռուպցիոն կոմիտեն արդեն իսկ ունի կենտրոնական դեպոզիտարիայի տեղեկատվական բազային հասանելիություն: Վերջնական գործարկման հետ կապված տեխնիկական աշխատանքներն ավարտական փուլում են»: https://moj.am/storage/files/pages/pg_7967694028641_AC_M-A_Report_final_2023-compressed_1_.pdf Ինչպես նշված է կատարված գործողությունների նկարագրությունում, ՀՀ քննչական կոմիտեում այլ պետական մարմինների տվյալների բազաներին հասանելիությունն ապահովվում է «Էկենգ» ՓԲԸ կողմից, իսկ վերջինիս միջոցով վերոնշյալ տեղեկատվական բազաներից ստացված տեղեկատվությունն ամբողջական չէ: Ուստի կարելի է եզրակացնել, որ իրավապահ մարմիններն օժտված չեն ոչ իրավական դաշտում և ոչ էլ գործնականում բավարար մեխանիզմներով՝ էլեկտրոնային եղանակով հարցումների միջոցով պետական մարմինների այն տեղեկատվական բազաներին հասանելիություն ստանալու համար, որոնք անհրաժեշտ են կոռուպցիոն և այլ տնտեսական հանցագործությունների արդյունավետ քննության համար:

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							Այսպես, ՀՀ Հակակոռուպցիոն ռազմավարությունից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագրով նախատեսվել է մինչև 2026 թվականը գործարկել ինտեգրված հարթակ, որը ապահովում է հետախուզության ստորաբաժանումների, քննչական և դատախազական մարմինների, ակտիվների վերադարձման մասնագետների միջև տեղեկատվության ակտիվ և անվտանգ փոխանակումը, ինչպես նաև հասանելիությունը այլ պետական մարմինների տվյալների բազաներին: https://moj.am/storage/uploads/1871.2.pdf Բացի այդ, առկա հուշագրերի հիման վրա, հիմք ընդունելով «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածը, օպերատիվ-հետախուզական մարմինները ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական դիտարկումների կենտրոնից կարող են ստանալ անձանց բանկային գաղտնիք կազմող տվյալների ընդհանուր վերլուծությունը, թեև դրանք չեն կցվում քրեական վարույթին և չեն կարող դառնալ ապացույց: https://www.arlis.am/documentview.aspx?docID=93142
6.	Առաջարկությունները ներկայացնելու և կիրարկելու լիազորություններ	«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենք, Հակակոռուպցիոն կոմիտեի տարեկան հաշվետվություն և կայք, հարցազրույցներ Հակակոռուպցիոն կոմիտեի	Սակավաթիվ լիազորություններ կամ ոչ մի լիազորություն	Որոշ լիազորություններ	Ընդարձակ լիազորություններ	Միջին	«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ օրենսդրական ակտերի նախագծերը ենթակա են հանրային քննարկման: Այլ նորմատիվ իրավական ակտերի նախագծերը հանրային քննարկման կարող են դրվել նախագիծը մշակող կամ այն ընդունող մարմնի նախաձեռնությամբ: https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=120733 Հոդվածի մեկնաբանությունից կարելի է եզրակացնել, որ Հակակոռուպցիոն կոմիտեն՝ որպես նորմատիվ իրավական ակտը մշակող մարմին՝ նույնպես իրավասու է կազմակերպելու և անցկացնելու հանրային քննարկում: Այսպես, Հանրային քննարկումների կազմակերպման և անցկացման կարգի համաձայն, հանրային քննարկումը
			Ուղղորդում: Հակակոռուպցիոն կոմիտեն ստանում է բարձր միավոր, եթե իրավասու է մշակելու և կիրարկելու կատարման առաջարկություններ այլ գերատեսչությունների կամ առավել ընդհանրական, Կառավարության հակակոռուպցիոն քաղաքականության վերաբերյալ: Սա ներառում է առաջարկությունների մասին հրապարակայնորեն զեկուցելու, խնդիրները				

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
		անձնակազմի ղեկավար պաշտոնյաների հետ	բացահայտելու և հանրային լսումներ ու հարցումներ անցկացնելու իրավասությունը: Հակակոռուպցիոն կոմիտեն ստանում է միջին միավոր, եթե ունի վերոնշյալ լիազորություններից միայն մի քանիսը, և ցածր միավոր, եթե չունի իր առաջարկությունները կիրարկելու որևէ լիազորություն և (կամ) ենթարկվում է քննարկումների արգելքի կանոնին:				կազմակերպվում է նորմատիվ իրավական ակտն ընդունելու իրավասություն ունեցող մարմնի կամ ՀՀ կառավարության անդամի կողմից (հանրային քննարկում իրականացնող մարմին): https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=126002 Հակակոռուպցիոն քաղաքականության մասնակցության մասով իրավասու մարմիններին ներկայացված առաջարկությունները պարտադիր չեն կիրարկման, քանի որ դրանք կրում են օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ լուծումներ, որոնք կարող են չընդունվել Կառավարության կամ ԱԺ-ի կողմից: Այսպես, 2023 թ. ՀՀ Հակակոռուպցիոն կոմիտեի տարեկան գործունեության մասին հաղորդման համաձայն, 2023 թ. ընթացքում ուսումնասիրվել են ավելի քան 273 իրավական ակտերի նախագծեր, օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերի 50 նախագծերի վերաբերյալ ներկայացվել են դիտողություններ և առաջարկություններ, այդ թվում մասնակցություն է ապահովվել օրենքների և այլ իրավական ակտերի նախագծերի քննարկումներին: https://anticorruption.am/hy/pages/show/report Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից շրջանառության մեջ դրվելիք նորմատիվ իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքների, այլ գերատեսչությունների կողմից շրջանառության մեջ դրված իրավական ակտերի նախագծերի կապակցությամբ Կոմիտեի կողմից տրվող կարծիքների, առաջարկությունների և դիտողությունների մշակման աշխատանքների իրականացումը վերապահված է Հակակոռուպցիոն կոմիտեի իրավական ապահովման վարչությանը: https://anticorruption.am/public/uploads/files/file-U3j8154rsB.pdf

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							2022 թ. ընթացքում Հակակոռուպցիոն կոմիտեն ուսումնասիրել է ավելի քան 150 իրավական ակտերի նախագծեր, իսկ օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերի 58 նախագծերի վերաբերյալ ներկայացրել է դիտողություններ և առաջարկություններ: https://anticorruption.am/hy/pages/show/report Թե ներկայացված առաջարկությունների և դիտողությունների քանի տոկոսն է ընդունվել նախագիծը մշակած մարմնի կողմից, տարեկան հաղորդումների մեջ այդպիսի տեղեկությունները բացակայում են: ԹԻՀԿ-ի կողմից Հակակոռուպցիոն կոմիտեի հարցման արդյունքները վկայում են, որ 2021 թ.-ին նորմատիվ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ ներկայացված կարծիքների, առաջարկությունների և դիտողությունների քանակը 5-ն է, 2022 թ.-ին՝ 58, 2023 թ.-ին՝ 50: Միաժամանակ Հակակոռուպցիոն կոմիտեից հայտնել են, որ ներկայացված կարծիքներից, առաջարկություններից և դիտողություններից ընդունվածների մասով հաշվառում Կոմիտեում չի իրականացվում: ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության ընթացքում բացահայտված կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող հարցերի, կարգավորման բացերի և թերությունների շտկման վերաբերյալ իրավասու մարմիններին 2021 թ. հոկտեմբերի 23-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում ներկայացվել է 18 միջնորդագիր, 2022 թ. ընթացքում՝ 36 միջնորդագիր, 2023 թ. ընթացքում՝ 39 միջնորդագիր: Ընդ որում, ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի կողմից օրենքից բխող մշակման ենթակա ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի, ինչպես նաև առհասարակ մշակված

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							ենթաօրենսդրական ակտերի վերաբերյալ առանձնացված հաշվառում նույնպես չի իրականացվում:
7.	Իրավական ինքնավարություն	«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենք, Հակակոռուպցիոն կոմիտեի տարեկան հաշվետվություն և կայք, հարցազրույցներ Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի ղեկավար պաշտոնյաների հետ	Իրավական ինքնավարություն չունի	Որոշ չափով ունի իրավական ինքնավարություն	Ունի լիարժեք իրավական ինքնավարություն	Միջին	«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով սահմանվում է, որ Հակակոռուպցիոն կոմիտեն քննչական մարմին է, որը կազմակերպում և իրականացնում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով իր ենթակայությանը վերապահված՝ ենթադրյալ կոռուպցիոն հանցագործություններով մինչդատական քրեական վարույթը: Օրենքի 6-րդ հոդվածով սահմանված է Հակակոռուպցիոն կոմիտեի անկախության սկզբունքը, համաձայն որի Հակակոռուպցիոն կոմիտեն իր լիազորություններն իրականացնելիս, ինչպես նաև իր կառուցվածքին, աշխատանքների կազմակերպման կարգին վերաբերող որոշումներն ընդունելիս անկախ է և ենթարկվում է միայն Սահմանադրությանը և օրենքներին: https://www.arlis.am/documentview.aspx?docid=195944 ՀՀ Սահմանադրության 178-րդ հոդվածով սահմանվում է, որ քննչական մարմիններն օրենքով սահմանված դեպքերում և կարգով կազմակերպում և իրականացնում են մինչդատական քրեական վարույթը, և քննչական մարմինների կարգավիճակը, լիազորությունները, կազմավորման և գործունեության կարգը սահմանվում են օրենքով: Այսպես, Հակակոռուպցիոն կոմիտեն՝ որպես քննչական մարմին, համարվելով նաև սահմանադրական կարգավիճակ ունեցող անկախ մարմին, օժտված է ինքնուրույն որոշումներ կայացնելու հնարավորությամբ և հայեցողությամբ: «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքով սահմանված չեն հատուկ դրույթներ, որոնք կարգավորում են Կոմիտեի ղեկավար կազմի անձեռնմխելիության հարցերը:
			Ուղղորդում: Բարձր միավոր է տրվում այն դեպքում, երբ Հակակոռուպցիոն կոմիտեն լիակատար հայեցողություն ունի հետաքննությունների և (կամ) հետապնդումների վերաբերյալ որոշումներ կայացնելու հարցում, և եթե ղեկավար կազմը և ղեկավար պաշտոն զբաղեցնող անձնակազմը անձեռնամխելի են քրեական և (կամ) քաղաքացիական հետապնդումից իրենց լիազորությունների իրականացման շրջանակում կատարված գործողությունների համար: Տրվում է միջին միավոր, եթե Հակակոռուպցիոն կոմիտեն որոշ չափով ենթարկվում է նախարարի կամ այլ բարձրաստիճան պաշտոնյայի կամ մարմնի հրահանգներին կամ եթե Հակակոռուպցիոն կոմիտեի ղեկավար կազմը և ղեկավար պաշտոն զբաղեցնող անձնակազմի անդամները իրենց գործունեության համար պատասխանատու են հետապնդման: Տրվում է ցածր միավոր, եթե Հակակոռուպցիոն կոմիտեն և նրա աշխատակազմը ենթարկվում են նախարարի կամ պետական մարմնի ղեկավարի հրահանգներին և պատասխանատու են հետապնդման համար:				

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
8.	Գործառնական ինքնավարություն	Հարցազրույցներ Հակակոռուպցիոն կոմիտեի անդամների, աշխատակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց և ՔՀԿ-ների հետ, ՁԼՄ-ներ	Գործառնական ինքնավարության ցածր աստիճան	Գործառնական ինքնավարության սահմանափակ աստիճան	Գործառնական ինքնավարության բարձր աստիճան	Բարձր	Հակակոռուպցիոն կոմիտեի բնականոն գործունեությունն ապահովում են նրա կառուցվածքային ստորաբաժանումները: Դրանք ներառում են 5 քննչական, ներքին անվտանգության և օպերատիվ-հետախուզական վարչությունները: Հակակոռուպցիոն կոմիտեի կանոնադրությունը, կառուցվածքը, հաստիքացուցակը և աշխատողների քանակը հաստատվում են Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի կողմից: Հակակոռուպցիոն կոմիտեի կառուցվածքի մեջ մտնում են՝ ● Հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձինք (80 հաստիք)՝ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը, նրա տեղակալները, Հակակոռուպցիոն կոմիտեի վարչությունների և բաժինների պետերը, նրանց տեղակալները՝ բացառությամբ օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող վարչությունների և բաժինների ղեկավարների և նրանց տեղակալների, հակակոռուպցիոն կոմիտեի հատկապես կարևոր գործերով ավագ քննիչները, հատկապես կարևոր գործերով քննիչները, ավագ քննիչները, քննիչները, ● Հակակոռուպցիոն կոմիտեում օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող պաշտոններ զբաղեցնող անձինք (120 հաստիք)՝ օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող ստորաբաժանման ղեկավար, օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող վարչությունների և բաժինների ղեկավարները և նրանց տեղակալները, օպերատիվհետախուզական գործունեություն իրականացնող պաշտոններ զբաղեցնող անձինք,
			Ուղղորդում: Տրվում է բարձր միավոր, եթե Հակակոռուպցիոն կոմիտեն անմիջական (օպերատիվ) վերահսկողություն է իրականացնում անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց ընտրության, հեռացման և տեղափոխման նկատմամբ (այդ թվում՝ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի բացակայության դեպքում ապահովված է շարունակականությունն ապահովելու մեխանիզմները) և եթե չկա Կառավարության կողմից Հակակոռուպցիոն կոմիտեի առօրյա գործունեությանը քաղաքական միջամտության որևէ ապացույց: Տրվում է միջին միավոր, որտեղ առկա են կա՛մ անձնակազմի ընտրության, հեռացման և փոխադրման վրա արտաքին ազդեցության, կա՛մ Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության այլ ասպեկտներին քաղաքական միջամտության որոշակի ապացույցներ: Ցածր միավոր է տրվում այն դեպքում, եթե այս տեսակի միջամտությունները համատարած են: Եթե Հակակոռուպցիոն կոմիտեն իր ամենօրյա գործունեության մեջ հանդիպում է Կառավարության կողմից քաղաքական միջամտություն, պետք է տրամադրվեն այդ դեպքերի թիվը և մանրամասները, ներառյալ լրատվամիջոցների հաղորդումները, եթե առկա են:				

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							• Հակակոռուպցիոն կոմիտեում հայեցողական պաշտոն զբաղեցնող անձինք (8 հաստիք)՝ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի օգնականները, խորհրդականները, Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալների օգնականները, Հակակոռուպցիոն կոմիտեի մամուլի քարտուղարը, • քաղաքացիական ծառայողները՝ Հակակոռուպցիոն կոմիտեի գլխավոր քարտուղարը, նրա տեղակալը և Հակակոռուպցիոն կոմիտեի հիմնական գործառույթների իրականացմանն աջակցող ստորաբաժանումների ծառայողները, ինչպես նաև քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձինք (62 հաստիք): Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալներին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է վարչապետը: Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահին լիազորություն է վերապահված նախագահի տեղակալների պաշտոնը զբաղեցնելու համար անցկացված մրցույթում հաղթող ճանաչված մասնակիցների ցուցակից իր հայեցողությամբ ընտրել մեկ թեկնածու, այնուհետև առաջարկել վարչապետին: «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի հոդված 11-ը սահմանում է, որ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը հաստատում է Հակակոռուպցիոն կոմիտեի կանոնադրությունը, կառուցվածքը, պաշտոնների անվանացանկը և հաստիքացուցակը: «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի հոդված 17-ի համաձայն՝ Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողներն

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							ընտրվում են մրցութային կարգով և պաշտոնի նշանակվում Կոմիտեի նախագահի կողմից: Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների թեկնածուների ցուցակը համալրում է մրցութային հանձնաժողովը: Հանձնաժողովը կազմավորում և դրա գործունեության կարգը հաստատում է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը: Հանձնաժողովի կազմի մեջ մտնում են Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի նշանակած Հակակոռուպցիոն կոմիտեի 3 ծառայող, Կառավարության առաջադրած մեկ անձ, քաղաքացիական հասարակության մեկ ներկայացուցիչ: Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայող չհանդիսացող անձինք Հանձնաժողովում կարող են ընդգրկվել, եթե ունեն առնվազն 5 տարվա իրավաբանի մասնագիտական աշխատանքային ստաժ: Հակակոռուպցիոն կոմիտեում թափուր պաշտոն առաջանալու դեպքում Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը նշանակում է մրցույթ (բացառությամբ Հակակոռուպցիոն կոմիտեի այն պաշտոններում, որոնցում ծառայողների անձը ծածկագրված է, և նրանք իրենց լիազորություններն իրականացնում են գաղտնագործունեության լիակատար պահպանմամբ, պաշտոնի նշանակելու (ատեստավորելու, վերապատրաստելու, այլ պաշտոնի փոխադրելու) կարգը և պայմանները սահմանում է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը) պաշտոնը թափուր մնալուց հետո՝ 3 ամսվա ընթացքում: Մրցույթի արդյունքների հրապարակումից հետո գրավոր բողոքի բացակայության դեպքում, իսկ բողոքի առկայության դեպքում բողոքարկման վերաբերյալ պատասխան տալուց հետո՝ 1-օրյա ժամկետում, Հանձնաժողովը մրցույթում հաղթող ճանաչված թեկնածուների ցուցակը ներկայացնում է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահին: Ցուցակին կցվում են նաև

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ներկայացրած խորհրդատվական եզրակացությունները: Ինքնավար պաշտոնների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձինք «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով մասնագիտական պատրաստում են անցնում ՀՀ արդարադատության ակադեմիայում: Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը համապատասխան ուսումնառությունն ավարտած թեկնածուների ցուցակն ստանալուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում, կատարում է նշանակում համապատասխան պաշտոնում: Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար հայտարարված մրցույթի դեպքում մրցույթում հաղթող ճանաչված մասնակիցների ցուցակն ստանալուց հետո Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը 3 աշխատանքային օրվա ընթացքում, վարչապետին է առաջարկում մրցույթում հաղթող ճանաչված Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալի թեկնածությունը՝ կցելով թեկնածուի վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ներկայացրած խորհրդատվական եզրակացությունը: Այսպես, օրենքի հոդված 21-ով սահմանված է, որ միայն Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալներին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է վարչապետը: Հակակոռուպցիոն կոմիտեի մյուս ծառայողներին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը: Հակակոռուպցիոն կոմիտեում հայեցողական պաշտոն զբաղեցնող անձանց աշխատանքի ընդունում և աշխատանքից ազատում է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը:

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							Ինչ վերաբերում է Հակակոռուպցիոն կոմիտեի տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց, նրանց աշխատանքի ընդունում և աշխատանքից ազատում է Հակակոռուպցիոն կոմիտեի գլխավոր քարտուղարը՝ ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով: Համաձայն «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի հոդված 16-ի՝ ՀՀ քննչական մարմիններում գլխավոր քարտուղարին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է քննչական մարմնի ղեկավարը: Քաղաքացիական ծառայության մյուս պաշտոններում նշանակում և այդ պաշտոններից ազատում է գլխավոր քարտուղարը: https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=175823 Համաձայն «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի հոդված 12-ի՝ քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելը տեղափոխման, փոխադրման, գործուղման գործընթացների համար նույնպես պատասխանատու է պաշտոնի նշանակման իրավասություն ունեցող անձը: Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի գործունեության շարունակականության ապահովման տեսանկյունից «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի հոդված 11-ը նախատեսում է «Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի բացակայության կամ պաշտոնեական պարտականությունները կատարելու անհնարինության դեպքում նրա հանձնարարությամբ նրան փոխարինում է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալներից մեկը, իսկ հանձնարարության բացակայության դեպքում՝ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի՝ առավել երկար մասնագիտական ստաժ ունեցող տեղակալը»: Ընդհանուր առմամբ, կարելի է եզրակացնել, որ Հակակոռուպցիոն կոմիտեն անմիջական

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							վերահսկողություն է իրականացնում իր անձնակազմի ընտրության, հեռացման և տեղափոխման նկատմամբ, ինչպես նաև Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի բացակայության դեպքում ապահովում է լիազորությունների շարունակականությունը:
9.	Լիազորությունների քաղաքական օգտագործում	Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից հետաքննված՝ ընդդիմության առաջնորդների վերաբերյալ լրատվամիջոցների լուսաբանում, հարցազրույցներ Հակակոռուպցիոն կոմիտեի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, ընդդիմության առաջնորդների, ՔՀԿ-ների ղեկավարների և կոռուպցիայի դեմ պայքարի փորձագետների հետ, ՁԼՄ-ներ	Կառավարության կողմից Հակակոռուպցիոն Կոմիտեի՝ որպես քաղաքական հակառակորդների դեմ գործիքի լայնորեն օգտագործման ապացույցներ	Կառավարության կողմից Հակակոռուպցիոն Կոմիտեի՝ քաղաքական դրդապատճառներով սահմանափակ մանիպուլյացիայի որոշ ապացույցներ	Կառավարությունը Հակակոռուպցիոն կոմիտեն չի օգտագործել որպես գործիք քաղաքական հակառակորդների դեմ կամ քաղաքական դրդապատճառներով	Միջին	«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածում ամրագրված է քաղաքական չեզոքության սկզբունքը, որի համաձայն Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողը չի կարող լինել որևէ կուսակցության անդամ կամ այլ կերպ զբաղվել քաղաքական գործունեությամբ: Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողը ցանկացած հանգամանքում պարտավոր է դրսևորել քաղաքական զսպվածություն և չեզոքություն: Հակակոռուպցիոն կոմիտեին՝ որպես գործիք, կամ այլ քաղաքական դրդապատճառներով քաղաքական իշխանության կողմից քաղաքական հակառակորդների դեմ կիրառելու փաստեր մամուլում, լրատվամիջոցներում, ընդդիմադիր քաղաքական գործիչների կողմից հայտարարություններում ԹԻՀԿ-ն չի արձանագրել: Freedom House իրավապաշտպան կազմակերպություն տարեկան՝ Nations in Transit 2023 զեկույցում նշվում է, որ «Հակակոռուպցիոն կոմիտեն բարձր մակարդակի հետաքննություններ է ձեռնարկել ստեղծման պահից ի վեր ... (մի շարք պաշտոնատար անձանց նկատմամբ) 2022 թ.-ին կոռուպցիոն վարույթներ են նախաձեռնվել ներկա և նախկին պաշտոնյաների դեմ: Պաշտպանության նախկին նախարար Դ.Տ.-ի, գեներալ Ա.Դ.-ի և Դ.Գ.-ի դեմ, ում մեղադրանք է առաջադրվել զենքի գնման գործարքների համար խարդախության և յուրացման համար, գործերը հունվարին վարույթ են ընդունվել: Դ.Տ.-ի և Ա.Դ.-ի նկատմամբ քրեական հետապնդումը շարունակվել է, չնայած ամբաստանյալների՝ վարչապետ Փաշինյանի հետ
			Ուղղորդում: Այս ցուցանիշը գնահատում է Կառավարության կողմից Հակակոռուպցիոն Կոմիտեին ապավինելը կոռուպցիան քաղաքական հակառակորդների դեմ որպես գործիք կամ այլ քաղաքական դրդապատճառներով օգտագործելու համար: Եթե Կառավարությունը կոռուպցիան օգտագործում է որպես գործիք քաղաքական հակառակորդների դեմ, ապա պետք է ներկայացվեն մանրամասները Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից հետաքննված ընդդիմադիր քաղաքական առաջնորդների վերաբերյալ և հետաքննության արդյունքները: Հետազոտողը պետք է հիմնվի այս կոռուպցիոն դեպքերի վերաբերյալ				

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
			լրատվամիջոցների լուսաբանման, այդ քաղաքական առաջնորդների (հնարավորության դեպքում) և Հակակոռուպցիոն կոմիտեի ղեկավար կազմի, ընդդիմության այլ առաջնորդների, ՔՀԿ ղեկավարների և կոռուպցիայի դեմ պայքարի փորձագետների հետ հարցազրույցների վրա: Եթե լրատվամիջոցների հաղորդումների և հարցազրույցների արդյունքում ստացվում են տարբեր գնահատականներ, ապա հետազոտողը պետք է հարցազրույցի մասնակիցներից պարզի այդ գնահատականների պատճառները:				սերտ քաղաքական կապերին»: https://freedomhouse.org/country/armenia/nations-transit/2023 Իսկ ԱՄՆ Պետդեպարտամենտի 2024 թ. Հայաստանի մարդու իրավունքների զեկույցում նշվում է. «Կառավարությունը բազմաթիվ քրեական գործեր է հարուցել նախկին բարձրաստիճան պաշտոնյաների և նրանց հարազատների, խորհրդարանականների, նախկին նախագահների, իսկ մի քանի դեպքերում՝ դատական համակարգի անդամների ու նրանց հարազատների դեմ՝ մի քանի հազարից մինչև միլիոնավոր դոլարների դրամական արժեքների հետ կապված գործերով: Կոռուպցիոն բնույթի մի շարք քրեական գործեր՝ հանրային բարձր ազդեցությամբ, ուղարկվել են դատարան, որոշ քրեական գործեր գտնվում էին նախաքննության փուլում: Տարեվերջին շարունակվեց Արտակարգ իրավիճակների նախկին նախարար Անդրանիկ Փիլոյանի, ով վարչապետ Փաշինյանի կաբինետի անդամ էր, և նախարարության 12 այլ պաշտոնյաների դատավարությունը բազմաթիվ կոռուպցիոն մեղադրանքներով»: https://www.state.gov/wp-content/uploads/2023/03/415610_ARMENIA-2022-HUMAN-RIGHTS-REPORT.pdf Փորձագետների կարծիքով *«Հակակոռուպցիոն կոմիտեն լավ էլ օգտագործվում է ընդդիմադիրների դեմ: Կոռուպցիոն բնույթի հանցագործություններով՝ ներառյալ որոշ քաղաքական ընդդիմադիրների վերաբերյալ հարուցված գործերով, որոնք քննվում էին Հատուկ քննչական ծառայությունում և փոխանցվել են Հակակոռուպցիոն կոմիտե՝ վերջինս պատասխանատվություն է կրում նաև այդ քրեական գործերի համար»:*

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							Հարկ է նկատել, որ նշված ժամանակահատվածում Հատուկ քննչական ծառայության պետ էր հանդիսանում նույն անձը, որը հետագայում նշանակվեց Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ: https://hetq.am/hy/article/135772 Ըստ փորձագետի՝ *«Միայն այն փաստը, որ Արթուր Վանեցյանի՝ Սասուն Խաչատրյանի հետ հեռախոսազանգի ձայնագրության հրապարակումից հետո վերջինս նշանակվեց Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ՝ քաղաքական չեզոքության խնդիր է համարվում»:*
	Հակակոռուպցիոն Կոմիտեի՝ անկախության և կարգավիճակի միավորի հանրագումարը[78]					13/18=72.2 %	
	Ֆինանսական և մարդկային ռեսուրսներ (8 ցուցանիշ)						
10.	Բյուջեի համամասնությունը	ՀՀ ֆինանսներ ի նախարարության կայք, Հակակոռուպցիոն կոմիտեի տարեկան հաշվետվություն և կայք, հարցազրույցներ Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի	Պետական ընդհանուր բյուջեի 0.10 %-ից ցածր	Պետական ընդհանուր բյուջեի 0.10 %-ից 0,20 %-ը	Պետական ընդհանուր բյուջեի 0.20 %-ից բարձր	Ցածր	2021-2023 թթ. Հակակոռուպցիոն կոմիտեի ֆինանսավորումը եղել է ՀՀ պետական բյուջեի ծախսերի 0.1 %-ից պակաս: Գնահատականը՝ 0 ՀՀ պետական բյուջեից Կոմիտենֆինանսավորում ստանում է «Հակակոռուպցիոն գործերի քննության ապահովում» և «Հակակոռուպցիոն քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիթորինգի իրականացում» ծրագրերի շրջանակներում (ծրագրի դասիչ 1231 և 1228): 2021 թ. ընթացքում ծրագրի շրջանակներում իրականացվել է 4 միջոցառում՝ • Կոռուպցիոն գործերի քննության արդյունավետության բարձրացում (միջոցառման դասիչ՝ 11001)
			Ուղղորդում: Այս ցուցանիշը գնահատում է Հակակոռուպցիոն կոմիտեի բյուջեի միջին հարաբերակցությունը պետական ընդհանուր բյուջեի նկատմամբ 2021-2023թթ. ընթացքում: Եթե Հակակոռուպցիոն կոմիտեն իրականացնում է թե՛ կոռուպցիայի հետ կապված, թե՛ կոռուպցիայի հետ չկապված գործառույթներ, ապա հաշվարկվում է միայն կոռուպցիայի հետ կապված գործառույթների բյուջեն (եթե այս տեղեկությունը հասանելի է): Եթե կա մեկից ավելի Հակակոռուպցիոն կոմիտեներ, ապա				

[78] *Լրացուցիչ ուղղորդում հետազոտողների համար:* 8-րդ և 9-րդ ցուցանիշների համար: Կարևոր է, որ հետազոտողը ներկայացնի կոնկրետ ապացույցներ, այսինքն՝ համապատասխան դեպքերը, օրինակներ և տվյալներ՝ հիմնավորելու, թե կառավարությունը միջամտե՞լ է արդյոք Հակակոռուպցիոն Կոմիտեի ամենօրյա գործողություններին, ինչպես նաև հիմնավորելու կառավարության կողմից Հակակոռուպցիոն Կոմիտեի օգտագործումը քաղաքական հակառակորդների դեմ, քանի որ սրանք լուրջ պնդումներ են:

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
		ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց հետ	կոռուպցիայի հետ կապված գործառույթների համար նախատեսված նրանց բյուջեների հարաբերակցությունը պետական ընդհանուր բյուջեին հաշվարկվում է յուրաքանչյուր Հակակոռուպցիոն կոմիտեի համար:				• Հակակոռուպցիոն կոմիտեի շենքային պայմանների ապահովում (միջոցառման դասիչ՝ 31001) • Հակակոռուպցիոն կոմիտեի տեխնիկական հագեցվածության ապահովում (դասիչ՝ 31003) • Հակակոռուպցիոն կոմիտեի տրանսպորտային սարքավորումներով հագեցվածության ապահովում (դասիչ՝ 31005) 2022-2023 թթ. ընթացքում ծրագրի շրջանակներում իրականացվել է 7 միջոցառում՝ • Կոռուպցիոն գործերի քննության արդյունավետության բարձրացում (միջոցառման դասիչ՝ 11001) • ՀՀ Հակակոռուպցիոն կոմիտեի պահուստային ֆոնդ (միջոցառման դասիչ՝ 11002) • Վերապատրաստման և հատուկ ուսուցման կազմակերպում (միջոցառման դասիչ՝ 11003) • Արտասահմանյան պաշտոնական գործուղում (միջոցառման դասիչ՝ 11004) • Հակակոռուպցիոն կոմիտեի շենքային պայմանների ապահովում (միջոցառման դասիչ՝ 31001) • Հակակոռուպցիոն կոմիտեի տեխնիկական հագեցվածության ապահովում (դասիչ՝ 31003) • Հակակոռուպցիոն կոմիտեի տրանսպորտային սարքավորումներով հագեցվածության ապահովում (դասիչ՝ 31005) ՀՀ պետական բյուջեից 2021-2023 թթ Հակակոռուպցիոն կոմիտեին կատարված հատկացումներն աստիճանաբար ավելացել են և 2021 թ. 0.001491 %-ից 2023 թ. կազմել են պետական բյուջեի ծախսերի 0.0132 %: 2021 թ. համեմատ 2022 թ. ՀՀ պետական բյուջեից Հակակոռուպցիոն

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		

կոմիտեի փաստացի ֆինանսավորումն ավելացել է մոտ 6 անգամ (298,808.4-ից հասնելով 1,898,126.6 ՀՀ դրամ), իսկ 2023 թ., 2022 թ. համեմատ, 43,56 % (1,898,126.6-ից հասնելով 3,363,360.8 ՀՀ դրամի):
Հակակոռուպցիոն կոմիտեի ֆինանսավորումը ՀՀ պետական բյուջեից 2021-2023 թթ.

	2021 թ.	2022 թ.	2023 թ.
Հակակոռուպցիոն գործերի քննության ապահովում (ծրագրի դասիչ՝ 1231), մլն ՀՀ դրամ			
Պլան	933,188.2	1,739,479.6	2,892,142.9
Փաստ	210,388.2	1,508,133.7	2,644,427.6
Հակակոռուպցիոն քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիթորինգի իրականացում (ծրագրի դասիչ՝ 1228), մլն ՀՀ դրամ			
Պլան	581,237.2	489,321.1	753,262.0
Փաստ	88,420.2	389,992.9	718,933.2
ՀՀ պետական բյուջեի ծախսերը, հզր. ՀՀ դրամ			
	2,004,300,990.4	2,242,625,453.6	2,547,649,891.9
Հակակոռուպցիոն կոմիտեի ֆինանսավորումը՝ որպես ՀՀ պետական բյուջեի ընդամենը ծախսերի %			
	0.001491 %	0.00846 %	0.0132 %
Այդ թվում՝ ըստ միջոցառումների (մլն ՀՀ դրամ)			
11001			
Պլան	933,188.2	1,711,252.3	2,688,957.5
Փաստ	210,388.2	1,496,050.2	2,467,226.8
11002			
Պլան	-	21,008.1	48,601.6
Փաստ	-	8,936.8	26,155.8
11003			
Պլան	-	4,252.0	7,627.5

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		

Փաստ	-	1,624.4	4,088.8
11004			
Պլան	-	2,967.2	-
Փաստ	-	1,522.3	-
31001			
Պլան	51,737.2	10,462.0	3,651.3
Փաստ	50,020.2	10,462.0	-
31003			
Պլան	409,500.0	409,385.1	146,956.3
Փաստ	-	310,030.9	146,956.2
31005			
Պլան	120,000.0	69,500.0	-
Փաստ	33,400.0	69,500.0	-

Դիտարկվել են պետության կողմից կատարված հատկացումները և փաստացի ֆինանսավորումը՝ պետական բյուջեի կատարման վերաբերյալ տարեկան հաշվետվությունների համաձայն:

2021 թ.-ին Հակակոռուպցիոն կոմիտեի տեխնիկական հագեցվածության ապահովման համար նախատեսված միջոցները չեն օգտագործվել, քանի որ ՀՀ Հակակոռուպցիոն կոմիտեն ամբողջությամբ ձևավորվել է 2021 թ. նոյեմբերի վերջին, անցկացվել են մրցույթներ, սակայն ժամանակի սղության պատճառով գնման գործընթացները չեն ավարտվել: Նույն հանգամանքով պայմանավորված՝ Հակակոռուպցիոն կոմիտեի տրանսպորտային սարքավորումներով հագեցվածության ապահովման նպատակով հատկացված միջոցներն օգտագործվել են 27.8 %-ով՝ կազմելով 33.4 մլն դրամ: 2021 թ. համեմատ 2022 թ.-ին ԱՆ տրամադրվող «Հակակոռուպցիոն քաղաքականության մշակման,

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							ծրագրերի համակարգման և մոնիտորինգի իրականացման» ծրագրի ծախսերն աճել են 3.2 անգամ՝ հիմնականում պայմանավորված Հակակոռուպցիոն կոմիտեի տեխնիկական հագեցվածության ապահովման և էլեկտրոնային ռեսուրսների ստեղծման կամ արդիականացման նախագծերի ապահովման նպատակով միջոցների հատկացմամբ: Իսկ 2022 թ. համեմատ նույն ծրագրի ծախսերը 2023 թ.-ին նվազել են 12.5 %-ով՝ հիմնականում պայմանավորված 2022 թ.-ին Հակակոռուպցիոն կոմիտեի տեխնիկական հագեցվածության և տրանսպորտային սարքավորումներով հագեցվածության ապահովման նպատակով միջոցների հատկացմամբ: 2023 թ.-ին Հակակոռուպցիոն կոմիտեի տեխնիկական հագեցվածության ապահովման համար օգտագործվել է նախատեսված միջոցների 75.7 %-ը կամ 310 մլն ՀՀ դրամ: Ծրագրից շեղումն առաջացել է գնումների արդյունքում առաջացած տնտեսումների, ինչպես նաև հայտարարված մրցույթների չկայանալու հետևանքով: Հակակոռուպցիոն կոմիտեին 2022 թ.-ին տրամադրվել է 1.5 մլրդ ՀՀ դրամ՝ ապահովելով ծրագրային ցուցանիշի 86.7 % կատարողական, որը պայմանավորված է թափուր հաստիքների առկայությամբ: Միջոցները գրեթե ամբողջությամբ ուղղվել են Կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման և քննության ապահովմանը: Հաշվետու ժամանակահատվածում վարույթում քննված քրեական գործերի ընդհանուր թիվը կազմել է 1203, այդ թվում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով ՀՀ Հակակոռուպցիոն կոմիտեի ենթակայությանը վերապահված՝ հարուցված քրեական գործերի թիվը՝ 504: 2022 թ.-ին բացահայտված կոռուպցիոն հանցագործությունների թիվը կազմել է 1011:

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							2023 թ.-ին Հակակոռուպցիոն կոմիտեին տրամադրվել է ավելի քան 2.6 մլրդ ՀՀ դրամ՝ ապահովելով ծրագրային ցուցանիշի 91.4 % կատարողական, որը պայմանավորված է թափուր հաստիքների առկայությամբ: Միջոցների զգալի մասը՝ 2.5 մլրդ ՀՀ դրամը, ուղղվել է կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման և քննության ապահովման միջոցառմանը, որը կատարվել է 91.8 %-ով: Հաշվետու ժամանակահատվածում վարույթում քննված քրեական գործերի ընդհանուր թիվը կազմել է 1824՝ կանխատեսված 2200-ի և նախորդ տարվա 1203-ի դիմաց, բացահայտված կոռուպցիոն հանցագործությունների թիվը՝ 1632՝ կանխատեսված 1900-ի և նախորդ տարվա 1011-ի դիմաց: 2023 թ. ընթացքում մուտքագրվել և ուսումնասիրվել են 3738 դիմումներ և բողոքներ՝ կանխատեսված 2400-ի և նախորդ տարվա 2611-ի փոխարեն: Նախորդ տարվա համեմատ Հակակոռուպցիոն կոմիտեի ծախսերն աճել են 75.3 %-ով կամ 1.1 մլրդ ՀՀ դրամով՝ պայմանավորված 2022 թ.-ին հաստիքների թերհամալրմամբ: 2021 թ.-ին Հակակոռուպցիոն գործերի քննության ապահովման ծրագրի շրջանակներում օգտագործվել է նախատեսված միջոցների 22.5 %-ը՝ 210.4 մլն ՀՀ դրամ, որն ուղղվել է Կոռուպցիոն գործերի քննության արդյունավետության բարձրացման միջոցառմանը: Վերջինս իրականացվում էր ԵՄ-ի կողմից արդարադատության ոլորտին բյուջետային աջակցության շրջանակներում: Ցածր կատարողականը պայմանավորված է այն հանգամանքով, որ Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեությունը նախատեսված էր հուլիս ամսից, սակայն կոմիտեն ամբողջությամբ ձևավորվել է 2021 թ. նոյեմբերին, հաստիքները ամբողջությամբ չէին համալրվել, և չէին ավարտվել գնման գործընթացները:

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							Հակակոռուպցիոն կոմիտեի բնականոն գործունեության ապահովման համար չկանխատեսված ծախսերի ֆինանսավորման նպատակով նախատեսվում է հակակոռուպցիոն կոմիտեի պահուստային ֆոնդ, որը ներկայացվում է բյուջեի առանձին տողով: Պահուստային ֆոնդի մեծությունը հավասար է տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքով Հակակոռուպցիոն կոմիտեում պաշտոն զբաղեցնող անձանց աշխատավարձի ֆոնդի 2 %-ին: Պետական բյուջեի ծախսային մասում Հակակոռուպցիոն կոմիտեի ծախսերը ներկայացվում են առանձին տողով: Միաժամանակ, պետք է փաստել, որ Հակակոռուպցիոն կոմիտեն օժտված չէ լիարժեք ռեսուրսներով, որպեսզի կարողանա ավելի արդյունավետ իրականացնել իր գործառույթները: Այսպես, Կոմիտեի մասնագիտական ստորաբաժանումների հաստիքները բավարար չեն: Կոմիտեում առկա չէ վերլուծական բաժին: Աջակցող ստորաբաժանումների աշխատակիցների (օրինակ՝ տնտեսագետ-փորձագետների) քանակը չի բավարարում կոռուպցիոն վարույթների ծավալը ողջամիտ ժամկետում քննելու համար: Առկա չեն իրազեկման միջոցառումներ կազմակերպելու և իրականացնելու անհրաժեշտ կադրեր: Նախատեսված չեն բավարար աշխատակազմի շարունակական վերապատրաստումներ: Ակնկալվող գործառույթները պատշաճ իրականացնելու համար անհրաժեշտ են համապատասխան բյուջետային հատկացումներ:
11.	Բյուջեի բավարար լինելը	Հարցազրույց ներ Հակակոռուպցիոն	Անհամարժեք է (հաստատված է բյուջետային հայտի 66 %-ից	Համարժեք է (բյուջետային հայտի 66 %-ից 79 %-ը	Ավելի քան համարժեք է (բյուջետային հայտի 80 %-	Բարձր	«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի հոդված 8-ի համաձայն՝ Հակակոռուպցիոն կոմիտեն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով առաջիկա տարվա

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
		կոմիտեի անդամների և անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, ՔՀԿ-ների ղեկավարների և դոնոր կազմակերպությունների ներկայացուցիչների հետ	պակասը). ապավինում է ՔՀԿ-ների և դոնոր կազմակերպությունների ֆինանսավորմանը	հաստատված է)	ից 100 %-ը հաստատված է)		բյուջետային գործընթացն սկսելու մասին վարչապետի որոշմամբ սահմանված ժամկետում յուրաքանչյուր տարի կազմում և Կառավարություն է ներկայացնում Հակակոռուպցիոն կոմիտեի առաջիկա տարվա բյուջետային ֆինանսավորման հայտը (պետական բյուջեով Հակակոռուպցիոն կոմիտեի գծով նախատեսվելիք ծախսերի նախահաշվի նախագիծը) առաջիկա տարվա պետական բյուջեի նախագծում ներառելու համար: Հակակոռուպցիոն կոմիտեի առաջիկա տարվա բյուջետային ֆինանսավորման հայտը Կառավարության կողմից ընդունվելու դեպքում ընդգրկվում է պետական բյուջեի նախագծում, իսկ առարկության դեպքում պետական բյուջեի նախագծի հետ ներկայացվում է Ազգային ժողով: Կառավարությունն Ազգային ժողով և հակակոռուպցիոն կոմիտե է ներկայացնում բյուջետային ֆինանսավորման հայտի վերաբերյալ առարկության հիմնավորումը: Հաշվի առնելով, որ 2021 թ.-ին Հակակոռուպցիոն կոմիտեն դեռևս ստեղծված չէր, 2021-2022 թթ. Կոմիտեի գործունեության ապահովմանն ուղղվող առաջիկա տարվա ծախսերը նախատեսվել են ՀՀ արդարադատության նախարարության կողմից ներկայացված նախնական հայտին համապատասխան: https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=154570 2023 թ. Հակակոռուպցիոն կոմիտեն ՀՀ կառավարություն է ներկայացրել հետևյալ մեծությամբ հայտ՝ Ներկայացված՝ 2,451,854,200 Հաստատված՝ 3,305,843,800 Բավարարման % 134.83
			Ուղղորդում: Այս ցուցանիշը գնահատում է Հակակոռուպցիոն կոմիտեի բյուջեի բավարար լինելը իր գործառույթներն իրականացնելու համար: Ի լրումն քանակական տվյալների, հետազոտողը պետք է քննության առնի, թե Հակակոռուպցիոն կոմիտեն ունի՞ արդյոք ինքնավարություն՝ սահմանելու իր բյուջետային պահանջները և հետամուտ լինելու դրանց հաստատմանը, և արդյո՞ք որոշ ժամանակ սպասում է դեպքերին անդրադառնալուն՝ սահմանափակ ռեսուրսների պատճառով, ինչը բյուջեի համարժեքության լրացուցիչ ցուցանիշ է: Եթե Հակակոռուպցիոն կոմիտեն իր բյուջեն լրացնելու համար ապավինում է նաև դոնոր կազմակերպությունների ֆինանսավորմանը, ապա պետք է հարցազրույցներ անցկացվեն համապատասխան դոնոր կազմակերպությունների և ՔՀԿ-ների ներկայացուցիչների հետ 2021-2023 թվականների ընթացքում տրամադրված ֆինանսավորման մանրամասները ստանալու համար: Գնահատվում է նաև սահմանափակ բյուջետային միջոցների պատճառով չիրականացված գործառույթների կամ միջոցառումների քանակը 2023, 2022 և 2021 թվականներին:				

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							2023 թթ. ՀՀ կառավարությունը և ԱԺ-ն ամբողջովին են բավարարել Հակակոռուպցիոն կոմիտեի բյուջետային հայտը: 2023 թ. պետական բյուջեի կատարման վերաբերյալ հաշվետվության համաձայն՝ կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման և քննության ապահովման միջոցառումը կատարվել է 91.8 %-ով: Հաշվետու ժամանակահատվածում Հակակոռուպցիոն կոմիտեի վարույթում քննված քրեական գործերի ընդհանուր թիվը կազմել է 1824՝ կանխատեսված 2200-ի և 2022 թ. 1203-ի դիմաց, բացահայտված կոռուպցիոն հանցագործությունների թիվը՝ 1632՝ կանխատեսված 1900-ի և 2022 թ. 1011-ի դիմաց: 2023 թ. ընթացքում մուտքագրվել և ուսումնասիրվել են 3738 դիմումներ և բողոքներ՝ կանխատեսված 2400-ի և 2022 թ. 2611-ի փոխարեն: 2022 թ. համեմատ Հակակոռուպցիոն կոմիտեի ծախսերն աճել են 75.3 %-ով կամ 1.1 մլրդ ՀՀ դրամով՝ պայմանավորված 2022 թ-ին հաստիքների թերհամալրմամբ: ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեին ուղղված հարցմանն ի պատասխան՝ նույնպես հայտնել են, որ 2021, 2022 և 2023 թթ. բյուջետային միջոցների սահմանափակումներ չեն եղել, որոնք կհանգեցնեին առանձին գործառույթներ կամ միջոցառումներ չիրականացնելուն: 2022-2023 թթ. ընթացքում դոնոր կազմակերպությունների կողմից ֆինանսավորում չի տրամադրվել: Վերը շարադրվածի հիման վրա կարելի է եզրակացնել, որ փաստացի հատկացված միջոցները հիմնականում բավարար են եղել Հակակոռուպցիոն կոմիտեի առջև դրված խնդիրները լուծելու համար:

<table>
<tr><th></th><th>ՑՈՒՑԱՆԻՇ</th><th>ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ</th><th colspan="3">ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ</th><th>ՄԻԱՎՈՐ</th><th>ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ</th></tr>
<tr><th></th><th></th><th></th><th>ՑԱԾՐ (0)</th><th>ՄԻՋԻՆ (1)</th><th>ԲԱՐՁՐ (2)</th><th></th><th></th></tr>
<tr><td rowspan="2">12.</td><td rowspan="2">Բյուջեի անվտանգությունը և կայունությունը</td><td rowspan="2">ՀՀ ֆինանսների նախարարության կայք, Հակակոռուպցիոն կոմիտեի տարեկան հաշվետվություն և կայք, հարցազրույցներ Հակակոռուպցիոն կոմիտեի ղեկավար կազմի և անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, ՔՀԿ-ների ղեկավարների և դոնոր կազմակերպությունների ներկայացուցիչների հետ</td><td>Հակակոռուպցիոն կոմիտեի բյուջեն 2021-2023 թվականների ընթացքում կրճատվել է և (կամ) բյուջետային միջոցները ժամանակին չեն հատկացվել</td><td>Հակակոռուպցիոն կոմիտեի բյուջեն 2021-2023 թվականների ընթացքում չի կրճատվել</td><td>Հակակոռուպցիոն կոմիտեի բյուջեն երաշխավորված է՝ նախորդ տարվա հատկացման հիման վրա, և չի կրճատվել</td><td rowspan="2">Միջին</td><td rowspan="2">2022 թ. ՀՀ պետական բյուջեով Հակակոռուպցիոն կոմիտեին կատարված հատկացումը ՀՀ կառավարության կողմից նվազեցվել է, իսկ 2021 և 2023 թթ.՝ ավելացվել: Չնայած դրան՝ Կոմիտեն չի օգտագործել հատկացված բոլոր միջոցները, իսկ 2021-2022 թթ. չի օգտագործել անգամ օրենքով նախատեսված (չավելացված) մեծությունը:
Գնահատականը՝ 1
ԱԺ կողմից հաստատված և ՀՀ կառավարության կողմից «ճշտված» բյուջեն և փաստացի ֆինանսավորումը «Հակակոռուպցիոն գործերի քննության ապահովում» (ծրագրի դասիչ՝ 1231) և «Հակակոռուպցիոն քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիթորինգի իրականացում» (ծրագրի դասիչ՝ 1228), (հազար ՀՀ դրամ):
<table>
<tr><th></th><th>2021 թ.</th><th>2022 թ.</th><th>2023 թ.</th></tr>
<tr><td>Պլան</td><td>1,000,000.0</td><td>2,466,290.4</td><td>3,305,843.8</td></tr>
<tr><td>Ճշտված</td><td>1,514,425,4</td><td>2,228,800.7</td><td>3,645,404.9</td></tr>
<tr><td>Փաստ</td><td>298,808.4</td><td>1,898,126.6</td><td>3,362,826.8</td></tr>
</table>
2021 թ. փաստացի ֆինանսավորումը գերազանցել է ԱԺ կողմից հաստատված մեծությունը, քանի որ տարվա ընթացքում ՀՀ կառավարությունն ավելացրել է Հակակոռուպցիոն կոմիտեին կատարված հատկացումները: Չնայած ՀՀ կառավարությունն ավելացրել է ֆինանսավորումը, սակայն Հակակոռուպցիոն կոմիտեն չի օգտագործել հատկացված ամբողջ գումարը: Ցածր կատարողականը պայմանավորված է այն հանգամանքով, որ Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեությունը նախատեսված էր հուլիս ամսից, սակայն կոմիտեն ամբողջությամբ ձևավորվել է 2021 թ. նոյեմբերին,</td></tr>
<tr><td colspan="5">Ուղղորդում: Այս ցուցանիշը Հակակոռուպցիոն կոմիտեի ղեկավար կազմի և անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց հետ հարցազրույցներից պարզում է, թե Հակակոռուպցիոն կոմիտեն խնդիրներ ունեցե՞լ է արդյոք իր տարեկան բյուջետային հայտի հաստատման հարցում: Նաև գնահատում է, թե նախատեսված բյուջեն ժամանակի՞ն է արդյոք հատկացվում: Եթե 2021-2023 թվականների ընթացքում Հակակոռուպցիոն կոմիտեի բյուջեում էական փոփոխություններ են տեղի ունեցել, ապա հետազոտողը պետք է պարզի այդ փոփոխությունների պատճառները: Հետազոտողը պետք է նաև նշի, թե կա՞ն արդյոք բյուջետային հատկացումներին կցված պայմաններ (օրինակ, որ դրանք պետք է համաչափորեն ծախսվեն ողջ տարվա ընթացքում. դրանք ստացվո՞ւմ են արդյոք որպես տարեկան միանվագ վճար, և այլն): Այս</td></tr>
</table>

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
			ցուցանիշը առաջին հերթին չի գնահատում բյուջեի բարձր կամ ցածր լինելը, այլ՝ անդրադառնում է, մասնավորապես՝ ժամանակի ընթացքում բյուջեում կատարված փոփոխություններին: Գնահատվում է նաև հատկացված բյուջետային միջոցների սահմանված ժամկետում տրամադրման խախտումների քանակը 2023, 2022 և 2021 թվականներին:				հաստիքները ամբողջությամբ չեն համալրվել, և չեն ավարտվել գնման գործընթացները: 2022 թ. ՀՀ կառավարությունը նվազեցրել է ԱԺ կողմից կատարված հատկացումների մեծությունը, սակայն Հակակոռուպցիոն կոմիտեն չի օգտագործել անգամ ԱԺ կողմից կատարված հատկացումը: 2022 թ.-ին ապահովվել է 86.7 % կատարողական, որը պայմանավորված է թափուր հաստիքների առկայությամբ: 2023 թ. ՀՀ կառավարությունը ևս ավելացրել է ՀՀ պետական բյուջեով Հակակոռուպցիոն կոմիտեին կատարված հատկացումը, իսկ փաստացի ֆինանսավորումը եղել է ավելի փոքր: 2023 թ.-ին ապահովվել է ծրագրային ցուցանիշի 91.4 % կատարողական, որը պայմանավորված է թափուր հաստիքների առկայությամբ: **Բյուջեի հատկացումների ժամանակագրությունը** Հակակոռուպցիոն կոմիտեն, հարցմանն ի պատասխան, հայտնել է, որ Հակակոռուպցիոն կոմիտեի 2021, 2022 և 2023 թթ. տարեկան բյուջետային հայտերը հաստատելու գործում խնդիրներ չեն առաջացել, հատկացված բյուջետային միջոցների տրամադրման սահմանված ժամկետների խախտումներ չեն եղել: Ինչ վերաբերում է ճշտված (ավելացված) միջոցների չօգտագործման պատճառներին, Հակակոռուպցիոն կոմիտեն նշել է. «ՀՀ կառավարության 2022 թ. հոկտեմբերի 13-ի 1594-Ն որոշմամբ Հակակոռուպցիոն կոմիտեին հատկացվել է 761.6 մլն ՀՀ դրամ, որից 217.4 մլն-ը չի օգտագործվել: Հակակոռուպցիոն կոմիտեն ստեղծվել է 2021թ. հոկտեմբերի 23-ին և 2022 թ.-ին դեռևս գտնվում էր համալրման փուլում, ուստի այդ հանգամանքով էլ պայմանավորված է չօգտագործված միջոցները: 2023թ. պետական բյուջեներով հաստատված մեծությունները ՀՀ կառավարության որոշումներով ավելացնելուց հետո

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից ճշտված (ավելացված) միջոցները ամբողջությամբ ծախսվել են»:
13.	Աշխատակազմի աշխատավարձ և խրախուսում	«Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենք, Հակակոռուպցիոն կոմիտեի տարեկան հաշվետվություն և կայք, Հակակոռուպցիոն կոմիտեի աշխատավարձերի սանդղակ և խրախուսումների չափեր, ՀՀ վարչապետի ՔԾԳ-ի կողմից իրականացված Պետական պաշտոններ և պետական ծառայության	Ցածր աշխատավարձ և սահմանափակ խրախուսումներ (պետական հատվածի համանման մարմինների համեմատ)	Համարժեք աշխատավարձ և խրախուսումներ (համադրելի են պետական հատվածի նույնպիսի մարմինների հետ)	Մրցունակ աշխատավարձ և խրախուսումներ (համադրելի են մասնավոր հատվածի սուբյեկտների հետ)	Միջին	Հակակոռուպցիոն կոմիտեի աշխատակազմի վարձատրության և խրախուսման հարցերը կարգավորվում են «Պետական պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների վարձատրության մասին» ՀՀ օրենքով: https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=194990 Օրենքի հավելված 9-ով կանոնակարգված և սահմանված են քաղաքացիական ծառայողների, ինչպես նաև պետական այլ ծառայողների՝ բացառությամբ զինվորական ծառայողների, վարձատրության գործակիցները՝ ըստ պաշտոնների խմբերի ու ենթախմբերի: Համաձայն օրենքի՝ հիմնական աշխատավարձը (պաշտոնային դրույքաչափ) հանդիսանում է որպես բազային աշխատավարձի և նախատեսված գործակցի արտադրյալ: «Պետական պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների վարձատրության մասին» ՀՀ օրենքի հոդված 14.-ի համաձայն՝ Հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց պաշտոնային դրույքաչափերի հաշվարկման գործակիցները սահմանվում են սույն օրենքի 1-ին հավելվածով: Հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձին վճարվում է հավելավճար՝ հակակոռուպցիոն կոմիտեում, քննչական կոմիտեում և (կամ) հատուկ քննչական ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնելու (այդ թվում՝ այդ պաշտոնը որպես պետական հատուկ ծառայող զբաղեցնելու), դատախազի, դատախազության քննիչի կամ քննիչի պաշտոնում աշխատած յուրաքանչյուր տարվա համար՝ 2 %-ի չափով:
			Ուղղորդում: Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի աշխատավարձերի սանդղակների և խրախուսումների մանրամասները պետք է տրամադրվեն 2-րդ մասում՝ Հակակոռուպցիոն կոմիտեի պրոֆիլում: 2021-2023 թվականների ընթացքում աշխատավարձերի խրախուսումների ցանկացած էական փոփոխություն պետք է ընդգծվի և բացատրվի: Աշխատավարձերի մրցունակությունը գնահատելու համար սովորաբար համեմատություն է կատարվում մասնավոր հատվածի հետ (օրինակ, բանկեր, աուդիտորական ընկերություններ և այլն), որը սովորաբար ավելի լավ է վճարվում, քան պետական հատվածը: Այնուամենայնիվ, արժե նաև տեսնել, թե ինչպես են Հակակոռուպցիոն կոմիտեի աշխատակիցների աշխատավարձերը համեմատվում այլ քաղծառայողների աշխատավարձերի հետ: Երբեմն Հակակոռուպցիոն կոմիտեի աշխատակիցներին ավելի բարձր աշխատավարձ է վճարվում, քան				

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
		պաշտոններ զբաղեցնող անձանց բազային աշխատավարձի և վարձատրության համակարգի վերաբերյալ զեկույց, հարցազրույցներ Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց և ՔՀԿ-ների ղեկավարների, հետ, վերաբերելի լինելու դեպքում՝ մամուլի հաղորդումներ	պետական հատվածի այլ մարմիններին, որպեսզի որակյալ թեկնածուներն ընդունվեն Հակակոռուպցիոն Կոմիտե և մնան: Պետք է տրամադրվեն նաև խրախուսումների մանրամասները, քանի որ որոշ երկրներում դրանք կազմում են Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի ամսական վարձատրության փաթեթի զգալի մասը: Մասնավոր հատվածի մարմինների հետ համեմատելիս հետազոտողը պետք է կենտրոնանա հատկապես միջին օղակի անձնակազմի վրա, քանի որ բարձր օղակի անձնակազմի աշխատավարձերն ու նպաստներն ավելի քիչ են համեմատելի: Հետազոտողը պատմողական գնահատման մեջ պետք է մասնավորեցնի, թե որ սուբյեկտներն են օգտագործում համեմատության նպատակով:				Հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձը դասային աստիճանի համար ստանում է հավելավճար: Հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձին, որպես առանձնակի ռիսկային և մասնագիտացում պահանջող պաշտոն զբաղեցնող անձ, սույն օրենքով սահմանված կարգով տրվում է հավելում՝ պաշտոնային դրույքաչափի 92 %-ի չափով: ՀՀ կառավարությունն իր 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրում նշել էր, որ հանրային կառավարման և դատաիրավական համակարգի աշխատողների աշխատավարձերի բարձրացումը համարում է կարևորագույն նախապայման՝ այս ոլորտներում իրականացվող բարեփոխումների և հակակոռուպցիոն քաղաքականության իրագործման արդյունավետության բարձրացման առումով: https://www.gov.am/files/docs/1322.pdf Կոմիտեի ծառայողները, բացի հիմնական աշխատավարձից, ունեն նաև հավելումների և հավելավճարների իրավունք: Լրացուցիչ աշխատավարձը, այդ թվում՝ հավելումը, չի կարող գերազանցել հիմնական աշխատավարձի 30 %-ը: Սակայն այս սահմանափակումը չի տարածվում առանձնակի ռիսկային և մասնագիտացում պահանջող պաշտոն զբաղեցնող անձանց նկատմամբ: «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքով որպես առանձնակի ռիսկային, բարդություններով պայմանավորված և մասնագիտացում պահանջող պաշտոն զբաղեցնող անձինք են նախատեսվել Հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող և օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող անձինք, որոնց տրվում է հավելում՝

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							պաշտոնային դրույքաչափի (հիմնական աշխատավարձի) 92 %-ի չափով: Սակայն հարկ է նկատել, որ նշված դրույթը ուժը կորցրել է 2024 թ. դեկտեմբերի 4-ին ընդունված «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքով: https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=201266 Կոմիտեի ծառայողների աշխատավարձի չափն էականորեն տարբերվում է մյուս քննչական մարմինների ծառայողների աշխատավարձի չափից: Մասնավորապես, պետական ծառայողի, այդ թվում՝ Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի հիմնական աշխատավարձի չափը որոշվում է բազային աշխատավարձի՝ 66,140 ՀՀ դրամի և համապատասխան պաշտոնի ենթախմբի սանդղակում ստաժին համապատասխանող գործակցի արտադրյալով: Նշված բանաձևով, օրինակ՝ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի աշխատավարձը կազմում է 959,030 ՀՀ դրամ (66,140 ՀՀ դրամ բազային աշխատավարձ * 14.50 գործակից = 959,030 ՀՀ դրամ աշխատավարձ), մինչդեռ Քննչական կոմիտեի նախագահի աշխատավարձը կազմում է 793,680 ՀՀ դրամ (66,140 ՀՀ դրամ բազային աշխատավարձ * 12.00 գործակից = 793,680 ՀՀ դրամ աշխատավարձ): Նույն բանաձևով, Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչի աշխատավարձը կազմում է 462,980 ՀՀ դրամ, իսկ Քննչական կոմիտեի Երևան քաղաքի վարչական շրջանի քննչական բաժնի կամ մարզային քննչական վարչության քննիչի աշխատավարձը՝ 330,700 ՀՀ դրամ: Կոմիտեի ծառայողների համար նախատեսված հավելումների չափն անհամեմատ մեծ է այլ քննչական մարմինների ծառայողներին և նույնիսկ դատավորներին տրվող հավելումների չափից:

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							Այսպես, Քննչական կոմիտեում հավելումներ են տրվում միայն զինվորական քննչական գլխավոր վարչությունում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց՝ առավելագույնը բազային աշխատավարձի չափով՝ 66,140 ՀՀ դրամ: https://www.e-gov.am/gov-decrees/item/24498/ Հակակոռուպցիոն դատարանի դատավորին, գործունեության ոլորտով պայմանավորված ռիսկայնությունից ելնելով, տրվում է հավելում՝ պաշտոնային դրույքաչափի 70 %-ի չափով (661,400 ՀՀ դրամի 70 %-ի չափով՝ 462,980 ՀՀ դրամ): Առանձնակի ռիսկային և մասնագիտացում պահանջող պաշտոնների շրջանակը սահմանվում է նաև ՀՀ կառավարության որոշմամբ https://www.e-gov.am/gov-decrees/item/38025/, որը ներառում է դատախազության ոլորտը: Այդ պաշտոններն են՝ 1. ՀՀ գլխավոր դատախազը (աշխատավարձ՝ 992,100 ՀՀ դրամ, հավելում՝ աշխատավարձի 95 %-ի չափով), 2. ՀՀ գլխավոր դատախազի՝ ՀՀ քրեական օրենսգրքով սահմանված կոռուպցիոն հանցագործությունների ցանկով նախատեսված գործերով մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողությունը և մեղադրանքի պաշտպանությունը, ինչպես նաև այդ գործերով պետության շահերի պաշտպանության ոլորտը համակարգող տեղակալները (աշխատավարձ՝ 727,540 ՀՀ դրամ, հավելավճար՝ աշխատավարձի 95 %-ի չափով), 3. ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը (ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձմանն ուղղված գործառույթների ոլորտը համակարգող)

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							(աշխատավարձ՝ 826,750 ՀՀ դրամ, հավելավճար՝ աշխատավարձի 85 %-ի չափով), 4. ՀՀ գլխավոր դատախազության՝ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության դատախազը (աշխատավարձ՝ 446,445 ՀՀ դրամ, հավելավճար՝ աշխատավարձի 100%-ի չափով): Հիշյալ պաշտոնների համար նույնպես նախատեսվել է հավելում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ կոռուպցիոն բնույթի քրեական գործերով հսկողություն և վերահսկողություն իրականացնելը կրում է առանձնակի ռիսկային բնույթ: Հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող և օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող անձանց տրվում է հավելավճար դասային աստիճանի համար: Հակակոռուպցիոն կոմիտեում ամենացածր դասային աստիճանի համար հավելավճարը սահմանվում է պաշտոնային դրույքաչափի 3 %-ի չափով, իսկ դրան հաջորդող յուրաքանչյուր հերթական ավելի բարձր դասային կամ դիվանագիտական աստիճանի համար հավելավճարի չափը աճում է 1 %-ով: Հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձանց հավելավճար տրվում է նաև հակակոռուպցիոն կոմիտեում, քննչական կոմիտեում և (կամ) հատուկ քննչական ծառայությունում ինքնավար պաշտոն զբաղեցնելու (այդ թվում՝ այդ պաշտոնը որպես պետական հատուկ ծառայող զբաղեցնելու), դատախազի, դատախազության քննիչի կամ քննիչի պաշտոնում աշխատած յուրաքանչյուր տարվա համար՝ 2 % չափով: https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=194990

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							Մասնավոր ոլորտի նկատմամբ Հակակոռուպցիոն կոմիտեի աշխատակազմի քաղաքացիական ծառայողների վարձատրության մրցունակության մասով, ՀՀ քաղաքացիական ծառայության գրասենյակի կողմից «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց բազիսային աշխատավարձի և վարձատրության համակարգի վերաբերյալ» 2024 թ. իրականացված զեկույցի արդյունքների համաձայն, «քաղաքացիական ծառայության և ոչ պետական ոլորտի վարձատրության մակարդակների համադրությունը ցույց է տալիս, որ ոչ պետական հատվածում իրավաբանի միջին աշխատավարձը պետական հատվածի համապատասխան ցուցանիշից բարձր է 27.1 %-ով, կառավարման ոլորտի մասնագետինը (այդ թվում՝ մենեջերներ, տնօրեններ)՝11.1 %-ով, իսկ տնտեսագետինը՝ 2.5 %-ով բարձր է պետական ծառայությունում: https://cso.gov.am/static/website/%D4%B6%D5%A5%D5%AF%D5%B8%D6%82%D5%B5%D6%81%202024.pdf Այս պայմաններում, բարձր կոմպետենցիաներով ու փորձառության երկար տարիների ստաժ ունեցող մասնավոր ոլորտի աշխատակիցների համար ոչ պետական հատվածից քաղաքացիական ծառայության նույնիսկ բարձր խմբի պաշտոններ փոխադրումը կդիտվի որպես համարժեքորեն ոչ մրցունակ»: Այսպես, Հակակոռուպցիոն կոմիտեի աշխատակիցների **աշխատավարձերի** մեծությունները կազմել են՝ 2021 թ. — 236.9 մլն. ՀՀ դրամ 2022 թ. — 663.5 մլն. ՀՀ դրամ 2023 թ. — 2 474.2 մլն. ՀՀ դրամ

<table>
<tr><th></th><th>ՑՈՒՑԱՆԻՇ</th><th>ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ</th><th colspan="3">ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ</th><th>ՄԻԱՎՈՐ</th><th>ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ</th></tr>
<tr><th></th><th></th><th></th><th>ՑԱԾՐ (0)</th><th>ՄԻՋԻՆ (1)</th><th>ԲԱՐՁՐ (2)</th><th></th><th></th></tr>
<tr><td></td><td></td><td></td><td colspan="3"></td><td></td><td>Հակակոռուպցիոն կոմիտեի աշխատակիցների խրախուսումների մեծությունները կազմել են՝
<table>
<tr><td>2021 թ.</td><td>71.1 մլն. ՀՀ դրամ</td></tr>
<tr><td>2022 թ.</td><td>186.9 մլն. ՀՀ դրամ</td></tr>
<tr><td>2023 թ.</td><td>197.2 մլն. ՀՀ դրամ</td></tr>
</table>
Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի աշխատավարձերի և խրախուսումների համադրությունը վկայում է, որ խրախուսումների տեսակարար կշիռը Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի տարեկան վարձատրության ծավալում կազմում է՝ 2021 թ.՝ 30 %, 2022 թ.՝ 28.2 %, 2023 թ.՝ 7.98 %:</td></tr>
<tr><td>14.</td><td>Աշխատակազմի ընտրություն</td><td>Հակակոռուպցիոն կոմիտեի տարեկան հաշվետվությունն և կայք, հարցազրույցներ Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց և համապատասխան անձնակազմի աշխատակիցների հետ,</td><td>Հովանավորչություն և ոչ թափանցիկ ընթացակարգեր և գործելակերպ</td><td>Սահմանափակ արժանիքահեն (մերիտոկրատական) և (կամ) թափանցիկ ընթացակարգեր և գործելակերպ</td><td>Արժանիքահեն և թափանցիկ ընթացակարգեր և գործելակերպ</td><td>Բարձր</td><td>Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողներն ընտրվում են մրցութային կարգով և պաշտոնի նշանակվում Կոմիտեի նախագահի կողմից: «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի հոդված 17-ի համաձայն՝ Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների թեկնածուների (բացառությամբ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի թեկնածուների) ցուցակը համալրում է մրցութային հանձնաժողովը: Հանձնաժողովը կազմավորում և դրա գործունեության կարգը հաստատում է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը: Հանձնաժողովի կազմի մեջ մտնում են Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի նշանակած Հակակոռուպցիոն կոմիտեի 3 ծառայող, Կառավարության առաջադրած մեկ անձ, քաղաքացիական հասարակության մեկ ներկայացուցիչ: Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայող չհանդիսացող անձինք Հանձնաժողովում կարող են ընդգրկվել, եթե ունեն առնվազն 5 տարվա իրավաբանի մասնագիտական աշխատանքային ստաժ: Մրցութային հանձնաժողովի կազմավորման և գործունեության կարգը հաստատվել է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի 16.11.2021 թ. N 20-Լ հրամանով:</td></tr>
<tr><td></td><td></td><td></td><td colspan="3">Ուղղորդում: Այս ցուցանիշը կենտրոնանում է Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի հավաքագրման ներքին ընթացակարգերի վրա: Տրվում է բարձր միավոր, եթե գործնականում ընտրության ընթացակարգը և՛ արժանիքահեն է (հիմնված է արժանիքների և կրթական որակավորման վրա), և՛ թափանցիկ: Նշանակվում է միջին միավոր, եթե ընթացակարգն արժանիքահեն է, բայց ոչ՝ թափանցիկ, կամ ընդհակառակը: Տրվում է ցածր միավոր, եթե ընթացակարգը թափանցիկ չէ և հիմնված է հովանավորչության վրա: Հետազոտողը պետք է</td></tr>
</table>

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
		Քաղաքացիական ծառայության հաստիքների համալրման ընթացակարգեր	Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանցից պահանջի իր անձնակազմի ընտրությունը կարգավորող համապատասխան կանոնների պատճենը:				https://anticorruption.am/public/uploads/files/file-PntrTWUdXj.pdf Մրցութային հանձնաժողովը ղեկավարում է Հանձնաժողովի նախագահը, որին Հանձնաժողովի անդամներից նշանակում է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը: Հակակոռուպցիոն կոմիտեում թափուր պաշտոն առաջանալու դեպքում Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը նշանակում է մրցույթ պաշտոնը թափուր մնալուց հետո՝ 3 ամսվա ընթացքում: Թափուր պաշտոնի համար մրցույթ անցկացնելու վերաբերյալ հրապարակվում է հայտարարություն մրցույթն անցկացնելուց ոչ ուշ, քան մեկ ամիս առաջ՝ հրապարակային ծանուցումների պաշտոնական կայքում (www.azdarar.am) և Հակակոռուպցիոն կոմիտեի պաշտոնական կայքում (www.anticorruption.am): Կոմիտեի ծառայողների առաջին կազմի ընտրության մրցութային հանձնաժողովի աշխատանքներին խորհրդակցական ձայնի իրավունքով կարող էին ներգրավվել նաև մինչև 3 միջազգային փորձագետներ: Միջազգային փորձագետի թեկնածություն կարող էին առաջադրել վերջին 2 տարվա ընթացքում ՀՀ-ի հետ հակակոռուպցիոն ոլորտում համագործակցող միջազգային կամ միջկառավարական կազմակերպությունները, որոնց կողմից առաջադրված փորձագետի թեկնածուներն ունեն հակակոռուպցիոն ոլորտում առնվազն 5 տարվա մասնագիտական աշխատանքային փորձառություն: ՔՀԿ ներկայացուցչի թեկնածություն կարող էին առաջադրել այն հասարակական կազմակերպությունները, որոնք ունեն հակակոռուպցիոն ոլորտում գործունեության 5 տարվա փորձառություն, իսկ իրենց կողմից առաջադրված փորձագետն ունի առնվազն 5 տարվա իրավաբանի մասնագիտական աշխատանքային փորձառություն:

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							Կոմիտեի ծառայող չհանդիսացող մյուս անձինք Հանձնաժողովում որպես անդամ կարող էին ընդգրկվել, եթե ունեն առնվազն 5 տարվա իրավաբանի մասնագիտական աշխատանքային ստաժ: https://anticorruption.am/public/uploads/files/file-PntrTWUdXj.pdf 2022 թ. նոյեմբերի 24-ից Կոմիտեի մնացած թափուր պաշտոնների համալրման համար նոր մրցույթներն անցկացվում են օրենքով նախատեսված հիմնական մրցութային հանձնաժողովի կողմից՝ կազմված Կոմիտեի նախագահի նշանակած Կոմիտեի 3 ծառայողից, Կառավարության առաջադրած մեկ անձից և ՔՀԿ մեկ ներկայացուցչից: Ինքնավար պաշտոնների համալրման նպատակով մրցույթի կազմակերպման և անցկացման կարգը հաստատվել է Կոմիտեի նախագահի 08.07.2022 թ. N 15-Լ հրամանով: https://anticorruption.am/public/uploads/files/file-4Rn5VDQvw3.PDF Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնների մրցույթն անցկացվում է հետևյալ փուլերով՝ փաստաթղթերի ուսումնասիրության փուլ, թեստավորման փուլ, բարեվարքության ուսումնասիրության փուլ, հարցազրույցի փուլ, արդյունքների ամփոփման փուլ: Մրցույթի արդյունքների հրապարակումից հետո գրավոր բողոքի բացակայության դեպքում, իսկ բողոքի առկայության դեպքում բողոքարկման վերաբերյալ պատասխան տալուց հետո՝ 1-օրյա ժամկետում, Հանձնաժողովը մրցույթում հաղթող ճանաչված թեկնածուների ցուցակը ներկայացնում է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահին: Ցուցակին կցվում են նաև Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ներկայացրած խորհրդատվական եզրակացությունները:

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							Ինքնավար պաշտոնների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձինք «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով մասնագիտական պատրաստում են անցնում ՀՀ արդարադատության ակադեմիայում: Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը համապատասխան ուսումնառությունն ավարտած թեկնածուների ցուցակն ստանալուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում, կատարում է նշանակում համապատասխան պաշտոնում, իսկ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար հայտարարված մրցույթի դեպքում մրցույթում հաղթող ճանաչված մասնակիցների ցուցակն ստանալուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում, վարչապետին է առաջարկում մրցույթում հաղթող ճանաչված Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալի թեկնածությունը՝ կցելով թեկնածուի վերաբերյալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ներկայացրած խորհրդատվական եզրակացությունը: https://www.arlis.am/documentview.aspx?docid=195944 Հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող ստորաբաժանման պաշտոնները համալրվում են Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի սահմանած կարգով և պայմաններով անցկացվող մրցույթի արդյունքների հիման վրա: Բացառությամբ Հակակոռուպցիոն կոմիտեի այն պաշտոնների, որոնցում ծառայողների անձը ծածկագրված է, և նրանք իրենց լիազորություններն իրականացնում են գաղտնագործունեության լիակատար պահպանմամբ, օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող ստորաբաժանման պաշտոնների

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							համալրման նպատակով անցկացվող մրցույթը պարտադիր պետք է ներառի բարեվարքության ուսումնասիրության փուլը: Օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող պաշտոնների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձինք ցուցակում ընդգրկվելուց հետո անցնում են վերապատրաստման դասընթաց: Վերապատրաստման դասընթացի անցկացման կարգը հաստատվում է ենթաօրենսդրական ակտով: Կոմիտեի օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող ստորաբաժանման պաշտոնները համալրելու համար, մրցույթի անցկացման կարգի համաձայն, օպերատիվ հետախուզական գործառույթներ իրականացնող ծառայողների թեկնածուների ցուցակը համալրվում է մրցութային հանձնաժողովի կողմից՝ Կոմիտեի նախագահի 16.11.2021 թ. N 20-L հրամանին համապատասխան: https://www.anticorruption.am/public/uploads/files/file-xXkv5SLvqc.pdf Օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող ստորաբաժանումներում թափուր պաշտոն առաջանալու դեպքում Կոմիտեի նախագահը նշանակում է մրցույթ՝ պաշտոնը թափուր մնալուց հետո՝ 1 ամսվա ընթացքում: Թափուր պաշտոնի համար մրցույթ անցկացնելու վերաբերյալ հրապարակվում է հայտարարություն մրցույթն անցկացնելուց ոչ ուշ, քան 1 ամիս առաջ՝ հրապարակային ծանուցումների պաշտոնական կայքում (www.azdarar.am) և Հակակոռուպցիոն կոմիտեի պաշտոնական կայքում (www.anticorruption.am): Կոմիտեի օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող ստորաբաժանման ծառայողի պաշտոնների մրցույթն անցկացվում է փաստաթղթերի

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							ուսումնասիրության, ֆիզիկական պատրաստականության ստուգման, հարցազրույցի առաջին, բարեվարքության ուսումնասիրության, հարցազրույցի երկրորդ և արդյունքների ամփոփման փուլերով: Ընդ որում, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող ստորաբաժանման պաշտոնները համալրելու համար անցկացվող մրցույթների շրջանակներում դիտորդական առաքելություն իրականացնելու հնարավորություն օրենսդրորեն նախատեսված չէ: ԹԻՀԿ-ի կողմից Հակակոռուպցիոն կոմիտեի հարցման արդյունքները վկայում են, որ 2023 թ. դեկտեմբերի դրությամբ Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի համալրման աստիճանը կազմել է ինքնավար պաշտոնների 61.25 % (80 հաստիքներից համալրված է եղել 49-ը), օպերատիվ-հետախուզական պաշտոնների՝ 45 % (120 հաստիքներից համալրված է եղել 54-ը), աշխատակազմի՝ 100 %: 2023թ. դեկտեմբերի դրությամբ իրականացվել է 70 մրցույթ, որոնցից՝ **2021** թ.-ին մրցույթներ չեն կազմակերպվել, **2022** թ.-ին՝ • ինքնավար պաշտոնները համալրելու համար՝ 3, • օպերատիվ-հետախուզական ստորաբաժանման պաշտոնները համալրելու համար՝ 5, • քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնները համալրելու համար՝ 46: **2023** թ.-ին՝ • ինքնավար պաշտոնները համալրելու համար՝ 5, • օպերատիվ-հետախուզական ստորաբաժանման պաշտոնները համալրելու համար՝ 3,

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							• քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնները համալրելու համար՝ 8: Ընդհանուր առմամբ, 2021-2023 թթ. ընթացքում մրցույթներին մասնակցել է 686 մարդ, որոնցից 265-ը՝ օպերատիվ-հետախուզական ստորաբաժանման, 134-ը՝ ինքնավար, 287-ը՝ քաղաքացիական ծառայության պաշտոնների համար: Ստորև ներկայացված է Հակակոռուպցիոն կոմիտեի հայտարարված մրցույթների մասնակցության վերաբերյալ տեղեկությունը՝ ըստ տարիների: **2021 թ.** / **2022 թ.** / **2023 թ.** Ինքնավար պաշտոններ: - / 59 / 75 Օպերատիվ-հետախուզական պաշտոններ: - / 163 / 102 Քաղացիական ծառայության պաշտոններ: - / 186 / 101 Նշված մրցույթներում հաղթող են ճանաչվել ընդհանուր 185 անձինք, որոնցից 72-ը՝ ինքնավար, իսկ 71-ը՝ օպերատիվ-հետախուզական ստորաբաժանման պաշտոնների, իսկ 42-ը՝ քաղաքացիական ծառայության թափուր հաստիքների համալրման համար դիմած: Հաղթող ճանաչված անձանցից 181-ը նշանակվել են համապատասխան պաշտոնների: Մրցույթների ընթացքում տարբեր փուլերին մասնակցությունից հրաժարված անձանց թիվը՝ ըստ տարիների:

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							<table><tr><th></th><th>2021 թ.</th><th>2022 թ.</th><th>2023 թ.</th></tr><tr><td>Ինքնավար պաշտոններ</td><td>-</td><td>3</td><td>3</td></tr><tr><td>Օպերատիվ-հետախուզական պաշտոններ</td><td>-</td><td>3</td><td>5</td></tr><tr><td>Քաղաքացիական ծառայության պաշտոններ</td><td>-</td><td>70</td><td>39</td></tr></table> Ինչ վերաբերում է Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի թափուր հաստիքների համալրման գործընթացից բողոքարկումներին, 2022-2023թթ. ընթացքում այն կազմել է 18, որոնցից 10-ը՝ օպերատիվ-հետախուզական ստորաբաժանման պաշտոնները համալրելու մրցույթների, իսկ 8-ը՝ ինքնավար պաշտոնները համալրելու մրցույթի գործընթացից: Ընդհանուր առմամբ, ներկայացված 18 բողոքներից բոլորը մերժվել են: Դրանցից ընդամենը մեկն է վիճարկվել դատական կարգով և դեռևս դատաքննության փուլում է:
15.	Հետաքննության և հետապնդման փորձագիտություն	Հակակոռուպցիոն կոմիտեի տարեկան հաշվետվություն և կայք, հարցազրույցներ Հակակոռուպց	Չունի փորձագիտություն հետաքննության և հետապնդման իրականացման ոլորտներում	Չունի փորձագիտություն հետաքննության և հետապնդման որոշ ոլորտներում	Փորձագիտության բարձր մակարդակ հետաքննության և հետապնդման ոլորտներում	Բարձր	«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի հոդված 10-ի համաձայն՝ Հակակոռուպցիոն կոմիտեի կառուցվածքը, պաշտոնների, այդ թվում՝ հայեցողական պաշտոնների, տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց անվանացանկը և հաստիքացուցակը հաստատում է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը: 2023 թ. դրությամբ Կոմիտեի հաստիքների թիվը ընդհանուր կազմել է 270 միավոր,

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
		իոն կոմիտեի անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, ՔՀԿ-ների ղեկավարների, կոռուպցիայի դեմ պայքարի փորձագետների, դոնոր կազմակերպությունների ներկայացուցիչների հետ	*Ուղղորդում*: Այս ցուցանիշը գնահատում է Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի փորձագիտությունը կոռուպցիայի հետաքննության և հետապնդման ոլորտում: Գնահատումը հիմնականում որակական է և հիմնված է անձնակազմի կրթական որակավորման և վերապատրաստման (հատկապես հետաքննության մեթոդների) վերաբերյալ տրամադրված տեղեկությունների, ինչպես նաև Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի միջին աշխատանքային ստաժի վրա: Ցուցանիշը հիմնված է նաև Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, ՔՀԿ-ների ղեկավարների, դոնոր կազմակերպությունների ներկայացուցիչների և կոռուպցիայի դեմ պայքարի փորձագետների հետ հարցազրույցների վրա: Որպես փորձագիտության մակարդակի ցուցիչ կարող է ծառայել նաև հետաքննության և (կամ) հետապնդման գործառույթների համար պատասխանատու թափուր հաստիքների քանակը:				համալրման աստիճանը՝ 74 %: https://www.arlis.am/documentview.aspx?docid=173380 Այսպես, 2023թ. դեկտեմբերի դրությամբ Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի ինքնավար պաշտոնների 80 հաստիքներից համալրված է եղել 49-ը, իսկ օպերատիվ-հետախուզական պաշտոնների 120 հաստիքներից համալրված է եղել 54-ը: Հակակոռուպցիոն կոմիտեի 2023 թ. գործունեության վերաբերյալ հաղորդման համաձայն՝ նկատի ունենալով, որ Հակակոռուպցիոն կոմիտեի կայացման, գործունեության արդյունավետության բարձրացման հիմնական երաշխիքն արհեստավարժ կադրերն են և նրանց մասնագիտական պատրաստվածության անընդհատ բարձրացումը՝ 2023 թ. ընթացքում այս ուղղությամբ զգալի աշխատանքներ են կատարվել: Բարեվարք և մասնագիտական պատշաճ գիտելիքներ, հմտություններ ունեցող ծառայողների ընտրության, Կոմիտեի քննչական և օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող ստորաբաժանումների պաշտոնները համալրելու նպատակով կազմակերպվել ու անցկացվել է 10 մրցույթ, որի ընթացքում ուսումնասիրվել և մրցութային համապատասխան փուլերով ստուգվել են 200 թեկնածուներ: Մրցույթների անցկացմանը մասնակցություն են ունեցել ինչպես քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ, այնպես էլ տարբեր դիտորդներ և հոգեբան: Այդ մրցույթների արդյունքներով հաղթող են ճանաչվել ընդամենը 59 մասնակիցներ (33 ինքնավար, 26 օպերատիվ-հետախուզական պաշտոններ), որոնցից համապատասխան պաշտոնների են նշանակվել 58-ը: https://anticorruption.am/hy/pages/show/report 2023 թ. հոկտեմբերի 23-ին Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը՝ ամփոփելով կառույցի գործունեության 2

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							տարին, իր ելույթում նշել է. «Մեր կողմից մշտապես աշխատանքներ են կատարվում՝ ուղղված ճյուղային օրենսդրության կատարելագործմանը, մեծ ուշադրություն է դարձվում կադրերի ընտրությանը՝ մասնագիտական կարողություններից զատ կարևորելով հավակնորդների առաքինությունը, և դա է պատճառներից մեկը, որ դեռևս ամբողջությամբ համալրված չեն կոմիտեի հաստիքները: Մինչ օրս կոմիտեի պաշտոնների համալրման համար հայտարարված 16 մրցույթներին մասնակցելու համար դիմել են 399 թեկնածուներ, որոնցից միայն 125-ին է հաջողվել հաղթահարել մրցութային բոլոր փուլերը և հաղթող ճանաչվել: Աշխատակիցների ուսուցումը, վերապատրաստումները կրում են պերմանենտ բնույթ, և այստեղ օգտագործվում են թե՛ տեղական կարողությունները, և թե՛ արտասահմանյան մեր գործընկերների, միջազգային կազմակերպությունների կարողությունները»: https://anticorruption.am/hy/news/view/294 Կոմիտեի ծառայողների վերապատրաստման առումով, «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի հոդված 36-ի համաձայն, Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողները, բացառությամբ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի և նրա տեղակալների, պարտավոր են ոչ պակաս, քան 2 տարին մեկ անցնել վերապատրաստում: Պարտադիր վերապատրաստման ժամկետը կարող է տևել մինչև 1 ամիս: Ինքնավար պաշտոններ զբաղեցնող անձանց վերապատրաստումն իրականացվում է «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով, իսկ Օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող պաշտոններ զբաղեցնող անձանց վերապատրաստումը՝ ենթաօրենսդրական ակտով

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							սահմանված կարգով: https://www.arlis.am/documentview.aspx?docid=195944 2022 թ. հոկտեմբերի 24-ի ՀՀ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ Սասուն Խաչատրյանի ելույթի համաձայն՝ Հայաստանում հակակոռուպցիոն բարեփոխումների իրականացման ԵԱՀԿ ծրագրի շրջանակներում 2022 թ. մարտ-ապրիլ ամիսներին ՀՀ արդարադատության ակադեմիայում կազմակերպվել է Կոմիտեի քննիչների պաշտոնակատարների մասնագիտական կարողությունների զարգացմանը միտված գործնական դասընթացը, իսկ 2022 թ. օգոստոսին օպերատիվ-հետախուզական ստորաբաժանման աշխատակիցների մասնագիտական կարողությունների զարգացմանը միտված գործնական դասընթացները: Նշված ժամանակահատվածում Հակակոռուպցիոն կոմիտեի 7 ծառայողներ մասնակցել են ԱՄՆ-ում, Չեխիայում, Խորվաթիայում և Հունգարիայում կազմակերպված դասընթացներին, որոնք վերաբերել են կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննությանը, քրեական հետապնդմանը և հակակոռուպցիոն բարեփոխումների փորձի ուսումնասիրությանը: https://anticorruption.am/hy/news/view/173 2023 թ. հոկտեմբերի 23-ի ՀՀ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ Սասուն Խաչատրյանի ելույթի համաձայն՝ կազմավորման օրվանից մինչև օրս ՀՀ Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողները մասնակցել են Հայաստանում կազմակերպված 25 մասնագիտական վերապատրաստման դասընթացների, որոնցից 12-ն իրականացվել են այս տարի: Այս ընթացքում Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողները մասնակցել են ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Չեխիայում, Խորվաթիայում, Ալբանիայում, Վրաստանում, Ղազախստանում և

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							Հունգարիայում կազմակերպված 12 դասընթացների, որոնք վերաբերել են կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննությանը, քրեական հետապնդմանը, հակակոռուպցիոն բարեփոխումների փորձի ուսումնասիրությանը, ֆինանսական քննություններին և միջազգային իրավական փոխօգնությանը, ինչպես նաև արտերկրում իրականացված 5 հանդիպումների, աշխատաժողովների և նստաշրջանների: Աշխատակիցների ուսուցումը, վերապատրաստումները կրում են պերմանենտ բնույթ, և այստեղ օգտագործվում են թե՛ տեղական կարողությունները, և թե՛ արտասահմանյան մեր գործընկերների, միջազգային կազմակերպությունների կարողությունները: https://anticorruption.am/hy/news/view/294 Հակակոռուպցիոն կոմիտեի կայքի լրատվության բաժնի նորություններ ենթաբաժնի համաձայն՝ Հակակոռուպցիոն կոմիտեի կազմավորումից ի վեր Հայաստանում ԱՄՆ դեսպանատան թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության բյուրոյի կողմից («ԹՊԻՀ», «INL») 2023 թ. հունվարի 24-ին կազմակերպվել էր փողերի լվացման և ապօրինի հարստացման հանցանքների քննությանը, ինչպես նաև քրեական վարույթներով միջազգային իրավական փոխօգնության հարցերին վերաբերող վերապատրաստում: https://anticorruption.am/hy/news/view/199 Բացի այդ, Հայաստանում հակակոռուպցիոն բարեփոխումների իրականացման ԵԱՀԿ ծրագրի շրջանակներում 2022 թ. ապրիլի 19-20-ը ՀՀ արդարադատության ակադեմիայում կազմակերպվել է ՀՀ Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչների մասնագիտական

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							կարողությունների զարգացմանը միտված գործնական դասընթաց: https://anticorruption.am/hy/news/view/128 2022 թ. օգոստոսի 8-12-ն անցկացվել են ՀՀ Հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական ստորաբաժանման աշխատակիցների մասնագիտական կարողությունների զարգացմանը միտված գործնական դասընթացներ: https://anticorruption.am/hy/search 2022 թ. հոկտեմբերի 25-ից 28-ը Երևանում անցկացվել է ՀՀ Հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական ստորաբաժանման աշխատակիցների մասնագիտական կարողությունների զարգացմանը միտված երկրորդ վերապատրաստումը: https://anticorruption.am/hy/news/view/172 ԹԻՀԿ հարցման արդյունքներով՝ Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոններ զբաղեցնող բոլոր անձինք, «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի համաձայն, ունեն իրավագիտության բակալավրի որակավորման աստիճան կամ դիպլոմավորված մասնագետի բարձրագույն իրավաբանական կրթության որակավորման աստիճան կամ օտարերկրյա պետությունում ձեռք բերված դիպլոմավորված մասնագետի բարձրագույն իրավաբանական կրթության որակավորման աստիճան կամ համապատասխան աստիճան, որի ճանաչումն ու համարժեքության հաստատումը ՀՀ-ում իրականացվել են օրենքով սահմանված կարգով: Ինչ վերաբերում է վերապատրաստումներին, ըստ հարցման պատասխանի, 2021 թ.-ին կոռուպցիոն հանցագործությունների քննության մեթոդիկայի մասով վերապատրաստում անցած աշխատակիցներ չեն եղել,

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							2022 թ.-ին վերապատրաստվել է 48 աշխատակից, իսկ 2023 թ.-ին՝ 41: Փորձագետների կարծիքով *«Մրցույթները այդքան արագ չեն ընթանում, որովհետև, օրինակ, 12 դիմորդից 2 դիմորդ է անցնում, 15-ից 3-ն են անցնում: Այնպիսի մարդիկ չեն գալիս, որ ձեռքդ գնա նշանակես բարձր գնահատական: Այդ մարդիկ առանց պատրաստվելու գալիս են, մարդ ունենք վեց անգամ եկել է քննության, չի էլ պատրաստվում, որովհետև հույս ունի, որ մեկ անգամ էլ գա՝ կնշանակենք, բայց դա այդպես չի լինում»:*
16.	Անձնակազմի ուսուցում և վերապատրաստում	Հակակոռուպցիոն կոմիտեի տարեկան հաշվետվությունն և կայք, հարցազրույցներ Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի ղեկավար	Վերապատրաստումները չեն կարևորվում և անտեսվում են	Անձնակազմի որոշ վերապատրաստված անդամներ՝ վերապատրաստման սահմանափակ հնարավորություններով, և (կամ) առաջարկվող	Լավ պատրաստված անձնակազմ՝ համապատասխան վերապատրաստման բազմաթիվ հնարավորություններով	Միջին	Հայաստանում հակակոռուպցիոն բարեփոխումների իրականացման ԵԱՀԿ ծրագրի շրջանակներում 2022 թ. ապրիլի 19-20-ը ՀՀ արդարադատության ակադեմիայում կազմակերպվել է ՀՀ Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչների մասնագիտական կարողությունների զարգացմանը միտված գործնական դասընթաց: https://anticorruption.am/hy/news/view/128 2022 թ. օգոստոսի 8-12-ն անցկացվել են ՀՀ Հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական ստորաբաժանման աշխատակիցների մասնագիտական կարողությունների զարգացմանը միտված գործնական դասընթացներ: https://anticorruption.am/hy/search

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
		պաշտոն զբաղեցնող անձանց, ՔՀԿ-ների ղեկավարների, կոռուպցիայի դեմ պայքարի փորձագետների, դոնոր կազմակերպությունների ներկայացուցիչների հետ		վերապատրաստումը տեղին չէ			2022 թ. հոկտեմբերի 25-ից 28-ը Երևանում անցկացվել է ՀՀ Հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական ստորաբաժանման աշխատակիցների մասնագիտական կարողությունների զարգացմանը միտված երկրորդ վերապատրաստումը: https://anticorruption.am/hy/news/view/172 Հակակոռուպցիոն կոմիտեի կազմավորումից ի վեր Հայաստանում ԱՄՆ դեսպանատան թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության բյուրոյի կողմից («ԹՊԻՀ», «INL») կազմակերպվում է փողերի լվացման և ապօրինի հարստացման հանցանքների քննությանը, ինչպես նաև քրեական վարույթներով միջազգային իրավական փոխօգնության հարցերին վերաբերող վերապատրաստում: https://anticorruption.am/hy/news/view/199 Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողները մասնակցել են ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Չեխիայում, Խորվաթիայում, Ալբանիայում, Վրաստանում, Ղազախստանում և Հունգարիայում կազմակերպված դասընթացների, որոնք վերաբերել են կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննությանը, քրեական հետապնդմանը, հակակոռուպցիոն բարեփոխումների փորձի ուսումնասիրությանը, ֆինանսական քննություններին և միջազգային իրավական փոխօգնությանը, ինչպես նաև արտերկրում իրականացված հանդիպումների, աշխատաժողովների և նստաշրջանների: https://anticorruption.am/hy/news/view/294 Այսպես, վերապատրաստումները հիմնականում իրականացվել են միջազգային կառույցների աջակցության ծրագրերի շրջանակներում, և դրանք չեն կրել պլանավորված բնույթ և հիմված չեն եղել անձնակազմի բացահայտված կարիքների վրա: Պետական բյուջեից
			Ուղղորդում: Հետազոտողը պետք է մանրամասնորեն ներկայացնի Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի վերապատրաստման դասընթացների քանակն ու տեսակը, ինչպես նաև մասնակցած աշխատակիցների քանակը 2021-2023 թթ. ընթացքում կամ նրանց հասանելի վերապատրաստման դասընթացները: Պետք է տրամադրվեն Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից 2021-2023 թթ. ընթացքում վերապատրաստմանը հատկացված բյուջեի մանրամասները, եթե առկա են: Որպես ընդհանուր կանոն, մարդկային ռեսուրսների բյուջեի 1 % -3 %-ը համարվում է համարժեք: 1 %-ից պակաս հատկացումը հուշում է, որ վերապատրաստումը առաջնահերթություն չէ:				

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի կարողությունների զարգացման համար առանձին միջոցառման «Վերապատրաստման և հատուկ ուսուցման կազմակերպում» (միջոցառման դասիչ՝ 11003) շրջանակներում նախատեսված են միջոցներ: 2022-2023 թթ. ընթացքում 11003 միջոցառման շրջանակներում նախատեսվել է և փաստացի ծախսվել է (մլն ՀՀ դրամ). [table_1] Այսպես, հատկացված բյուջեի մեծությունը ընդհանուր բյուջեում վկայում է, որ վերապատրաստումների համար հատկացվել է 1 %-ից պակաս բյուջե, ինչը հուշում է, որ վերապատրաստումը առաջնահերթություն չէ: ԹԻՀԿ կողմից Հակակոռուպցիոն կոմիտեի հարցման արդյունքները վկայում են, որ 2021 թ.-ին վերապատրաստման դասընթացներ չեն կազմակերպվել: 2022 թ.-ին կազմակերպվել է 3 վերապատրաստման դասընթաց, որին մասնակցել են օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող պաշտոնների 13 թեկնածուներ: 2023 թ.-ին կազմակերպվել է 3 մասնագիտական պատրաստում և 3 վերապատրաստման դասընթաց, որոնց համապատասխանաբար մասնակցել են ինքնավար պաշտոնների 6 և օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող պաշտոնների 10 թեկնածուներ: ՀՀ արդարադատության ակադեմիայի կողմից 2021-2022 թթ. վերապատրաստումներ չեն

[table_1]

	2021 թ.	2022 թ.	2023 թ.
Պլան (ճշտված)	-	4,252.0	7,627.5
Փաստ	-	1,624.4	4,088.8

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							կազմակերպվել: 2023 թ. վերապատրաստվել են ինքնավար պաշտոնների 6 թեկնածուներ: Ինչ վերաբերում է միջազգային վերապատրաստումներին, ներառյալ արտերկրում անցկացվածներին, 2022 թ. ընթացքում օտարերկրյա և/կամ միջազգային կազմակերպությունների կողմից ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի համար կազմակերպվել է 15 վերապատրաստում: 2023 թ. ընթացքում կազմակերպվել է 19 վերապատրաստում: Միայն միջազգային վերապատրաստումներին մասնակցել են՝ 2022 թ.-ին՝ 48 անձ, իսկ 2023 թ.-ին՝ 74 անձ: 2022 թ. ՀՀ վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի կողմից կազմակերպված կոմպետենցիաների վերաբերյալ վերապատրաստումներին մասնակցել է Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի 9 քաղաքացիական ծառայող, իսկ 2023 թ.՝ կոմպետենցիաների վերաբերյալ վերապատրաստումներին մասնակցել է 4 քաղաքացիական ծառայող, իսկ մասնագիտական գիտելիքների վերաբերյալ վերապատրաստումներին մասնակցել է 23 քաղաքացիական ծառայող: Այսպես, վերապատրաստումները հիմնականում իրականացվել են միջազգային կառույցների աջակցության ծրագրերի շրջանակներում, և դրանք չեն կրել պլանավորված բնույթ և հիմնված չեն եղել անձնակազմի բացահայտված կարիքների վրա: Պետական բյուջեից Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի կարողությունների զարգացման համար առանձին միջոցառման շրջանակներում նախատեսված միջոցների և հատկացված բյուջեի մեծության համադրությունը ընդհանուր բյուջեում վկայում է, որ վերապատրաստումների համար հատկացվել է 1 %-ից պակաս բյուջե, ինչը հուշում է,

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							որ վերապատրաստումը առաջնահերթություն չի համարվել: Բացի այդ, Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի մասնագիտական ուսուցման և վերապատրաստումների համար առկա չեն հատուկ մշակված ուսումնական պլաններ կամ ուղեցույցներ, որոնք կդյուրինացնեն իրավակիրառ պրակտիկայում ի հայտ եկած հարցերի, խնդիրների արդյունավետ լուծումը: Ըստ ՀՀ վարչապետի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գրասենյակի էլեկտրոնային տվյալների համակարգի՝ Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի 155 պաշտոններից 39-ն են (25,2 %) ճանաչված քաղաքացիական ծառայողներ: https://cso.gov.am/charts 2022 թ. այս գրասենյակի կողմից կազմակերպված կոմպետենցիաների վերաբերյալ վերապատրաստումներին մասնակցել է Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի 9 քաղաքացիական ծառայող, 2023 թ.-ին՝ 27 քաղաքացիական ծառայող, որից կոմպետենցիաների վերաբերյալ վերապատրաստվել է 4-ը, իսկ մասնագիտական գիտելիքների վերաբերյալ՝ 23-ը:
17.	Անձնակազմի կայունություն	Հակակոռուպցիոն կոմիտեի տարեկան հաշվետվությունն և կայք, հարցազրույցներ Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմ	Կադրերի հոսունության և հրաժարականների բարձր մակարդակ (տարեկան 10 %-ից ավելի)	Կադրերի հոսունության և հրաժարականների միջին մակարդակ (տարեկան 5-10 %-ից ավելի)	Կադրերի հոսունության և հրաժարականների ցածր մակարդակ (տարեկան 0-5 %)	Միջին	ԹԻՀԿ կողմից Հակակոռուպցիոն կոմիտեի հարցման արդյունքների համաձայն՝ 2021 թ. դեկտեմբերի դրությամբ Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի համալրման աստիճանը կազմել է՝ ● ինքնավար պաշտոնների 77.5 % (օրենքի անցումային, դրույթներով 40 հաստիքներից համալրված է եղել 31-ը) ● օպերատիվ-հետախուզական պաշտոններ՝ 0, ● աշխատակազմ՝ 86 %: 2022 թ. դեկտեմբերի դրությամբ՝ ● ինքնավար պաշտոնների 80 % (40 հաստիքներից համալրված է եղել 32-ը),
			Ուղղորդում: Եթե Հակակոռուպցիոն կոմիտեի կադրերի հոսունության մակարդակը բարձր է, ապա իր անձնակազմին պահելու				

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
		ի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, ՔՀԿ-ների ղեկավարների և մարդկային ռեսուրսների կառավարման փորձագետների հետ, Հնարավորության դեպքում պետք է հարցազրույց անցկացվի Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի այն նախկին աշխատակիցների հետ, ովքեր վերջերս են ազատվել աշխատանքից	Հակակոռուպցիոն կոմիտեի անկարողության պատճառները պետք է պարզվեն Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանցից, և հնարավորության դեպքում, վերջին տարվա ընթացքում պաշտոնից ազատված նախկին աշխատակիցներից՝ հարցազրույցների միջոցով: Կադրերի հոսունության մակարդակը կադրերի շարժն է, որն առաջանում է հավաքագրման և հրաժարականների հետևանքով: Եթե անձնակազմը ժամանակավորապես գործուղվում, փոխադրվում կամ ռոտացիայի է ենթարկվում Հակակոռուպցիոն Կոմիտե այլ պետական մարմիններից կամ հակառակը, ապա գործուղման կամ փոխադրման մանրամասները նույնպես պետք է գրանցվեն: Եթե Հակակոռուպցիոն կոմիտեն անցկացնում է ելքային հարցազրույցներ անձնակազմի այն անդամների հետ, ովքեր վերջին տարիներին հրաժարական են տվել, ապա հետազոտողը պետք է այդ տեղեկությունները պահանջի Հակակոռուպցիոն կոմիտեից:				• օպերատիվ-հետախուզական պաշտոններ՝ 60 % (70 հաստիքներից համալրված է եղել 42-ը), • աշխատակազմ՝ 91.4 %: 2023 թ. դեկտեմբերի դրությամբ (հաշվի առնելով նաև հաստիքների ավելացումը)՝ • ինքնավար պաշտոնների 61.25 % (80 հաստիքներից համալրված է եղել 49-ը) • օպերատիվ-հետախուզական պաշտոններ՝ 45 % (120 հաստիքներից համալրված է եղել 54-ը) • աշխատակազմ՝ 100 %: Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի թափուր հաստիքների թիվը 2021 թ. կազմել է 18 (ինքնավար թափուր պաշտոններ՝ 9, օպերատիվ-հետախուզական պաշտոններ՝ 0 աշխատակազմ՝ 9): 2022 թ. դեկտեմբերի դրությամբ Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի թափուր հաստիքների թիվը կազմել է՝ 44 (ինքնավար թափուր պաշտոններ՝ 8, օպերատիվ-հետախուզական պաշտոններ՝ 28, աշխատակազմ՝ 6) իսկ 2023 թ.՝ 97 (ինքնավար թափուր պաշտոններ՝ 31, օպերատիվ-հետախուզական պաշտոններ՝ 66, աշխատակազմ՝ 0): Թափուր հաստիքների համալրման մրցույթները սկսվել են իրականացվել 2021 թ.-ից: Կոմիտեի քննչական և օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող ստորաբաժանումների պաշտոնները համալրելու նպատակով 2022 թ.-ին կազմակերպվել ու անցկացվել է 5 մրցույթ, որի ընթացքում ուսումնասիրվել և մրցութային համապատասխան փուլերով ստուգվել է 186 թեկնածու: Մրցույթների անցկացմանը մասնակցություն են ունեցել ինչպես քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ,

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							այնպես էլ տարբեր դիտորդներ և միջազգային փորձագետներ: Այդ մրցույթների արդյունքներով հաղթող է ճանաչվել 77 մասնակից, որոնցից համապատասխան պաշտոնների են նշանակվել 74-ը (32 ինքնավար, 42 օպերատիվ-հետախուզական պաշտոններ): https://anticorruption.am/hy/pages/show/report 2023 թ.-ին կոմիտեի քննչական և օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող ստորաբաժանումների պաշտոնները համալրելու նպատակով կազմակերպվել ու անցկացվել է 10 մրցույթ, որի ընթացքում ուսումնասիրվել և մրցութային համապատասխան փուլերով ստուգվել են 200 թեկնածուներ: Մրցույթների անցկացմանը մասնակցություն են ունեցել ինչպես քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ, այնպես էլ տարբեր դիտորդներ և հոգեբան:Այդ մրցույթների արդյունքներով հաղթող են ճանաչվել ընդամենը 59 մասնակիցներ (33 ինքնավար, 26 օպերատիվ-հետախուզական պաշտոններ), որոնցից համապատասխան պաշտոնների են նշանակվել 58-ը: https://anticorruption.am/hy/pages/show/report Այսպես, 2021 թ. հաստիքները կազմել են 40 (առանց քաղաքացիական ծառայողների), որի պայմաններում համալրվել է 31-ը, պաշտոնից ազատվել 0, թափուր են մնացել 9 հաստիքներ: Արդյունքում, հոսունությունը կազմել է 0% (0/40-9): 2022 թ.-ին, փաստացի հաստիքացուցակով 120 աշխատակիցների (առանց քաղաքացիական ծառայողների), համալրվել է 74-ը, ազատված՝ 7, թափուր 44: Նշված պայմաններում հոսունությունը կազմել է 9.2 % (7/120-44): 2023 թ.՝ 200 աշխատակիցների (առանց քաղաքացիական ծառայողների), համալրվել է 103-ը, ազատված՝ 17, թափուր 97: Նշված պայմաններում հոսունությունը կազմել է 16.5 % (17/200-97):

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							2021-2023 թթ. հոսունության համեմատական վերլուծությունը վկայում է հոսունության աճի մասին, ինչի պայմաններում արձանագրվում է կադրերի հոսունության և հրաժարականների բարձր մակարդակ: Փորձագետների հետ հարցազրույցները փաստում են, որ *«Հոսունության առումով, Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչները կարիերայի աճ չեն տեսնում, դրա համար էլ դուրս են գալիս աշխատանքից և հիմնականում տեղափոխվում դատախազություն»:* Մեկ այլ փորձագետի կարծիքով *«Այո, քննիչները ծանրաբեռնված են: Բայց իրենց ծանրաբեռնվածությունը հիմնականում պայմանավորված է փաստաթղթերի ծավալով: Քանի որ հիմնական գործերը յուրացումների, վատնումների հետ են կապված՝ գրեթե բոլորը ֆինանսական բնույթի փաստաթղթեր են, մի-քանի հապար էջանոց հաշվապահական փաստաթղթեր, հիմնականում փաստաթղթերի ծավալով ու միջազգային փոխօգնության հարցերով են պայմանավորում: Ինչ վերաբերվում է փորձաքննությունների անցկացման հետ կապված գործերի ձգձգումներին, լուծումը առկա է՝ ներսում տնտեսագետ-փորձագետներ ունեն արդեն»:*
	Հակակոռուպցիոն կոմիտեի՝ ֆինանսական և մարդկային ռեսուրսների միավորի հանրագումարը[79]					10/16=62.5 %	
	Հաշվետվողականություն և ներքին բարեվարքություն (9 ցուցանիշ)						
18.		Հակակոռուպցիոն կոմիտեի	Հակակոռուպցիոն կոմիտեն	Հակակոռուպցիոն կոմիտեն	Հակակոռուպցիոն կոմիտեի	Միջին	«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի հոդված 7-ով սահմանված են Հակակոռուպցիոն կոմիտեի

[79] *Լրացուցիչ ուղղորդում հետազոտողների համար:* Այս ցուցանիշների նկատմամբ կիրառված «աշխատակազմ» և «անձնակազմ» իմաստով հասկացությունները ներառում են աշխատակազմի անդամներին:

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
	Տարեկան հաշվետվություն	տարեկան հաշվետվությունը, հարցազրույցներ Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, ՔՀԿ-ների ղեկավարների, լրագրողների և կոռուպցիայի դեմ պայքարի փորձագետների հետ	իր տարեկան հաշվետվությունը ներկայացնում է Կառավարությանը և Խորհրդարանին, սակայն դա հասանելի չէ հանրությանը և (կամ) հասանելի է դարձվում հանրությանը, սակայն բովանդակային մանրամասները շատ համառոտ են	իր տարեկան հաշվետվությունը ներկայացնում է Կառավարությանը և Խորհրդարանին, և դա հասանելի է դարձվում հանրությանը, սակայն հաշվետվության տրամադրած տեղեկատվության մակարդակը որոշ չափով սահմանափակ է	վերաբերյալ տրամադրվում են համապարփակ տեղեկություններ տարեկան հաշվետվության մեջ, որը ներկայացվում է Կառավարությանը և Խորհրդարանին և դյուր հասանելի է հանրությանը		գործունեության հրապարակայնության և հաշվետվողականության սկզբունքները: Այսպես, Հակակոռուպցիոն կոմիտեն հանրությանը տեղեկացնում է իր գործունեության մասին՝ ապահովելով նախաքննության գաղտնիությունը, ինչպես նաև պետական և օրենքով պահպանվող այլ գաղտնիքների պաշտպանությունը: Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը յուրաքանչյուր տարի՝ մինչև հունվարի 31-ը, Կառավարություն և Ազգային ժողով է ներկայացնում նախորդ տարվա գործունեության մասին գրավոր հաղորդում: Հակակոռուպցիոն կոմիտեն յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո՝ 1-ամսյա ժամկետում, իր պաշտոնական կայքում հրապարակում է գործունեության մասին ամփոփ տեղեկություն: Հակակոռուպցիոն կոմիտեի տարեկան հաշվետվությունը պաշտոնական կայքում հրապարակվում է յուրաքանչյուր տարի՝ մինչև հունվարի 31-ը: Հակակոռուպցիոն կոմիտեի տարեկան գործունեության հաղորդումը ԱԺ ներկայացնելու մասին «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի պահանջի իրականացումը «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքով ապահովված չէ: Մասնավորապես, Հակակոռուպցիոն կոմիտեի ԱԺ ներկայացված տարեկան գործունեության հաղորդումը ԱԺ-ի կողմից չի քննարկվում և «ի գիտություն» չի ընդունվում, «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 26-րդ գլխում կանոնակարգված է միայն սահմանադրական մարմինների կողմից ԱԺ-ին ներկայացվող հաղորդումների քննարկման գործընթացները: arlis.am/DocumentView.aspx?DocID=175794 Ինքնավար մարմինների մասով նման կարգավորումները բացակայում են:
			Ուղղորդում: Այս ցուցանիշը գնահատում է Հակակոռուպցիոն կոմիտեի ամենամյա և կիսամյակային հաշվետվությունների առկայությունը, օրենքով սահմանված ժամկետներում դրանց մշակումը և հրապարակումը: Գնահատվում է նաև Հակակոռուպցիոն կոմիտեի տարեկան հաշվետվության ամբողջականությունն ու մատչելիությունը Հակակոռուպցիոն կոմիտեի տարեկան հաշվետվության մեջ ներկայացված				

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
			տեղեկությունները և հաշվետվության հասանելիությունը: Հետազոտողը պետք է վերլուծի Հակակոռուպցիոն կոմիտեի տարեկան հաղորդման մեջ ներկայացված տեղեկությունները՝ գնահատելու ամբողջականությունը և հասանելիությունը հանրությանը: «Որոշ չափով սահմանափակ» տեղեկատվություն նշանակում է, օրինակ, Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության, բյուջեի և կոռուպցիոն դեպքերի վերաբերյալ բարձր մակարդակի տվյալներ, որոնք բավականաչափ ապաագրեգացված չեն, ուստի ենթակա են սահմանափակ գործածության:				Նշենք, որ 2024 թ. դեկտեմբերի 4-ին ընդունված օրենսդրական փոփոխություններով Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը յուրաքանչյուր տարի՝ մինչև ապրիլի 1-ը, Ազգային ժողով է ներկայացնում հաղորդում Հակակոռուպցիոն կոմիտեի նախորդ տարվա գործունեության մասին: Ազգային ժողովի նիստում հաղորդումը քննարկվում է «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 126-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով՝ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի ներկայացմամբ: https://www.arlis.am/documentview.aspx?docid=200929 https://www.arlis.am/documentview.aspx?docid=200924 http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=15220&Reading=0 Հակակոռուպցիոն կոմիտեի կայքում առկա են 2021-2023 թվականների հաղորդումները (https://anticorruption.am/hy/pages/show/report), ինչպես նաև միայն 2022 թ. 1-ին կիսամյակի, 2022 թ. 1-ին կիսամյակի և 2022 թ. 1-ին կիսամյակի գործունեության մասին ամփոփ տեղեկատվություն (https://anticorruption.am/hy/pages/show/report-semester): Հաղորդումների պատրաստման և հրապարակման ժամկետների տեսանկյունից Հակակոռուպցիոն կոմիտեի կայքի տվյալները թույլ չեն տալիս եզրակացնել, թե արդյոք կիսամյակային հաղորդումները ներկայացված են «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածով սահմանված ժամկետների խախտումներով: Համենայն դեպս, քանի որ կայքում առկա չեն 2022 և 2023 թվականների 2-րդ կիսամյակի վերաբերյալ հաշվետվությունները, կարելի է եզրահանգել, որ խախտվել է օրենքի՝ յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո՝ 1-ամսյա ժամկետում, իր պաշտոնական կայքում

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							գործունեության մասին ամփոփ տեղեկատվության հրապարակման պահանջը: Նշված հաղորդումների ամբողջականության գնահատման տեսանկյունից առկա կիսամյակային և տարեկան հաղորդումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանցում առկա չէ քրեական վարույթների կարճման վերաբերյալ տեղեկություններ, կարճման հիմքեր և քանակական տվյալներ, ինչպես նաև Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների վերաբերյալ առկա կարգապահական վարույթների վերաբերյալ տեղեկատվությունը, բյուջեի կատարողականի հաշվետվությունները և այլն: Ընդ որում, Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի որևէ որոշման մասին, որը կկարգավորեր հաղորդման բովանդակությունը և ներկայացման պահանջները, տեղեկատվության կառուցվածքը, զեկույցում ներառված հարցերի շրջանակը, Հակակոռուպցիոն կոմիտեի պաշտոնական կայքում www.anticorruption.am տեղեկություն չկա: Առկա կիսամյակային և տարեկան հաղորդումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք համապարփակ չեն և չեն համապատասխանում ՏՀՁԿ-ի կողմից սահմանված կոռուպցիոն հանցանքների վիճակագրությանը վերաբերող չափանիշներին: Մասնավորապես, դրանցում առկա չեն քրեական վարույթների կարճման վերաբերյալ տեղեկությունները, կարճման հիմքերը և քանակական տվյալները, քրեական հետապնդումները դադարեցնելու վերաբերյալ տվյալները, Կոմիտեի ծառայողների վերաբերյալ առկա կարգապահական վարույթների վերաբերյալ տեղեկատվությունը, բյուջեի կատարողականի հաշվետվությունները, բարձրաստիճան պաշտոնատար անձանց և/կամ քաղաքական ազդեցություն ունեցող

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							անձանց վերաբերյալ տեղեկությունները և այլն: Սակայն հարկ է նշել, որ Հակակոռուպցիոն կոմիտեի 2024 թ. տարեկան հաղորդման մեջ նշված է քրեական հետապնդումը դադարեցված և կարճված քրեական գործերի թիվը: https://www.anticorruption.am/hy/pages/show/report
19.	Արձագանքողականությունը տեղեկություններին, հանրության հարցումներին	Հակակոռուպցիոն կոմիտեի տարեկան հաշվետվությունը, Հակակոռուպցիոն կոմիտեի կայքը, հարցազրույցներ Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, ՔՀԿ-ների ղեկավարների, լրագրողների և կոռուպցիայի դեմ պայքարի փորձագետների հետ	Հակակոռուպցիոն կոմիտեն չունի որևէ հասանելիություն առկա տեղեկատվական քաղաքականություններին կամ մեխանիզմների՝ արձագանքելու տեղեկություններ ստանալու վերաբերյալ հանրության հարցումներին և գործնականում չի արձագանքում նման հարցումներին	Հակակոռուպցիոն կոմիտեն ունի որոշ մեխանիզմներ՝ արձագանքելու տեղեկություններ ստանալու վերաբերյալ հանրության հարցումներին (ներառյալ Հակակոռուպցիոն կոմիտեի որոշումները, և թե ինչպես են ընդունվել այդ որոշումները), բայց դա սովորաբար դժվարին, ծանր և (կամ) երկարաշունչ գործընթաց է	Հակակոռուպցիոն կոմիտեն ունի համակողման ի հասանելիություն առկա տեղեկատվական քաղաքականություններին և գործընթացներին և ժամանակին արձագանքում է հանրության հարցումներին	Միջին	ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հոդված 186-ով սահմանված է նախաքննության տվյալների հրապարակման անթույլատրելիությունը: Նախաքննության տվյալների հրապարակումն արգելվում է, եթե դա կարող է խոչընդոտել մինչդատական վարույթի բնականոն ընթացքին, դառնալ հանցանքի կատարման պատճառ, վտանգել վարույթի մասնակիցների կամ այլ անձանց իրավունքները կամ իրավաչափ շահերը, հանգեցնել օրենքով պահպանվող գաղտնիքի հրապարակման: Մյուս բոլոր դեպքերում, Հակակոռուպցիոն կոմիտեի, ինչպես և այլ պետական մարմինների վրա, տարածվում են «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի դրույթները: https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=154763 https://www.arlis.am/documentview.aspx?docid=175858 Այսպես, վերոնշյալ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի ծանոթանալու իր փնտրած տեղեկությանը և (կամ) դա ստանալու նպատակով օրենքով սահմանված կարգով հարցմամբ դիմելու տեղեկություն տնօրինողին և ստանալու այդ տեղեկությունը: Օտարերկրյա անձինք սույն օրենքով նախատեսված իրավունքներից և ազատություններից կարող են օգտվել միայն օրենքով և (կամ) միջազգային պայմանագրով սահմանված դեպքերում: Տեղեկատվության ազատությունը կարող է սահմանափակվել ՀՀ
			Ուղղորդում: Այս ցուցանիշը գնահատում է Հակակոռուպցիոն կոմիտեի թափանցիկությունը				

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
			հանրության հարցումներին արձագանքելու տեսանկյունից (ի տարբերություն նախաձեռնողական թափանցիկության, որը նախորդ ցուցանիշն է):				Սահմանադրությամբ և օրենքով նախատեսված դեպքերում: Հակակոռուպցիոն կոմիտեն հասանելիություն ունի էլեկտրոնային e-request.am հարթակին, որի վիճակագրությունը վկայում է, որ Կոմիտեն չի գտնվում ամենապահանջված պետական մարմինների շարքում: https://e-request.am/hy/statistics Բացի այդ, «Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան» հիմնադրամի կողմից ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ իրականացված Հայաստանի բարեվարքության ծրագրի շրջանակներում իրականացվել է «Հայաստանում կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրություն - 2022», որի շրջանակում կատարված պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների հակակոռուպցիոն գործունեության մասին իրազեկվածության առնչությամբ հարցման արդյունքները ցույց են տվել, որ հարցվածների 44.1 %-ը հակակոռուպցիոն գործունեությամբ զբաղվող ոչ մի պետական մարմնի և հասարակական կազմակերպության ընդհանրապես չգիտի: https://www.crrc.am/wp-content/uploads/2022/11/Corruption-in-Armenia_Arm_v2.pdf ԹԻՀԿ հարցմանն ի պատասխան՝ Հակակոռուպցիոն կոմիտեն նշել է, որ Կոմիտեի կողմից կայացրած որոշումների, եզրակացությունների, ինչպես նաև իրավասու մարմիններին ներկայացրած առաջարկությունների և դրանց քննարկման արդյունքների վերաբերյալ արձագանքման մեխանիզմների վերաբերյալ առանձնացված հաշվառում չի իրականացվում: Հակակոռուպցիոն կոմիտեին ներկայացված հանրության բոլոր հարցումներին (ստացված հասարակական կազմակերպություններից, ֆիզիկական և իրավաբանական

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							անձանցից, փաստաբաններից և այլն) պատասխաններ են տրվել գրավոր եղանակով: 2022 թ. ընթացքում ստացվել և պատասխանվել է 6 հարցման/գրության, 2023 թ. ընթացքում ստացվել և պատասխանվել է 21 հարցման/գրության: Ինչպես վկայում են փորձագետների հետ հարցազրույցները, *«Մենք նույնիսկ գործ ունենք Հակակոռուպցիոն կոմիտեի դեմ վարչական դատարանում, երբ նրանք տեղեկատվություն չեն տրամադրել շատ հնչեղ կոռուպցիոն գործերով կարճման վարույթների որոշումների մասով, հղում անելով անձնական տեղեկատվության պաշտպանության անհրաժեշտությանը: Մենք էլ պնդում ենք, որ դրանք հասարակ գործեր չեն, այլ բարձր հնչեղություն ունեցող կոռուպցիոն գործեր են, և Հակակոռուպցիոն կոմիտեն է հայտարարություն տարածել առ այն, որ այս ինչ փաստերի հիման վրա քննվում են կոռուպցիոն գործեր Հակակոռուպցիոն կոմիտեում, և մի քանի ամիս հետո մենք հարցում ենք անում ու պարզում ենք, որ այդ գործերը կարճվել են: Ընդ որում, որ հարցնում ենք, առավելագույնը ինչ ասում են՝ դա հանցակազմի բացակայության հիմքով է կարճվել: Բայց այդ հանցակազմի մեջ մտնում է չորս տարր, այս չորս տարրերը ունեն իրենց հատկանիշները, ինչը շատ լայն մեկնաբանման հիմքեր է տալիս: Իրենց թվում է, որ եթե նշում են հանցակազմի բացակայության հիմքը՝ որպես կարճման հիմք, դա բավարար պետք է լինի: Բայց դա բավարար չէ իրականում, նամանավանդ երբ խոսքը գնում է հանրային միջոցների յուրացման մասին կամ այլ այդ տեսակի հանցանքների մասին»*:
20.	Արտաքին վերահսկողության մեխանիզմներ	Հակակոռուպցիոն կոմիտեի տարեկան հաշվետվություն	Հակակոռուպցիոն կոմիտեն հաշվետու է Գործադիրին՝	Հակակոռուպցիոն կոմիտեն հաշվետու է վերահսկիչ	Հակակոռուպցիոն կոմիտեն ունի վերահսկողությ	Ցածր	ՀՀ Սահմանադրության համաձայն՝ Հակակոռուպցիոն կոմիտեն՝ որպես քննչական մարմին, հանդիսանում է սահմանադրական կարգավիճակ ունեցող պետական մարմին: ՀՀ Սահմանադրության 178-րդ հոդվածի

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
		ն և կայք, հարցազրույցներ Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, բարեվարքության հարցերով զբաղվող այլ մարմինների, ՔՀԿ-ների ղեկավարների հետ, մամուլի հաղորդումներ	առանց որևէ վերահսկիչ հանձնաժողովի	հանձնաժողով(ներ)ին, որոնց անդամ են Խորհրդարանի պատգամավորները և (կամ) ավագ քաղծառայողները, սակայն հանձնաժողովն այնքան էլ արդյունավետ չի գործում և (կամ) առկա են սակավաթիվ լրացուցիչ վերահսկողության մեխանիզմներ	ան մեխանիզմների համապարփակ փաթեթ, այդ թվում՝ արդյունավետ վերահսկողական հանձնաժողով(ներ)՝ Խորհրդարանի պատգամավորների, ավագ քաղծառայողների և հայտնի քաղաքացիների գործուն մասնակցությամբ		համաձայն՝ քննչական մարմինների կարգավիճակը, լիազորությունները, կազմավորման և գործունեության կարգը սահմանվում են օրենքով: «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի հոդված 7-ով կարգավորվում Հակակոռուպցիոն կոմիտեի տարեկան գործունեության հաղորդումների գրավոր եղանակով ներկայացումը ՀՀ կառավարությանը և Ազգային ժողովին: https://www.arlis.am/documentview.aspx?docid=195944 Մինչդեռ, «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքով, ԱԺ-ի կողմից քննչական մարմինների գործունեության ուղղակի վերահսկողություն չի իրականացվում՝ բացառությամբ այս կամ այն օրենսդրական նախաձեռնություններով կամ խորհրդարանական լսումների մեխանիզմով Կոմիտեին վերաբերելի հարցերով քննարկումների կազմակերպումը: Հակակոռուպցիոն կոմիտեի ամենամյա գործունեության նկատմամբ վերահսկողությունը կարող է իրականացվել ՀՀ հաշվեքննիչ պալատի միջոցով, Կառավարությանը և Ազգային ժողովին ամենամյա հաղորդումների ներկայացման ենթատեքստում: Հարկ է նշել, որ 2024 թ. դեկտեմբերի 4-ին ընդունված օրենսդրական փոփոխություններով՝ 2025 թ.-ից սկսած Ազգային ժողովի նիստում հակակոռուպցիոն կոմիտեի նախորդ տարվա գործունեության մասին հաղորդումը քննարկվելու է «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 126-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով՝ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի ներկայացմամբ: https://www.arlis.am/documentview.aspx?docid=200924 «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքով հաշվեքննիչ պալատին վերապահված են հանրային ֆինանսների և
			Ուղղորդում: Այս ցուցանիշը գնահատում է Հակակոռուպցիոն կոմիտեի արտաքին վերահսկողության մեխանիզմների ուժը՝ որպես ամբողջություն՝ հատուկ ուշադրություն դարձնելով Հակակոռուպցիոն կոմիտեի վերահսկողական հանձնաժողով(ներ)ին: Պետք է նկարագրել Հակակոռուպցիոն կոմիտեի վերահսկողական հանձնաժողովների թիվը և կազմը՝ գնահատելու այս հանձնաժողովներում հանրության ներկայացվածության և մասնակցության աստիճանը: Արդյունավետ գործող հանձնաժողովը պահանջում է ուսումնասիրության գործընթաց և				

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
			հանձնաժողովի առաջարկություններին հետամուտ լինելու մեխանիզմներ: Եթե Հակակոռուպցիոն կոմիտեն չունի վերահսկողական հանձնաժողով, ապա բացատրել, թե ինչու է դա այդպես: Նաև նկարագրել, թե վերահսկողության ինչպիսի լրացուցիչ մեխանիզմներ են գործում (օրինակ, կանոնավոր հաշվետվություններ ներկայացնել Խորհրդարանին, արտաքին աուդիտ, դատական ստուգում): Եթե Հակակոռուպցիոն կոմիտեն ենթակա է Աուդիտի գերագույն մարմնի (ՀՀ Հաշվեքննիչ պալատի) կողմից, ապա պետք է տրամադրվեն նաև 2021-2023 թվականների ընթացքում բացասական աուդիտի հուշագրերի կամ դիտարկումների քանակը և մանրամասները:				սեփականության ոլորտում հաշվեքննության իրականացման պետական բյուջեի և համայնքային բյուջեների միջոցների, ստացված փոխառությունների ու վարկերի, պետական և համայնքային սեփականության օգտագործման օրինականության և արդյունավետության նկատմամբ ստուգումների իրականացման լիազորությունները: ՀՀ հաշվեքննիչ պալատի գործունեության 2021, 2022 և 2023 թվականների տարեկան ծրագրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության հաշվեքննությունը ներառված չի եղել Հաշվեքննիչ պալատի տարեկան ծրագրում: http://armsai.am/hy/annual-program ՀՀ վարչապետին ենթակա վերահսկողական ծառայությունը, «Պետական վերահսկողական ծառայության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն, իրավասու է վերահսկողություն իրականացնելու Կառավարության որոշումների, վարչապետի որոշումների և հանձնարարականների, Կառավարության գործունեության միջոցառումների ծրագրերի, այդ թվում՝ հակակոռուպցիոն ծրագրերի ու միջոցառումների կատարման նկատմամբ: https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=120947 ՀՀ պետական վերահսկողական ծառայությունը, համաձայն մարմնի կայքի, Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից հակակոռուպցիոն ծրագրերի ու միջոցառումների իրականացման և գործունեության նկատմամբ ուսումնասիրություններ կամ ստուգումներ չի իրականացրել: Համաձայն Հակակոռուպցիոն կոմիտեին ԹԻՀԿ հարցման արդյունքների՝ «2021, 2022 և 2023 թթ. ընթացքում ՀՀ Հաշվեքննիչ պալատի կողմից Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության ուսումնասիրություն չի իրականացվել:

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							Պետական վերահսկողական ծառայության մասին ՀՀ օրենքով ՀՀ վարչապետին ենթակա վերահսկողական ծառայության կողմից Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության ուսումնասիրություն չի իրականացվել»: Փորձագետների կարծիքով «*Պարզվում է, որ Հաշվեքննիչ պալատն աշխատում է ռիսկերի վրա հիմնված մեթոդիկայով, իսկ Հակակոռուպցիոն կոմիտեն կամ ԿԿՀ-ն շատ փոքր բյուջեներ ունեն և Հաշվեքննիչ պալատի համար դրանք ռիսկային չեն և ընդհանրապես հետաքրքրություն չեն ներկայացնում: Այսինքն այստեղ լուրջ ծախսեր առկա չեն, որ Հաշվեքննիչ պալատը դրանց հետևից գնա»:*
21.	Ներքին վերահսկողության մեխանիզմներ	Հակակոռուպցիոն կոմիտեի տարեկան հաշվետվություն և կայք, հարցազրույցներ Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց հետ	Հակակոռուպցիոն կոմիտեն ունի ներքին մոնիտորինգի և վերահսկողության թույլ մեխանիզմներ կամ ամենևին չունի	Հակակոռուպցիոն կոմիտեն ունի ներքին մոնիտորինգի և վերահսկողության որոշ մեխանիզմներ, բայց՝ կարևոր բացերով	Հակակոռուպցիոն կոմիտեն ունի ներքին մոնիտորինգի և վերահսկողության մեխանիզմների համակողմանի լրակազմ	Միջին	Պետական մարմիններում ներքին վերահսկողության համակարգերի օրենսդրական կարգավորումները սահմանված են «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին», «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքներով, ինչպես նաև տվյալ մարմնի կանոնադրությամբ: «Կառավարչական իրավահարաբերությունների մասին» ՀՀ օրենքի հոդված 9-ը սահմանում է, որ ինքնավար և անկախ պետական մարմինների մասով «պետական մարմնի և ենթակա պետական մարմնի գործունեության վերահսկողությունը իրականացնում են հենց ինքնավար և անկախ մարմինները»: arlis.am/DocumentView.aspx?docid=171966 «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի հոդված 5-ով անկախ պետական մարմիններում և ինքնավար մարմիններում ներքին աուդիտի համակարգը գործում է այդ կոլեգիալ մարմնի ենթակայությամբ: https://www.arlis.am/documentview.aspx?docid=193792 Այսպես, Հակակոռուպցիոն կոմիտեի ներքին վերահսկողության մեխանիզմները սահմանվում են Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից: Հակակոռուպցիոն
			Ուղղորդում: Նկարագրել Հակակոռուպցիոն կոմիտեի ներքին վերահսկողության գործընթացները, ներառյալ՝ Հակակոռուպցիոն կոմիտեն ունի՞ արդյոք կազմակերպության կառավարման ծրագիր (կորպորատիվ պլան), «Մոնիտորինգի և գնահատման» շրջանակ և կատարողականի գնահատման մեխանիզմներ, չափանիշներ: Հակակոռուպցիոն կոմիտեն հավաքո՞ւմ է արդյոք կատարողականի վերաբերյալ հանրային ընկալման տվյալներ:				

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
			Հնարավորության սահմաններում պարզել, թե նշված տվյալները օգտագործվո՞ւմ են արդյոք Հակակոռուպցիոն կոմիտեի կարողությունների զարգացման և իրազեկման գործընթացներում:				կոմիտեի կայքում բացակայում է Կոմիտեի ռազմավարական պլանի վերաբերյալ փաստաթղթի առկայությունը: https://anticorruption.am/hy/pages/show/legislation Համաձայն ԹԻՀԿ-ի հարցմանն ի պատասխան՝ Հակակոռուպցիոն կոմիտեից հայտնել են, որ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի 2022 թ. փետրվարի 4-ի N 02-Լ հրամանով հաստատվել է Կոմիտեի ներքին կարգապահական կանոնները հաստատելու մասին փաստաթուղթը: Հակակոռուպցիոն կոմիտեի կանոնադրությամբ սահմանվում է, որ Հակակոռուպցիոն կոմիտեն ունի ներքին աուդիտի բաժին: Ներքին աուդիտի բաժնի գործառույթները նույնպես սահմանված են Հակակոռուպցիոն կոմիտեի կանոնադրությամբ:https://www.anticorruption.am/public/uploads/files/file-plv0g9Xv5V.pdf Հակակոռուպցիոն կոմիտեի կայքում ոչ մի տվյալ չկա ներքին աուդիտի առկայության և 2021-2023 թթ. ընթացքում իրականացված ներքին աուդիտի գնահատման հաշվետվությունների մասին: ԹԻՀԿ կողմից Կոմիտեի հարցման արդյունքների համաձայն՝ «Ներքին աուդիտն իրականացվում է Հակակոռուպցիոն կոմիտեի ստորաբաժանման միջոցով, եռամսյակային ուսումնասիրությամբ, որոնց վերաբերյալ տրված հաշվետվություններով արդյունքները գնահատվել են դրական»: Ընդ որում, ըստ հարցման արդյունքների, ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում առանձին ռազմավարական ծրագիր առկա չէ: Գործում է ընդհանուր՝ ՀՀ կառավարության կողմից 2023 թ. հոկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» N 1871-Լ որոշումը:

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
22.	Գործընթացների պատշաճ պահպանում	Հակակոռուպցիոն կոմիտեի հանրային ընկալումների հետազոտություն (եթե առկա է), լրատվամիջոցների հաղորդումներ, հարցազրույցներ Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, ՔՀԿ-ների ղեկավարների, կոռուպցիայի դեմ պայքարի փորձագետների, լրագրողների և, եթե հնարավոր է, Հակակոռուպցիոն կոմիտեի հետ անմիջական շփումներ	Վստահության ցածր մակարդակ, ինչն արտացոլված է հարցման արդյունքներում (50 %-ից ցածր) և Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, ՔՀԿ-ների ղեկավարների, լրագրողների և, հնարավորության դեպքում, Հակակոռուպցիոն կոմիտեի հետ անմիջական շփում ունեցող անձանց տեսակետներում	Վստահության միջին մակարդակ, ինչն արտացոլված է հարցման արդյունքներում (50-75 %) և Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, ՔՀԿ-ների ղեկավարների, լրագրողների և, հնարավորության դեպքում, Հակակոռուպցիոն կոմիտեի հետ անմիջական շփում ունեցող անձանց տեսակետներում	Վստահության բարձր մակարդակ, ինչն արտացոլված է հարցման արդյունքներում (75 %-ից բարձր) և Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, ՔՀԿ-ների ղեկավարների, լրագրողների և, հնարավորության դեպքում, Հակակոռուպցիոն կոմիտեի հետ անմիջական շփում ունեցող անձանց տեսակետներում	Միջին	2022 թ.-ին «Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան» հիմնադրամի կողմից ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ իրականացված «Հայաստանում կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրություն - 2022» զեկույցի համաձայն՝ պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների հակակոռուպցիոն գործունեության մասին իրազեկվածության առնչությամբ հարցման արդյունքները ցույց են տվել, որ հարցվածների 44.1 %-ը հակակոռուպցիոն գործունեությամբ զբաղվող ոչ մի պետական մարմնի և հասարակական կազմակերպության ընդհանրապես չգիտի, 20.7 %-ը դժվարացել է պատասխանել այդ հարցին, իսկ 0.3 %-ը հրաժարվել է պատասխանել (ընդհանուր առմամբ՝ 65.1 %): Միևնույն ժամանակ, Հակակոռուպցիոն կոմիտեից հայտնել են, որ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի կողմից հանրային ընկալումների վերաբերյալ հարցումներ դեռևս չեն անցկացվել: Ընդհանուր առմամբ, Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության վերաբերյալ հանրության տեղեկացվածության մակարդակը բավականին ցածր է, հանրության կապը Հակակոռուպցիոն կոմիտեի հետ գրեթե բացակայում է: Քրեական վարույթների ներքո գտնվող անձանց հանդեպ կիրառվող ընթացակարգերի պատշաճ պահպանման մասով գործնականում գնահատման օրինակները բացակայում են: Փորձագետների կարծիքով *«Հակակոռուպցիոն կոմիտեն շատ անձնավորված է: Նամանավանդ Արթուր Վանեցյանի և Սասուն Խաչատրյանի միջև հեռախոսապանգի հրապարակումից հետո մարդիկ իմացան, որ կա այդպիսի*
			Ուղղորդում: Այս ցուցանիշը գնահատում է հանրության վստահությունը Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից իր լիազորություններն				

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
		ունեցող անձանց հետ	օգտագործելիս և վարույթների ներքո գտնվող անձանց հանդեպ կիրառվող ընթացակարգերի պատշաճ պահպանման, անկողմնակալության և արդարացիության վերաբերմունքի մեջ: Գնահատումը հնարավորինս պետք է հիմնված լինի գլխավորապես հետազոտության արդյունքների վրա, ինչպես նաև լրացվի Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, ՔՀԿ ղեկավարների, դոնոր կազմակերպությունների ներկայացուցիչների, կոռուպցիայի դեմ պայքարի փորձագետների և լրագրողների հետ հարցազրույցներով: Պետք է տրամադրվի հարցման մասնակիցների բնութագիրը՝ ըստ տարիքի, սեռի, զբաղմունքի և կրթական որակավորման: Եթե Հակակոռուպցիոն կոմիտեն իրականացրել կամ պատվիրել է հանրային ընկալումների հարցումներ, հետազոտողը պետք է Հակակոռուպցիոն կոմիտեից խնդրի այդ հարցումների հաշվետվությունները:				*ֆիգուրա, որը խիստ ասոցացվում է Նիկոլ Փաշինյանի հետ: Այսինքն որպես առանձին կառույց՝ ժողովուրդը այդքան իրազեկվածություն չունի այս կամ այն քննչական մարմինը մյուսից ինչով է տարբերվում, կա ընդհանուր հետապնդման մարմին»: «Հաճախ հեռախոսապանգերին պատասխանելիս ուղղորդում ենք նշված խնդրով կանգահարել Հակակոռուպցիոն կոմիտե, քանի որ պարունակում է կոռուպցիոն հանցագործության մասին տեղեկություններ, իսկ դիմողներն հիմնականում նշում են, որ առաջին անգամ են լսում այդ մարմնի մասին, շփոթելով այն ԿԿՀ-ի հետ»:*
23.	Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության վերաբերյալ ազդարարողների, բողոք ներկայացնողների կողմից	Հակակոռուպցիոն կոմիտեի տարեկան հաշվետվություն և կայք, տվյալներ Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից ստացված բողոքների վերաբերյալ,	Ազդարարողների, բողոքողների փոքր մասնաբաժինն է իրեն վստահ զգում իր ինքնությունը բացահայտելու հարցում (25 %-ից պակաս)	Ազդարարողների, բողոքողների միջին մասնաբաժին է իրեն վստահ զգում իր ինքնությունը բացահայտելու հարցում (25-50 %)	Ազդարարողների, բողոքողների խոշոր մասնաբաժին է իրեն վստահ զգում իր ինքնությունը բացահայտելու հարցում (50 %-ից ավելի)	Միջին	ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում առկա է azdararir.am հավելվածը, որով ստացված անանուն հաղորդումները անմիջականորեն հասցեագրվում են ՀՀ գլխավոր դատախազությանը, որից հետո նոր ուղարկվում է ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե: Համաձայն Հակակոռուպցիոն կոմիտեի հարցման արդյունքների՝ «Ինչ վերաբերում է անանուն հաղորդումներին՝ հայտնում ենք, որ 2021 և 2022 թվականներին նման հաշվառում չի վարվել, իսկ 2023 թ. ընթացքում ՀՀ Հակակոռուպցիոն կոմիտեի Օպերատիվ-հետախուզական վարչություն ՀՀ գլխավոր դատախազությունից ստացվել է 2 ազդարարման վարույթ,

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
	իրենց ինքնությունը բացահայտելու պատրաստակամությունը	հարցազրույցներ Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, ՔՀԿ-ների ղեկավարների, դոնոր կազմակերպությունների հետ, մամուլի հաղորդումներ	*Ուղղորդում*: Այս ցուցանիշը գնահատում է ազդարարողների, բողոքողների՝ իրենց ինքնությունը Հակակոռուպցիոն կոմիտեին բացահայտելու պատրաստակամությունը: Որպես ազդարարողներ՝ իրենց ինքնությունը բացահայտելու պատրաստակամության գնահատման ցուցանիշը հանդիսանում է Հակակոռուպցիոն կոմիտեի գործընթացների հանդեպ նրանց վստահության ցուցանիշը: Այն չափվում է՝ ստորագրված գրավոր բողոքների և անանուն բողոքների թիվը 2021-2023 թվականների ընթացքում համադրելով ստացված բողոքների ընդհանուր թվի հետ: Եթե Հակակոռուպցիոն կոմիտեն պաշտպանություն է տրամադրում ազդարարողներին, ապա պետք է նկարագրվեն նման պաշտպանության մանրամասները, եթե հնարավոր է, կոնկրետ օրինակներով:				որոնք «Օպերատիվ հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1.1 կետի համաձայն, ստուգվել են և ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված որևէ արարք կատարելու վերաբերյալ փաստական տվյալներ չստացվելու հիմքով ստուգումները դադարեցվել են»: Համաձայն ՀՀ գլխավոր դատախազություն ԹԻՀԿ հարցման արդյունքների՝ «2021-2023 ընթացքում կոռուպցիոն հանցագործությունների մասին միասնական էլեկտրոնային ազդարարման հարթակի միջոցով 2022 թ.-ին ստացվել է և ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեին է հասցեագրվել 1, իսկ 2023 թ.-ին՝ 9 հաղորդում: Բացի այդ, միասնական էլեկտրոնային ազդարարման հարթակի միջոցով ստացված և ՀՀ ոստիկանության ՔՈԳՎ հասցեագրված 3-ական հաղորդումներ, ինչպես նաև 2023 թ.-ին ստացված ևս 4 հաղորդումներ ՀՀ ոստիկանության ՔՈԳՎ հասցեագրվելուց հետո ուղարկվել են ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե»: Նկատի ունենալով, որ անանուն ազդարարման ինստիտուտը Հակակոռուպցիոն կոմիտեում գործնականում 2021 և 2022 թ.-ին չի կիրառվել և Դատախազությունից համանման հաղորդումներ Հակակոռուպցիոն կոմիտեին չեն փոխանցվել՝ հետևաբար ազդարարողների ինքնությունը բացահայտելու պատրաստակամության աստիճանը հնարավոր չէ գնահատել:
24.	Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի նկատմամբ	Հակակոռուպցիոն կոմիտեի տարեկան հաշվետվությունն և կայք, հարցազրույցներ	Բողոքները Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի դեմ անտեսվում են և (կամ) չեն քննվում առանց	Բողոքները Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի դեմ քննվում են ներքին վերահսկման	Բողոքները Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի դեմ քննվում են մեկ այլ պետական	Միջին	«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի հոդված 32-ով սահմանված են Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը: Դրանք են՝ Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի վարքագծի կանոնները խախտելը, իր պարտականությունները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, աշխատանքային ներքին կարգապահական

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
	բողոքների քննությունը	Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, ՔՀԿ-ների ղեկավարների հետ, մամուլի հաղորդումներ	որևէ բացատրության	ստորաբաժանման կողմից	մարմնի կողմից՝ շահերի բախումից խուսափելու նպատակով		կանոնները պարբերաբար խախտելը, օրենքով սահմանված սահմանափակումները կամ անհամատեղելիության կամ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածով սահմանված շահերի բախմանն առնչվող պահանջները չպահպանելը, առաքինության ստուգման բացասական արդյունքները, հակակոռուպցիոն կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի կողմից այնպիսի վարքագիծ դրսևորելը կամ գույքային դրության առնչությամբ այնպիսի անհամապատասխանությունը, որը հանգեցրել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով խորհրդատվական բնույթի բացասական եզրակացություն տրամադրելուն: Կարգապահական խախտման ծանրությունից ելնելով՝ Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի նկատմամբ կարող են կիրառվել հետևյալ կարգապահական տույժերը՝ զգուշացում, նկատողություն, խիստ նկատողություն, դասային աստիճանի իջեցում՝ մեկ աստիճանով, պաշտոնի իջեցում՝ մեկ աստիճանով, պաշտոնից ազատում: Հակակոռուպցիոն կոմիտեում ծառայողի նկատմամբ կարգապահական տույժերը կիրառում է նրան պաշտոնում նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը, այսինքն՝ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը: Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի նկատմամբ իրականացվում է ծառայողական քննություն, որի փուլերն են նախնական ուսումնասիրությունը և կարգապահական վարույթը: Կարգապահական խախտման փաստի առթիվ Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի նկատմամբ ծառայողական քննություն հարուցվում է կարգապահական հանձնաժողովի որոշմամբ:
			Ուղղորդում: Այս ցուցանիշը գնահատում է Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի գործունեության դեմ բողոքների քննության ընթացակարգի արդյունավետությունը: Եթե առկա է, Հակակոռուպցիոն կոմիտեից պետք է ձեռք բերել բողոքողների բնութագիրը, ներառյալ նրանց սեռը, տարիքը, զբաղմունքը և կրթական որակավորումները:				

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							Հակակոռուպցիոն կոմիտեում ծառայողական քննություն իրականացնելու կարգը (https://anticorruption.am/public/uploads/files/file-4LDhSFrRTy.pdf), ներառյալ կարգապահական հանձնաժողովի աշխատակարգը (https://anticorruption.am/public/uploads/files/file-UT1ycXSpcT.pdf), կարգապահական հանձնաժողովի ներկայացմամբ սահմանում է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը: Հակակոռուպցիոն կոմիտեի 2021, 2022 և 2023 թվականների ամենամյա հաղորդումները ոչ մի տվյալ չեն պարունակում Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի նկատմամբ բողոքների թվի, դրանց քննության, արդյունքում կիրառված պատասխանատվության՝ այդ թվում կարգապահական, միջոցների կիրառման վերաբերյալ: https://anticorruption.am/hy/pages/show/report Համաձայն Հակակոռուպցիոն կոմիտեին ԹԻՀԿ հարցման արդյունքների՝ Կոմիտեն հայտնել է, որ անձնակազմի դեմ ուղղված բողոքներ (խոսքը վերաբերում է ոչ դատավարական ընթացակարգով ներկայացված բողոքներին) 2021-2023 թվականների ընթացքում չեն եղել:
25.	Բողոքների արդյունքները	Հակակոռուպցիոն կոմիտեի տարեկան հաշվետվություն և կայք, հարցազրույցներ Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի ղեկավար	Բողոքները Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի դեմ անտեսվում են և ամենևին չեն քննվում	Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի դեմ որոշ հիմնավոր բողոքներ հանգեցնում են պատժի կամ պատասխան	Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի դեմ բոլոր հիմնավոր բողոքները հանգեցնում են պատժի կամ պատասխան ատվության	Միջին	Հակակոռուպցիոն կոմիտեի 2021, 2022 և 2023 թվականների ամենամյա հաղորդումները ոչ մի տվյալ չեն պարունակում Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի նկատմամբ բողոքների թվի, դրանց քննության, արդյունքում կիրառված պատասխանատվության, այդ թվում՝ կարգապահական, միջոցների կիրառման վերաբերյալ: https://anticorruption.am/hy/pages/show/report Համաձայն ԹԻՀԿ հարցման արդյունքների՝ 2021-2022 թթ. ընթացքում ինչպես ինքնավար պաշտոններ զբաղեցնող, օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող ստորաբաժանման ծառայողների, այնպես էլ

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
		պաշտոն զբաղեցնող անձանց, ՔՀԿ-ների ղեկավարների, կոռուպցիայի դեմ պայքարի փորձագետների հետ, մամուլի հաղորդումներ		ատվության այլ միջոցների	այլ միջոցների և հրապարակվում են նրա տարեկան զեկույցում		քաղաքացիական ծառայողների վերաբերյալ բողոքներ չեն եղել և ծառայողական քննություն չի իրականացվել: 2023 թ.-ին ինքնավար պաշտոններ զբաղեցնող ծառայողների և քաղաքացիական ծառայողների վերաբերյալ բողոքներ չեն եղել, և ծառայողական քննություն չի իրականացվել: Օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող մեկ ծառայողի նկատմամբ իրականացված նախնական ուսումնասիրության արդյունքներով հաստատվել է ծառայողի կողմից «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված կարգապահական պատասխանատվության համար հիմք հանդիսացող կարգապահական խախտման դեպքը, և վերջինիս նկատմամբ նշանակվել է կարգապահական տույժ:
			Ուղղորդում: Այս ցուցանիշը գնահատում է Հակակոռուպցիոն կոմիտեի և նրա անձնակազմի դեմ բողոքների արդյունքները 2021-2023 թվականների ընթացքում: Պետք է ներկայացվի սխալ վարքագծի համար Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի դեմ ներկայացված հիմնավոր բողոքների քանակը՝ նշանակված պատժի մանրամասների հետ միասին: Եթե միայն որոշ հիմնավոր բողոքներ են հանգեցնում պատժի նշանակման, կամ եթե բողոքներն անտեսվում են Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից, պետք է բացատրություն խնդրել Հակակոռուպցիոն կոմիտեի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանցից կամ այլ պետական մարմիններից, որոնք լիազորված են կամ իրավասու են Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի վարքագծի նկատմամբ միջոցներ ձեռնարկելու համար:				
26.	Բարեվարքության ներքին մեխանիզմներ		Հակակոռուպցիոն կոմիտեն չունի վարքագծի կանոններ կամ ներքին կարգապահական	Հակակոռուպցիոն կոմիտեն ունի վարքագծի կանոններ և ներքին կարգապահական	Հակակոռուպցիոն կոմիտեն ունի համակողմանի վարքագծի կանոններ և կարգապահական	Միջին	«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածով սահմանված է, որ Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի վարքագծի կանոնները սահմանում է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի սահմանած տիպային կանոնների հիման վրա: ԿԿՀ-ի կողմից հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնները սահմանվել են 2022 թ. հունիսի 17-ին:

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
			ընթացակարգեր կամ դրանք շատ թույլ են և (կամ) գործնականում չեն կիրառվում	ընթացակարգեր, սակայն դրանք համապարփակ և (կամ) հետևողական որեն չեն կիրառվում	ընթացակարգեր, որոնք կիրառվում են արդարացիորեն և հետևողական որեն		https://www.arlis.am/documentview.aspx?docID=164523 Հիմք ընդունելով վերոնշյալ իրավական ակտերը՝ 2023 թ. հունիսի 6-ին Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի թիվ 30-Լ հրամանով սահմանվել են Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի վարքագծի կանոնները: https://anticorruption.am/public/uploads/files/file-BaowEMzCK8.PDF Քաղաքացիական ծառայողների վարքագծի կանոնները հաստատված են քաղաքացիական ծառայությունը համակարգող փոխվարչապետի կողմից: https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=169106 Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի բարեվարքության պահանջները, շահերի բախման կառավարումը, նվերների ընդունման արգելքը սահմանված են Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի վարքագծի կանոններով: Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի նկատմամբ վարքագծի կանոնների խախտումների քննությունն ու լուծումը իրականացնում է կարգապահական հանձնաժողովը, որը բաղկացած է 8 անդամից: Կարգապահական հանձնաժողովի անդամների գործառույթներն իրականացնելու առնչությամբ որևէ միջամտություն արգելվում է օրենքով: «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի հոդված 34.1-ով սահմանվում է կարգապահական հանձնաժողովի անդամների անկախության սկզբունքը: Հակակոռուպցիոն կոմիտեի ստորաբաժանումների քաղաքացիական ծառայողների վարքագծի կանոնների խախտումների ընթացակարգերը սահմանված են «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքով՝ էլեկտրոնային հարթակում ձևավորվող էթիկայի հանձնաժողովի կողմից: Քաղաքացիական ծառայության և Հակակոռուպցիոն կոմիտեի կայքերում բացակայում է որևէ
			Ուղղորդում: Այս ցուցանիշը գնահատում է Հակակոռուպցիոն կոմիտեի վարքագծի կանոնների ամբողջականությունը (օրինակ, գույքի հայտարարագրերը և շահերի բախման կանոնները, նվերների և հյուրասիրության, հետաշխատանքային սահմանափակումները), և վարքագծի կանոնների և սահմանափակումների խախտումների վերացման գործնականում կիրառելի ընթացակարգերը, ինչպես նաև ներքին բողոքների քննությունը:				

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							տեղեկություն Հակակոռուպցիոն կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանումների քաղաքացիական ծառայողների կողմից վարքագծի կանոնների, անհամատեղելիության պահանջների, այլ սահմանափակումների, շահերի բախման իրավիճակների քննության և եզրակացություն կայացնելու մասին: Հայտարարագրման մասով «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի հոդված 34-ում սահմանվում է, որ հայտարարագրման պարտականություն ունեն պետական պաշտոն զբաղեցնող անձինք, պետական հայեցողական պաշտոն զբաղեցնող անձինք, ինչպես նաև քաղաքացիական ծառայության ղեկավար խմբի 1 և 2 ենթախմբի պաշտոն զբաղեցնող անձինք: Այսպես, Հակակոռուպցիոն կոմիտեում հայտարարագրման պարտականություն ունեն ինքնավար պաշտոն զբաղեցնող անձինք, հայեցողական պաշտոն զբաղեցնող անձինք, ինչպես նաև Հակակոռուպցիոն կոմիտեի գլխավոր քարտուղարը և նրա տեղակալը: https://www.arlis.am/documentview.aspx?docID=120832 Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների բարեվարքության մեխանիզմների կիրարկման տեսանկյունից գործնականում ոչ մի գործընթաց չի իրականացվել: Համաձայն Հակակոռուպցիոն կոմիտեին ԹԻՀԿ հարցման արդյունքների՝ 2021, 2022 և 2023 թթ. ընթացքում Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի աշխատակիցների կողմից վարքագծի կանոնների, անհամատեղելիության պահանջների, նվերների ընդունման, այլ սահմանափակումների, շահերի բախման իրավիճակների արձանագրված դեպքեր չեն եղել: Բարեվարքության ներքին մեխանիզմների տեսանկյունից առավելապես կարևոր է Հակակոռուպցիոն կոմիտեի

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							ծառայողների առաքինությունը ստուգելու մեխանիզմը: «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով սահմանված է, որ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը իրավասու է ներքին անվտանգության ստորաբաժանման միջոցով իրականացնելու հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների առաքինության ստուգում, այդ թվում՝ պրովոկացիայի եղանակներով: Առաքինության ստուգման գործընթացը չպետք է խոչընդոտի հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների բնականոն գործունեությանը: Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների առաքինության ստուգման կարգը և պայմանները սահմանում է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը: Այնուամենայնիվ, Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների առաքինության ստուգման կարգը և պայմանները դեռևս ընդունված չեն, հետևապես առ այսօր որևէ ծառայող չի ենթարկվել առաքինության ստուգման: Փորձագետների կարծիքով *«Առաքինության ստուգումը շատ անտարբերության է մատնվել և օրենքի ընդունման օրվանից մինչ օրս կարգը չի ընդունվել: Այսինքն այս հարցն իրենց կողմից ձգձգվում է ու մինչ օրս կարգը հաստատված չէ, պատճառներն էլ հայտնի չեն»:*
	Հակակոռուպցիոն կոմիտեի հաշվետվողականության և ներքին բարեվարքության միավորի հանրագումարը					8/18=44.4 %	
	Հայտնաբերում, հետաքննություն և հետապնդում (9 ցուցանիշ)						
27.	Հասանելիությունը բողոքատուներին/տեղե	Հակակոռուպցիոն կոմիտեի տարեկան հաշվետվությու	Հակակոռուպցիոն կոմիտեն անհասանելի է, ինչն	Հակակոռուպցիոն կոմիտեն հասանելի է, ինչն	Հակակոռուպցիոն կոմիտեն ունի բարձր հասանելիությ	Բարձր	Հակակոռուպցիոն կոմիտեի հասանելիությունը բողոքատուներին/տեղեկատուներին /ազդարարումներին հաղորդակցման կապուղիների մասով Հակակոռուպցիոն կոմիտեի կայքից հնարավոր է տեղեկություն փոխանցել

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
	կատուների /ազդարարումներին	ն և կայք, տվյալներ Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից ստացած բողոքների վերաբերյալ, հարցազրույցներ Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, ՔՀԿ-ների ղեկավարների, դոնոր կազմակերպությունների հետ, մամուլի հաղորդումներ	արտացոլված է բնակչության և կոռուպցիայի ընկալման մակարդակի համեմատ կոռուպցիոն բողոքների վերաբերյալ ազդարարումների ցածր համամասնությամբ (տարեկան միջինը 1-ից պակաս բողոք 20 000 քաղաքացու հաշվով)	արտացոլված է բնակչության և կոռուպցիայի ընկալման մակարդակի համեմատ կոռուպցիոն բողոքների վերաբերյալ ազդարարումների միջին համամասնությամբ (տարեկան միջինը 1 բողոք 10 000 - 20 000 քաղաքացու հաշվով)	ուն, ինչն արտացոլված է բնակչության և կոռուպցիայի ընկալման մակարդակի համեմատ ստացված կոռուպցիոն բողոքների վերաբերյալ ազդարարումների բարձր համամասնությամբ (տարեկան միջինը 1-ից ավելի բողոք 10 000 քաղաքացու հաշվով)		Հակակոռուպցիոն կոմիտեի էլեկտրոնային հասցեին՝ press@anticorruption.am, կամ Կոմիտեի ֆեյսբուքյան էջին՝ https://www.facebook.com/profile.php?id=100074200721560 կամ էլ +374-11-900-035 հեռախոսահամարով կամ էլ գրավոր՝ Հակակոռուպցիոն կոմիտեի հասցեով առաքված նամակով (ք. Երևան, Վաղարշ Վաղարշյան 13ա): Քաղաքացիներից դիմումների ընդունման e-request համապետական կապուղու միջոցով հաղորդումներին հասանելիությունը իրականացվում է Հակակոռուպցիոն կոմիտեի էլեկտրոնային հասցեով: Կոմիտեն չունի թեժ գիծ, ինչպես նաև անանուն հաղորդումների ընդունման հնարավորություն: Հակակոռուպցիոն կոմիտեի կայքում առկա է հետադարձ կապի հնարավորություն: https://www.anticorruption.am/hy/contact ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում առկա է azdararir.am-ի հավելվածը, որով ստացված անանուն հաղորդումները անմիջականորեն հասցեագրվում են ՀՀ գլխավոր դատախազությանը, որից հետո նոր ուղարկվում է ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե: Համաձայն Հակակոռուպցիոն կոմիտեին ԹԻՀԿ հարցման արդյունքների՝ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում e-request.am հարթակի միջոցով ստացվում են բազմաթիվ դիմում-բողոքներ, սակայն դրանց վերաբերյալ առանձին հաշվառում չի իրականացվում՝ կապված դիմումի կամ բողոքի բովանդակությունից: Ինչ վերաբերում է անանուն հաղորդումներին՝ 2021 և 2022 թվականներին նման հաշվառում չի վարվել, իսկ 2023 թ. ընթացքում ՀՀ Հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական վարչություն ՀՀ գլխավոր դատախազությունից ստացվել է 2 ազդարարման վարույթ: Հակակոռուպցիոն կոմիտեի հասանելիությունը բողոքատուներին/տեղեկատուներին /ազդարարումներին
			Ուղղորդում: Այս ցուցանիշը գնահատում է Հակակոռուպցիոն կոմիտեի հասանելիությունը ազդարարումներին և (կամ) տեղեկատվություն հաղորդողներին, դիմումներին և բողոքներին 2021-2023 թվականների ընթացքում Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից ստացված կոռուպցիոն բողոքների վերաբերյալ տվյալների միջոցով: Այս ցուցանիշի գնահատումը պետք է կատարվի հավաքագրված տվյալները երկրի				

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
			բնակչության թվաքանակի մեջ կշռելու միջոցով: Առաջարկվող շեմերը պետք է դիտարկել երկրում կոռուպցիայի ընկալման մակարդակի համատեքստում՝ օգտագործելով այնպիսի տվյալներ, ինչպիսիք են ԹԻ-ի Կոռուպցիայի ընկալման համաթիվը և Կոռուպցիայի համաշխարհային բարոմետրը: Եթե կոռուպցիայի ընկալման մակարդակը հատկապես բարձր է, ապա պետք է համապատասխանաբար բարձրացվեն շեմերը, և ընդհակառակը, եթե երկրում կոռուպցիայի ընկալվող մակարդակը ցածր է: Առկայության դեպքում հետազոտողը պետք է Հակակոռուպցիոն կոմիտեից պահանջի այն անձանց վերաբերյալ տվյալներ, ովքեր տեղեկություններ են տրամադրել կամ բողոքներ ներկայացրել: Ազդարարողների, բողոքներ ներկայացնողների պրոֆիլների վերլուծությունը՝ ըստ նրանց տարիքի, սեռի և կրթության, ցույց կտա, թե որքանով են նրանք ներկայացնում ընդհանուր բնակչությանը: Հետազոտողը պետք է ներառի նաև ցանկացած տեղեկություն այն մասին, թե որքանով է ազդարարումների, բողոքների, դիմումների ներկայացման համակարգը/ընթացակարգը օգտագործողի համար հարմար կամ համարժեք:				ցուցանիշը հաշվարկվել է որպես Հակակոռուպցիոն կոմիտեին հասցեագրված բոլոր դիմումների, բողոքների ու հաղորդումների թվի հարաբերությունը ՀՀ բնակչության թվին՝ բազմապատկած 20,000-ով: ՀՀ բնակչության թվաքանակի մասին ՀՀ վիճակագրության պետական կոմիտեի հրապարակված տվյալներն են՝ 2021 թ.՝ 2,961,400, 2022 թ.՝ 2,977,100, 2023 թ.՝ 2,991,200: https://www.armstat.am/file/article/population_01_22.pdf https://armstat.am/file/article/population_01_01_23.pdf https://armstat.am/file/article/population_01_01_24.pdf 2021 թ. ընթացքում Հակակոռուպցիոն կոմիտեում ընթացք է տրվել 463 դիմումի, ուստի Հակակոռուպցիոն կոմիտեի հասանելիությունը ազդարարումներին կամ տեղեկատվություն հաղորդողներին, դիմումատուներին ու բողոքողներին ՀՀ 20 հազար բնակչի հաշվով 2021 թ.-ին կազմել է 3.12 (463/2,961,400*20,000): 2022 թ. ընթացքում քննարկվել և սահմանված կարգով ընթացք է տրվել 2611 դիմում-հաղորդման, իսկ հասանելիության մակարդակը 2022 թ.-ին կազմել է 17.5 (2611/2,977,100*20,000): 2023 թ. ընթացքում ստացված դիմում-հաղորդումների թիվը կազմել է 3,793, իսկ հասանելիության մակարդակը կազմել է՝ 2023 թ.-ին՝ 25.3 (3,793/2,991,200*20,000):
28.	Արձագանքողականությունը կոռուպցիայի առնչվող հաղորդումն	Հակակոռուպցիոն կոմիտեի տարեկան հաշվետվությունն և կայք, տվյալներ Հակակոռուպց	Հակակոռուպցիոն կոմիտեն արձագանքողական չէ, ինչն արտացոլված է 2021-2023 թվականների	Հակակոռուպցիոն կոմիտեն միջին չափով է արձագանքողական, ինչն արտացոլված	Հակակոռուպցիոն կոմիտեն ունի բարձր արձագանքողականություն, ինչն արտացոլված	Միջին	Հակակոռուպցիոն կոմիտեի 2021 թ. գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդման համաձայն՝ 2021 թ. հոկտեմբերի 23-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում Հակակոռուպցիոն կոմիտեում մուտքագրվել է 463 դիմում: Հաշվետու ժամանակահատվածում Հակակոռուպցիոն կոմիտեում նախապատրաստվել են 171 նյութեր:

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
	երին/բողոք ներին	իոն կոմիտեի կողմից կոռուպցիոն բողոքների/տեղեկությունների վերաբերյալ, հարցազրույցներ Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, ՔՀԿ-ների ղեկավարների, դոնոր կազմակերպությունների հետ, մամուլի հաղորդումներ	ընթացքում հետաքննված համապատասխան կոռուպցիոն բողոքների/տեղեկությունների ցածր համամասնությամբ (33 %-ից պակաս)	է 2021-2023 թվականների ընթացքում հետաքննված համապատասխան կոռուպցիոն բողոքների/տեղեկությունների միջին համամասնությամբ (33-66 %)	է 2021-2023 թվականների ընթացքում հետաքննված համապատասխան կոռուպցիոն բողոքների/տեղեկությունների բարձր համամասնությամբ (66 %-ից ավելի)		Ընդհանուր առմամբ, Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչների վարույթում քննվել է 280 քրեական գործ: Հիշյալ քրեական գործերից ավարտվել են 48-ը կամ 17.1 %-ը, որից 9 քրեական գործ 16 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: https://anticorruption.am/hy/pages/show/report ԹԻՀԿ հարցմանն ի պատասխան՝ Կոմիտեից նշել են, որ 2021 թ. հոկտեմբերի 23-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում քննարկվել և սահմանված կարգով ընթացք է տրվել 463 դիմումի, որից 104-ը սահմանված կարգով քննարկվել է, և դիմումատուին պատասխան է տրվել, 13-ով նախապատրաստվել են նյութեր, 1-ով հարուցվել է քրեական գործ, 14-ն ուղարկվել է այլ մարմինների քննարկմանը, 83-ով տրվել են պարզաբանումներ, 186-ը կցվել է քրեական գործերին կամ նյութերին, 49 դիմում մերժվել է: Մնացած դիմումները ևս ստացել են իրավական ակտերով սահմանված ընթացք: Հակակոռուպցիոն կոմիտեի 2022 թ. գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդման համաձայն՝ 2022 թ. ընթացքում քննարկվել և սահմանված կարգով ընթացք է տրվել 2611 դիմում-հաղորդման, նախապատրաստվել է 546 նյութ: Ընդհանուր առմամբ, 2022 թ. ընթացքում Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչների վարույթում քննվել է 1203 քրեական գործ (վարույթ), որոնցից ավարտվել են 264-ը կամ 22.0 %-ը: Նշված գործերից (վարույթներից) 97-ը 203 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: ԹԻՀԿ հարցման արդյունքներով՝ 2022 թ. ընթացքում քննարկվել և սահմանված կարգով ընթացք է տրվել 2611 դիմում-հաղորդման, որից 875-ը սահմանված կարգով քննարկվել է, և դիմումատուին պատասխան է տրվել, 40-ով նախապատրաստվել են նյութեր, 314-ով հարուցվել է
			Ուղղորդում: Այս ցուցանիշը գնահատում է 2021-2023 թվականների ընթացքում Հակակոռուպցիոն կոմիտեի արձագանքը կոռուպցիոն բողոքներին և ստացված տեղեկություններին: Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից կոռուպցիայի հետ կապված բողոքների թվի վերաբերյալ տվյալների համար նայել Հակակոռուպցիոն կոմիտեի տարեկան զեկույցը կամ պահանջել համապատասխան տեղեկատվություն Հակակոռուպցիոն կոմիտեից: Այնուհետև հաշվարկել 2021-2023 թվականների ընթացքում քննված բողոքների մասնաբաժինը, համանման տեսակի գծով Հակակոռուպցիոն կոմիտեին ներկայացված տեղեկություն ներկայացնողների, դիմումների, բողոքների ընդհանուր թվի մեջ: Պետք է նկատի ունենալ նաև, թե Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից առկա՞ է արդյոք վարույթներ ձեռնարկելու դժկամություն, և գործերի զգալի կուտակում, կամ			

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
			ժամկետների ձգձգում: Եթե այո, ապա նման որակական գործոններն ամենայն հավանականությամբ մատնանշում են ցածր միավոր:				քրեական գործ (նախաձեռնվել է քրեական վարույթ), 285-ով քրեական վարույթ չի նախաձեռնվել, 121-ն ուղարկվել է այլ մարմիններ՝ քննարկման, 894-ը կցվել է քրեական գործերին (վարույթներին) կամ նյութերին, 54-ի քննարկումը փոխանցվել է 2023 թվական: Մնացած դիմումները ևս ստացել են իրավական ակտերով սահմանված ընթացք: Հակակոռուպցիոն կոմիտեի 2023 թ. գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդման համաձայն՝ 2023 թ. ընթացքում քննարկվել և սահմանված կարգով ընթացք է տրվել 3793 դիմում-հաղորդման: Հարկ է նկատել, որ 2023 թ.-ին ստացված դիմում-հաղորդումների թիվը նախորդ՝ 2022 թ. համեմատությամբ աճել է 1182-ով (2022 թ.՝ 2611) կամ 45.3 %-ով, ինչը ևս վկայում է քաղաքացիների շրջանում Հակակոռուպցիոն կոմիտեի նկատմամբ վստահության աճի և միաժամանակ աշխատանքի ծանրաբեռնվածության ավելացման մասին: Ընդհանուր առմամբ, 2023 թ. ընթացքում Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչների վարույթում քննվել է 1801 քրեական վարույթ, որոնցից ավարտվել են 513-ը: Ավարտված վարույթներից 169-ը՝ 399 անձանց վերաբերյալ, մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: ԹԻՀԿ հարցման արդյունքներով 2023 թ. ընթացքում քննարկվել և սահմանված կարգով ընթացք է տրվել 3793 դիմում-հաղորդման, որից 641-ով նախաձեռնվել է քրեական վարույթ, 684-ով քրեական վարույթ չի նախաձեռնվել, 193-ը սահմանված կարգով քննարկվել, և դիմումատուին պատասխան է տրվել, 24-ն ուղարկվել է այլ մարմիններ քննարկման, 1493-ը կցվել է քրեական վարույթներին, 364-ը բավարարվել է, 156-ը մերժվել է, 47-ի քննարկումը փոխանցվել է 2024 թվական: Մնացած

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							դիմումները ևս ստացել են իրավական ակտերով սահմանված ընթացք: Այսպիսով, Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից հաղորդումների/բողոքների արձագանքողականությունը քանակական գնահատման տեսանկյունից 2021 թ. համար կազմում է 90.7 % (463-43=420/463), 2022 թ.-ին՝96.8 % (2611-82=2529/2611), 2023 թ.-ին՝ 93.7 % (3793-238=3555/3793): Միևնույն ժամանակ, ըստ փորձագետների, *«ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համաձայն առերևույթ հանցանքի մասին պատշաճ հաղորդում ստանալու յուրաքանչյուր դեպքում քննիչն անհապաղ, սակայն ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում կպմում է քրեական վարույթ նախաձեռնելու մասին արձանագրություն, իսկ դատախավը այն վերահասցեագրում է իրավասու քննչական մարմնի ղեկավարին՝ քրեական վարույթ նախաձեռնելու հարցը լուծելու համար: Հաշվի առնելով ստացված հաղորդումների քանակը և քննիչների ծանրաբեռնավածությունը՝ 24-ժամյա ժամկետը բավարար չէ հաղորդման մեջ նշված փաստերը պատշաճ ստուգելու համար: Արդյունքում՝ հաղորդումների նվազագույն ձևական պահանջները պահպանված լինելու դեպքում, քննիչները հիմնականում նախաձեռնում են քրեական վարույթը, ինչը իր հերթին քանակական առումով բարձրացնում է արձագանքողականության վիճակագրությունը»:*
29.	Նախաձեռնողական հետաքննություն	Հակակոռուպցիոն կոմիտեի տարեկան հաշվետվություն և կայք,	Հակակոռուպցիոն կոմիտեի նախաձեռնած կոռուպցիոն հետաքննությո	Հակակոռուպցիոն կոմիտեի նախաձեռնած կոռուպցիոն հետաքննությ	Հակակոռուպցիոն կոմիտեի նախաձեռնած կոռուպցիոն հետաքննությ	Բարձր	Հակակոռուպցիոն կոմիտեի 2021 թ. գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդման համաձայն՝ 2021 թ. հոկտեմբերի 23-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչների վարույթում քննվել է 280 քրեական գործ: Հիշյալ

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
		տվյալներ Հակակոռուպցիոն կոմիտեի ստացած բողոքների վերաբերյալ, հարցազրույցներ Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց,ՔՀԿ-ների ղեկավարների, դոնոր կազմակերպությունների հետ, մամուլի հաղորդումներ	լների ցածր մասնաբաժին (բոլոր վարույթների 5%-ից պակաս)	ունների չափավոր մասնաբաժին (բոլոր վարույթների 5-10 %-ը)	ունների բարձր մասնաբաժինը (բոլոր վարույթների 10 %-ից ավելի)		քրեական գործերից ավարտվել են 48-ը, որից 9 քրեական գործ 16 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: https://anticorruption.am/hy/pages/show/report ԹԻՀԿ հարցման արդյունքներով՝ 2021 թ. հոկտեմբերի 23-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի քննիչների կողմից նախաձեռնվել է (նաև քրեական վարույթից մաս է անջատվել) 113 քրեական վարույթ: Այսպիսով, Հակակոռուպցիոն կոմիտեի նախաձեռնողականությունը 2021 թ. համար գնահատվում է՝ 113/280=40.3 %: Հակակոռուպցիոն կոմիտեի 2022 թ. գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդման համաձայն՝ 2022 թ. ընթացքում Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչների վարույթում քննվել է 1203 քրեական գործ (վարույթ), որոնցից ավարտվել են 264-ը: Նշված գործերից (վարույթներից) 97-ը 203 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: ԹԻՀԿ հարցման արդյունքներով 2022 թ. հոկտեմբերի 23-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի քննիչների կողմից նախաձեռնվել է (նաև քրեական վարույթից մաս է անջատվել) 712 քրեական վարույթ: Հակակոռուպցիոն կոմիտեի նախաձեռնողականությունը 2022 թ. համար գնահատվում է՝ 712/1203=59 %: Հակակոռուպցիոն կոմիտեի 2023 թ. գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդման համաձայն՝ 2023 թ. ընթացքում Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչների վարույթում քննվել է 1801 քրեական վարույթ, որոնցից ավարտվել են 513-ը: Ավարտված վարույթներից 169-ը՝ 399 անձանց վերաբերյալ, մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: ԹԻՀԿ հարցման արդյունքներով
			Ուղղորդում: Այս ցուցանիշը գնահատում է, թե որքանով է Հակակոռուպցիոն կոմիտեն նախաձեռնողական իր կամքով հետաքննություն սկսելու հարցում: Համեմատել 2021-2023 թվականների ընթացքում Հակակոռուպցիոն կոմիտեի նախաձեռնած քրեական վարույթների ընդհանուր թվի վերաբերյալ տվյալները նույն ժամանակահատվածում Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից իրականացված հետաքննությունների ընդհանուր թվի հետ (ներառյալ բողոքների, դիմումների, ազդարարման արդյունքում հարուցվածները): Նախաձեռնողական վարույթների մեծ մասնաբաժին է համարվում բոլոր ուսումնասիրությունների ավելի քան 10 %-ը, չափավոր (միջին) մասնաբաժին՝ 5-10 %-ի սահմաններում, իսկ ցածր մասնաբաժին՝ 5 %-ից պակասը: Եթե Հակակոռուպցիոն կոմիտեն նախաձեռնել է վարույթներ քաղաքական ազդեցություն ունեցող և բարձրաստիճան պաշտոնատար այլ անձանց նկատմամբ, ապա նախաձեռնողականության մակարդակը գնահատելիս սա ևս պետք է հաշվի առնվի:				

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							2023 թ. հոկտեմբերի 23-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի քննիչների կողմից նախաձեռնվել է (նաև քրեական վարույթից մաս է անջատվել) 864 քրեական վարույթ: Հակակոռուպցիոն կոմիտեի նախաձեռնողականությունը 2023 թ. համար գնահատվում է՝ 864/1801=48 %: Այսպիսով, Հակակոռուպցիոն կոմիտեի նախաձեռնողականությունը կարող է գնահատվել բարձր: Քաղաքական ազդեցություն ունեցող և բարձրաստիճան պաշտոնատար անձանց նկատմամբ Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից սեփական նախաձեռնությամբ իրականացված վարույթների քանակի վերաբերյալ Հակակոռուպցիոն կոմիտեից հայտնել են, որ նշված պաշտոնյաների մասով առանձնացված հաշվառում չի իրականացվում:
30.	Արդյունավետություն և արհեստավարժություն	Հակակոռուպցիոն կոմիտեի տարեկան հաշվետվությունն և կայք, տվյալներ Հակակոռուպցիոն կոմիտեի հետաքննած կոռուպցիոն դեպքերի վերաբերյալ, հարցազրույցներ Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի	Կոռուպցիոն դեպքերի անբավարար և ոչ արհեստավարժ հետաքննություն	Կոռուպցիոն դեպքերի բավարար և արհեստավարժ հետաքննություն	Կոռուպցիոն դեպքերի խիստ արդյունավետ և արհեստավարժ հետաքննություն	Միջին	Համաձայն ԹԻՀԿ «կոռուպցիոն գործերի քննությունն ավարտելու համար Հակակոռուպցիոն կոմիտեից պահանջված միջին ժամանակի վերաբերյալ» հարցման արդյունքների ստացված տեղեկության՝ «Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից իրականացված կոռուպցիոն խախտումների մասով քննված գործերի քանակը բազմապատկած յուրաքանչյուր գործի մասով վարույթի իրականացման համար պահանջված ժամանակի (օրերի) քանակով և ստացված արտադրյալը բաժանած քննված գործերի քանակի վերաբերյալ առանձնացված հաշվառում չի իրականացվում»: Իսկ Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից օրենքով սահմանված ժամկետներում վարույթ նախաձեռնված ընդհանուր գործերի թվաքանակի վերաբերյալ Կոմիտեից հայտնել են, որ Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչների կողմից բոլոր քրեական վարույթները նախաձեռնվել են օրենքով սահմանված ժամկետներում:
			Ուղղորդում: Այս ցուցանիշը գնահատելու համար հավաքագրել տվյալներ 2021-2023 թվականների ընթացքում կոռուպցիոն գործի քննությունն ավարտելու համար Հակակոռուպցիոն կոմիտեից պահանջված միջին ժամանակի վերաբերյալ՝ գնահատելու կոռուպցիոն հետաքննության արդյունավետության մակարդակը: Հակակոռուպցիոն կոմիտեի				

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
		ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց և կոռուպցիայի դեմ պայքարի փորձագետների հետ	արհեստավարժությունը կոռուպցիոն դեպքերը հետաքննելու հարցում արտացոլված է 2021-2023 թվականների ընթացքում հաջողությամբ հարուցված քրեական գործերի թվով, դատապարտված անձանց թվով և կոռուպցիայի դեմ պայքարի փորձագետների հարցումների գնահատականներով: Առանձնապես, քրեական վարույթների գործերի երկարատևության պատճառները պետք է բացատրվեն, եթե առկա են հատուկ հանգամանքներ: Առավել կարևոր է կոռուպցիոն դեպքերի հետաքննությունն ավարտելու համար Հակակոռուպցիոն կոմիտեից պահանջված միջին ժամանակը:				ԹԻՀԿ-ի կողմից Հակակոռուպցիոն կոմիտեի կոռուպցիոն գործերի քննության արդյունավետության մակարդակի գնահատման համար հաշվարկվող կոռուպցիոն գործերի քննության միջին ժամկետի հաշվարկը կատարվել է հետևյալ կերպով՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հոդված 192-ի համաձայն՝ մինչդատական վարույթում հանրային քրեական հետապնդումն այն հարուցելու պահից չի կարող տևել ավելի, քան՝ • 3 ամիս՝ ոչ մեծ ծանրության հանցանքի վերաբերյալ մեղադրանքով, • 5 ամիս՝ միջին ծանրության հանցանքի վերաբերյալ մեղադրանքով, • 8 ամիս՝ ծանր հանցանքի վերաբերյալ մեղադրանքով, • 10 ամիս՝ առանձնապես ծանր հանցանքի վերաբերյալ մեղադրանքով: Բացառիկ դեպքերում, երբ դա է պահանջում արդարադատության շահը, վերադաս դատախազը հսկող դատախազի միջնորդությամբ իրավասու է երկարաձգելու ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանքի վերաբերյալ մեղադրանքով հանրային քրեական հետապնդման ժամկետները՝ առավելագույնը 1 ամսով, իսկ ծանր կամ առանձնապես ծանր հանցանքի վերաբերյալ մեղադրանքով քրեական հետապնդման ժամկետները՝ առավելագույնը 2 ամսով: https://www.arlis.am/documentview.aspx?docid=154763 Այսպես, 2021 թ. հոկտեմբերի 23-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում քննված 280 քրեական վարույթներից 232-ը եղել են կոռուպցիոն բնույթի հանցագործություններ, որից 10 քրեական վարույթ՝ 16 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: 2022 թ. ընթացքում 1176 քրեական վարույթներից՝ 1000-ն են եղել

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							կոռուպցիոն բնույթի, որից 97 քրեական վարույթ՝ 203 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: 2023 թ. ընթացքում 1801 քրեական վարույթներից 1632-ն են եղել կոռուպցիոն բնույթի, որից 179 քրեական վարույթ՝ 399 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: Քննված գործերի քանակը, բազմապատկած յուրաքանչյուր գործի մասով վարույթի իրականացման համար պահանջված ժամանակի (օրերի) քանակով և ստացված արտադրյալը բաժանած քննված գործերի քանակի վրա, 2021 թ. համար կկազմի 5.3, 2022 թ. համար՝ 12.3, 2023 թ. համար՝ 14.9 (179*150/1801): Հակակոռուպցիոն կոմիտեի արհեստավարժության աստիճանը, հաջողությամբ վարույթ նախաձեռնված կոռուպցիոն գործերի և դատապարտված անձանց հարաբերակցության տեսանկյունից, 2021 թ. համար կազմում է 6.8 % (16/232*100), 2022 թ. համար՝ 20.3 % (203/1000*100), իսկ 2023 թ. համար՝ 24.4 % (399/1632*100): Փորձագետների կարծիքով *«Գործերի քննության ձգձգումները կախված են և օբյեկտիվ, և սուբյեկտիվ հանգամանքներից: Շատ հաճախ փորձագիտական կենտրոններ դիմելիս գործի քննությունը կարող է տարիներով ձգվել: Իսկ քննիչները ուզած թե չուզած պետք է սպասեն փորձագիտական եզրակացությանը»:*
31.	Հետապնդումների ցուցանիշը	Հակակոռուպցիոն կոմիտեի տարեկան հաշվետվություն և կայք,	50 %-ից ցածր	50 % -75 %	75 %-ից բարձր	Ցածր	Համաձայն 2021 թ. ընթացքում կոռուպցիոն հանցագործությունների քննության արդյունքների վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազության տեղեկանքի տվյալների՝ 2021 թ. ընթացքում ՀՀ իրավասու մարմինների վարույթում քննված 2718 քրեական գործից ավարտվել է
			Ուղղորդում: Այս ցուցանիշը գնահատում է 2021-2023 թվականների ընթացքում Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից քննված				

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
		հարցազրույցներ Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, Գլխավոր դատախազության աշխատակազմի հետ, լրատվամիջոցների հաղորդումներ	կոռուպցիոն դեպքերի հետապնդման միջին մակարդակը: ՀՀ գլխավոր դատախազությունից և Հակակոռուպցիոն կոմիտեից պարզել, թե ինչու է հետապնդման միջին մակարդակը 50%-ից ցածր, և որ գործոններն են նպաստում ցածր մակարդակին:				730-ը, որոնցից 543-ը կարճվել է, այդ թվում՝ 414-ը՝ արդարացման, իսկ 129-ը՝ ոչ արդարացման հիմքերով: 187 քրեական գործ՝ 433 անձի վերաբերյալ, մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: https://prosecutor.am/storage/dynamic_web_pages/rep_578560401301.pdf Այսպես, ավարտված քրեական գործերի 74 %-ը կարճվել է: Հետապնդման մակարդակը 2021 թ. համար կազմում է 26 %: Համաձայն 2022 թ. ընթացքում կոռուպցիոն հանցագործությունների քննության արդյունքների վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազության տեղեկանքի տվյալների՝ 2022 թ. ընթացքում ՀՀ նախաքննական մարմինների վարույթում քննված 2718 քրեական գործից (վարույթից) ավարտվել է 567-ը, որոնցից 388-ը կարճվել է, այդ թվում՝ 286-ը՝ արդարացման, իսկ 102-ը՝ ոչ արդարացման հիմքերով: 178 քրեական գործ (վարույթ)՝ 397 անձի վերաբերյալ, մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, իսկ 1 քրեական գործ ուղարկվել է դատարան՝ բժշկական բնույթի հարկադրանքի միջոց կիրառելու միջնորդությամբ: https://prosecutor.am/storage/dynamic_web_pages/rep_598560409395.pdf Այսպես, ավարտված քրեական գործերի 68 %-ը կարճվել է: Հետապնդման մակարդակը 2022 թ. համար կազմում է 32 %: Համաձայն 2023 թ. ընթացքում կոռուպցիոն հանցագործությունների քննության արդյունքների վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազության տեղեկանքի տվյալների՝ 2023 թ. ընթացքում ՀՀ նախաքննական մարմինների վարույթում քննված 3556 քրեական վարույթից ավարտվել է 908-ը, որոնցից 602-ը կարճվել է,

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							այդ թվում՝ 502-ը՝ արդարացման, իսկ 100-ը՝ ոչ արդարացման հիմքերով: 306 քրեական վարույթ՝ 757 անձի վերաբերյալ, մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: https://prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_281_1466763826.pdf Այսպես, ավարտված քրեական գործերի 66 %-ը կարճվել է: Հետապնդման մակարդակը 2023 թ. համար կազմում է 34 %: 2021 թ. համար ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում քննված կոռուպցիոն վարույթներով կոռուպցիայի հետապնդման մակարդակը կազմել է 24 %: Տարվա ընթացքում ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում քննված 232 կոռուպցիոն բնույթի հանցագործություններով քրեական վարույթից ավարտվել է 44-ը, որոնցից 34-ը կարճվել է: 10 քրեական վարույթ՝ 16 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: 2022 թ. համար ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում քննված կոռուպցիոն վարույթներով կոռուպցիայի հետապնդման մակարդակը կազմել է 38.8 %: Տարվա ընթացքում ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում քննված 1000 կոռուպցիոն բնույթի հանցագործություններով քրեական վարույթից ավարտվել է 250-ը, որոնցից 153-ը կարճվել է: 97 քրեական վարույթ՝ 203 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: 2023 թ. համար ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում քննված կոռուպցիոն վարույթներով կոռուպցիայի հետապնդման մակարդակը կազմել է 34.1 %: Տարվա ընթացքում ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում քննված 1632 կոռուպցիոն բնույթի հանցագործություններով քրեական վարույթից ավարտվել է 524-ը, որոնցից 345-ը կարճվել է: 179

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							քրեական վարույթ՝ 399 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: Այսպիսով, 2021-2023 թթ. Հայաստանի Հանրապետությունում կոռուպցիայի հետապնդումների միջին մակարդակը, ըստ Գլխավոր դատախազության տեղեկանքի, կազմում է 30.6 %, իսկ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում քննված կոռուպցիոն վարույթներով կոռուպցիայի հետապնդման միջին մակարդակը՝ 32.3 %, ինչը, համաձայն գնահատման մեթոդաբանության, համարվում է ցածր ցուցանիշ: Ըստ դատախազության տվյալների՝ ակնհայտ է, որ արդարացման հիմքով քրեական վարույթների կարճման տոկոսային հարաբերությունը տարեցտարի աճում է, ինչը մտահոգիչ է կոռուպցիոն հանցագործությունների դեմ արդյունավետ պայքարի տեսանկյունից: Միաժամանակ՝ արդարացման հիմքով վարույթների կարճման բարձր թվերը հիմնականում պայմանավորված են քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված՝ 24 ժամվա ընթացքում քրեական վարույթ նախաձեռնելու պարտավորությամբ: Պրակտիկայում քննիչները, չունենալով բավարար հնարավորություն լիարժեք քննության համար, հիմնականում նախաձեռնում են քրեական վարույթներ, ինչը մեծացնում է հետագայում քրեական վարույթը արդարացման հիմքով կարճելու մասին որոշումների հավանականությունը: Փորձագետների կարծիքով քննիչները նաև չունեն բավարար գործիքակազմ 24 ժամում առավել արդյունավետ իրականացնելու քննությունը: *«Խնդիրը նրանում է, որ գործիքակազմ տրված չէ քննիչին, որ ինքը 24-ժամվա ընթացքում հասկանա վարույթը նախաձեռնելու է, թե՝ ոչ»:*

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
32.	Դատապարտումների ցուցանիշը	Հակակոռուպցիոն կոմիտեի տարեկան հաշվետվություն և կայք, հարցազրույցներ Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, Գլխավոր դատախազության աշխատակազմի հետ, լրատվամիջոցների հաղորդումներ	50 %-ից ցածր	50 % -75 %	75 %-ից բարձր	Միջին	Համաձայն 2022 թ. ընթացքում կոռուպցիոն հանցագործությունների քննության արդյունքների վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազության տեղեկանքի տվյալների՝ 2022 թ. ընթացքում ՀՀ դատարաններում քննվել և ավարտվել են կոռուպցիոն բնույթի 99 քրեական գործ (2021 թ.-ին՝ 83)՝ 197 անձի վերաբերյալ (2021 թ.-ին՝ 150): Նշված քրեական գործերից 67-ով (2021 թ.-ին՝ 53) 132 անձ դատապարտվել է (2021 թ.-ին՝ 97 անձ), որոնցից 30 անձ՝ ազատազրկման (2021 թ.-ին՝ 30), 63 անձ՝ տուգանքի (2021 թ.-ին՝ 46), հիմնական այլ պատժի որևէ անձ չի դատապարտվել (2021 թ.-ին՝ 1), 39 անձի նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել (2021 թ.-ին՝ 20), 8 անձի նկատմամբ կիրառվել են նաև լրացուցիչ պատիժներ (2021 թ.-ին՝ 18): 7 գործով (2021 թ.-ին՝ 6) 18 անձ արդարացվել է (2021 թ.-ին՝ 11) : Կարճվել է 24 գործ (2021 թ.-ին՝ 24)՝ 46 անձի վերաբերյալ (2021 թ.-ին՝ 42): https://prosecutor.am/storage/dynamic_web_pages/rep_598560409395.pdf Համաձայն 2023 թ. ընթացքում կոռուպցիոն հանցագործությունների քննության արդյունքների վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազության տեղեկանքի տվյալների՝ 2023 թ. ընթացքում ՀՀ դատարաններում քննվել և ավարտվել են կոռուպցիոն բնույթի 149 քրեական գործ՝ 249 անձի վերաբերյալ: Նշված քրեական գործերից 97-ով 140 անձ դատապարտվել է, որոնցից 25 անձ՝ ազատազրկման, 39 անձ՝ տուգանքի, 3՝ հիմնական այլ պատժի, 73 անձի նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել, 9 անձի նկատմամբ կիրառվել են նաև լրացուցիչ պատիժներ: 9 գործով 14 անձ արդարացվել է: https://prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_281_1466763826.pdf
			Ուղղորդում: Այս ցուցանիշը գնահատում է 2021-2023 թվականների ընթացքում Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից քննված կոռուպցիոն դեպքերի դատապարտման միջին մակարդակը: Ճշտել այն գործոնները, որոնք նպաստում են պատասխանատվության միջոցների կիրառման բարձր կամ ցածր մակարդակին՝ լինի դա հենց Հակակոռուպցիոն կոմիտեն, թե այլ պետական իրավասու մարմին, որը պատասխանատու է կոռուպցիայի հետապնդման համար: Վերջին դեպքում, Հակակոռուպցիոն կոմիտեի և քրեական հետապնդող մարմնի միջև գործակցության և աջակցության չափը պետք է պարզվի հարցազրույցների միջոցով: Եթե նշված գերատեսչությունների միջև չկա գործակցություն և աջակցություն, պարզել, թե որ գործոններն են դրան նպաստում:				

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							Այսպիսով, 2021 թ. համար դատապարտումների ցուցանիշը կազմում է 64 %, 2022 թ. համար՝ 67 %, իսկ 2023 թ. համար՝ 56 %:
33.	Քաղաքական ազդեցություն ունեցող և բարձրաստիճան պաշտոնատար անձանց նկատմամբ հետաքննություններ կոռուպցիոն գործերով	Հակակոռուպցիոն կոմիտեի տարեկան հաշվետվություն և կայք, դեպքերին առնչվող փաստաթղթեր, հարցազրույցներ Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, ՔՀԿ-ների ղեկավարների, կոռուպցիայի դեմ պայքարի փորձագետների հետ, լրատվամիջոցների հաղորդումներ	Քաղաքական ազդեցություն ունեցող անձանց մասով ոչ մի հետաքննություն կամ սակավաթիվ հետաքննություններ կոռուպցիոն գործերով (5-ից պակաս դեպք)	Քաղաքական ազդեցություն ունեցող անձանց մասով որոշ հետաքննություններ կոռուպցիոն գործերով (5-30 դեպք)	Քաղաքական ազդեցություն ունեցող անձանց մասով զգալի թվով հետաքննություններ կոռուպցիոն գործերով (30-ից ավելի դեպքեր)	Հնարավոր չէ գնահատել	ԹԻՀԿ հարցմանն ի պատասխան՝ Հակակոռուպցիոն կոմիտեից հայտնել են, որ 2021 թ. հոկտեմբերի 23-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչների կողմից մեղադրական եզրակացությամբ դատարան են ուղարկվել քրեական վարույթներ՝ 6 պաշտոնատար անձի վերաբերյալ, 2022 թ. ընթացքում՝ 63 պաշտոնատար անձի, 2023 թ. ընթացքում՝ 142 պաշտոնատար անձի վերաբերյալ: 2021 թ. հոկտեմբերի 23-ից դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում ոչ ռեաբիլիտացնող հիմքերով որևէ պաշտոնատար անձի նկատմամբ քրեական հետապնդում չի դադարեցվել և քրեական հետապնդում չի իրականացվել, 2022 թ. ընթացքում ոչ ռեաբիլիտացնող հիմքերով քրեական հետապնդումը դադարեցվել և քրեական հետապնդում չի իրականացվել 33 պաշտոնատար անձի նկատմամբ, իսկ 2023 թ. ընթացքում՝ 114 պաշտոնատար անձի նկատմամբ: Հակակոռուպցիոն կոմիտեն չի տրամադրել տեղեկություն քաղաքական ազդեցություն ունեցող և բարձրաստիճան պաշտոնատար անձանց թվի և անունների վերաբերյալ, ինչից կարելի է եզրակացնել, որ Կոմիտեն չի իրականացնում առանձնացված հաշվառում քաղաքական ազդեցություն ունեցող և բարձրաստիճան պաշտոնատար անձանց վերաբերյալ: Քաղաքական ազդեցություն ունեցող և բարձրաստիճան պաշտոնատար անձանց նկատմամբ կոռուպցիոն գործերով հետաքննությունների մասին նշվում է Freedom House իրավապաշտպան կազմակերպության Nations in Transit 2023 զեկույցում, մասնավորապես՝ «...Հակակոռուպցիոն
			Ուղղորդում: Այս ցուցանիշը գնահատում է 2021-2023 թվականների ընթացքում Հակակոռուպցիոն կոմիտեի պատրաստակամությունը՝ առանց վախի և բարեհաճության կոռուպցիայի գործով հետաքննություն անցկացնելու քաղաքական ազդեցություն ունեցող և բարձրաստիճան պաշտոնատար անձանց նկատմամբ: Տրամադրել մանրամասներ այն ազդեցիկ անձանց թվի և անունների վերաբերյալ, որոնց նկատմամբ հետաքննություն է անցկացրել Հակակոռուպցիոն կոմիտեն 2021-2023 թվականների ընթացքում: Պետք է տրամադրվեն կոռուպցիոն դեպքերի համապատասխան մանրամասները՝ ներառյալ հետաքննության արդյունքները և նշանակված				

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
			պատիժը: «Ազդեցություն ունեցող անձինք» նշանակում է քաղաքական առաջնորդներ, քաղաքական կուսակցությունների ղեկավարներ, հանրային պաշտոն զբաղեցնող անձինք՝ բացառությամբ հայեցողական պաշտոնների խմբի, ղեկավար խմբի քաղծառայողներ, բիզնեսների ղեկավարներ և նշանավոր քաղաքացիներ: «Որոշ»-ի և «զգալի»-ի շեմերը կողմնորոշիչ (հուշող) են և կախված են երկրում անցկացվող հետաքննությունների ընդհանուր թվից և կոռուպցիայի ամենատարածված ձևերից (օրինակ, մանր կամ քաղաքական կոռուպցիա, կամ ձեռնարկատիրական գործունեություն և պաշտոնական դիքի չարաշահում, հովանավորչություն):				կոմիտեն բարձր մակարդակի հետաքննություններ է ձեռնարկել ստեղծման պահից ի վեր ... (մի շարք պաշտոնատար անձանց նկատմամբ) 2022 թ.-ին կոռուպցիոն գործեր են հարուցվել ներկա և նախկին պաշտոնյաների դեմ: Պաշտպանության նախկին նախարար Դ.Տ.-ի, գեներալ Ա.Դ.-ի և Դ.Գ.-ի դեմ դատավարությունները, ովքեր մեղադրվում էին զենքի գնման գործարքների համար խարդախության և յուրացման մեջ, շարունակվում են, չնայած ամբաստանյալների՝ վարչապետ Փաշինյանի հետ սերտ քաղաքական կապերին»: https://freedomhouse.org/country/armenia/nations-transit/2023 ԱՄՆ Պետդեպարտամենտի 2024 թ. Հայաստանի մարդու իրավունքների զեկույցում նույնպես արձանագրվել է, որ «Կառավարությունը բազմաթիվ քրեական գործեր է հարուցել նախկին բարձրաստիճան պաշտոնյաների և նրանց հարազատների, խորհրդարանականների, նախկին նախագահների, իսկ մի քանի դեպքերում՝ դատական համակարգի անդամների ու նրանց հարազատների դեմ՝ մի քանի հազարից մինչև միլիոնավոր դոլարների դրամական արժեքների հետ կապված գործերով»: Միևնույն ժամանակ, զեկույցում ընդգծվել է նախկին բարձրաստիճան պաշտոնյաների նկատմամբ գործեր հարուցելու ընտրողականության և ներկայիս ոչ ընդդիմադիր բարձրաստիճան պաշտոնյաների նկատմամբ անգործության հարցի արդիականությունը: https://www.state.gov/wp-content/uploads/2023/03/415610_ARMENIA-2022-HUMAN-RIGHTS-REPORT.pdf Արդյունքում, Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից քաղաքական ազդեցություն ունեցող և բարձրաստիճան

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							պաշտոնատար անձանց նկատմամբ կոռուպցիոն գործերով հետաքննությունների վերաբերյալ առկա է տեղեկատվության բաց:
34.	Փոխհատուցում և ակտիվների վերականգնում	Հակակոռուպցիոն կոմիտեի տարեկան հաշվետվություն և կայք, ՀՀ գլխավոր դատախազության կայք, հարցազրույցներ Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, ՔՀԿ-ների ղեկավարների, կոռուպցիայի դեմ պայքարի փորձագետների հետ, լրատվամիջոցների հաղորդումներ	Հակակոռուպցիոն կոմիտեի ոչ գործուն դերակատարություն	Հակակոռուպցիոն կոմիտեի բավականին գործուն դերակատարություն	Հակակոռուպցիոն կոմիտեի շատ գործուն դերակատարություն	Միջին	Համաձայն 2022 թ. ընթացքում կոռուպցիոն հանցագործությունների քննության արդյունքների վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազության տեղեկանքի տվյալների՝ ապօրինի հարստանալու (ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 310.1-րդ հոդված) վերաբերյալ 2022 թ. ընթացքում նախապատրաստվել է 1 նյութ, որով հարուցվել է քրեական գործ: Հաշվետու ժամանակահատվածում նշված հանցագործության վերաբերյալ վարույթում քննվել է 3 քրեական գործ, որից 1 գործ միացվել է, 2 գործի նախաքննություն մնացել է անավարտ: https://prosecutor.am/storage/dynamic_web_pages/rep_598560409395.pdf 2023 թ. ընթացքում նախապատրաստվել է 5 նյութ, որով նախաձեռնվել է վարույթ, որոնցից 5 գործի նախաքննություն մնացել է անավարտ: https://prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_281_1466763826.pdf ԹԻՀԿ հարցման արդյունքներով՝ Հակակոռուպցիոն կոմիտեում ավարտված (դատարան ուղարկված և կարճված) քրեական վարույթներով ապօրինի հարստացման դեպքերով քրեական հետապնդման արդյունքում վերականգնված գումարների վերաբերյալ տվյալներ առկա չեն: Միաժամանակ, Հակակոռուպցիոն կոմիտեից հայտնել են, որ քննիչների կողմից կոռուպցիոն հանցագործություններով քննվող քրեական վարույթներով սառեցված և բռնագանձված դեպքերի քանակի վերաբերյալ առանձնացված հաշվառում չի իրականացվում:
			Ուղղորդում: Այս ցուցանիշը գնահատում է 2021-2023 թվականների ընթացքում Հակակոռուպցիոն կոմիտեի դերը փոխհատուցման, ակտիվների վերականգնման, սառեցման և բռնագրավման գործում: Տեղեկություններ տրամադրել ՀՀ գլխավոր դատախազություն ներկայացված 2021-2023 թվականների ընթացքում ապօրինի հարստացման վարույթների թվի, վերականգնված, սառեցված կամ բռնագրավված ակտիվների գումարների և մանրամասների մասին: Երբ գնահատվում է, թե Հակակոռուպցիոն կոմիտեի դերակատարությունը գործո՞ւն է արդյոք նման գործընթացներում, պետք է հաշվի առնել այն դեպքերի թիվը, որոնցում կիրառվել են ապօրինի հարստացման դեպքերի քրեական հետապնդման արդյունքում վերականգնված, սառեցված և բռնագրաված ընդհանուր գումարները՝ համեմատելով երկրում գողացված ակտիվների գնահատված ընդհանուր ծավալի հետ (եթե նման գնահատումներ առկա են):				

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							Հաշվառումն իրականացվում է պատճառված վնասի վերականգնումների և արգելադրված գույքերի մասով: Այսպես՝ 2022 թ. ընթացքում ավարտված (դատարան ուղարկված և կարճված) քրեական վարույթներով պատճառված գույքային վնասից նախաքննության ընթացքում կանխիկ գումարով վերականգնվել է 20,833,000 ՀՀ դրամ: Բացի այդ, որպես վնասի վերականգնման ապահովման ռեալ միջոց՝ բոլոր քրեական վարույթներով արգելանք է դրվել 61,685,726,932 ՀՀ դրամ արժողության գույքի վրա: 2023 թ. ընթացքում ավարտված (դատարան ուղարկված և կարճված) քրեական վարույթներով պատճառված գույքային վնասից նախաքննության ընթացքում փաստացի դրամական տեսքով վերականգնվել է 264,874,500 ՀՀ դրամ: Բացի այդ, որպես վնասի վերականգնման ապահովման ռեալ միջոց՝ բոլոր քրեական վարույթներով արգելանք է դրվել 58,418,345,325 ՀՀ դրամ արժողությամբ գույքի վրա: Հարկ է նշել, որ արգելադրված գույքի վերաբերյալ հաշվառումն իրականացվում է աճողական եղանակով, հետևաբար, հաջորդ տարվա տվյալի մեջ արտացոլվում է նաև նախորդ տարիների չավարտված վարույթներով տվյալը: ՀՀ գլխավոր դատախազությանը հասցեագրված ԹԻՀԿ հարցման արդյունքները վկայում են, որ 2021-2023 թթ. ընթացքում կոռուպցիոն բնույթի հանցագործությունների վերաբերյալ ավարտված գործերով վերականգնվել է 2,638,640,941 ՀՀ դրամ գումար՝ որպես պետությանը պատճառված վնաս, որից 400.051.030 ՀՀ դրամը՝ 2021 թ.-ին, 873,256,480 ՀՀ դրամը՝ 2022 թ.-ին, իսկ 1,365,324,431 ՀՀ դրամը՝ 2023 թ.-ին: Ինչ վերաբերում է ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթների ընդհանուր հայցագնին, ապա համաձայն 2021 թ. ընթացքում ապօրինի ծագում ունեցող

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							գույքի բռնագանձման գործերով վարչության աշխատանքի վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազության հաշվետվության՝ 2021 թ.-ին ներկայացված հայցադիմումների հայցագների հանրագումարը կազմում է շուրջ 20 միլիարդ ՀՀ դրամ: 2022 թ.-ին ներկայացված հայցադիմումների հայցագների հանրագումարը կազմում է շուրջ 100 միլիարդ ՀՀ դրամ, 2023 թ.-ին՝ 384,055,372,049 ՀՀ դրամ: https://prosecutor.am/storage/dynamic_web_pages/rep_46_8560333547.pdf https://prosecutor.am/storage/dynamic_web_pages/rep_47_8560336077.pdf https://prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_280_1162845407.pdf Այսպես, ՀՀ գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչության կողմից 2021-2023 թվականների ընթացքում ներկայացված հայցերի ընդհանուր հայցագինը գերազանցում է 504 միլիարդ ՀՀ դրամը: ՀՀ գլխավոր դատախազությանը հասցեագրված ԹԻՀԿ հարցման արդյունքները վկայում են, որ «2021-2023 թթ. ընթացքում Հակակոռուպցիոն կոմիտեում քննվող քրեական վարույթներով մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազների կողմից ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչություն է ուղարկվել ապօրինի ծագում ունեցող գույքի առկայության մասին 51 զեկուցագիր, որոնցից 7-ը՝ 2021 թ.-ին, 25-ը՝ 2022 թ.-ին, 19-ը՝ 2023 թ.-ին: Նշված զեկուցագրերի հիման վրա 2021 թ. ընթացքում ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով վարչությունում 6 անձի պատկանող գույքի վերաբերյալ կայացվել է

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							ուսումնասիրություն նախաձեռնելու, իսկ 1-ին պատկանող գույք վերաբերյալ՝ ուսումնասիրություն չսկսելու մասին որոշում: 2022 թ. ընթացքում 21 անձի պատկանող գույքի վերաբերյալ կայացվել է ուսումնասիրություն նախաձեռնելու, իսկ 6-ին պատկանող գույք վերաբերյալ՝ ուսումնասիրություն չսկսելու մասին որոշում: 2023 թ. ընթացքում 18 անձի պատկանող գույքի վերաբերյալ կայացվել է ուսումնասիրություն նախաձեռնելու, իսկ 5-ին պատկանող գույք վերաբերյալ՝ ուսումնասիրություն չսկսելու մասին որոշում»: Միաժամանակ, Հակակոռուպցիոն կոմիտեից հայտնել են, որ քննիչների կողմից կոռուպցիոն հանցագործություններով քննվող քրեական վարույթներով սառեցված և բռնագանձված դեպքերի քանակի վերաբերյալ առանձնացված հաշվառում չի իրականացվում: Հաշվառումն իրականացվում է պատճառված վնասի վերականգնումների և արգելադրված գույքերի մասով: Ուստի, կոռուպցիոն հանցագործություններով պատճառված վնասի փոխհատուցման տեսանկյունից Հակակոռուպցիոն կոմիտեն առաջընթաց է գրանցել 2022-2023 թթ. ընթացքում դրամական վերականգնումների բարելավման հարցում: Այնուամենայնիվ, առգրավման ենթակա ակտիվների ընդհանուր արժեքի և փաստացի վերականգնումների միջև առկա մեծ տարբերությունը վկայում է, որ առկա է վնասների ավելի մեծ մասնաբաժինն արդյունավետ կերպով վերականգնելու անհրաժեշտություն:
35.	Հակակոռուպցիոն կոմիտեի կատարողա	Հակակոռուպցիոն կոմիտեի հանրային ընկալումների	Արդյունավետության ցածր մակարդակ, ինչն	Արդյունավետության միջին մակարդակ, ինչն	Արդյունավետության բարձր մակարդակ, ինչն	Հնարավոր չէ գնահատել	Հակակոռուպցիոն կոմիտեի կատարողականի հանրային ընկալումը առանձին ուսումնասիրություններում ու հրապարակված զեկույցներում առկա չէ:

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
	կանի ընկալում	հետազոտություն (եթե առկա է), լրատվամիջոցների հաղորդումներ, հարցազրույցներ Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, ՔՀԿ-ների ղեկավարների, կոռուպցիայի դեմ պայքարի փորձագետների, լրագրողների և, եթե հնարավոր է, Հակակոռուպցիոն կոմիտեի հետ անմիջական շփումներ ունեցող անձանց հետ	արտացոլված է հարցման արդյունքներում (50 %-ից ցածր), ՔՀԿ-ների ղեկավարների, կոռուպցիայի դեմ պայքարի փորձագետների, լրագրողների և, հնարավորության դեպքում, Հակակոռուպցիոն կոմիտեի հետ անմիջական շփումներ ունեցող անձանց տեսակետներում	արտացոլված է հարցման արդյունքներում (50-75 %), ՔՀԿ-ների ղեկավարների, կոռուպցիայի դեմ պայքարի փորձագետների, լրագրողների և, հնարավորության դեպքում, Հակակոռուպցիոն կոմիտեի հետ անմիջական շփում ունեցող անձանց տեսակետներում	արտացոլված է հարցման արդյունքներում (75 %-ից բարձր), ՔՀԿ-ների ղեկավարների, կոռուպցիայի դեմ պայքարի փորձագետների, լրագրողների և, հնարավորության դեպքում, Հակակոռուպցիոն կոմիտեի հետ անմիջական շփում ունեցող անձանց տեսակետներում		Համաձայն Հայաստանում կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրությանը, որն իրականացրել է ՀՌԿԿ-Հայաստան կազմակերպությունը՝ հարցվածների 79.6 %-ը հավանություն է տվել մասնագիտացված քննչական մարմնի՝ Հակակոռուպցիոն կոմիտեի ստեղծմանը: https://www.crrc.am/wp-content/uploads/2022/11/Corruption-in-Armenia_Research-report_Arm.pdf Միևնույն ժամանակ, Հակակոռուպցիոն կոմիտեից նույնպես հայտնել են, որ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի կողմից հանրային ընկալումների վերաբերյալ հարցումներ դեռևս չեն անցկացվել: Ընդհանուր առմամբ, Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության վերաբերյալ հանրության տեղեկացվածության մակարդակը բավական ցածր է, հանրության կապը Հակակոռուպցիոն կոմիտեի հետ գրեթե բացակայում է: Փորձագետների կարծիքով *«Իսկ ինչ՞ է արել Հակակոռուպցիոն կոմիտեն, որ իր մասին՝ որպես կարևորագույն կառույց, ձևավորվի հանրային ընկալում: Սա շատ կարևոր հարց է: Ասենք, Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ նախընտրական քարոզարշավի շրջանում վճարվող գումարների հարցը՝ այդ մի գործով քննության արդյունքները չեն կարող փոխարինվել հարյուր այլ կոռուպցիոն գործերով քննության արդյունքներով: Այսինքն թեկուզ հապարավոր մանր կոռուպցիոն հանցանքների բացահայտումը չի կարող փոխարինել այդ բարձր հնչեղություն ունեցող գործերով անգործության փաստը»:*
			Ուղղորդում: Այս ցուցանիշը գնահատում է Հակակոռուպցիոն կոմիտեի կատարողականը հանրային ընկալումներում: Գնահատումը հնարավորինս պետք է հիմնված լինի հետազոտության արդյունքների վրա և հարկ եղած դեպքում լրացվի Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, ՔՀԿ ղեկավարների, դոնոր կազմակերպությունների ներկայացուցիչների,				

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
			կոռուպցիայի դեմ պայքարի փորձագետների և լրագրողների հետ հարցազրույցներով: Պետք է տրամադրվի հարցման մասնակիցների բնութագիրը՝ ըստ տարիքի, սեռի, զբաղմունքի և կրթական որակավորման: Եթե Հակակոռուպցիոն կոմիտեն իրականացրել կամ պատվիրել է հանրային ընկալումների հարցումներ, հետազոտողը պետք է Հակակոռուպցիոն կոմիտեի անդամներից և անձնակազմից խնդրի այդ հարցումների հաշվետվությունները:				
	Հայտնաբերման, հետաքննության և հետապնդման միավորի հանրագումար					8/14=57.1 %	
	Կանխարգելում, կրթում և իրազեկում (7 ցուցանիշ)						
36.	Հատկացված բյուջե	Հակակոռուպցիոն կոմիտեի տարեկան հաշվետվություն և կայք, ՀՀ ֆինանսների նախարարության կայք, հարցազրույցներ Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց հետ	Հակակոռուպցիոն կոմիտեի գործառնական ծախսերի 2.5 %-ից ցածր	Հակակոռուպցիոն կոմիտեի գործառնական ծախսերի 2.5 %-ից 5 %	Հակակոռուպցիոն կոմիտեի գործառնական ծախսերի 5 %-ից բարձր	Ցածր	Հաշվի առնելով այն փաստը, որ Հակակոռուպցիոն կոմիտեն ստեղծվել է 2021 թ. նոյեմբերին՝ 2021 թ.-ին հանրային իրազեկման և հաղորդակցման աշխատանքներ չեն իրականացվել: Համաձայն Հակակոռուպցիոն կոմիտեի 2022 թ. գործունեության վերաբերյալ հաղորդման, կարևորելով Հակակոռուպցիոն կոմիտեի թափանցիկ գործելաոճն ու հաշվետվողականությունը Կոմիտեի գործունեության նկատմամբ հասարակության վստահության ամրապնդման հարցում և այդ կերպ նաև կոռուպցիոն հանցագործությունների կանխարգելման ու բացահայտման արդյունավետությունը բարձրացնելու հանգամանքը՝ Կոմիտեի գործունեության մեկնարկից ի վեր իրականացվել են լայնածավալ լուսաբանման աշխատանքներ կառույցի ընթացիկ գործունեության և օրենքով վերապահված հիմնական գործառույթների իրազեկման վերաբերյալ: 2022 թ. տարեսկզբին գործարկվել է Կոմիտեի www.anticorruption.am եռալեզու պաշտոնական կայքը (հայերեն, ռուսերեն, անգլերեն), որում զետեղվում է ինչպես քրեական
			Ուղղորդում: Այս ցուցանիշը գնահատում է 2021-2023 թվականների ընթացքում Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից հանրային իրազեկմանը և հաղորդակցմանը հատկացված գործառնական ծախսերի միջին մասնաբաժինը: Հավաքագրել Հակակոռուպցիոն կոմիտեի՝ հանրային իրազեկման ծրագրերի ծախսերի վերաբերյալ տվյալներ և հաշվարկել այս ծախսերի				

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
			միջին մասնաբաժինը Հակակոռուպցիոն կոմիտեի ընդհանուր գործառնական ծախսերի մեջ 2021-2023 թվականների ընթացքում:				վարույթների ընթացքի վերաբերյալ հրապարակվող հաղորդագրությունների թարմացվող լրահոսը, այնպես էլ տեղեկություններ կառույցի գործունեության, օրենսդրության, միջազգային համագործակցության, անձնակազմի և մրցույթների անցկացման կարգի վերաբերյալ: https://anticorruption.am/hy/pages/show/report ՀՀ պետական բյուջեի 2022 թ. կատարողականի համաձայն՝ 2021 թ. համեմատ ծրագրի ծախսերն աճել են 3.2 անգամ՝ հիմնականում պայմանավորված Հակակոռուպցիոն կոմիտեի տեխնիկական հագեցվածության ապահովման և էլեկտրոնային ռեսուրսների ստեղծման կամ արդիականացման նախագծերի ապահովման նպատակով միջոցների հատկացմամբ: Հակակոռուպցիոն կոմիտեի տեխնիկական հագեցվածության ապահովման համար օգտագործվել է նախատեսված միջոցների 75.7 %-ը կամ 310 մլն ՀՀ դրամ: Ծրագրից շեղումն առաջացել է գնումների արդյունքում առաջացած տնտեսումների, ինչպես նաև հայտարարված մրցույթների չկայանալու հետևանքով: Համաձայն Հակակոռուպցիոն կոմիտեի 2023 թ. գործունեության վերաբերյալ հաղորդման՝ 2023 թ-ին ևս շարունակվել են լայնածավալ լուսաբանման աշխատանքները կառույցի ընթացիկ գործունեության և օրենքով վերապահված հիմնական գործառույթների իրազեկման վերաբերյալ: ՀՀ պետական բյուջեի 2023 թ. կատարողականի համաձայն՝ նախորդ տարվա համեմատ ծրագրի ծախսերը նվազել են 12.5 %-ով՝ հիմնականում պայմանավորված 2022 թ-ին Հակակոռուպցիոն կոմիտեի տեխնիկական հագեցվածության և տրանսպորտային սարքավորումներով հագեցվածության ապահովման նպատակով միջոցների հատկացմամբ:

<table>
<tr><th></th><th>ՑՈՒՑԱՆԻՇ</th><th>ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ</th><th colspan="3">ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ</th><th>ՄԻԱՎՈՐ</th><th>ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ</th></tr>
<tr><th></th><th></th><th></th><th>ՑԱԾՐ (0)</th><th>ՄԻՋԻՆ (1)</th><th>ԲԱՐՁՐ (2)</th><th></th><th></th></tr>
<tr><td></td><td></td><td></td><td colspan="3"></td><td></td><td>Հակակոռուպցիոն կոմիտեի ներկայացրած տեղեկատվության համաձայն՝ 2021-2023 թթ. բյուջեներում հանրային իրազեկման, հաղորդակցման ծրագրերին հատկացված բյուջետային ծախսերի մեծությունը կազմել է (մլն. ՀՀ դրամ)՝
<table>
<tr><th></th><th>Հանրային իրազեկում</th><th>Տեսակարար կշիռը (%)</th></tr>
<tr><td>2021 թ.</td><td>1.2</td><td>0.3</td></tr>
<tr><td>2022 թ.</td><td>3.8</td><td>0.2</td></tr>
<tr><td>2023 թ.</td><td>3.6</td><td>0.13</td></tr>
</table></td></tr>
<tr><td>37.</td><td>Կոռուպցիայի վերաբերյալ իրազեկման, կանխման և հանրային հաղորդակցության ռազմավարական պլանավորում</td><td>Հակակոռուպցիոն կոմիտեի տարեկան հաշվետվությունն և կայք, հարցազրույցներ Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց և թիրախային խմբերի ներկայացուցիչների հետ</td><td>Կանխարգելման, հակակոռուպցիոն կրթության և իրազեկման միջոցառումների ծրագիր գոյություն չունի կամ թույլ է</td><td>Կանխարգելման, հակակոռուպցիոն կրթության և իրազեկման միջոցառումների ծրագիրը համապարփակ է, բայց ամբողջովին չի իրականացվել</td><td>Կանխարգելման, հակակոռուպցիոն կրթության և իրազեկման ծրագիրը համապարփակ է և ամբողջովին իրականացվել է</td><td>Ցածր</td><td>Հակակոռուպցիոն կոմիտեի կայքում բացակայում է կանխարգելման, հակակոռուպցիոն կրթության և իրազեկման ծրագրերի վերաբերյալ տեղեկությունը: Բացակայում են այդ ուղղությունը կարգավորող ռազմավարական ծրագրերը:
Համաձայն Հակակոռուպցիոն կոմիտեի 2022 թ. գործունեության վերաբերյալ հաղորդման, կարևորելով Հակակոռուպցիոն կոմիտեի թափանցիկ գործելաոճն ու հաշվետվողականությունը Կոմիտեի գործունեության նկատմամբ հասարակության վստահության ամրապնդման հարցում և այդ կերպ նաև կոռուպցիոն հանցագործությունների կանխարգելման ու բացահայտման արդյունավետությունը բարձրացնելու հանգամանքը՝ Կոմիտեի գործունեության մեկնարկից ի վեր իրականացվել են լայնածավալ լուսաբանման աշխատանքներ կառույցի ընթացիկ գործունեության և օրենքով վերապահված հիմնական գործառույթների իրազեկման վերաբերյալ:
2022 թ. հոկտեմբերի 24-ի ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ Սասուն Խաչատրյանի ելույթի համաձայն՝ զանգվածային լրատվության տարբեր միջոցներով, այդ թվում՝ հեռուստաընկերությունների լրատվական թողարկումներին ու իրավական ուղղվածության</td></tr>
<tr><td></td><td></td><td></td><td colspan="3">Ուղղորդում: Այս ցուցանիշը գնահատում է Հակակոռուպցիոն կոմիտեի՝ կանխման, կրթության և իրազեկման ծրագրերի ամբողջականությունը և դրանց իրականացումը: Ներկայացնել մանրամասներ Հակակոռուպցիոն կոմիտեի՝ կանխման, կրթության և իրազեկման երկարաժամկետ ռազմավարության մասին՝ ներառյալ, ընդգրկված ոլորտները և</td><td></td><td></td></tr>
</table>

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
			իրականացման աստիճանը: Եթե Հակակոռուպցիոն կոմիտեն չունի կանխման, կրթության և իրազեկման իր միջոցառումների ծրագիր, հետազոտողը պետք է ճշտի դրա պատճառները Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանցից: Համապարփակ ծրագիրը պետք է ներառի բոլոր երեք ոլորտները՝ կանխում, կրթություն և իրազեկում: Հետազոտողը պետք է արձանագրի բարձր, միջին կամ ցածր միավոր նշանակելու հիմնավորումը, ներառյալ այն տարրերը, որոնք օգտագործվել են ծրագրի ամբողջականության աստիճանը պարզելու համար:				հաղորդումներին Հակակոռուպցիոն կոմիտեի ներկայացուցիչների կողմից տրված հարցազրույցների միջոցով լայնորեն լուսաբանվել են հանրության շրջանում հնչեղություն ստացած քրեական գործերի ընթացքն ու Կոմիտեի կողմից մշակված իրավական ակտերը: https://anticorruption.am/hy/news/view/173 Համաձայն Հակակոռուպցիոն կոմիտեի 2023 թ. գործունեության վերաբերյալ հաղորդման, կարևորելով Հակակոռուպցիոն կոմիտեի թափանցիկ գործելաոճն ու հաշվետվողականությունը Կոմիտեի գործունեության նկատմամբ հասարակության վստահության ամրապնդման հարցում և այդ կերպ նաև կոռուպցիոն հանցագործությունների կանխարգելման ու բացահայտման արդյունավետությունը բարձրացնելու հանգամանքը՝ 2023 թ.-ին ևս շարունակվել են լայնածավալ լուսաբանման աշխատանքները կառույցի ընթացիկ գործունեության և օրենքով վերապահված հիմնական գործառույթների իրազեկման վերաբերյալ: https://anticorruption.am/hy/pages/show/report 2023 թ. հոկտեմբերի 23-ի ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ Սասուն Խաչատրյանը իր ելույթում նշել է, որ «կոմիտեի գործունեության 2 տարիների ընթացքում պարեկային ծառայության կողմից իրականացվել է նման 64 ձերբակալություն, որից 28-ը՝ 2022 թ. ընթացքում, իսկ 36-ը՝ 2023 թ. 9 ամիսների ընթացքում: Նշված բոլոր դեպքերում հարուցվել են քրեական վարույթներ, դատի են տրվել 2022 թ.-ին 16 անձինք, իսկ այս տարվա 9-ը ամիսների ընթացքում՝ 32 անձինք: Նման դեպքերը մենք լայնորեն լուսաբանում ենք կոմիտեի կայքէջում, ինչպես նաև զանգվածային լրատվամիջոցների և սոցիալական ցանցերի միջոցով, ինչը, կարծում եմ, նույնպես պետք է ունենա կանխարգելիչ նշանակություն»:

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							https://anticorruption.am/hy/news/view/294 Հակակոռուպցիոն կոմիտեից հայտնել են, որ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում առկա չեն կոռուպցիոն ռիսկերի հիման վրա մշակված հակակոռուպցիոն ծրագրեր կամ բարեվարքության ծրագրեր:
38.	Հակակոռուպցիոն կրթություն (դասընթացներ) և զարգացում	Հակակոռուպցիոն կոմիտեի տարեկան հաշվետվություն և կայք, հարցազրույցներ Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, ՔՀԿ-ների ղեկավարների, դոնոր կազմակերպությունների հետ, մամուլի հաղորդումներ	Հակակոռուպցիոն կոմիտեն նախաձեռնել է հակակոռուպցիոն կրթության և զարգացման սակավաթիվ նախաձեռնություններ կամ ոչ մի նախաձեռնություն	Հակակոռուպցիոն կոմիտեն նախաձեռնել է հակակոռուպցիոն կրթության և զարգացման որոշ նախաձեռնություններ (տարեկան միջինը 1-4)	Հակակոռուպցիոն կոմիտեն նախաձեռնել է հակակոռուպցիոն կրթության և զարգացման բազմաթիվ նախաձեռնություններ (տարեկան միջինը 5 և ավելի)	Միջին	Հակակոռուպցիոն կոմիտեի 2022 թ. 1-ին կիսամյակի ամփոփ տեղեկատվության համաձայն՝ Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչները մասնակցել են ԵԱՀԿ-ի և ՀՀ-ում Շվեյցարիայի Համադաշնության դեսպանության կողմից կազմակերպված վերապատրաստման դասընթացներին: https://anticorruption.am/hy/pages/show/report-semester 2023 թ. 1-ին կիսամյակի ընթացքում շարունակվել է սերտ համագործակցությունը միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների՝ համանման գործառույթներ իրականացնող գործընկեր կառույցների հետ քննչական և օպերատիվ-հետախուզական գործունեության ոլորտում միջազգային լավագույն փորձի ուսումնասիրման նպատակով: Միջազգային գործընկերների աջակցությամբ պարբերաբար վերապատրաստման դասընթացներ են կազմակերպվել Կոմիտեի ծառայողների համար, որոնց արդյունքում ձեռքբերված գիտելիքները ներդրվել են կոռուպցիայի դեմ պայքարի շրջանակում տարվող ամենօրյա աշխատանքներում: Երկկողմ համագործակցության և գործընկերային հարաբերությունների հաստատման և ընդլայնման նպատակով նաև պայմանավորվածություններ են ձեռք բերվել Իտալիայի, Չինաստանի և Վրաստանի համապատասխան իրավապահ մարմինների հետ փոխըմբռնման և համագործակցության հուշագրեր կնքելու շուրջ: https://anticorruption.am/hy/pages/show/report-semester
			Ուղղորդում: Այս ցուցանիշը գնահատում է Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից 2021-2023 թվականների ընթացքում նախաձեռնված հակակոռուպցիոն կրթության և վերապատրաստման նախաձեռնությունները, ներառյալ Հակակոռուպցիոն կոմիտեի կազմակերպած քննարկումներին և սեմինարներին մասնակցող անձանց թիվը, Հակակոռուպցիոն կոմիտե այցելած քաղաքացիների և օտարերկրյա պատվիրակների թիվը և վերապատրաստման դասընթացների քանակը և դրանց մասնակցած պաշտոնյաների թիվը:				

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							2022 թ. հոկտեմբերի 24-ի ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ Սասուն Խաչատրյանի ելույթի համաձայն՝ Հայաստանում հակակոռուպցիոն բարեփոխումների իրականացման ԵԱՀԿ ծրագրի շրջանակներում 2022 թ. մարտ-ապրիլ ամիսներին ՀՀ արդարադատության ակադեմիայում կազմակերպվել է Կոմիտեի քննիչների պաշտոնակատարների մասնագիտական կարողությունների զարգացմանը միտված գործնական դասընթացը, իսկ 2022 թ. օգոստոսին օպերատիվ-հետախուզական ստորաբաժանման աշխատակիցների մասնագիտական կարողությունների զարգացմանը միտված գործնական դասընթացները: Նշված ժամանակահատվածում Հակակոռուպցիոն կոմիտեի 7 ծառայողներ մասնակցել են ԱՄՆ-ում, Չեխիայում, Խորվաթիայում և Հունգարիայում կազմակերպված դասընթացներին, որոնք վերաբերել են կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննությանը, քրեական հետապնդմանը և հակակոռուպցիոն բարեփոխումների փորձի ուսումնասիրությանը: https://anticorruption.am/hy/news/view/173 2023 թ. հոկտեմբերի 23-ի ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ Սասուն Խաչատրյանի ելույթի համաձայն՝ կազմավորման օրվանից մինչև օրս ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողները մասնակցել են Հայաստանում կազմակերպված 25 մասնագիտական վերապատրաստման դասընթացների, որոնցից 12-ն իրականացվել են այս տարի: Այս ընթացքում Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողները մասնակցել են ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Չեխիայում, Խորվաթիայում, Ալբանիայում, Վրաստանում, Ղազախստանում և Հունգարիայում կազմակերպված 12 դասընթացների, որոնք վերաբերել են կոռուպցիոն բնույթի

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							հանցագործությունների քննությանը, քրեական հետապնդմանը, հակակոռուպցիոն բարեփոխումների փորձի ուսումնասիրությանը, ֆինանսական քննություններին և միջազգային իրավական փոխօգնությանը, ինչպես նաև արտերկրում իրականացված 5 հանդիպումների, աշխատաժողովների և նստաշրջանների: Աշխատակիցների ուսուցումը, վերապատրաստումները կրում են պերմանենտ բնույթ, և այստեղ օգտագործվում են թե՛ տեղական կարողությունները, և թե՛ արտասահմանյան մեր գործընկերների, միջազգային կազմակերպությունների կարողությունները: https://anticorruption.am/hy/news/view/294 Հակակոռուպցիոն կոմիտեի կայքի լրատվության բաժնի նորություններ ենթաբաժնի համաձայն՝ Հակակոռուպցիոն կոմիտեի կազմավորումից ի վեր Հայաստանում ԱՄՆ դեսպանատան թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության բյուրոյի կողմից («ԹՊԻՀ», «INL») շարունակական աշխատանքներ են տարվում կառույցի հետ գործընկերային հարաբերությունների խորացման և համագործակցության օրակարգի ընդլայնման նպատակով: Հիշյալ համագործակցության առանցքային ուղղություններից է Կոմիտեի ծառայողների մասնագիտական գիտելիքների և կարողությունների զարգացմանը միտված վերապատրաստման դասընթացների անցկացումը: Այդ շրջանակում 2023 թ. հունվարի 24-ին կազմակերպվել էր փողերի լվացման և ապօրինի հարստացման հանցանքների քննությանը, ինչպես նաև քրեական վարույթներով միջազգային իրավական փոխօգնության հարցերին վերաբերող վերապատրաստում: https://anticorruption.am/hy/news/view/199

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							Բացի այդ, Հայաստանում հակակոռուպցիոն բարեփոխումների իրականացման ԵԱՀԿ ծրագրի շրջանակներում 2022 թ. ապրիլի 19-20-ը ՀՀ արդարադատության ակադեմիայում կազմակերպվել է ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի քննիչների մասնագիտական կարողությունների զարգացմանը միտված գործնական դասընթաց: https://anticorruption.am/hy/news/view/128 2022 թ. օգոստոսի 8-12-ն անցկացվել են ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական ստորաբաժանման աշխատակիցների մասնագիտական կարողությունների զարգացմանը միտված գործնական դասընթացներ: https://anticorruption.am/hy/search 2022 թ. հոկտեմբերի 25-ից 28-ը Երևանում անցկացվել է ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական ստորաբաժանման աշխատակիցների մասնագիտական կարողությունների զարգացմանը միտված երկրորդ վերապատրաստումը: https://anticorruption.am/hy/news/view/172 Համաձայն 2019-2022 թթ. ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների եզրափակիչ գնահատման և մոնիթորինգի զեկույցի՝ 2022 թ. դրությամբ Հակակոռուպցիոն կոմիտեում պաշտոնավարում են 32 ինքնավար պաշտոն զբաղեցնող և 40 օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող անձինք, որոնք մրցութային կարգով նշանակվել են համապատասխան պաշտոնների: Հակակոռուպցիոն կոմիտեի քաղաքացիական ծառայողների 90%-ից ավելին մրցույթով նշանակվել է համապատասխան պաշտոնների, որոնց մի մասն (25 %) արդեն անցել է

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							վերապատրաստումներ: Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոններ զբաղեցնող և օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող անձանց 70%-ից ավելին անցել են վերապատրաստումներ: https://moj.am/storage/files/pages/pg_7967694028641_AC_M-A_Report_final_2023-compressed_1_.pdf 2023 թ. ընթացքում ՔՀԿ-ների նախաձեռնությամբ, տեղի է ունեցել 3 ճանաչողական այց Հակակոռուպցիոն կոմիտե՝ ուսանողական խմբերի մասնակցությամբ: Այցելուներին ներկայացվել է կառույցի գործառույթները, առաջնահերթություններն ու հիմնական մարտահրավերները, կոռուպցիայի դեմ տարվող պայքարի և Կոմիտեում ծառայության առանձնահատկությունները: Այցելությունների մասնակիցների քանակի մասին ինֆորմացիան բացակայում է: https://anticorruption.am/hy/news/view/248 https://anticorruption.am/hy/news/view/208 https://anticorruption.am/hy/news/view/287 ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեից ԹԻՀԿ հարցմանն ի պատասխան՝ հայտնել են, որ կազմավորումից ի վեր Կոմիտեն հյուրընկալել է տարբեր ուսումնական հաստատությունների և կրթական ծրագրերի շուրջ 200 շրջանավարտների ու ուսանողների, ինչպես նաև ՏԻՄ ներկայացուցիչների և համայնքային ծառայողների: Մասնավորապես, վերջին 2 տարվա ընթացքում կազմակերպվել է նման 10 հանդիպում Երևանի պետական համալսարանի իրավագիտության և քաղաքագիտության, ժուռնալիստիկայի ֆակուլտետների, Հայաստանի Եվրոպական համալսարանի և Գիտությունների ազգային ակադեմիայի իրավագիտության ամբիոնների ուսանողների, ինչպես նաև Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի կրթական ծրագրերի

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							շրջանավարտների և Երիտասարդ առաջնորդների հակակոռուպցիոն դպրոցի ունկնդիրների հետ: Ուսանողների, ինչպես նաև լրագրողների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ քննարկումներ ու հանդիպումներ են կազմակերպվել նաև բուհեր և այլ հաստատություններ արտագնա այցերի ձևաչափով: 2021-2023 թթ. ընթացքում Հակակոռուպցիոն կոմիտե այցելած օտարերկրյա պատվիրակների թիվը և/կամ պաշտոնական հանդիպումների քանակը կազմել է 73, որից 2021 թ. ընթացքում իրականացվել է 10, 2022 թ. ընթացքում՝ 34, 2023 թ.-ին՝ 29 պաշտոնական հանդիպում:
39.	Կանխարգելման վերաբերյալ իրավասու մարմինների ներկայացված առաջարկություններ	Հակակոռուպցիոն կոմիտեի տարեկան հաշվետվություն և կայք, հարցազրույցներ Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց հետ	Ամենևին	Երբեմն (իրավասու մարմիններին ներկայացված առաջարկությունների մինչև 50 %-ը բովանդակում է կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ կոնկրետ առաջարկություններ)	Հաճախ (իրավասու մարմիններին ներկայացված առաջարկությունների 50 %-ից ավելին բովանդակում է կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ կոնկրետ առաջարկություններ)	Ցածր	2022 թ. հոկտեմբերի 24-ի ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ Սասուն Խաչատրյանի ելույթի համաձայն՝ զգալի աշխատանքներ են կատարվել Կոմիտեի արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ իրավական տարբեր ակտերի մշակման, դրանցում փոփոխություններ և լրացումներ կատարելու ուղղությամբ: Մշակվել են 29 նորմատիվ իրավական ակտերի նախագծեր, 107 ներքին իրավական ակտեր: Ուսումնասիրվել են այլ մարմինների նախաձեռնած 133 իրավական ակտերի նախագծեր, որոնց վերաբերյալ ներկայացվել են առաջարկություններ և կարծիքներ: https://anticorruption.am/hy/news/view/173 Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության 2022 թ. հաղորդման համաձայն 2022 թ. ընթացքում Հակակոռուպցիոն կոմիտեն ներգրավվել է օրենքների և այլ իրավական ակտերի նախագծերի քննարկումներին՝ ներկայացնելով դրանց վերաբերյալ Կոմիտեի ունեցած դիրքորոշումները: Մասնավորապես, Կոմիտեն ուսումնասիրել է ավելի քան 150 իրավական ակտերի նախագծեր, իսկ օրենսդրական և
			Ուղղորդում: Այս ցուցանիշը գնահատում է Հակակոռուպցիոն կոմիտեի 2021-2023 թվականների գործունեության ընթացքում վեր				

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
			հանված կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ առաջարկությունների քանակը և դրանք տարեկան հաշվետվություններում ներառելու հաճախականությունը: Հավաքել տվյալներ 2021-2023 թվականների ընթացքում Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից պատրաստված հետաքննությունների հաշվետվությունների քանակի վերաբերյալ և բացահայտել Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից պատրաստված կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ առաջարկությունների (իրավական ակտերի նախագծեր, կոնկրետ առաջարկություններ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ կարծիքներ և այլն) քանակը և դրանց տեսակարար կշիռը իրավասու մարմիններին ներկայացրած ընդհանուր առաջարկությունների թվում, որպեսզի հնարավոր լինի որոշել նման առաջարկությունների հաճախականությունը: Սա արվում է պարզելու համար, թե Հակակոռուպցիոն կոմիտեն իր գործունեությամբ արդյո՞ք ակտիվորեն բացահայտում է համակարգային խնդիրները և տրամադրում առաջարկություններ: Եթե Հակակոռուպցիոն կոմիտեն հիմնականում անգործուն է համակարգային խնդիրների վերհանման բովանդակային առաջարկություններով, ապա անկախ իր գործունեության արդյունքներով ներկայացված առաջարկությունների քանակից հետազոտողը պետք է նշանակի միայն ցածր (կամ, հնարավոր է, միջին) միավոր:				ենթաօրենսդրական ակտերի 58 նախագծերի վերաբերյալ ներկայացրել է դիտողություններ և առաջարկություններ: https://anticorruption.am/hy/pages/show/report Իսկ 2023 թ. ընթացքում ուսումնասիրվել են ավելի քան 273 իրավական ակտերի նախագծեր, օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերի 50 նախագծերի վերաբերյալ ներկայացվել են դիտողություններ և առաջարկություններ, այդ թվում մասնակցություն է ապահովվել օրենքների և այլ իրավական ակտերի նախագծերի քննարկումներին: ԹԻՀԿ հարցման արդյունքներով ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեն կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ մշակված իրավական ակտերի նախագծերի առնչությամբ, ըստ անհրաժեշտության, ներկայացնում է դիտողություններ և առաջարկություններ, սակայն ներկայացված առաջարկությունների քանակի վերաբերյալ առանձնացված հաշվառում չի իրականացվում: Հակակոռուպցիոն կոմիտեի իրավական ապահովման վարչությանը, որը պատասխանատու է Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից շրջանառության մեջ դրվելիք նորմատիվ իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքների իրականացման համար, նաև ընձեռված է համապատասխան ստորաբաժանումներից տեղեկատվության ստացման, ոլորտների և դրանց առանձին ծրագրերի վերլուծության իրականացման, դրանց բարելավման կամ առանձին ուղղությունների ու ոլորտի մասնագիտական ծրագրերի վերաբերյալ առաջարկությունների տրամադրման լիազորություններով: https://anticorruption.am/public/uploads/files/file-U3j8154rsB.pdf Այդուհանդերձ, առկա տվյալների վերլուծությունը թույլ չի տալիս եզրակացնել, որ իրավասու մարմիններին ներկայացված առաջարկությունները բովանդակում են

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ կոնկրետ առաջարկություններ, որոնք բխում են Հակակոռուպցիոն կոմիտեի գործառույթների իրականացման ընթացքում վերհանված խնդիրներից:
40.	Հետազոտություն կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ	Հակակոռուպցիոն կոմիտեի տարեկան հաշվետվությունն և կայք, հարցազրույցներ Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, ՔՀԿ-ների ղեկավարների և կոռուպցիայի դեմ պայքարի փորձագետների հետ	Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից իրականացվել են փոքր ծավալի կամ աննշան անկախ հետազոտություններ կոռուպցիոն ռիսկերի գնահատման և կոռուպցիայի ոլորտային պրոֆիլների մշակման համար	Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից իրականացվել են որոշ ծավալի հետազոտություններ կոռուպցիոն ռիսկերի գնահատումների և կոռուպցիայի ոլորտային պրոֆիլների մշակման համար	Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից իրականացվել են լայնածավալ հետազոտություններ կոռուպցիոն ռիսկերի գնահատումների և կոռուպցիայի ոլորտային պրոֆիլների մշակման համար	Ցածր	ԹԻՀԿ հարցմանն ի պատասխան՝ Հակակոռուպցիոն կոմիտեն նշել է, որ կոռուպցիոն հանցագործությունների տարածվածության, մակարդակի, համատեքստի, և պայմանների վերաբերյալ հետազոտություններ և ուսումնասիրություններ, ըստ անհրաժեշտության, կատարվում են, սակայն վերջիններիս վերաբերյալ առանձին հաշվառում չի իրականացվում:
			Ուղղորդում: Այս ցուցանիշը գնահատում է Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից կոռուպցիոն հանցագործությունների բացահայտման գործում կոռուպցիայի տարածվածության, մակարդակի, համատեքստի և պայմանների հետազոտությունների ու ուսումնասիրությունների օգտագործման հնարավորությունները: Հավաքագրել տվյալներ և տեղեկություններ Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի և այլ հետազոտողների կողմից				

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
			երկրում առկա կոռուպցիայի վերաբերյալ իրականացվող հետազոտական նախագծերի մասին, եթե այդպիսիք առկա են կամ կիրառելի: Ներառված հետազոտությունները պետք է նախաձեռնվեն և համակարգվեն Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից:				
41.	Տեղեկատվության տարածում և քարոզարշավներ	Հակակոռուպցիոն կոմիտեի տարեկան հաշվետվությունն և կայք, հարցազրույցներ Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, ՔՀԿ-ների ղեկավարների հետ, լրատվամիջոցների հաղորդումներ	Չի տարածում կոռուպցիոն հանցագործությունների նախականխման/հակազդման վերաբերյալ տեղեկությունները և չի դիմում քարոզարշավների	Կոռուպցիոն հանցագործությունների նախականխման/հակազդման վերաբերյալ տեղեկությունների սահմանափակ տարածում և քարոզարշավների սահմանափակ օգտագործում	Կոռուպցիոն հանցագործությունների նախականխման/հակազդման վերաբերյալ տեղեկությունների ընդարձակ կերպով տարածում և քարոզարշավների ընդարձակ կերպով օգտագործում	Միջին	Հակակոռուպցիոն կոմիտեի կայքը, ինչպես նաև Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության վերաբերյալ տարեկան հաղորդումները չեն պարունակում տեղեկություններ՝ Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից քարոզարշավներ կազմակերպելու վերաբերյալ: 2022 թ. հոկտեմբերի 24-ի ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ Սասուն Խաչատրյանի ելույթի համաձայն՝ զանգվածային լրատվության տարբեր միջոցներով, այդ թվում՝ հեռուստաընկերությունների լրատվական թողարկումներին ու իրավական ուղղվածության հաղորդումներին Հակակոռուպցիոն կոմիտեի ներկայացուցիչների կողմից տրված հարցազրույցների միջոցով լայնորեն լուսաբանվել են հանրության շրջանում հնչեղություն ստացած քրեական գործերի ընթացքն ու Կոմիտեի կողմից մշակված իրավական ակտերը: https://anticorruption.am/hy/news/view/173 Համաձայն Հակակոռուպցիոն կոմիտեի 2023 թ. գործունեության վերաբերյալ հաղորդման՝ 2023 թ.-ին ևս շարունակվել են լայնածավալ լուսաբանման աշխատանքները կառույցի ընթացիկ գործունեության և օրենքով վերապահված հիմնական գործառույթների իրազեկման վերաբերյալ: https://anticorruption.am/hy/pages/show/report 2023 թ. հոկտեմբերի 23-ի ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ Սասուն Խաչատրյանը նշել է, որ կոռուպցիոն դեպքերը լայնորեն լուսաբանվում են կոմիտեի կայքում,
			Ուղղորդում: Այս ցուցանիշը գնահատում է Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից տարածված՝ կոռուպցիոն հանցագործությունների նախականխման/հակազդման վերաբերյալ տեղեկությունների տեսակը, և թե Հակակոռուպցիոն կոմիտեն կազմակերպո՞ւմ է քարոզարշավներ՝ տարածելու կոռուպցիայի դեմ պայքարի ուղերձը:				

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							ինչպես նաև զանգվածային լրատվամիջոցների և սոցիալական ցանցերի միջոցով, ինչը, նույնպես պետք է ունենա կանխարգելիչ նշանակություն: https://anticorruption.am/hy/news/view/294 ՀՀ վարչապետի 2022 թ. N 820-L որոշմամբ հաստատվել է կոռուպցիայի դեմ պայքարի շրջանակներում հաղորդակցման գործողությունների ծրագիրը, որով նախատեսվել են հաղորդակցման գործողությունների շրջանակը, հաղորդակցման եղանակները և միջոցները, ակնկալվող արդյունքները: https://www.e-gov.am/u_files/file/decrees/varch/2022/820_1.pdf Այսպես, «Կոռուպցիայի դեմ պայքարի մարմինների գործունեության վերաբերյալ տեղեկատվական արշավ» գործողության շրջանակներում ակնկալվում էր իրազեկող տեսահոլովակների հեռարձակումը (ցուցադրումը) կամ տեղեկատվական նյութերի սոցիալական ցանցերում և պաշտոնական կայքերում հրապարակումը, հնարավորության դեպքում զանգվածային լրատվության միջոցներում հրապարակումը: Որպես ակնկալվող արդյունք նախատեսվում էր, որ հանրային իրազեկման արշավների արդյունքում հասարակությունը պետք է տեղեկացվի Հակակոռուպցիոն կոմիտեի ընթացիկ գործունեության մասին: Նշված գործողությունների կատարման տեսանկյունից Հակակոռուպցիոն կոմիտեն հանդես է գալիս որպես համակատարող մարմին, իսկ որպես հիմնական կատարող հանդես է գալիս Արդարադատության նախարարությունը՝ ի դեմս Հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչության, որի գործառույթները ներառում են հակակոռուպցիոն քաղաքականության՝ ներառյալ ռազմավարությունների և ծրագրերի կոռուպցիայի դեմ պայքարի հաղորդակցման

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							ծրագրերի մշակումը, Կառավարության ծրագրով և այլ ռազմավարական փաստաթղթերով սահմանված՝ կոռուպցիայի դեմ պայքարին ուղղված միջոցառումների մշակում և իրականացումը և այլն: Ընդ որում, ԹԻՀԿ հարցման արդյունքները վկայում են, որ «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» N 1871-Լ որոշման շրջանակներում առկա են համապատասխան գործողություններ՝ կապված իրազեկման ծրագրերի և միջոցառումների հետ: Նշված գործողությունների կատարման տեսանկյունից ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեն, հանդես է գալիս որպես համակատարող մարմին, իսկ որպես հիմնական կատարողներ հանդես են գալիս այլ պետական մարմինները, ուստի նշված ծրագրերի առնչությամբ առանձին հաշվառում Հակակոռուպցիոն կոմիտեն չի իրականացնում: Տեղեկատվության տարածման միջոցառումներ և քարոզարշավներ Հակակոռուպցիոն կոմիտեն չի իրականացնում: Հակակոռուպցիոն կոմիտեի կայքի լրատվական բաժնի վերլուծությունից ակնհայտ է, որ լուսաբանվում են ոչ բոլոր կոռուպցիոն դեպքերը, այլ հիմնականում առկա է ընտրողական մոտեցում: Միևնույն ժամանակ, պետք է արձանագրել, որ հաճախ, վարույթների նախաձեռնման մասին հայտարարելուց հետո, Հակակոռուպցիոն կոմիտեն հանրությանը չի տեղեկացնում քննության արդյունքների մասին, ինչը խնդրահարույց է Հակակոռուպցիոն կոմիտեի հաշվետվողականության տեսանկյունից՝ առավել ևս բարձր

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							հնչեղություն ունեցող բարձրաստիճան պաշտոնատար անձանց և քաղաքական ազդեցություն ունեցող անձանց վերաբերյալ կոռուպցիոն վարույթների մասով:
42.	Առցանց հաղորդակցում	Հակակոռուպցիոն կոմիտեի տարեկան հաշվետվություն և կայք, հարցազրույցներ Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, ՔՀԿ-ների ղեկավարների հետ, լրատվամիջոցների հաղորդումներ	Հակակոռուպցիոն կոմիտեն չունի կայք և չի օգտվում սոցցանցերից կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ տեղեկությունները տարածելու համար	Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից իր կայքի և սոցցանցերի սահմանափակ օգտագործում կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ տեղեկություններ տարածելու համար	Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից իր կայքի և սոցցանցերի ընդարձակ կերպով օգտագործում կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ տեղեկություններ տարածելու համար	Բարձր	Հակակոռուպցիոն կոմիտեի գործառույթներն առավելապես լուսաբանելու նպատակով պաշտոնական կայքում պարբերաբար տեղադրվում են կոմիտեի գործունեությանն առնչվող տեղեկատվական, վերլուծական բնույթի նյութեր: Այս ուղղությամբ 2022 թ.-ին www.anticorruption.am կայքում շուրջ 73 հրապարակում է տեղադրվել, իսկ 2023 թ.-ին՝ 116: Հաշվետու ժամանակահատվածում ակտիվորեն գործարկվել և շարունակաբար իր լսարանն է ընդարձակել Հակակոռուպցիոն կոմիտեի ֆեյսբուքյան էջը: Այս պահին էջն ունի մոտ 3600 հետևորդ: Հակակոռուպցիոն կոմիտեի կայքում հրապարակված են մարմնի պատմությունը, կոմիտեի նախագահի, նրա տեղակալների, վարչությունների մասին տեղեկություններ, կոմիտեի ամենամյա և կիսամյակային հաշվետվությունները: Կայքում հրապարակված են մարմնի գործունեությանն առնչվող որոշ նորմատիվ իրավական ակտեր՝ օրենքներ, հրամաններ: Հակակոռուպցիոն կոմիտեի կայքը պարունակում է հետադարձ կապի ապահովման համար անհրաժեշտ տեղեկատվություն: Հակակոռուպցիոն կոմիտեի պաշտոնական սոցիալական ցանցերի (ֆեյսբուքյան էջ, յութուբյան հարթակ և տելեգրամ) էջերի հղումները նշված են տեսանելի տեղում: Սակայն նշված 3 սոցիալական հարթակներից գործում է միայն 2-ը: Կայքն ունի բջջային հեռախոսներին հարմարեցված տարբերակ: Առանձին բաժնով առկա է կայքի քարտեզ՝ ակտիվ հղումներով:
			Ուղղորդում: Այս ցուցանիշը գնահատում է Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից առցանց հաղորդակցման ուղիների/սոցցանցերի օգտագործումը կոռուպցիայի կանխարգելման վերաբերյալ տեղեկությունների տարածման համար: Վերլուծել Հակակոռուպցիոն կոմիտեի կայքը և այլ առցանց հաղորդակցման ուղիները՝ պարզելու Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության վերաբերյալ տրամադրված տեղեկությունների քանակն ու տեսակը: Հանրության հետ կապ հաստատելու համար Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից սոցցանցերի օգտագործումը նույնպես պետք է պարզվի,				

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
			ներառյալ՝ Հակակոռուպցիոն կոմիտեն արդյո՞ք ունի առցանց հաղորդակցության ընդարձակ ռազմավարություն:				Կայքում գործում է որոնման համակարգը: Հրապարակվող փաստաթղթերը, մասնավորապես՝ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի հրամանները, չեն համապատասխանում բաց տվյալների սկզբունքներին: Դրանք չունեն մատչելի ձևաչափ, ներկայացվում են միայն PDF ձևաչափով, չունեն պատճենելու հնարավորություն, մեքենայաընթեռնելի չեն, դրանցում առկա տեղեկատվությունը առկա չէ այլընտրանքային ձևաչափերով: Առկա չէ տեքստերը ձայնային տարբերակով ներկայացնելու գործիք: Առկա չէ թափուր աշխատատեղերի առանձին բաժին: Դրանց մասին ինֆորմացիան ներկայացված է «Հայտարարություններ» ընդհանուր բաժնում: Առկա չէ տեղեկություն/խորհրդատվություն ստանալու կամ հարցում ներկայացնելու կարգի մասին ինֆորմացիա: Տեղեկություն ստանալու հարցման օրինակելի ձևը և լրացման վերաբերյալ ցուցումները բացակայում են: Ստացված հարցումների ամենամյա վիճակագրական տվյալները՝ ըստ բանավոր, գրավոր, վերահասցեագրված, մերժված և բավարարված հարցումների, բացակայում են: Կայքում հրապարակված չէ տեղեկություն քաղաքացիների հանրային մասնակցության մեխանիզմների և ընթացակարգերի վերաբերյալ: Կայքում առկա չեն քաղաքացիների կողմից կարծիք, մեկնաբանություն թողնելու դաշտեր: Կայքում առկա է տեղեկություն քաղաքացիների ընդունելության կարգի, օրերի, ժամերի և վայրի մասին: Կայքում առանձին բաժնով հրապարակված են մարմնի բյուջետային հատկացումների մասին տեղեկությունները: Կայքում առկա է ազդարարման առանձնացված պատուհան: Կայքում առկա չէ «Հաճախ տրվող հարցեր» բաժինը:

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							Ընդհանուր առմամբ, Հակակոռուպցիոն կոմիտեի կայքն իր ձևով, կառուցվածքով, նավիգացիոն տրամաբանությամբ, բաժինների և ենթաբաժինների տեղակայմամբ և բովանդակությամբ ունի բարելավման կարիք:
	Հակակոռուպցիոն կոմիտեի կանխարգելման, կրթման և իրազեկման միավորի հանրագումարը					4/14=28.5 %	
	Համագործակցություն և արտաքին հարաբերություններ (6 ցուցանիշ)						
43.	Վստահությունը Կառավարության կողմից Հակակոռուպցիոն կոմիտեին ցուցաբերվող աջակցության հանդեպ	Հակակոռուպցիոն կոմիտեի հանրային ընկալումների հետազոտություն (եթե առկա է), լրատվամիջոցների հաղորդումներ, հարցազրույցներ Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, ՔՀԿ-ների ղեկավարների, կոռուպցիայի դեմ պայքարի փորձագետների	Վստահության ցածր մակարդակ, ինչն արտացոլված է հարցման արդյունքներում (50 %-ից ցածր) և Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, ՔՀԿ ղեկավարների, կոռուպցիայի դեմ պայքարի փորձագետների և լրագրողների տեսակետներում	Վստահության միջին մակարդակ, ինչն արտացոլված է հարցման արդյունքներում (50-75 %) և Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, ՔՀԿ ղեկավարների, կոռուպցիայի դեմ պայքարի փորձագետների և լրագրողների տեսակետներում	Վստահության բարձր մակարդակ, ինչն արտացոլված է հարցման արդյունքներում (75 %-ից բարձր) և Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, ՔՀԿ ղեկավարների, կոռուպցիայի դեմ պայքարի փորձագետների և լրագրողների տեսակետներում	Հնարավոր չէ գնահատել	2023 թ. հոկտեմբերի 23-ի ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ Սասուն Խաչատրյանը նշել է, որ Հակակոռուպցիոն կոմիտեն մշտապես զգում է ՀՀ կառավարության պատրաստակամությունը՝ լուծելու կոմիտեի առջև ծառացող խնդիրները, ինչի համար շնորհակալություն է հայտնել Կոմիտեի բոլոր գործընկերներին, ՀՀ կառավարությանը և անձամբ ՀՀ վարչապետին: https://anticorruption.am/hy/news/view/294

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
		ի, լրագրողների հետ	*Ուղղորդում*: Այս ցուցանիշը գնահատում է հասարակության վստահությունն առ այն, որ Կառավարությունը Հակակոռուպցիոն կոմիտեին տրամադրել է անհրաժեշտ լիազորություններ և ռեսուրսներ կոռուպցիայի դեմ պայքարելու համար: Գնահատումը հնարավորինս պետք է հիմնված լինի հետազոտության արդյունքների վրա և հարկ եղած դեպքում լրացվի Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, ՔՀԿ ղեկավարների, դոնոր կազմակերպությունների ներկայացուցիչների, կոռուպցիայի դեմ պայքարի փորձագետների և լրագրողների հետ հարցազրույցներով: Պետք է տրամադրվի հարցման մասնակիցների բնութագիրը՝ ըստ տարիքի, սեռի, զբաղմունքի և կրթական որակավորման: Եթե Հակակոռուպցիոն կոմիտեն իրականացրել կամ պատվիրել է հանրային ընկալումների հարցումներ, պահանջել այդ հարցումների հաշվետվությունները Հակակոռուպցիոն կոմիտեի անդամներից և անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանցից: Բացի դրանից, որպես Հակակոռուպցիոն Կոմիտեին Կառավարության ցուցաբերած աջակցության լուսաբանում՝ հաշվի առնել նաև Կոռուպցիայի համաշխարհային բարոմետրի (ԿՀԲ) հետևյալ հարցի պատասխանները «Ձեր կարծիքով ներկայիս կառավարությունը որքանո՞վ է լավ կամ վատ զբաղվում հետևյալ հարցերով. […] Պայքար կոռուպցիայի դեմ կառավարությունում» (ԿՀԲ-ի հարց թիվ T17):				

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
44.	Համագործակցություն կոռուպցիայի դեմ պայքարով զբաղվող այլ մարմինների հետ	Հակակոռուպցիոն կոմիտեի տարեկան հաշվետվություն և կայք, հարցազրույցներ Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, պետական և ՏԻՄ մարմինների հետ, այլ մարմինների միջև	Հակամարտություն և (կամ) գործակցության բացակայություն կոռուպցիայի դեմ պայքարով զբաղվող այլ մարմինների հետ	Սահմանափակ գործակցություն կոռուպցիայի դեմ պայքարով զբաղվող այլ մարմինների հետ	Գործակցության բարձր աստիճան կոռուպցիայի դեմ պայքարով զբաղվող այլ մարմինների հետ	Բարձր	2023 թ. հոկտեմբերի 23-ի ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ Սասուն Խաչատրյանը նշել է, որ Կոմիտեն ակտիվորեն համագործակցում է ՀՀ իրավապահ մյուս մարմինների իր գործընկերների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ, և ապագայում էլ նախատեսում ենք այդ համագործակցությունը խորացնել և ընդլայնել փոխգործակցության դաշտը: https://anticorruption.am/hy/news/view/294 Գլխավոր դատախազության ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչությունը հսկողություն է իրականացնում այն բոլոր հանցագործությունների դեպքերով նախաձեռնված քրեական վարույթների շրջանակում մինչդատական վարույթի նկատմամբ, որոնցով մինչդատական վարույթ է իրականացվու ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում: https://www.prosecutor.am/structure «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ գլխավոր դատախազությունը յուրաքանչյուր տարի՝ մինչև ապրիլի 1-ը, հրապարակում է հանցագործությունների քննության վերաբերյալ հաղորդում ՀՀ գլխավոր դատախազության կայքում: Կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննության արդյունքների վերաբերյալ տեղեկությունները, վիճակագրական տվյալները, համեմատական վերլուծությունները և եզրահանգումները ներկայացվում են առանձին: https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=195945 Կոռուպցիոն բնույթի հանցագործությունների վիճակագրական տվյալները ՀՀ գլխավոր դատախազությունը ստանում է Հակակոռուպցիոն կոմիտեից:
			Ուղղորդում: Այս ցուցանիշը գնահատում է Հակակոռուպցիոն կոմիտեի՝ կոռուպցիայի դեմ պայքարով զբաղվող այլ մարմինների հետ (Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով, Հաշվեքննիչ պալատ, ՄԻՊ, Գլխավոր դատախազություն և այլն) հարաբերությունները, կոռուպցիոն հանցագործությունների նախականխման/հետապնդման գործընթացում/տեղեկատվական գործունեության տեսանկյունից: Եթե երկրում կան կոռուպցիայի դեմ պայքարող մի քանի մարմիններ, ապա պետք է վերլուծվեն Հակակոռուպցիոն կոմիտեի՝ այլ մարմինների հետ հարաբերությունները: Եթե առկա է գործակցության կամ համակարգման բացակայություն Հակակոռուպցիոն կոմիտեի և կոռուպցիայի դեմ պայքարով զբաղվող այլ մարմինների միջև, նշել դրանց պատճառները:				

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							Ակնհայտ է կապը ԿԿՀ-ի հետ: Այսպես, ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում քննված քրեական գործի նախաքննությամբ ձեռք բերված բավարար ապացույցների համակցությամբ պարզվել է, որ Ա. Մաթևոսյանը, հանդիսանալով հայտարարատու պաշտոնատար անձ, դիտավորությամբ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով չի ներկայացրել օրենքով նախատեսված գույքի և եկամուտների հայտարարագրերը: Այդ կապակցությամբ հիշյալ հանձնաժողովում դեռևս 2021 թ. դեկտեմբերի 8-ին հարուցվել և իրականացվել է վարչական վարույթ, որի ընթացքում Ա. Մաթևոսյանի նկատմամբ օրենքով սահմանված կարգով կիրառվել է վարչական տույժ: Վերջինս, սակայն, պատշաճ ծանուցված լինելով սահմանված ժամկետում հայտարարագրերը ներկայացնելու պարտականության, իսկ դրանք չներկայացնելու դեպքում՝ քրեական պատասխանատվության ենթարկվելու մասին, վարչական տույժի կիրառումից հետո՝ 30 օրվա ընթացքում, կրկին դիտավորությամբ չի ներկայացրել հայտարարագրերը: https://anticorruption.am/hy/news/view/121 Մեկ այլ գործով, նախաքննությամբ հիմնավորվել է, որ ՀՀ ԱԺ նախկին պատգամավոր Ա. Գ.-ն ապօրինի հարստացել և օրինականացրել է (լվացել է) հանցավոր ճանապարհով ստացված շուրջ 1 միլիարդ 433 միլիոն ՀՀ դրամի գույքը, թաքցրել հայտարարագրման ենթակա տվյալները: https://anticorruption.am/hy/news/view/271
45.	Համագործակցություն ոչ կառավարական (հասարակ	Հակակոռուպցիոն կոմիտեի տարեկան հաշվետվություն և կայք, հարցազրույցն	Հակամարտություն և (կամ) գործակցության բացակայություն	Սահմանափակ գործակցություն Հակակոռուպցիոն կոմիտեի	Գործակցության բարձր աստիճան Հակակոռուպցիոն կոմիտեի և ոչ	Բարձր	Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ համագործակցությունը հիմնականում դրսևորվում է տարբեր ծրագրերի շրջանակներում Հակակոռուպցիոն կոմիտե ճանաչողական այցերի, հանդիպումների կազմակերպման եղանակներով:

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
	ական) կազմակերպությունների հետ	եր Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց, ՔՀԿ-ների ղեկավարների և մասնավոր ընկերությունների անձնակազմի ներկայացուցիչների հետ	Հակակոռուպցիոն կոմիտեի և ոչ կառավարական կազմակերպությունների, այդ թվում՝ ՔՀԿ-ների և մասնավոր ընկերությունների միջև	և ոչ կառավարական կազմակերպությունների, այդ թվում՝ ՔՀԿ-ների և մասնավոր ընկերությունների միջև	կառավարական կազմակերպությունների, այդ թվում՝ ՔՀԿ-ների և մասնավոր ընկերությունների միջև		Այսպես, «Իրազեկ քաղաքացիների միավորում» հասարակական կազմակերպության նախաձեռնությամբ և Freedom House կազմակերպության աջակցությամբ իրականացվող «Հայաստանում ժողովրդավարական մշակույթի առաջմղում» ծրագրի շրջանակներում ուսանողների հերթական այցն էր կազմակերպվել ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե: Կոմիտեն հյուրընկալել էր ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի գիտակրթական միջազգային կենտրոնի իրավագիտության ամբիոնի մագիստրանտներին, Հայաստանի Եվրոպական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի ուսանողներին, ԵՊՀ իրավագիտության և քաղաքագիտության ֆակուլտետների ուսանողներին: https://anticorruption.am/hy/news/view/243 https://anticorruption.am/hy/news/view/229 https://anticorruption.am/hy/news/view/224 ԹԻՀԿ կրթական նախաձեռնության շրջանակներում կենտրոնի կրթական ծրագրերի շրջանավարտները պարբերաբար այցելում են ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե և հանդիպում Կոմիտեի նախագահ Սասուն Խաչատրյանի հետ: https://anticorruption.am/hy/news/view/248 https://anticorruption.am/hy/news/view/287 «Հակակոռուպցիոն մեդիադպրոց» թեմայով ծրագրի շրջանակներում ՀՀ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ Սասուն Խաչատրյանն հանդիպել է ԵՊՀ ժուռնալիստիկայի ֆակուլտետի ուսանողների հետ և նրանց ծանոթացրել իր ղեկավարած կառույցի գործառույթներին, անդրադարձել կոռուպցիայի դեմ տարվող պայքարի մեխանիզմներին, ինչպես նաև այդ երևույթի շուրջ հանրային ընկալման, կոռուպցիոն և, ընդհանրապես, իրավական թեմաների լուսաբանման առանձնահատկություններին:
			Ուղղորդում: Այս ցուցանիշը գնահատում է Հակակոռուպցիոն կոմիտեի և երկրի ոչ կառավարական կազմակերպությունների, այդ թվում՝ ՔՀԿ-ների, դոնոր կազմակերպությունների, մասնավոր ընկերությունների և պետական մասնակցությամբ ձեռնարկությունների միջև գործակցությունը՝ կոռուպցիայի դեմ պայքարի, գործունեության հանրայնացման առումով: Հետազոտողը պետք է խնդրի այն անձանց, ում հետ հարցազրույց է վարում, բերել համապատասխան օրինակներ կամ դեպքերի մանրամասներ, որոնք ցույց են տալիս Հակակոռուպցիոն կոմիտեի և ոչ կառավարական կազմակերպությունների միջև համագործակցության աստիճանը:				

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							https://anticorruption.am/hy/news/view/208 Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ համագործակցությունը դրսևորվում է նաև Հակակոռուպցիոն կոմիտեի՝ օրենքով սահմանված որոշ պաշտոնների համալրման նպատակով անցկացվող մրցույթների շրջանակներում դիտորդական առաքելություն իրականացնելու, ինչպես նաև մրցութային և ատեստավորման հանձնաժողովներում ներգրավվելու հնարավորություն ընձեռելու շրջանակներում: Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ համագործակցությունը դրսևորվել է նաև միջազգային դոնոր կազմակերպությունների կողմից իրականացվող միջոցառումների, այդ թվում՝ առանձին աշխատաժողովների շրջանակներում նրանց մասնակցության, առանձին նախագծերի վերաբերյալ կարծիքների ստացման եղանակներով: https://transparency.am/hy/publications/view/378
46.	Միջազգային հակակոռուպցիոն ցանցեր	Հակակոռուպցիոն կոմիտեի տարեկան հաշվետվություն և կայք, հարցազրույցներ Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող	Հակակոռուպցիոն կոմիտեն չի մասնակցում որևէ հակակոռուպցիոն ցանցի	Ակտիվ է՝ Հակակոռուպցիոն կոմիտեն մասնակցում է 1 կամ 2 հակակոռուպցիոն ցանցերի	Շատ ակտիվ է՝ Հակակոռուպցիոն կոմիտեն մասնակցում է 3 կամ ավելի հակակոռուպցիոն ցանցերի	Բարձր	2022 թ. հունվարի 20-ին ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի և Բազելի կառավարման ինստիտուտի միջև ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր կոռուպցիայի, տնտեսության դեմ ուղղված հանցագործությունների կամ հանցավոր գործունեության այլ տեսակների միջոցով ձեռք բերված ակտիվների բացահայտման և դրանց վերադարձի ուղղությամբ աջակցություն ցուցաբերելու, ինչպես նաև նշված հանցագործությունների արդյունավետ քննությանն ուղղված ծրագրերի և ռազմավարությունների մշակմանը նպաստելու նպատակով: Հիշյալ ծրագրերն իրականացվում են Ակտիվների վերականգնման միջազգային կենտրոնի (ICAR) միջոցով՝ հատուկ մասնագետների խմբի կողմից
			Ուղղորդում: Այս ցուցանիշը գնահատում է Հակակոռուպցիոն կոմիտեի մասնակցությունը (ներգրավվածությունը) միջազգային հակակոռուպցիոն ցանցերին և նրա մասնակցության (ներգրավվածության)				

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
		անձանց, ՔՀԿ-ների ղեկավարների և դոնոր կազմակերպությունների ներկայացուցիչների հետ	աստիճանը: Այն կարող է ներառել, օրինակ, ՏՀՁԿ գործողությունների Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների նախաձեռնությունը կամ ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի կոալիցիան կամ ԳՐԵԿՈ-ն: Եթե Հակակոռուպցիոն կոմիտեն չի մասնակցում որևէ միջազգային հակակոռուպցիոն ցանցի, խնդրեք Հակակոռուպցիոն կոմիտեի անդամներին և անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց բացատրել, թե ինչու է դա այդպես:				օպերատիվ կերպով տրամադրվող տարաբնույթ խորհրդատվություններով և հետազոտություններով: https://anticorruption.am/hy/icnews/view/114 Հակակոռուպցիոն կոմիտեն մասնակցություն ունի Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցի Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրում: https://www.oecd.org/corruption/acn/istanbul-action-plan.htm Հակակոռուպցիոն կոմիտեն ներգրավված է նաև «Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբի (ԳՐԵԿՈ) Հայաստանի գնահատման զեկույցով ստանձնած պարտավորությունների կատարմանը: https://www.coe.int/en/web/greco/evaluations/armenia Հակակոռուպցիոն կոմիտեն ներգրավված է ՄԱԿԴԿ-ի պահանջների մոնիտորինգի և գնահատման հաշվետվությունների պատրաստման գործում: Կոռուպցիայի դեմ պայքարի ՄԱԿ-ի կոնվենցիայի անդամ երկրների համաժողովի 10-րդ նստաշրջանին (COSP 10) ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ Սասուն Խաչատրյանը հանդես է եկել ազգային ելույթով՝ որպես ՀՀ պատվիրակության ղեկավար: https://www.anticorruption.am/hy/news/view/313 Հակակոռուպցիոն կոմիտեն համագործակցում է նաև ՄԱԿ զարգացման ծրագրի, Եվրոպայի խորհրդի, Եվրոպայի միության, Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության հետ: Համագործակցության արդյունքում, Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողները մասնակցել են ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Չեխիայում, Խորվաթիայում, Ալբանիայում, Վրաստանում, Ղազախստանում և Հունգարիայում

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							կազմակերպված 12 դասընթացների, որոնք վերաբերել են կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննությանը, քրեական հետապնդմանը, հակակոռուպցիոն բարեփոխումների փորձի ուսումնասիրությանը, ֆինանսական քննություններին և միջազգային իրավական փոխօգնությանը, ինչպես նաև արտերկրում իրականացված 5 հանդիպումների, աշխատաժողովների և նստաշրջանների:
47.	Համագործակցություն այլ երկրների հետ	Հակակոռուպցիոն կոմիտեի տարեկան հաշվետվությունն և կայք, այն երկրների կոռուպցիայի դեմ պայքարի մարմինների տարեկան հաշվետվությունն և կայք, որոնց հետ գործակցում է Հայաստանի հակակոռուպցիոն կոմիտեն, հարցազրույցներ Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի ղեկավար պաշտոն	Գործակցության բացակայություն Հակակոռուպցիոն կոմիտեի և այլ երկրների կոռուպցիայի կանխարգելման մարմինների միջև	Որոշ ոլորտներում սահմանափակ գործակցություն Հակակոռուպցիոն կոմիտեի և 1 կամ 2 այլ երկրների կոռուպցիայի կանխարգելման մարմինների հետ	Համատեղ ծրագրերի առումով գործակցության և փորձագիտական օժանդակության բարձր մակարդակ Հակակոռուպցիոն կոմիտեի և մի քանի այլ երկրների կոռուպցիայի կանխարգելման մարմինների հետ	Բարձր	2022 թ. հոկտեմբերի 24-ի ելույթում ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ Սասուն Խաչատրյանը նշել է, որ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեն կազմավորման օրվանից մշտական կապի մեջ է գտնվել միջազգային գործընկերների հետ կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում վերջիններիս ունեցած հաջողված փորձի ուսումնասիրման և վերջինիս լավագույն տարրերի որդեգրման նպատակով: Կոմիտեն արդյունավետ կերպով համագործակցում է ԱՄՆ դեսպանատան թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության գրասենյակի, Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության, ՄԱԿ զարգացման ծրագրի, Եվրոպայի խորհրդի, Եվրոպայի միության, ՀՀ-ում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների, ԱՄՆ հետաքննությունների դաշնային բյուրոյի, Իտալիայի ֆինանսական գվարդիայի, այլ միջազգային գործընկերների հետ: 2022 թ. հունիսին Ամերիկայի Միացյալ Նահանգներում հանդիպումներ են անցկացվել ԱՄՆ հետաքննությունների դաշնային բյուրոյի, ԱՄՆ պետական դեպարտամենտի թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության բյուրոյի, Համաշխարհային հակակոռուպցիոն համակարգող գրասենյակի, ԱՄՆ արդարադատության դեպարտամենտի միջազգային
			Ուղղորդում: Այս ցուցանիշը գնահատում է Հակակոռուպցիոն կոմիտեի գործակցությունը այլ երկրների հակակոռուպցիոն մարմինների և իրավապահ մարմինների հետ: Եթե Հակակոռուպցիոն կոմիտեն համագործակցում է				

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
		զբաղեցնող անձանց հետ	այլ երկրների հակակոռուպցիոն մարմինների և իրավապահ մարմինների հետ, նկարագրեք նման գործակցության մանրամասները և չափը, այդ թվում՝ համատեղ ծրագրերը և տրամադրված փորձագիտական օժանդակությունը: Եթե Հակակոռուպցիոն կոմիտեն չի գործակցում այլ երկրների հակակոռուպցիոն մարմինների և իրավապահ մարմինների հետ, պետք է բացահայտել գործակցության բացակայության պատճառները:				գործերով գրասենյակի ղեկավար կազմերի հետ: Արդյունքում՝ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի և ԱՄՆ հետաքննությունների դաշնային բյուրոյի միջև ստորագրվել է համագործակցության հուշագիր: Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի կողմից քննվող 20 քրեական վարույթով օտարերկրյա պետություններ է ուղարկվել իրավական փոխօգնության 42 հարցում, որոնցից 15–ով ստացվել է պատասխան: ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեն օտարերկրյա պետություններից ստացել է իրավական փոխօգնության 14 հարցում, որից 13-ը կատարվել և ուղարկվել է նախաձեռնողին: https://anticorruption.am/hy/news/view/173 2023 թ. հոկտեմբերի 23-ին ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ Սասուն Խաչատրյանը իր ելույթում նշել է, որ կոմիտեն արդյունավետ կերպով համագործակցում է ՄԱԿ զարգացման ծրագրի, Եվրոպայի խորհրդի, Եվրոպայի միության, Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության, ԱՄՆ դեսպանատան թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության գրասենյակի, ԱՄՆ հետաքննությունների դաշնային բյուրոյի, Ուկրաինայի ազգային հակակոռուպցիոն բյուրոյի, Ավստրիայի կոռուպցիայի դեմ պայքարի դաշնային բյուրոյի, Իտալիայի ֆինանսական գվարդիայի հետ: Այս ընթացքում Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողները մասնակցել են ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Չեխիայում, Խորվաթիայում, Ալբանիայում, Վրաստանում, Ղազախստանում և Հունգարիայում կազմակերպված 12 դասընթացների, որոնք վերաբերել են կոռուպցիոն բնույթի հանցագործությունների քննությանը, քրեական հետապնդմանը, հակակոռուպցիոն բարեփոխումների

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							փորձի ուսումնասիրությանը, ֆինանսական քննություններին և միջազգային իրավական փոխօգնությանը, ինչպես նաև արտերկրում իրականացված 5 հանդիպումների, աշխատաժողովների և նստաշրջանների: https://anticorruption.am/hy/news/view/294 2023 թ. ընթացքում Իտալիայի Հանրապետության ֆինանսական գվարդիայի և ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի միջև կնքվել է փոխըմբռնման հուշագիր կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում համագործակցության ընդլայնման նպատակով: https://anticorruption.am/hy/pages/show/report Հակակոռուպցիոն կոմիտեի և այլ պետությունների միջազգային մարմինների, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների և ՀՀ-ում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների միջև համագործակցության, նախանշված և իրականացված ծրագրերի վերաբերյալ մանրամասն տեղեկատվությունն առկա է ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի պաշտոնական կայքում. 2022 թվական՝ https://www.anticorruption.am/hy/news/view/107 https://www.anticorruption.am/hy/news/view/149 https://www.anticorruption.am/hy/news/view/158 https://www.anticorruption.am/hy/news/view/179 https://www.anticorruption.am/hy/news/view/172 https://www.anticorruption.am/hy/news/view/189 2023 թվական՝ https://www.anticorruption.am/hy/news/view/199 https://www.anticorruption.am/hy/news/view/207 https://www.anticorruption.am/hy/news/view/201 https://www.anticorruption.am/hy/news/view/210

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
							https://www.anticorruption.am/hy/news/view/213 https://www.anticorruption.am/hy/news/view/221 https://www.anticorruption.am/hy/news/view/237 https://www.anticorruption.am/hy/news/view/242 https://www.anticorruption.am/hy/news/view/240 https://www.anticorruption.am/hy/news/view/285 https://www.anticorruption.am/hy/news/view/301 https://www.anticorruption.am/hy/news/view/304 https://www.anticorruption.am/hy/news/view/313 https://www.anticorruption.am/hy/news/view/314
48.	Հասանելիությունը մարգինալացված խմբերին	Հակակոռուպցիոն կոմիտեի տարեկան հաշվետվություն և կայք, հարցազրույցներ Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի ղեկավար պաշտոն զբաղեցնող անձանց հետ	Հակակոռուպցիոն կոմիտեն չունի ռազմավարություններ, թիրախներ և հենանիշեր, որոնք նրան թույլ կտային մոնիտորինգի ենթարկել մարգինալացված խմբերի (այդ թվում՝ կանանց և փոքրամասնությունների) հանդեպ իր արձագանքող ականությունը	Հակակոռուպցիոն կոմիտեն ունի ռազմավարություններ, թիրախներ և հենանիշեր, որոնք նրան թույլ են տալիս մոնիտորինգի ենթարկել մարգինալացված խմբերի հանդեպ իր արձագանքող ականությունը, սակայն գործուն կերպով չի դիտարկում այդ	Հակակոռուպցիոն կոմիտեն ունի ռազմավարություններ, թիրախներ և հենանիշեր, որոնք նրան թույլ են տալիս մոնիտորինգի ենթարկել մարգինալացված խմբերի հանդեպ իր արձագանքող ականությունը, ինչը նա գործուն կերպով դիտարկում է	Ցածր	Հակակոռուպցիոն կոմիտեի 2021-2023 թվականների գործունեության վերաբերյալ հաղորդումներում մարգինալացված (խոցելի) խմբերի կտրվածքով ագրեգացված վիճակագրական տվյալները բացակայում են: Հակակոռուպցիոն կոմիտեի հարցման արդյունքները նույնպես վկայում են, որ Հակակոռուպցիոն կոմիտեն մարգինալացված (խոցելի) խմբերին կոռուպցիոն շփումների մասով տվյալների առանձնացված հաշվառում չի իրականացնում:

	ՑՈՒՑԱՆԻՇ	ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ	ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՄԻՋԱԿԱՅՔ			ՄԻԱՎՈՐ	ՄԻԱՎՈՐԻ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ, ԱՂԲՅՈՒՐՆԵՐ, ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
			ՑԱԾՐ (0)	ՄԻՋԻՆ (1)	ԲԱՐՁՐ (2)		
				տարբերություններ			
			Ուղղորդում: Այս ցուցանիշը գնահատում է Հակակոռուպցիոն կոմիտեի արձագանքողականությունը և հասանելիությունը մարգինալացված (խոցելի) խմբերին: Ստուգել, թե Հակակոռուպցիոն կոմիտեն ունի՞ արդյոք ապաագրեգացված կամ տարանջատված տվյալներ (օրինակ՝ ստացված կոռուպցիոն բողոքների վերաբերյալ)՝ ըստ մարգինալացված առանձին խմբերի ու բնութագրերի: Նաև պարզել, թե առկա՞ են արդյոք ընթացակարգեր այս տվյալների մոնիտորինգի և Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից հանրայնացման և իրազեկման համար: Այս ցուցանիշը դիտարկվում է նաև հասկանալու համար, թե Հակակոռուպցիոն կոմիտեն տեղյա՞կ է արդյոք իր քաղաքացիների տարբեր խմբերի, այդ թվում՝ կանանց, հաշմանդամություն ունեցող անձանց կամ ազգային փոքրամասնությունների, ինչպես նաև այլ մարգինալացված խմբերի կողմից կոռուպցիոն շփումների ու դրանց մասին համապատասխան մարմիններին տեղեկացնելու հնարավորության մասին: Ի վերջո, ապաագրեգացված տվյալներ ունենալը Հակակոռուպցիոն կոմիտեին հնարավորություն կտա լինելու առավել ներառական, հասանելի և արդյունավետ հասարակության բոլոր մասերի համար:				
	Հակակոռուպցիոն կոմիտեի համագործակցության և արտաքին հարաբերությունների միավորի հանրագումարը					7/10=70 %	

Հավելված 2. Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության ամփոփ արդյունքները՝ ըստ գնահատման չափանիշների և ցուցանիշների

ՉԱՓԱՆԻՇՆԵՐ	ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ								
Անկախությունը և կարգավիճակը	Ինստիտուցիոնալ անկախություն	Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի և իր տեղակալների (ղեկավար կազմի) նշանակում և հեռացում	Մանդատ	Իրավասություն	Հետաքննության և հետապնդման լիազորություններ	Առաջարկությունները ներկայացնելու և կիրարկելու լիազորություններ	Իրավական ինքնավարություն	Գործառնական ինքնավարություն	Լիազորությունների քաղաքական օգտագործում
Ֆինանսական և մարդկային ռեսուրսներ	Բյուջեի համամասնությունը	Բյուջեի բավարար լինելը	Բյուջեի անվտանգությունը և կայունությունը	Աշխատակազմի աշխատավարձ և խրախուսում	Աշխատակազմի ընտրություն	Հետաքննության և հետապնդման փորձագիտություն	Անձնակազմի ուսուցում և վերապատրաստում	Անձնակազմի կայունություն	
Հաշվետվողականություն և ներքին բարեվարքություն	Տարեկան հաշվետվություն	Արձագանքողականությունը տեղեկություններին, հանրության հարցումներին	Արտաքին վերահսկողության մեխանիզմներ	Ներքին վերահսկողության մեխանիզմներ	Գործընթացների պատշաճ պահպանում	Ազդարարողների, բողոք ներկայացնողների կողմից իրենց ինքնությունը բացահայտելու պատրաստակամությունը	Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի նկատմամբ բողոքների քննությունը	Բողոքների արդյունքները	Բարեվարքության ներքին մեխանիզմներ
Կոռուպցիոն հանցագործությունների հայտնաբերում, հետաքննություն և հետապնդում	Հասանելիությունը բողոքատուներին/տեղեկատուներին /ազդարարումներին	Արձագանքողականությունը կոռուպցիային առնչվող հաղորդումներին/բողոքներին	Նախաձեռնողական հետաքննություն	Արդյունավետություն և արհեստավարժություն	Հետապնդումների ցուցանիշը	Դատապարտումների ցուցանիշը	Քաղաքական ազդեցություն ունեցող և բարձրաստիճան պաշտոնատար անձանց նկատմամբ հետաքննություններ կոռուպցիայի գործով	Փոխհատուցում և ակտիվների վերականգնում	Հակակոռուպցիոն կոմիտեի կատարողականի ընկալում
Կանխարգելում, կրթում և իրազեկում	Հատկացված բյուջե	Կոռուպցիայի վերաբերյալ իրազեկման, կանխման և հանրային հաղորդակցության ռազմավարական պլանավորում	Հակակոռուպցիոն կրթություն (դասընթացներ) և զարգացում	Կանխարգելման վերաբերյալ իրավասու մարմիններին ներկայացված առաջարկություններ	Հետազոտություն կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ	Տեղեկատվության տարածում և քարոզարշավներ	Առցանց հաղորդակցում		
Հաղորդակցություն և գործակցություն	Վստահությունը Կառավարության կողմից Հակակոռուպցիոն Կոմիտեին ցուցաբերվող աջակցության հանդեպ	Համագործակցություն կոռուպցիայի դեմ պայքարող այլ մարմինների հետ	Համագործակցություն ոչ կառավարական (հասարակական) կազմակերպությունների հետ	Միջազգային հակակոռուպցիոն ցանցեր	Համագործակցություն այլ երկրների հետ	Հասանելիությունը մարգինալացված խմբերին			

Գնահատման սանդղակ

Ցածր միավոր	0	ԿԱՐՄԻՐ
Միջին միավոր	1	ԴԵՂԻՆ
Բարձր միավոր	2	ԿԱՆԱՉ
Հնարավոր չէ գնահատել	Միավորներ չեն նշանակվել	ՄՈԽՐԱԳՈՒՅՆ

Հավելված 3. Ջակարտայի սկզբունքների և ԹԻ՝ հակակոռուպցիոն մարմինների գնահատման գործիքի համեմատություն՝ տեղայնացված ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի համար

ՋԱԿԱՐՏԱՅԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ	ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ԹԻ-Ի ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԻՔԻՑ	ՄԻԱՎՈՐ	ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ
1. Մանդատը ՀԿՄ-ները պետք է ունենան հստակ մանդատներ կանխարգելման, կրթման, իրազեկության բարձրացման, հետաքննության և հետապնդման միջոցով կոռուպցիայի դեմ պայքարելու համար՝ մեկ մարմնի կամ մի քանի համակարգված մարմինների միջոցով:	**3. Մանդատը** կենտրոնանում է Հակակոռուպցիոն կոմիտեի մանդատի և գործառույթների վրա, գլխավորապես այն բանի, թե Հակակոռուպցիոն կոմիտեն իրականացնո՞ւմ է արդյոք հետաքննության, հակակոռուպցիոն կրթության և կանխարգելման գործառույթները:	2	«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի հոդված 4-ի համաձայն՝ Հակակոռուպցիոն կոմիտեն լայն մանդատ ունի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով իր ենթակայությանը վերապահված՝ ենթադրյալ կոռուպցիոն հանցագործություններով մինչդատական քրեական վարույթի կազմակերպման և իրականացման, ինչպես նաև օպերատիվ-հետախուզական գործունեության իրականացման շրջանակներում: Վերոնշյալ լիազորություններով պայմանավորված՝ Հակակոռուպցիոն կոմիտեն հանդես է գալիս որպես հակակոռուպցիոն քննչական մարմին: Որպես հակակոռուպցիոն քննչական մարմին՝ Հակակոռուպցիոն կոմիտեն օրենքով իրավասու է միջնորդագրեր ներկայացնելու համապատասխան մարմիններին՝ մինչդատական վարույթի ընթացքում բացահայտված հանցանքների կատարմանը նպաստող հանգամանքները վերացնելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու համար, ուսումնասիրելու հանցագործությունների բացահայտման, քննության թերություններն և միջոցներ ձեռնարկելու դրանք վերացնելու ուղղությամբ, մշակելու հանցագործությունների բացահայտման, քննության մեթոդիկան ի կատարելագործում քննչական, օպերատիվ-հետախուզական աշխատանքների կազմակերպմանը, ամփոփելու հանցագործությունների բացահայտման, քննության դրական փորձը և ապահովելու դրա ներդրումը իրավակիրառ պրակտիկայում, քննարկելու և լուծելու ստացված դիմումները, բողոքները և առաջարկությունները, իր իրավասության սահմաններում լուծելու ՀՀ միջազգային պայմանագրերով նախատեսված՝ քրեական վարույթներով իրավական օգնության հարցերը, համագործակցելու իրավապահ և այլ մարմինների, լրատվության միջոցների հետ, իրականացնելու ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ
	4. Իրավասությունն ընդգրկում է Հակակոռուպցիոն կոմիտեի ոլորտային և աշխարհագրական շրջանակը (օրինակ, Հակակոռուպցիոն կոմիտեի իրավասությունն ընդգրկո՞ւմ է կոռուպցիան ինչպես պետական, այնպես էլ մասնավոր հատվածում և գործո՞ւմ է բոլոր վարչական մակարդակներում):	1	
	5. Հետաքննության և հետապնդման լիազորությունները կենտրոնանում են Հակակոռուպցիոն կոմիտեի գործնական լիազորությունների վրա՝ նախաձեռնողական վարույթ սկսելու, պահանջելու այլ պետական մարմիններից համագործակցություն՝ ստուգելու կասկածյալի բանկային հաշիվները, պահատուփերը, եկամտահարկի գրառումները և գույքը, խուզարկել և մուտք գործել տարածք, և այլն:	2	

	6. Առաջարկությունները հաղորդելու և կիրարկելու լիազորություններն ուսումնասիրում են Հակակոռուպցիոն կոմիտեի լիազորությունները՝ մշակելու և կիրարկելու պարտադիր առաջարկություններ այլ գերատեսչությունների կամ, առավել ընդհանրաբար, Կառավարության հակակոռուպցիոն քաղաքականության վերաբերյալ: Սա ներառում է ուղեգրումների մասին հրապարակայնորեն զեկուցելու, խնդիրները բացահայտելու և հանրային լսումներ ու հարցումներ անցկացնելու իրավասությունը:	1	գործառույթներ: Հակակոռուպցիոն կոմիտեի իրավասությունը տարածվում է ոչ միայն հանրային, այլ նաև մասնավոր հատվածի վրա: Միևնույն ժամանակ, ՀՀ քրեական օրենսգրքի հավելված N 1-ում ամրագրված կոռուպցիոն հանցանքների ցանկը փոփոխությունների է ենթարկվում, ինչը սահմանափակում է Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչների իրավասությանը վերապահված հանցանքների ենթակայության շրջանակը: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ Հակակոռուպցիոն կոմիտեն իրավասու է մշակելու նորմատիվ իրավական ակտեր, որի շրջանակում պարտավոր է կազմակերպել և անցկացնել հանրային քննարկում: Վերջինս իրականացվում է՝ ՀՀ կառավարության 2018 թ. հոկտեմբերի 10-ի N 1146-Ն «Հանրային քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը» սահմանելու մասին որոշման համաձայն: «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Կոմիտեի նախագահն իր իրավասության սահմաններում ընդունում է ենթաօրենսդրական, ներքին և անհատական իրավական ակտեր: Այդուհանդերձ, որևէ հրապարակային տվյալ առկա չէ Կոմիտեի կողմից մշակված նորմատիվ իրավական ակտերի վերաբերյալ:
	9. Լիազորությունների քաղաքական օգտագործումն անդրադառնում է այն հարցին, թե Կառավարությունն արդյոք ապավինում է Հակակոռուպցիոն կոմիտեին վերոհիշյալ մանդատը և լիազորությունները որպես գործիք քաղաքական հակառակորդների դեմ կամ այլ քաղաքական դրդապատճառներով օգտագործելու համար:	1	
2. Գործակցություն ՀԿՄ-ները չպետք է գործեն մեկուսացված: Նրանք պետք է լավ աշխատանքային հարաբերություններ զարգացնեն պետական մարմինների, քաղաքացիական հասարակության, մասնավոր հատվածի և այլ շահագրգիռ կողմերի հետ,	**38. Հակակոռուպցիոն կրթությունը (դասընթացները) և զարգացումը** գնահատում է Հակակոռուպցիոն կոմիտեի վերապատրաստման և կրթության նախաձեռնությունները վերջին 3-5 տարվա ընթացքում, այդ թվում՝ Հակակոռուպցիոն կոմիտեի քննարկումներին և սեմինարներին մասնակցող անձանց թիվը, Հակակոռուպցիոն կոմիտե այցելած քաղաքացիների և օտարերկրյա պատվիրակների թիվը և պետական պաշտոնյաների վերապատրաստման դասընթացների քանակը:	1	Հակակոռուպցիոն կոմիտեն առավել ակտիվ ներգրավված է միջազգային հակակոռուպցիոն ցանցերին, միջազգային տեխնիկական աջակցության առանձին ծրագրերին: Հակակոռուպցիոն կոմիտեն համագործակցում է միջազգային գործընկերների հետ կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում վերջիններիս ունեցած հաջողված փորձի ուսումնասիրման և վերջինիս լավագույն տարրերի որդեգրման նպատակով: Կոմիտեն համագործակցում է ԱՄՆ դեսպանատան թմրամիջոցների դեմ պայքարի և իրավապահ համագործակցության գրասենյակի, Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության, ՄԱԿ զարգացման ծրագրի, Եվրոպայի խորհրդի, Եվրոպայի միության, ՀՀ-ում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների, ԱՄՆ հետաքննությունների դաշնային բյուրոյի, Իտալիայի ֆինանսական գվարդիայի, այլ միջազգային

ներառյալ միջազգային գործակցությունը:	**44. Գործակցությունը կոռուպցիայի դեմ պայքարով զբաղվող այլ մարմինների հետ** գնահատում է Հակակոռուպցիոն կոմիտեի և կոռուպցիայի դեմ պայքարով զբաղվող այլ մարմինների հարաբերությունները երկրում ինչպես հետաքննության/հետապնդման, այնպես էլ կանխարգելման/տեղեկատվական գործունեության տեսանկյունից՝ վերաբերելի դեպքերում:	**2**	գործընկերների հետ: Համագործակցության և փոխըմբռնման հուշագրեր են ստորագրվել Հակակոռուպցիոն կոմիտեի և ԱՄՆ հետաքննությունների դաշնային բյուրոյի, Իտալիայի Հանրապետության ֆինանսական գվարդիայի, Բազելի կառավարման ինստիտուտի հետ: Հակակոռուպցիոն կոմիտեի համագործակցությունը ՔՀԿ միավորումների և այլ կազմակերպությունների հետ սահմանափակվել է հակակոռուպցիոն կրթական ծրագրերի և գործունեության հանրայնացման՝ առանձին միջոցառումների, աշխատաժողովների, օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերի նախագծերի հանրային քննարկումների կազմակերպման շրջանակներում: Միջազգային հակակոռուպցիոն ցանցերի ու նախաձեռնությունների մասով Հակակոռուպցիոն կոմիտեն ներգրավվածություն ու մասնակցություն ունի ՏՀՁԿ, ԳՐԵԿՈ, ՄԱԿԴԿ-ի պահանջների մոնիտորինգի և գնահատման հաշվետվությունների պատրաստման գործում: Ընդ որում, կոռուպցիայի դեմ պայքարի ՄԱԿ-ի կոնվենցիայի անդամ երկրների համաժողովի 10-րդ նստաշրջանին (COSP 10) ՀՀ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ Սասուն Խաչատրյանը հանդես է եկել ազգային ելույթով՝ որպես ՀՀ պատվիրակության ղեկավար:
	45. Հասարակական կազմակերպությունների հետ գործակցությունը գնահատում է Հակակոռուպցիոն կոմիտեի և երկրի այլ կազմակերպությունների, այդ թվում՝ ՔՀԿ-ների, դոնոր կազմակերպությունների, մասնավոր ընկերությունների և պետական ձեռնարկությունների միջև գործակցությունը՝ կանխարգելման/հանրայնացման գործունեության առումով:	**2**	
	46. Միջազգային ցանցեր ցուցանիշը գնահատում է Հակակոռուպցիոն կոմիտեի մասնակցությունը միջազգային ցանցերին և ներգրավվածության աստիճանը (օրինակ, ՏՀՁԿ Ստամբուլյան գործողությունների հակակոռուպցիոն նախաձեռնությունը կամ ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի կոալիցիան):	**2**	
	47.Այլ երկրների հետ գործակցությունը գնահատում է Հակակոռուպցիոն կոմիտեի գործակցությունը այլ երկրների իրավապահ մարմինների հետ, այդ թվում՝ համատեղ նախագծերի և փորձագիտական օժանդակության միջոցով:	**2**	

3. Մշտականություն ՀԿՄ-ները, իրենց երկրների հիմնական իրավական սկզբունքների համաձայն, պետք է ստեղծվեն պատշաճ և կայուն օրենսդրական դաշտով, օրինակ, Սահմանադրության կամ որևէ հատուկ օրենքի հիման վրա ՀԿՄ-ի շարունակականությունն ապահովելու համար:	**1. Ինստիտուցիոնալ անկախությունն** անդրադառնում է Հակակոռուպցիոն կոմիտեի իրավական հիմքին, մասնավորապես՝ այն հարցին, թե Հակակոռուպցիոն կոմիտեն օրենսդիր մարմնին հաշվետու՝ օրենքով սահմանված լիազորություններով օժտված պետական կամ սահմանադրական մարմի՞ն է, որևէ նախարարությանը հաշվետու առանձին մարմի՞ն է, թե գործում է ոստիկանության կամ որևէ նախարարության կազմում:	**2**	Հակակոռուպցիոն կոմիտեն ձևավորվել է «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» 2021 թ. մարտի 24-ի ՀՕ-147-Ն առանձին օրենքով: Այն գործում է անկախության, հրապարակայնության, ֆինանսական ինքնուրույնության և քաղաքական չեզոքության սկզբունքների հիման վրա:
4. Նշանակում ՀԿՄ-ների ղեկավարները պետք է նշանակվեն մի գործընթացի միջոցով, որն ապահովում է նրանց ապաքաղաքական կեցվածքը, անկողմնակալությունը, չեզոքությունը, բարեվարքությունը և ձեռնհասությունը:	**2. Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի և իր տեղակալների նշանակումը և հեռացումը** ներառում է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի և իր տեղակալների նշանակման գործընթացը, ներառյալ հանձնաժողովի կազմը կամ նշանակման համար պատասխանատու անձինք, ուսումնասիրում է, թե առկա՞ են արդյոք անկողմնակալության ապահովման երաշխիքներ, այդ թվում՝ անաչառ ընտրության չափանիշներ և նշանակման ընթացակարգի թափանցիկություն: (Այս ցուցանիշը ներառում է նաև հեռացման գործընթացները. տես ստորև):	**1**	Հակակոռուպցիոն կոմիտեի առաջին կազմը ձևավորվել է 2021 թ. նոյեմբերին: Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի և իր տեղակալների նշանակումները կատարվում են մրցութային խորհրդի և օրենքով սահմանված բաց մրցութային ընթացակարգերով, որը հիմնականում ապահովում է նշանակումների անկողմնակալությունը, չեզոքությունը, բարեվարքությունը: Նշված գործընթացները կանոնակարգված են «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 16-19-րդ հոդվածներով: Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահին նշանակում է Կառավարությունը՝ 6 տարի ժամկետով: «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքով սահմանված է, որ նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ նշանակվել Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի պաշտոնում: Միևնույն ժամանակ, նշված սահմանափակումը խնդրահարույց է Կոմիտեի նախագահի անկողմնակալության տեսանկյունից, քանի որ կրկին նշանակվելու հիմքը կարող է որոշակի ակնկալիքներ ստեղծել և՛ թեկնածուի, և՛ նշանակող կառույցի՝ վարչապետի կամ Կառավարության մոտ, ինչը հարցականի տակ է դնում թեկնածուի անկախությունը և Կոմիտեի գործառույթների պատշաճ և անկողմնակալ իրականացման ապահովումը: Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի թեկնածուների

			ընտրության համար ձևավորվում է մրցութային խորհուրդ: Խորհուրդը ձևավորվում է Կառավարության, Ազգային ժողովի խորհրդի, Բարձրագույն դատական խորհրդի, գլխավոր դատախազի, Մարդու իրավունքների պաշտպանի նշանակած 1-ական թեկնածուներից և քաղաքացիական հասարակության 2 ներկայացուցչից: Մրցույթի գործընթացի համար սահմանված ժամկետներն ու ընթացակարգերը հրապարակային են: Մրցույթի հայտարարությունը, հարցաշարերը, հարցազրույցի արդյունքները, մրցույթը հաղթահարած թեկնածուների վերաբերյալ տեղեկատվությունը և խորհրդի նիստերի արձանագրությունները հրապարակվում են հրապարակային ծանուցումների պաշտոնական կայքում (www.azdarar.am), վարչապետի աշխատակազմի և Հակակոռուպցիոն կոմիտեի պաշտոնական կայքերում: Ինչ վերաբերում է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալի նշանակմանը, մրցույթում հաղթող ճանաչված մասնակիցների ցուցակն ստանալուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում, Կոմիտեի նախագահը վարչապետին է առաջարկում մրցույթում հաղթող ճանաչված Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալի թեկնածությունը՝ կցելով թեկնածուի վերաբերյալ ԿԿՀ-ի ներկայացրած խորհրդատվական եզրակացությունը, որոնց արդյունքում էլ վարչապետը կատարում է նշանակում: Այդուհանդերձ, խնդրահարույց են թեկնածուին ներկայացվող մեղմ պահանջները, որոնք չեն ներառում հակակոռուպցիոն ոլորտում աշխատանքի փորձառության պահանջներ: Խնդրահարույց է մնում նաև քաղաքականգործոնի հնարավոր ազդեցությունը Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի և իր տեղակալների նշանակումների գործընթացում:
5.Շարունակականություն Լիազորությունների կասեցման, հեռացման, հրաժարականի, թոշակի անցնելու կամ	**8. Գործառնական ինքնավարությունը**, ի թիվս այլ հարցերի, անդրադառնում է այն խնդրին, թե Հակակոռուպցիոն կոմիտեն օպերատիվ վերահսկողություն ունի՞ ավագ անձնակազմի ընտրության, հեռացման և տեղափոխման	**2**	«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի հոդված 11-ը նախատեսում է «Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի բացակայության կամ պաշտոնեական պարտականությունները կատարելու անհնարինության դեպքում նրա հանձնարարությամբ նրան փոխարինում է հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալներից

պաշտոնավարության ավարտի պարագայում ՀԿՄ-ի ղեկավարի բոլոր լիազորություններն օրենքով պետք է խելամիտ ժամկետում պատվիրակվեն ՀԿՄ-ի համապատասխան պաշտոնյայի մինչև ՀԿՄ-ի նոր ղեկավարի նշանակումը:	նկատմամբ, որը ներառում է Կոմիտեի ղեկավարի բացակայության դեպքում շարունակականությունն ապահովելու մեխանիզմներ:		մեկը, իսկ հանձնարարության բացակայության դեպքում՝ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի՝ առավել երկար մասնագիտական ստաժ ունեցող տեղակալը» դրույթը, որը լիովին համահունչ է սահմանված սկզբունքին:
6. Հեռացում ՀԿՄ-ների ղեկավարները պետք է ունենան պաշտոնավարման ժամկետի անվտանգություն և պետք է հեռացվեն միայն իրավականորեն սահմանված ընթացակարգով, որը հավասարազոր է օրենքով հատուկ պաշտպանվող առանցքային անկախ պաշտոնատարի (օրինակ, Գերագույն դատարանի նախագահի) պաշտոնազրկման ընթացակարգին:	**2. Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի և իր տեղակալների նշանակումը և հեռացումը**, ի լրումն վերը նկարագրված տարրերի, ներառում է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի և իր տեղակալների հեռացման գործընթացը, այդ թվում՝ նրանց հեռացման կամ փոխարինման պայմանները, ինչպես նաև հեռացման ընթացակարգերի անաչառության և թափանցիկության ապահովման երաշխիքները: Նաև ուսումնասիրում է, թե Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահին և իր տեղակալները ունե՞ն արդյոք հաստատագրված ժամկետ (պաշտոնավարության ժամկետով) և չեն կարող հեռացվել առանց ապացուցված պատճառի (օրինակ, անձեռնհասություն կամ սխալ վարքագիծ) (Այս ցուցանիշը ներառում է նաև նշանակման գործընթացները. տես վերևում):	**1**	«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով սահմանված են Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի և իր տեղակալի լիազորությունների դադարման և դադարեցման գործընթացները: Կոմիտեի նախագահի և նրա տեղակալի պաշտոնից հեռացման բոլոր հանգամանքները՝ պաշտոն զբաղեցնելու առավելագույն տարիքը լրանալը, ՀՀ քաղաքացիությունը կորցնելը, դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի հիման վրա նրա անգործունակ, անհայտ բացակայող ճանաչվելը կամ մահացած հայտարարվելը, նրա մահը, նրա նկատմամբ կայացված դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճռի առկայությունը, նրա նկատմամբ կայացված՝ ոչ ռեաբիլիտացնող հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու կամ քրեական հետապնդում չհարուցելու մասին որոշման առկայությունը, Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի կողմից հրաժարականի դիմում Կառավարություն ներկայացնելը և վերջինիս կողմից այն հաստատվելը, Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալի կողմից պաշտոնից ազատվելու վերաբերյալ գրավոր դիմում վարչապետին ներկայացնելը և վերջինիս կողմից նրան պաշտոնից ազատելը, պայմանավորված չեն Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի և նրա տեղակալի գործունեության նկատմամբ ուղղակի միջամտությամբ և կողմնակի ազդեցությամբ, ուստի Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի և նրա տեղակալի պաշտոնից հեռացման հայեցողական հիմքերը բացակայում են:

7. Էթիկական վարքագիծ ՀԿՄ-ները պետք է ընդունեն վարքագծի կանոններ, որոնք իրենց անձնակազմից պահանջում են էթիկական վարքագծի ամենաբարձր չափորոշիչներ և համապատասխանության (պահանջների պահպանման) խիստ ռեժիմ:	**26. Բարեվարքության ներքին մեխանիզմներ** ցուցանիշը գնահատում է Հակակոռուպցիոն կոմիտեի վարքագծի կանոնների ամբողջականությունը (օրինակ, գույքի հայտարարագրերը և շահերի բախման կանոնները, նվերների և հյուրասիրության կանոնները, հետաշխատանքային սահմանափակումները), կանոնների խախտման և այլ սխալների վերացման գործընթացները, ինչպես նաև ներքին բողոքների քննությունը:	**1**	Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների վարքագծի կանոնները սահմանված են Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի թիվ 30-Լ հրամանով: Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի բարեվարքության պահանջները, շահերի բախման կառավարումը, նվերների ընդունման արգելքը նույնպես սահմանված են Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի վարքագծի կանոններով: Հայտարարագրման մասով «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի հոդված 34-ում սահմանվում է, որ հայտարարագրման պարտականություն ունեն պետական պաշտոն զբաղեցնող անձինք, պետական հայեցողական պաշտոն զբաղեցնող անձինք, ինչպես նաև քաղաքացիական ծառայության ղեկավար խմբի 1 և 2 ենթախմբի պաշտոն զբաղեցնող անձինք: Այսպես, Հակակոռուպցիոն կոմիտեում հայտարարագրման պարտականություն ունեն ինքնավար պաշտոն զբաղեցնող անձինք, հայեցողական պաշտոն զբաղեցնող անձինք, ինչպես նաև Հակակոռուպցիոն կոմիտեի գլխավոր քարտուղարը և նրա տեղակալը: Հակակոռուպցիոն կոմիտեի աշխատակազմի քաղաքացիական ծառայողների վարքագծի կանոնները հաստատված են քաղաքացիական ծառայությունը համակարգող փոխվարչապետի կողմից: Հարկ է նշել, որ ինչպես Հակակոռուպցիոն կոմիտեի ղեկավար կազմի, այնպես էլ ծառայողների թեկնածուները պաշտոնի նշանակվելիս անցնում են բարեվարքության ստուգումներ: Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին է ներկայացվում մրցույթի առաջին փուլը հաղթահարած մասնակիցների բարեվարքության վերաբերյալ լրացված հարցաթերթիկը եզրակացություն ստանալու նպատակով: Եզրակացությունը կրում է խորհրդատվական բնույթ՝ անկախ նրանից, դրական, թե բասական եզրակացություն է տրվել: Արձանագրվել են դեպքեր, երբ բասական եզրակացությամբ թեկնածուն նշանակվել է պաշտոնի: Բարեվարքության ներքին մեխանիզմների տեսանկյունից առավելապես կարևոր է Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների առաքինությունը ստուգելու մեխանիզմը: «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով սահմանված է, որ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը իրավասու է ներքին անվտանգության ստորաբաժանման միջոցով իրականացնելու հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների

			առաքինության ստուգում, այդ թվում՝ պրովոկացիայի եղանակներով: Առաքինության ստուգման գործընթացը չպետք է խոչընդոտի Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների բնականոն գործունեությանը: Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների առաքինության ստուգման կարգը և պայմանները սահմանում է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը: Այնուամենայնիվ, Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների առաքինության ստուգման կարգը և պայմանները դեռևս ընդունված չեն, հետևապես առ այսօր որևէ ծառայող չի ենթարկվել առաքինության ստուգման:
8.Անձեռնմխելիություն ՀԿՄ-ների ղեկավարները և աշխատակիցները պետք է անձեռնմխելի լինեն քաղաքացիական և քրեական վարույթներից իրենց մանդատի իրականացման շրջանակում կատարած գործողությունների համար: ՀԿԳ ղեկավարները և աշխատակիցները պետք է պաշտպանված լինեն կեղծ քաղաքացիական և քրեական վարույթներից:	**7. Իրավական ինքնավարությունը**, ի թիվս այլոց, ուսումնասիրում է, թե Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը, իր տեղակալներն ու ծառայողներն անձեռնմխելի՞ են արդյոք քրեական և քաղաքացիական հետապնդումից իրենց մանդատի իրականացման շրջանակում կատարած գործողությունների համար:	**1**	«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի համաձայն՝ Հակակոռուպցիոն կոմիտեին վերապահված լիազորությունների իրականացման գործում Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի, նրա ընտանիքի անդամների կամ նրա զբաղեցրած բնակելի և ծառայողական տարածքների անձեռնմխելիության նկատմամբ ոչ իրավաչափ ներգործության սպառնալիքի դեպքում Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի պահանջով իրավասու պետական մարմինները պարտավոր են անհապաղ ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի, նրա ընտանիքի անդամների և նրա զբաղեցրած բնակելի և ծառայողական շինությունների անվտանգությունն ապահովելու ուղղությամբ:
9. Վարձատրություն ՀԿՄ-ների աշխատակիցների վարձատրությունը պետք է լինի այնպիսի մակարդակի, որը թույլ կտա աշխատանքի ընդունել բավարար թվով որակավորված	**13. Աշխատողների աշխատավարձ և խրախուսում** ցուցանիշը ներառում է Հակակոռուպցիոն կոմիտեի միջին օղակի անձնակազմի աշխատավարձերի սանդղակների և նպաստների մանրամասները, այդ թվում՝ վերջին 3-5 տարիների ընթացքում աշխատավարձերի և նպաստների ցանկացած էական փոփոխություն: Գնահատում է, թե աշխատավարձերը մրցունա՞կ են մասնավոր հատվածի (օրինակ՝ բանկերի,	**1**	«Պետական պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների վարձատրության մասին» ՀՀ օրենքով կանոնակարգված են աշխատակազմի ծառայողների վարձատրության և պարգևատրումների, հավելավճարների և սոցիալական այլ երաշխիքների սահմանաչափերը: Հակակոռուպցիոն կոմիտեի քաղաքացիական ծառայող հանդիսացող աշխատակիցների վարձատրության մրցունակության գնահատման տեսանկյունից նշված գործակիցները համահարթ են կամ հավասար են

աշխատողների:	աուդիտորական ընկերությունների և այլն), ինչպես նաև քաղծառայողության այլ համադրելի պաշտոնների համեմատ:		հանրային ծառայության մյուս տեսակների համանման պաշտոնների վարձատրության գործակիցների հետ: Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների աշխատավարձի չափն էականորեն տարբերվում է մյուս քննչական մարմինների ծառայողների աշխատավարձի չափից: Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի աշխատավարձի չափը 12 %-ով գերազանցում է Քննչական կոմիտեի նախագահի աշխատավարձի չափը: Հակակոռուպցիոն կոմիտեի քննիչի աշխատավարձի չափը 14 %-ով գերազանցում է Քննչական կոմիտեի քննիչի աշխատավարձը: Կոմիտեի ծառայողների համար նախատեսված հավելումների չափն անհամեմատ մեծ է այլ քննչական մարմինների ծառայողներին և նույնիսկ դատավորներին տրվող հավելումների չափից: Մասնավոր ոլորտի նկատմամբ Հակակոռուպցիոն կոմիտեի աշխատակազմի քաղաքացիական ծառայողների վարձատրության մրցունակության մասով, ոչ պետական հատվածում իրավաբանի միջին աշխատավարձը պետական հատվածի համապատասխան ցուցանիշից բարձր է 27.1 %-ով, կառավարման ոլորտի մասնագետինը՝ 11.1 %-ով, իսկ տնտեսագետինը՝ 2.5 %-ով բարձր է պետական ծառայությունում: Այս պայմաններում, բարձր կոմպետենցիաներով ու փորձառության երկար տարիների ստաժ ունեցող մասնավոր ոլորտի աշխատակիցների համար ոչ պետական հատվածից քաղաքացիական ծառայության նույնիսկ բարձր խմբի պաշտոններ փոխադրումը կդիտվի որպես համարժեքորեն ոչ մրցունակ: Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի աշխատավարձերի և խրախուսումների համադրությունը վկայում է, Հակակոռուպցիոն կոմիտեի բյուջեով պարգևատրումների պլանավորված մակարդակը Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի տարեկան վարձատրության ծավալում 2021 թ.-ին կազմել է 30 %, 2022 թ.-ին կազմել է 28.2 %, իսկ 2023 թ.-ին՝ 7.98 %: Այնուամենայնիվ, անձնակազմի կայունության տեսանկյունից, 2021-2023 թթ. հոսունության համեմատական վերլուծությունը վկայում է հոսունության աճի մասին, ինչի պայմաններում արձանագրվում է կադրերի հոսունության և հրաժարականների բարձր մակարդակ, որտեղ նույնիսկ
	17. Անձնակազմի կայունությունը ուսումնասիրում է Հակակոռուպցիոն կոմիտեի կադրերի հոսունության մակարդակը (այսինքն՝ անձնակազմի շարժը, որն առաջանում է անձնակազմի հավաքագրման և հեռանալու արդյունքում), որն ինքնին կարող է լինել վարձատրության մակարդակների համարժեքության ցուցանիշ:	**1**	

			բարձր վարձատրությունը ի զորու չէ ապահովելու աշխատակազմի կայունությունը:
10. Իրավասություն մարդկային ռեսուրսների նկատմամբ ՀԿՄ-ները պետք է ունենան իրենց աշխատակազմի անդամներին հավաքագրելու և հեռացնելու լիազորություն ներքին հստակ և թափանցիկ ընթացակարգերի համաձայն:	**14. Աշխատակազմի ընտրությունը** կենտրոնանում է Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների հավաքագրման ներքին ընթացակարգերի (անկախ քաղաքացիական ծառայության գործող կանոններից), այդ թվում՝ ընթացակարգի և՛ արժանապետական, և՛ թափանցիկ լինելու վրա:	**2**	Հակակոռուպցիոն կոմիտեն աշխատակազմի անձնակազմի հավաքագրումը իրականացնում է «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքով սահմանված մրցութային կարգով և պաշտոնի նշանակվում Կոմիտեի նախագահի կողմից: Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների թեկնածուների ցուցակը համալրում է մրցութային հանձնաժողովը: Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնների մրցույթն անցկացվում է 5 փուլով՝ փաստաթղթերի ուսումնասիրության փուլ, թեստավորման փուլ, բարեվարքության ուսումնասիրության փուլ, հարցազրույցի փուլ, արդյունքների ամփոփման փուլ: Մրցույթի արդյունքների հրապարակումից հետո Հանձնաժողովը մրցույթում հաղթող ճանաչված թեկնածուների ցուցակը ներկայացնում է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահին: Ցուցակին կցվում են նաև Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի ներկայացրած խորհրդատվական եզրակացությունները: Ինքնավար պաշտոնների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձինք «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով մասնագիտական պատրաստում են անցնում ՀՀ արդարադատության ակադեմիայում:
	15. Հետաքննության և հետապնդման փորձագիտությունը գնահատում է Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի գիտելիքներն ու հմտությունները կոռուպցիայի հետաքննության և հետապնդման ոլորտում, ինչպես նաև Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի միջին աշխատանքային ստաժը: Որպես փորձագիտության մակարդակի ցուցանիշ է ծառայում նաև հետաքննության և (կամ) հետապնդման գործառույթների համար չլրացված հաստիքների քանակը: ***Ծանոթություն:*** *Թեև 15-րդ ցուցանիշն ուղղակիորեն չի անդրադառնում մարդկային ռեսուրսների նկատմամբ իրավասության հարցին, սակայն կարող է հանդես գալ որպես համեմատության եզր՝ պարզելու, թե Հակակոռուպցիոն կոմիտեն որքանով ունի անհրաժեշտ մարդկային ռեսուրսներ իր գործառույթներն իրականացնելու համար (վերաբերում է նաև Զեկուցման 11-րդ սկզբունքին. տես ստորև):*	**2**	Հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող ստորաբաժանման պաշտոնները համալրվում են Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի սահմանած կարգով և պայմաններով անցկացվող մրցույթի արդյունքների հիման վրա: Օպերատիվ հետախուզական գործառույթներ իրականացնող ծառայողների թեկնածուների ցուցակը համալրվում է մրցութային հանձնաժողովի կողմից: Կոմիտեի օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող ստորաբաժանման ծառայողի պաշտոնների մրցույթն անցկացվում է փաստաթղթերի ուսումնասիրության, ֆիզիկական պատրաստականության ստուգման, հարցազրույցի առաջին, բարեվարքության ուսումնասիրության, հարցազրույցի երկրորդ և արդյունքների ամփոփման փուլերով:

			Ընդհանուր առմամբ, 2021-2023 թթ. ընթացքում մրցույթներին մասնակցել է 686 մարդ, որոնցից 265-ը՝ օպերատիվ-հետախուզական ստորաբաժանման, 134-ը՝ ինքնավար, 287-ը՝ քաղաքացիական ծառայության պաշտոնների համար: Նշված մրցույթներում հաղթող են ճանաչվել ընդհանուր 185 անձինք, որոնցից 72-ը՝ ինքնավար, 71-ը՝ օպերատիվ-հետախուզական ստորաբաժանման պաշտոնների, իսկ 42-ը՝ քաղաքացիական ծառայության թափուր հաստիքների համալրման համար դիմած: Հաղթող ճանաչված անձանցից 181-ը նշանակվել են համապատասխան պաշտոնների: Հակակոռուպցիոն կոմիտեի աշխատակազմի անդամներին հեռացնելու իրավասության ապահովման սկզբունքի համապատասխանության տեսանկյունից, «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի համաձայն, միայն Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալներին է պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում ՀՀ վարչապետը: Հակակոռուպցիոն կոմիտեի մյուս ծառայողներին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը: Ինչ վերաբերում է Հակակոռուպցիոն կոմիտեի տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց, նրանց աշխատանքի ընդունում և աշխատանքից ազատում է Հակակոռուպցիոն կոմիտեի գլխավոր քարտուղարը՝ ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով: «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ՀՀ քննչական մարմիններում գլխավոր քարտուղարին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է քննչական մարմնի ղեկավարը: Քաղաքացիական ծառայության մյուս պաշտոններում նշանակում և այդ պաշտոններից ազատում է գլխավոր քարտուղարը: Հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոններ զբաղեցնող բոլոր անձինք. «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի համաձայն. ունեն իրավագիտության բակալավրի որակավորման աստիճան կամ դիպլոմավորված մասնագետի բարձրագույն իրավաբանական կրթության որակավորման աստիճան կամ օտարերկրյա պետությունում ձեռք բերված դիպլոմավորված մասնագետի բարձրագույն իրավաբանական կրթության որակավորման աստիճան կամ

			համապատասխան աստիճան, որի ճանաչումն ու համարժեքության հաստատումը ՀՀ-ում իրականացվել է օրենքով սահմանված կարգով:
11. Համարժեք և հուսալի ռեսուրսներ ՀԿՄ-ները պետք է ունենան բավարար ֆինանսական ռեսուրսներ իրենց առաջադրանքները կատարելու համար՝ հաշվի առնելով երկրի բյուջետային ռեսուրսները, բնակչության թիվը և ցամաքային տարածքը: ՀԿՄ-ները պետք է ունենան ժամանակին հասանելի, պլանավորված, հուսալի և համապատասխան ռեսուրսներ ՀԿՄ-ի կարողությունների աստիճանական զարգացման, գործողությունների կատարելագործման և ՀԿՄ-ի մանդատի իրագործման համար:	**10. Բյուջեի համամասնությունը** դիտարկում է վերջին 3-5 տարիների ընթացքում Հակակոռուպցիոն կոմիտեի բյուջեի միջին համամասնությունը ընդհանուր պետական բյուջեի նկատմամբ:	**0**	Հակակոռուպցիոն կոմիտեի ֆինանսավորումը իրականացվում է «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» և «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքներով սահմանված պահանջներին համապատասխան: Հակակոռուպցիոն կոմիտեն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով առաջիկա տարվա բյուջետային գործընթացն սկսելու մասին վարչապետի որոշմամբ սահմանված ժամկետում յուրաքանչյուր տարի կազմում և Կառավարություն է ներկայացնում Հակակոռուպցիոն կոմիտեի առաջիկա տարվա բյուջետային ֆինանսավորման հայտը (պետական բյուջեով հակակոռուպցիոն կոմիտեի գծով նախատեսվելիք ծախսերի նախահաշվի նախագիծը) առաջիկա տարվա պետական բյուջեի նախագծում ներառելու համար: Հակակոռուպցիոն կոմիտեի առաջիկա տարվա բյուջետային ֆինանսավորման հայտը Կառավարության կողմից ընդունվելու դեպքում ընդգրկվում է պետական բյուջեի նախագծում, իսկ առարկության դեպքում պետական բյուջեի նախագծի հետ ներկայացվում է ԱԺ: Կառավարությունն Ազգային ժողով և Հակակոռուպցիոն կոմիտե է ներկայացնում բյուջետային ֆինանսավորման հայտի վերաբերյալ առարկության հիմնավորումը: Հակակոռուպցիոն կոմիտեի բնականոն գործունեության ապահովման համար չկանխատեսված ծախսերի ֆինանսավորման նպատակով նախատեսվում է Հակակոռուպցիոն կոմիտեի պահուստային ֆոնդ, որը ներկայացվում է բյուջեի առանձին տողով: Պահուստային ֆոնդի մեծությունը հավասար է տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքով Հակակոռուպցիոն կոմիտեում պաշտոն զբաղեցնող անձանց աշխատավարձի ֆոնդի 2 %-ին: Պետական բյուջեի ծախսային մասում Հակակոռուպցիոն կոմիտեի ծախսերը ներկայացվում են առանձին տողով:
	11. Բյուջեի բավարար լինելը գնահատում է, թե Հակակոռուպցիոն կոմիտեն ունի՞ բավարար բյուջե իր գործառույթներն իրականացնելու համար, և արդյոք որոշ ժամանակ սպասում է դեպքերին անդրադառնալուն՝ սահմանափակ ռեսուրսների պատճառով, ինչը բյուջեի համարժեքության լրացուցիչ ցուցանիշ է:	**2**	
	12. Բյուջեի անվտանգությունը և կայունությունը պարզում է, թե Հակակոռուպցիոն կոմիտեն խնդիրներ ունեցե՞լ է իր տարեկան բյուջետային հայտի հաստատման հարցում, հատկացված բյուջեն ժամանակի՞ն է բաշխվում, և վերջին 3-5 տարվա ընթացքում Հակակոռուպցիոն կոմիտեի բյուջեում նշանակալի փոփոխություններ եղե՞լ են, թե ոչ:	**1**	
	17. Անձնակազմի վերապատրաստումն ընդգրկում է Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի մասնակցած վերապատրաստման դասընթացների քանակն ու տեսակը, ինչպես նաև վերջին 3-5 տարվա ընթացքում նրանց հասանելի վերապատրաստման դասընթացները:	**1**	

	Ուսումնասիրում է նաև վերջին 3-5 տարվա ընթացքում Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից վերապատրաստմանը հատկացված բյուջեն:		Կոմիտեի ֆինանսավորումը 2021-2023 թթ. ընթացքում կազմել է ՀՀ պետական բյուջեի ծախսերի 0.1 %-ից պակաս: Բյուջետային ֆինանսավորման գործընթացի մասով Հակակոռուպցիոն կոմիտեի 2023 թ. բյուջետային հայտը ամբողջովին բավարարվել է: 2022-2023 թթ. ընթացքում դոնոր կազմակերպությունների կողմից ֆինանսավորում չի տրամադրվել: Հակակոռուպցիոն կոմիտեի կարողությունների աստիճանական զարգացման, գործողությունների կատարելագործման և մանդատի իրագործման մասով Կոմիտեի անձնակազմի կարողությունների զարգացման ծրագրերի համար հատկացված բյուջեի մեծությունը ընդհանուր բյուջեում վկայում է, որ վերապատրաստումների համար հատկացվել է 1 %-ից պակաս բյուջե, ինչը հուշում է՝ վերապատրաստումը առաջնահերթություն չէ: Վերապատրաստումները հիմնականում իրականացվել են միջազգային կառույցների աջակցության ծրագրերի շրջանակներում, և դրանք չեն կրել պլանավորված բնույթ և հիմնված չեն եղել անձնակազմի բացահայտված կարիքների վրա:
12. Ֆինանսական ինքնավարություն ՀԿՄ-ները ստանում են բյուջետային հատկացումներ, որոնց նկատմամբ ունեն կառավարման և վերահսկման լիարժեք իրավասություն՝ չհակասելով համապատասխան հաշվապահական հաշվառման ստանդարտներին և աուդիտի պահանջներին:	**11. Բյուջեի բավարար լինելը,** ի հավելումն վերը նկարագրված տարրերի, գնահատում է նաև, թե Հակակոռուպցիոն կոմիտեն ունի՞ ինքնավարություն՝ սահմանելու իր բյուջետային պահանջները և հետամուտ լինելու դրանց հաստատմանը:	**2**	2021 թ. Հակակոռուպցիոն կոմիտեի փաստացի ֆինանսավորումը գերազանցել է ԱԺ կողմից հաստատված մեծությունը, քանի որ տարվա ընթացքում ՀՀ կառավարությունն ավելացրել է Հակակոռուպցիոն կոմիտեին կատարված հատկացումները: Սակայն Հակակոռուպցիոն կոմիտեն չի օգտագործել հատկացված ամբողջ գումարը, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեությունը նախատեսված էր հուլիս ամսից, սակայն կոմիտեն ամբողջությամբ ձևավորվել է 2021 թ. նոյեմբերին, հաստիքները ամբողջությամբ չեն համալրվել, և չեն ավարտվել գնման գործընթացները: 2022 թ. ՀՀ կառավարությունը նվազեցրել է ԱԺ կողմից կատարված հատկացումների մեծությունը, սակայն Հակակոռուպցիոն կոմիտեն չի օգտագործել անգամ ԱԺ կողմից կատարված հատկացումը: 2022 թ.-ին ապահովվել է 86.7 % կատարողական, որը պայմանավորված է թափուր հաստիքների առկայությամբ: 2023 թ. ՀՀ կառավարությունը ավելացրել է ՀՀ պետական բյուջեով կատարված հատկացումը, իսկ փաստացի ֆինանսավորումը եղել է ավելի փոքր: Այդուհանդերձ, Հակակոռուպցիոն կոմիտեի ֆինանսական

			ինքնուրույնության ապահովման սկզբունքի կիրառման տեսանկյունից ՀՀ կառավարության իրավասությունը Հակակոռուպցիոն կոմիտեին ԱԺ կողմից հատկացված բյուջետային միջոցների կառավարման և վերահսկման գործընթացում փոփոխության ենթարկելու կամ վերաբաշխելու լիազորությունը դիտվում է խնդրահարույց:
13. Ներքին հաշվե տվողականություն ՀԿՄ-ները պետք է մշակեն և սահմանեն հստակ կանոններ և գործողությունների ստանդարտ ընթացակարգեր, ներառյալ մոնիտորինգի և կարգապահական մեխանիզմներ՝ նվազագույնի հասցնելու ՀԿՄ-ների կողմից ցանկացած սխալ վարքագիծ և լիազորությունների չարաշահում:	**21. Ներքին վերահսկողության մեխանիզմներ** ուսումնասիրում են Հակակոռուպցիոն կոմիտեի ներքին ուսումնասիրության գործընթացները, այդ թվում՝ Կոմիտեն ունի՞ արդյոք կորպորատիվ պլան, մոնիտորինգի և գնահատման (ՄԵԳ) շրջանակ և կատարողականի գնահատման չափումներ, և հավաքո՞ւմ է Հակակոռուպցիոն կոմիտեի կատարողականի վերաբերյալ հանրային ընկալման տվյալներ:	1	Հակակոռուպցիոն կոմիտեի ներքին վերահսկողության մեխանիզմները սահմանվում են Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից: Հակակոռուպցիոն կոմիտեի կայքում բացակայում է Կոմիտեի ռազմավարական պլանի վերաբերյալ փաստաթղթի առկայությունը: Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի 2022 թ. փետրվարի 4-ի N 02-Լ հրամանով հաստատվել է Կոմիտեի ներքին կարգապահական կանոնները հաստատելու մասին փաստաթուղթը: Հակակոռուպցիոն կոմիտեի կանոնադրությամբ սահմանվում է, որ Հակակոռուպցիոն կոմիտեն ունի ներքին աուդիտի բաժին: Ներքին աուդիտի բաժնի գործառույթները նույնպես սահմանված են Հակակոռուպցիոն կոմիտեի կանոնադրությամբ: Հակակոռուպցիոն կոմիտեի կայքում ոչ մի տվյալ չկա ներքին աուդիտի առկայության և 2021-2023 թվականների ընթացքում իրականացված ներքին աուդիտի գնահատման հաշվետվությունների մասին: ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում առանձին ռազմավարական ծրագիր առկա չէ: Գործում է ընդհանուր՝ ՀՀ կառավարության կողմից 2023 թ. հոկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» N 1871-Լ որոշումը: ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում առկա է azdararir.am հավելվածը, որով ստացված անանուն հաղորդումները անմիջականորեն հասցեագրվում են ՀՀ գլխավոր դատախազությանը, որից հետո նոր ուղարկվում Հակակոռուպցիոն կոմիտե: 2021 և 2022 թվականներին Հակակոռուպցիոն կոմիտեին հասցեագրված անանուն հաղորդումների մասով հաշվառում չի վարվել,
	26. Բարեվարքության ներքին մեխանիզմները, ի թիվս այլոց, գնահատում են վարքագծի կանոնների խախտման և այլ չարաշահումների վերացման, ինչպես նաև ներքին բողոքների քննության առկա գործընթացները:	1	
	23. Ազդարարողների, բողոք ներկայացնողների կողմից իրենց ինքնությունը բացահայտելու պատրաստակամությունը գնահատում է բողոքատուների և ազդարարների՝ իրենց ինքնությունը Հակակոռուպցիոն կոմիտեին բացահայտելու պատրաստակամությունը՝ ի նշան Հակակոռուպցիոն կոմիտեի գործընթացների հանդեպ իրենց վստահության:	1	
	24. Անձնակազմի նկատմամբ բողոքների քննությունը գնահատում է Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի դեմ բողոքների քննարկման ընթացակարգը և դրա արդյունավետությունը:	1	

	25. Բողոքների արդյունքները գնահատում են վերջին 3-5 տարվա ընթացքում Հակակոռուպցիոն կոմիտեի կամ նրա անձնակազմի դեմ ներկայացված բողոքների արդյունքները և այն, թե անտեսվե՞լ են արդյոք որոշ հիմնավոր բողոքներ:	1	իսկ 2023 թ. ընթացքում ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական վարչություն ՀՀ գլխավոր դատախազությունից ստացվել է 2 ազդարարման վարույթ, որոնք ստուգվել են և ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված որևէ արարք կատարելու վերաբերյալ փաստական տվյալներ չստացվելու հիմքով ստուգումները դադարեցվել են: Նկատի ունենալով, որ անանուն ազդարարման ինստիտուտը Հակակոռուպցիոն կոմիտեում գործնականում 2021 և 2022 թ.-ին չի կիրառվել և Դատախազությունից համանման հաղորդումներ Հակակոռուպցիոն կոմիտեին չեն փոխանցվել, հետևաբար ազդարարողների ինքնությունը բացահայտելու պատրաստակամության աստիճանը հնարավոր չէ գնահատել: Ինչ վերաբերում է Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի նկատմամբ բողոքների քննությանը, «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի հոդված 32-ով սահմանված են Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը: Կարգապահական խախտման ծանրությունից ելնելով՝ Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի նկատմամբ կարող են կիրառվել հետևյալ կարգապահական տույժերը՝ զգուշացում, նկատողություն, խիստ նկատողություն, դասային աստիճանի իջեցում՝ մեկ աստիճանով, պաշտոնի իջեցում՝ մեկ աստիճանով, պաշտոնից ազատում: Հակակոռուպցիոն կոմիտեում ծառայողի նկատմամբ կարգապահական տույժերը կիրառում է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը: Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի նկատմամբ իրականացվում է ծառայողական քննություն, որի փուլերն են նախնական ուսումնասիրությունը և կարգապահական վարույթը: Կարգապահական խախտման փաստի առթիվ Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի նկատմամբ ծառայողական քննություն հարուցվում է կարգապահական հանձնաժողովի որոշմամբ: Հակակոռուպցիոն կոմիտեում ծառայողական քննություն իրականացնելու կարգը, ներառյալ կարգապահական հանձնաժողովի աշխատակարգը, կարգապահական հանձնաժողովի ներկայացմամբ սահմանում է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը: Հակակոռուպցիոն կոմիտեի 2021, 2022 և 2023 թվականների ամենամյա հաղորդումները ոչ մի տվյալ չեն պարունակում Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի նկատմամբ բողոքների թվի, դրանց քննության,

			արդյունքում կիրառված պատասխանատվության՝ այդ թվում՝ կարգապահական, միջոցների կիրառման վերաբերյալ: «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածով Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի վարքագծի կանոնները սահմանում է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահը՝ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի սահմանած տիպային կանոնների հիման վրա: Քաղաքացիական ծառայողների վարքագծի կանոնները հաստատված են քաղաքացիական ծառայությունը համակարգող փոխվարչապետի կողմից: Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների վարքագծի կանոնները հաստատված են Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի հրամանով: Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի նկատմամբ ստացված բողոքների, դրանց քննության արդյունքում կարգապահական պատասխանատվության միջոցների կիրառման վերաբերյալ հրապարակային տվյալները բացակայում են: Հակակոռուպցիոն կոմիտեի ներքին հաշվետվողականության սկզբունքի ապահովման տեսանկյունից Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների բարեվարքության մեխանիզմները, սահմանված ընթացակարգերը գործնականում չեն կիրառվում:
14. Արտաքին հաշվետվողականություն ՀԿՄ-ները պետք է խստորեն պահպանեն օրենքի գերակայությունը և հաշվետու լինեն այն մեխանիզմներին, որոնք սահմանվել են լիազորությունների չարաշահումները կանխելու համար:	**20. Արտաքին վերահսկողության մեխանիզմները** գնահատում են Հակակոռուպցիոն կոմիտեի արտաքին վերահսկողության մեխանիզմների ուժը որպես ամբողջություն՝ հատուկ ուշադրություն դարձնելով Հակակոռուպցիոն կոմիտեի վերահսկողական հանձնաժողով(ներին): Նաև ուսումնասիրում է հսկողության լրացուցիչ մեխանիզմներ (օրինակ, կանոնավոր հաշվետվությունների ներկայացում Խորհրդարանին, արտաքին աուդիտ, դատական ստուգում):	**0**	Հակակոռուպցիոն կոմիտեի արտաքին վերահսկողության մեխանիզմները բացակայում են: Հակակոռուպցիոն կոմիտեն՝ որպես քննչական մարմին, հանդիսանում է սահմանադրական կարգավիճակ ունեցող պետական մարմին: «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքով ԱԺ-ի կողմից քննչական մարմինների գործունեության ուղղակի վերահսկողություն չի իրականացվում: ՀՀ հաշվեքննիչ պալատի, ՀՀ վարչապետին ենթակա վերահսկողական պետական ծառայության միջոցով Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության հաշվեքննություն և հակակոռուպցիոն ծրագրերի ու միջոցառումների իրականացման նկատմամբ ուսումնասիրություններ կամ ստուգումներ չեն իրականացվել:
	22. Պատշաճ գործընթացի պահպանումը գնահատում է հանրության վստահությունը Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից պատշաճ	**1**	

	ընթացակարգերի, անկողմնակալության և արդարացիության պահպանմանը իր լիազորություններն օգտագործելիս և հետաքննության տակ գտնվող անձանց հանդեպ վերաբերմունքի մեջ:		
15. Հրապարակային հաշվետվություններ ՀԿՄ-ները պետք է պաշտոնապես առնվազն տարեկան մեկ անգամ հաշվետվություն ներկայացնեն հանրությանը իրենց գործունեության մասին:	**18. Տարեկան հաշվետվությունը** գնահատում է Հակակոռուպցիոն կոմիտեի տարեկան հաշվետվության համակողմանիությունը և հասանելիությունը:	**1**	«Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի հոդված 7-ով սահմանված են Հակակոռուպցիոն կոմիտեի հանրային հաշվետվողականության և թափանցիկության սկզբունքի կիրարկումն ապահովող միջոցառումները, որոնք ներառում են՝ ա) Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության կիսամյակային հաղորդումների հրապարակում Հակակոռուպցիոն կոմիտեի կայքում, բ) Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության տարեկան հաղորդումների հրապարակում Հակակոռուպցիոն կոմիտեի կայքում, գ) իր նախորդ տարվա գործունեության մասին գրավոր հաղորդում է ներկայացնում Կառավարություն և Ազգային ժողով: Գործնականում հրապարակվում են ոչ բոլոր կիսամյակային հաղորդումները, ինչպես նաև խնդրահարույց են մնում Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության տարեկան հաղորդումների ամբողջականությունը՝ հաշվետվությունների ոչ միասնական կառուցվածքը, տվյալների անհամադրելիությունը և հանրային հարցումների կամ հետազոտությունների արդյունքները չներառելը, պատասխանատվության մասին տվյալները, ինչպես նաև բարձրաստիճան պաշտոնատար անձանց վարույթների վերաբերյալ տվյալները չներառելը:
	19. Արձագանքողականությունը տեղեկություններին, հանրության հարցումներին ցուցանիշը գնահատում է Հակակոռուպցիոն կոմիտեի թափանցիկությունը հանրության կոնկրետ հարցումներին արձագանքելու տեսանկյունից (ի տարբերություն նախաձեռնողական թափանցիկության, որը նախորդ ցուցանիշն է):	**1**	
16. Հաղորդակցություն և գործակցություն ՀԿՄ-ները պետք է կանոնավոր կերպով հաղորդակցվեն և գործակցեն հանրության հետ՝ ապահովելու հանրության	**42. Առցանց հաղորդակցումը** գնահատում է Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից առցանց ալիքների/սոցցանցերի օգտագործումը կոռուպցիայի դեմ պայքարի վերաբերյալ տեղեկությունների տարածման և հանրության հետ առավել լայն կապեր հաստատելու համար, ներառյալ Հակակոռուպցիոն կոմիտեն ունի՞ արդյոք առցանց հաղորդակցման ընդարձակ ռազմավարություն:	**2**	Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից հանրային ընկալումների վերաբերյալ հարցումներ դեռևս չեն անցկացվել: Հակակոռուպցիոն կոմիտեի հանրության հետ հաղորդակցության ու գործակցության հիմնական գործիքը շարունակում է մնալ https://anticorruption.am պաշտոնական կայքը: Հակակոռուպցիոն կոմիտեի կայքում հրապարակված են մարմնի պատմությունը, կոմիտեի նախագահի, նրա տեղակալների, վարչությունների մասին տեղեկություններ, կոմիտեի ամենամյա և կիսամյակային

վստահությունը իրենց անկախության, արդարացի և արդյունավետ գործունեության հանդեպ:	**43. Վստահություն Կառավարության կողմից Հակակոռուպցիոն կոմիտեին ցուցաբերվող աջակցության հանդեպ** ցուցանիշը գնահատում է հասարակության վստահությունն առ այն, որ Կառավարությունը Հակակոռուպցիոն կոմիտեին տրամադրել է անհրաժեշտ լիազորություններ և ռեսուրսներ կոռուպցիան զսպելու համար:	**-**	հաշվետվությունները: Կայքում հրապարակված են մարմնի գործունեությանն առնչվող որոշ նորմատիվ իրավական ակտեր՝ օրենքներ, հրամաններ: Հակակոռուպցիոն կոմիտեի կայքը պարունակում է հետադարձ կապի ապահովման համար անհրաժեշտ տեղեկություն: Հակակոռուպցիոն կոմիտեի հանրային հաղորդակցության և գործակցության սկզբունքի համապատասխանության տեսանկյունից կայքն իր ձևով, կառուցվածքով, նավիգացիոն տրամաբանությամբ, բաժինների և ենթաբաժինների տեղակայմամբ ու բովանդակությամբ ունի բարելավման կարիք:
	48. Հասանելիությունը մարգինալացված խմբերին գնահատում է Հակակոռուպցիոն կոմիտեի արձագանքողականությունը և հասանելիությունը մարգինալացված խմբերին (օրինակ՝ կանայք, հաշմանդամություն ունեցող անձինք կամ ազգային փոքրամասնություններ), այդ թվում՝ Հակակոռուպցիոն կոմիտեի կողմից ապաագրեգացված տվյալների օգտագործումը հանրայնացման և հակակոռուպցիոն քաղաքականության իրազեկման համար:	**0**	

Հավելված 4. Հակակոռուպցիոն կոմիտեի գործունեության գնահատման ցուցանիշների դասակարգումը՝ ըստ ազդեցության ու կատարողականը բնութագրող գործոնների

	ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐ		ԿԱՏԱՐՈ ՂԱԿԱՆ
		ԱՐՏԱՔԻՆ	ՆԵՐՔԻՆ	
1.	Ինստիտուցիոնալ անկախություն	2		
2.	Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի և իր տեղակալների (ղեկավար կազմի) նշանակում և հեռացում	1		
3.	Մանդատ	2		
4.	Իրավասություն	1		
5.	Հետաքննության և հետապնդման լիազորություններ	2		
6.	Առաջարկությունները ներկայացնելու և կիրարկելու լիազորություններ	1		
7.	Իրավական ինքնավարություն	1		
8.	Գործառնական ինքնավարություն	2		
9.	Լիազորությունների քաղաքական օգտագործում	1		
10.	Բյուջեի համամասնությունը	0		
11.	Բյուջեի բավարար լինելը	2		
12.	Բյուջեի անվտանգությունը և կայունությունը	1		
13.	Աշխատակազմի աշխատավարձ և խրախուսում		1	
14.	Աշխատակազմի ընտրություն		2	
15.	Հետաքննության և հետապնդման փորձագիտություն		2	
16.	Անձնակազմի ուսուցում և վերապատրաստում		1	
17.	Անձնակազմի կայունություն		1	
18.	Տարեկան հաշվետվություն		1	
19.	Արձագանքողականությունը տեղեկություններին, հանրության հարցումներին		1	
20.	Արտաքին վերահսկողության մեխանիզմներ	0		
21.	Ներքին վերահսկողական մեխանիզմներ		1	
22.	Գործընթացների պատշաճ պահպանում			1
23.	Ազդարարողների, բողոք ներկայացնողների կողմից իրենց ինքնությունը բացահայտելու պատրաստակամությունը*[80]			1

[80]* Դասակարգումը ճշգրտված է ըստ Հակակոռուպցիոն կոմիտեին «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքերով վերապահված լիազորությունների իրականացման շրջանակներով,կոռուպցիայի դեմ պայքարի համատեքստի, օրինակ. եթե բողոքատուների պատրաստակամությունը բացահայտելու իրենց ինքնությունը մեծապես որոշվում է Հակակոռուպցիոն կոմիտեի վերահսկողությունից դուրս գտնվող գործոններով. կամ եթե Հակակոռուպցիոն կոմիտեն պատասխանատու չէ քրեական հետապնդման համար, կամ եթե այլ երկրների հետ համագործակցության մակարդակը մեծապես որոշվում է Հակակոռուպցիոն կոմիտեի վերահսկողությունից դուրս գտնվող արտաքին գործոններով:

	ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐ		ԿԱՏԱՐՈ ՂԱԿԱՆ
		ԱՐՏԱՔԻՆ	ՆԵՐՔԻՆ	
24.	Հակակոռուպցիոն կոմիտեի անձնակազմի նկատմամբ բողոքների քննությունը			1
25.	Բողոքների արդյունքները			1
26.	Բարեվարքության ներքին մեխանիզմները		1	
27.	Հասանելիությունը բողոքատուներին/տեղեկատուներին /ազդարարումներին			2
28.	Արձագանքողականությունը կոռուպցիային առնչվող հաղորդումներին/բողոքներին			1
29.	Նախաձեռնողական հետաքննություն			2
30.	Արդյունավետություն և արհեստավարժություն			0
31.	Հետապնդումների ցուցանիշը*			0
32.	Դատապարտումների ցուցանիշը	1		
33.	Քաղաքական ազդեցություն ունեցող և բարձրաստիճան պաշտոնատար անձանց նկատմամբ հետաքննություններ կոռուպցիոն գործերով			-
34.	Փոխհատուցում և ակտիվների վերականգնում			1
35.	Հակակոռուպցիոն կոմիտեի կատարողականի ընկալում			-
36.	Հատկացված բյուջե	0		
37.	Կոռուպցիայի վերաբերյալ իրազեկման, կանխման և հանրային հաղորդակցության ռազմավարական պլանավորում			0
38.	Հակակոռուպցիոն կրթություն (դասընթացներ) և զարգացում			1
39.	Կանխարգելման վերաբերյալ իրավասու մարմիններին ներկայացված առաջարկություններ			0
40.	Կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ հետազոտություն			0
41.	Տեղեկատվության տարածում և քարոզարշավներ			1
42.	Առցանց հաղորդակցում			2
43.	Վստահությունը Կառավարության կողմից Հակակոռուպցիոն կոմիտեին ցուցաբերվող աջակցության հանդեպ	-		
44.	Համագործակցություն կոռուպցիայի դեմ պայքարող այլ մարմինների հետ		2	
45.	Համագործակցություն ոչ կառավարական (հասարակական) կազմակերպությունների հետ		2	
46.	Միջազգային հակակոռուպցիոն ցանցեր		2	
47.	Համագործակցություն այլ երկրների հետ*		2*	
48.	Հասանելիությունը մարգինալացված խմբերին			0
	Գնահատման մակարդակները՝ %	**17/15*2=5 6.6 %**	**19/13*2= 73 %**	**14/17*2= 41,1 %**

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Իրավական ակտեր

1. ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիա, 31.10.2003 թ.
2. «Հակակոռուպցիոն մարմինների գործունեության սկզբունքների մասին» Ջակարտայի հայտարարություն, 27.11.2012 թ.
3. ՀՀ Սահմանադրություն, 05.07.1995 թ. (06.12.2015 թ. փոփոխություններով)
4. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, 30.06.2021 թ.
5. ՀՀ քրեական օրենսգիրք, 05.05.2021 թ.
6. «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենք, 16.12.2016 թ.
7. «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք, 16.01.2024 թ.
8. «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենք, 24.03.2021 թ.
9. «Պետական վերահսկողական ծառայության մասին» ՀՀ օրենք, 23.03.2018 թ.
10. «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենք, 23.03.2018 թ.
11. «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք, 23.03.2018 թ.
12. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, 21.03.2018 թ.
13. «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենք, 16.01.2018 թ.
14. «Դատախազության մասին» ՀՀ օրենք, 17.11.2017 թ.
15. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենք, 09.06.2017 թ.
16. «Ազդարարման համակարգի մասին» ՀՀ օրենք, 09.06.2017 թ.
17. «Պետական պաշտոն զբաղեցնող անձանց և ծառայողների վարձատրության մասին» ՀՀ օրենք, 12.12.2013 թ.
18. «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենք, 02.05.2013 թ.
19. «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենք, 22.12.2010 թ.
20. «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենք, 26.05.2008 թ.
21. «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենք, 22.10.2007 թ.
22. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, 18.02.2004 թ.
23. «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենք, 23.09.2003 թ.
24. «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, 24.06.1997 թ.
25. ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրանից բխող 2023-2026 թվականների գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» N 1871-Լ որոշում, 26.10.2023 թ.
26. ՀՀ կառավարության 2021-2026 թթ. միջոցառումների ծրագիր, 18.08.2021 թ.
27. ՀՀ կառավարության «Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի թեկնածուների ընտրության մրցութային խորհրդի կազմում միջազգային փորձագետների ներգրավման կարգը սահմանելու մասին» N 896-Ն որոշում, 03.06.2021 թ.
28. ՀՀ կառավարության «ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարությունը և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» N 1332-Ն որոշում, 03.10.2019 թ.
29. ՀՀ վարչապետի «Կոռուպցիայի դեմ պայքարի շրջանակներում հաղորդակցման գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» N 820-Լ որոշում, 18.07.2022 թ.

30. ՀՀ փոխվարչապետի «Քաղաքացիական ծառայողների վարքագծի կանոնագիրքը սահմանելու մասին» N 697-Ն որոշում, 04.10.2022 թ.
31. ՀՀ կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի «Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնները սահմանելու մասին» N 01-Ն որոշում, 17.06.2022 թ.
32. ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի «ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի կարգապահական հանձնաժողովի աշխատակարգը սահմանելու մասին» N 56-L հրաման, 27.10.2023 թ.
33. ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի «ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի 2022 թ. հունվարի 27-ի 01-L հրամանն ուժը կորցրած ճանաչելու և ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում ծառայողական քննություն իրականացնելու կարգը սահմանելու մասին» N 57-L հրաման, 27.10.2023 թ.
34. ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի «Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի վարքագծի կանոնները սահմանելու մասին» N 30-L հրաման, 06.06.2023 թ.
35. ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի «ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ինքնավար պաշտոնների համալրման նպատակով մրցույթի կազմակերպման և անցկացման կարգը սահմանելու մասին» N 15-L հրաման, 08.07.2022 թ.
36. ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի «ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողի թեկնածուների ընտրության մրցութային հանձնաժողովի կազմավորման և գործունեության կարգը հաստատելու մասին» N 20-L հրաման, 16.11.2021 թ.
37. ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի «ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող ստորաբաժանման պաշտոնները համալրելու մրցույթի անցկացման կարգը և պայմանները սահմանելու մասին» N 21-L հրաման, 16.11.2021 թ.
38. ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի «ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի կանոնադրությունը հաստատելու մասին» N 02-L հրաման, 15.10.2021 թ.

Հրապարակումներ

39. Ազատություն ռադիոկայան, Սասուն Խաչատրյանն ազատման դիմում է գրել, 18.11.2024, https://www.azatutyun.am/a/sasoun-khachatryann-azatman-dimum-e-grel/33206102.html
40. ԱՄՆ Պետդեպարտամենտ, 2022 թվականի Հայաստանի մարդու իրավունքների զեկույց, 2024, https://www.state.gov/wp-content/uploads/2023/03/415610_ARMENIA-2022-HUMAN-RIGHTS-REPORT.pdf
41. ԹԻՀԿ, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գործունեության գնահատում, 2023, https://transparency.am/hy/publication/pdf/369/11178
42. ԹԻՀԿ, Առաջարկ «Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի թեկնածուների ընտրության մրցութային խորհրդի կազմում միջազգային փորձագետների ներգրավման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ, 2021, https://transparency.am/hy/publication/240
43. ԹԻՀԿ, ԹԻՀԿ ներկայացուցիչը դադարացրել էր իր անդամությունը հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի ընտրության մրցութային խորհրդում, 03.08.2021, https://transparency.am/hy/media/news/article/3152

44. ԹԻՀԿ, Կարծիք «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ, 2023, https://transparency.am/hy/publication/pdf/346/10765
45. Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների ՀԿ, Հակակոռուպցիոն կոմիտեի ստեղծման և ընթացիկ գործունեության ուսումնասիրություն, 2023, https://prwb.am/2023/09/13/zekuyc%e2%80%a4-hakakorupcion-komitei-steghtcman-ev-ehnthacik-gortcuneuthyan-usumnasiruthyun/
46. Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների ՀԿ, Հակակոռուպցիոն կոմիտեի 2023 թ. գործունեության ուսումնասիրություն, 2024, https://prwb.am/2024/12/03/zekuyc%e2%80%a4-hakakorupcion-komitei-2023th%e2%80%a4-gortcuneuthyan-usumnasiruthyun/
47. Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբի Հայաստանի Հանրապետության գնահատման զեկույցով ստանձնած պարտավորությունների կատարման վերաբերյալ զեկույցներ, https://www.coe.int/en/web/greco/evaluations/armenia
48. Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-Հայաստան հիմնադրամ, Հայաստանում կոռուպցիայի վերաբերյալ հանրային կարծիքի ուսումնասիրություն, Երևան, 2022, https://www.crrc.am/wp-content/uploads/2022/11/Corruption-inArmenia_Arm_v2.pdf
49. Հետք, Սասուն Խաչատրյանը նշանակվեց Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ, 16.04.2021, https://hetq.am/hy/article/135772
50. ՀՀ արդարադատության նախարարություն, 2019-2022 թթ. ՀՀ Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման 2019-2022 թվականների միջոցառումների եզրափակիչ գնահատման և մոնիթորինգի զեկույց, 2023, https://moj.am/storage/files/pages/pg_7967694028641_AC_M-A_Report_final_2023-compressed_1_.pdf
51. ՀՀ արդարադատության նախարարություն, «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, https://www.e-draft.am/projects/6275/about
52. ՀՀ գլխավոր դատախազություն, 2021 թ. ընթացքում կոռուպցիոն հանցագործությունների քննության արդյունքների վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազության տեղեկանք, 2022, https://prosecutor.am/storage/dynamic_web_pages/rep_57_8560401301.pdf
53. ՀՀ գլխավոր դատախազություն, 2022 թ. ընթացքում կոռուպցիոն հանցագործությունների քննության արդյունքների վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազության տեղեկանք, 2023, https://prosecutor.am/storage/dynamic_web_pages/rep_59_8560409395.pdf
54. ՀՀ գլխավոր դատախազություն, 2023 թ. ընթացքում կոռուպցիոն հանցագործությունների քննության արդյունքների վերաբերյալ ՀՀ գլխավոր դատախազության տեղեկանք, 2024, https://prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_281_1466763826.pdf
55. ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե, Տեղեկատվություն ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի կիսամյակային գործունեության մասին, https://www.anticorruption.am/hy/pages/show/report-semester

56. ՀՀ հակակոռուպցիոն կոմիտե, Հաղորդում ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի տարեկան գործունեության մասին, https://anticorruption.am/hy/pages/show/report
57. ՀՀ հաշվեքննիչ պալատի գործունեության ծրագրեր, http://armsai.am/hy/annual-program
58. ՀՀ վարչապետի քաղաքացիական ծառայության գրասենյակ, Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց բազիսային աշխատավարձի և վարձատրության համակարգի վերաբերյալ զեկույց, Երևան, 2024, https://cso.gov.am/static/website/%D4%B6%D5%A5%D5%AF%D5%B8%D6%82%D5%B5%D6%81%202024.pdf
59. ՀՀ վիճակագրական կոմիտե, ՀՀ մշտական բնակչության թվաքանակը 2022 թվականի հունվարի 1-ի դրությամբ, Երևան, 2022, https://www.armstat.am/file/article/population_01_22.pdf
60. ՀՀ վիճակագրական կոմիտե, ՀՀ մշտական բնակչության թվաքանակը 2023 թվականի հունվարի 1-ի դրությամբ, Երևան, 2023, https://armstat.am/file/article/population_01_01_23.pdf
61. ՀՀ վիճակագրական կոմիտե, ՀՀ մշտական բնակչության թվաքանակը 2024 թվականի հունվարի 1-ի դրությամբ, Երևան, 2024, https://armstat.am/file/article/population_01_01_24.pdf
62. Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցում Հայաստանի գնահատման զեկույցներ, https://www.oecd.org/corruption/acn/istanbul-action-plan.htm
63. Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանց, Հայաստանի 5-րդ գնահատման զեկույց, 2024, https://doi.org/10.1787/3c82f87d-en
64. Transparency International, The Anti-Corruption Agencies (ACAS) Strengthening Initiative. Assessment Tool, 2018, https://knowledgehub.transparency.org/assets/uploads/kproducts/ACA-Assessment-Tool.pdf
65. Freedom House իրավապաշտպան կազմակերպություն, Nations in Transit 2023 զեկույց, 2024, https://freedomhouse.org/country/armenia/nations-transit/2023, (դիտված՝ 28.02.2025 թ.)